



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ

ՈՒՂԵՐՁ-ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----------|
| ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ..... | 7 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ..... | 8 |
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | 8 |
| ՄԱՍ I: ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ | 11 |
| ՄԱՍ I-Ա. 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 12 |
| ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ..... | 12 |
| ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ | 22 |
| ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ | 25 |
| ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ | 27 |
| ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | 27 |
| ՍՓՅՈՒՌ..... | 28 |
| ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ | 29 |
| ԿՐԹՈՒԹՅՈՒՆ..... | 36 |
| ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ..... | 41 |
| ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ..... | 44 |
| ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ | 48 |
| ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ | 48 |
| ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | 50 |
| ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ..... | 51 |
| ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 52 |
| ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ | 54 |
| ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 55 |
| ՄԱՍ I-Բ. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ | 56 |
| 1.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՇՐՋԱՆԱԿ..... | 56 |
| 1.2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ | 61 |

| | |
|--|------------|
| 1.3. ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ | 66 |
| 1.4. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 87 |
| 1.5. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ | 90 |
| 1.6. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ..... | 95 |
| ՄԱՍ I-Գ. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ..... | 96 |
| 2.1. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ | 96 |
| 2.2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ | 99 |
| 2.3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ..... | 106 |
| 2.4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ | 109 |
| 2.5. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ | 113 |
| ՄԱՍ II. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ..... | 116 |
| ՄԱՍ II -Ա ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ..... | 117 |
| ՄԱՍ II-Բ. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ..... | 121 |
| ՄԱՍ II-Գ. ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ | 134 |
| Ծախսերն ըստ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ | 134 |
| Ծախսերն ըստ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ | 138 |
| ՄԱՍ II-Դ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ .. | 145 |
| ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ..... | 145 |
| ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 147 |
| ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 151 |
| ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 161 |
| ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.. | 169 |
| ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 177 |
| ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 180 |
| ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 182 |
| ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ..... | 186 |
| ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ..... | 187 |

| | |
|---|------------|
| ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 189 |
| ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ..... | 191 |
| ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ..... | 192 |
| ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ..... | 193 |
| ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 194 |
| ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 194 |
| ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | 195 |
| ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ | 198 |
| ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ..... | 199 |
| ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ..... | 200 |
| ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ..... | 202 |
| ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ..... | 202 |
| ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 204 |
| 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ..... | 204 |
| 2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ..... | 212 |
| 3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ..... | 220 |
| 4. 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | 262 |
| 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ..... | 271 |
| ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ | 277 |
| ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ | 278 |

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|--------------|---|
| ԱԱՀ | Ավելացված արժեքի հարկ |
| ԱԶԲ | Ասիական զարգացման բանկ |
| ԱԷԿ | Ատոմային էլեկտրակայան |
| ԱՄՆ | Ամերիկայի միացյալ նահանգներ |
| ՄԶԳ | Միջազգային զարգացման գործակալություն |
| ԱՄՀ | Արժույթի միջազգային հիմնադրամ |
| ԱՊՀ | Անկախ պետությունների համագործակցություն |
| ԲՈՒՀ | Բարձրագույն ուսումնական հաստատություն |
| ԳԱԱ | ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա |
| ԵԱՀԿ | Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպություն |
| ԵԱՏՄ | Եվրասիական տնտեսական միություն |
| ԵՄ | Եվրոպական միություն |
| ԶՄԲ | Զարգացման Միջազգային Բանկ |
| ԶԼՄ | Զանգվածային լրատվության միջոց |
| ԸԿԲՆ | Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ |
| ԼՂ | Լեռնային Ղարաբաղ |
| ԽՍՀՄ | Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն |
| ԿԲ | ՀՀ Կենտրոնական բանկ |
| ԿԳՄՍՆ | ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն |
| ԿԿԹԿ | Կոշտ կենցաղային թափոնների կառավարում |
| ՀԱԷԿ | Հայկական ատոմային էլեկտրակայան |
| ՀԲ | Համաշխարհային բանկ |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՆԱ | Համախառն ներքին արդյունք |
| ՀԾԿՀ | ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով |
| ՀԽՍՀ | Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն |
| ՁԻԱՀ | Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ |
| ՄԻԱՎ | Մարդու իմունային անբավարարության վիրուս |
| ՄԺԾԾ | ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր |
| ՊԵԿ | ՀՀ Պետական եկամուտների կոմիտե |
| ՊՄԳ | Պետություն-մասնավոր գործընկերություն |

| | |
|-------------|--|
| ՊՆ | ՀՀ Պաշտպանության նախարարություն |
| ՊՈԱԿ | Պետական ոչ առևտրային կազմակերպություն |
| ՊՖԿՀ | Պետական ֆինանսների կառավարման համակարգ |
| ՌԴ | Ռուսաստանի Դաշնություն |
| ՍԳԻ | Սպառողական գների ինդեքս |
| ՎՋՄԲ | Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ |
| ՏԻՄ | Տեղական ինքնակառավարում |
| ՏՏ | Տեղեկատվական տեխնոլոգիաներ |
| ՓԲԸ | Փակ բաժնետիրական ընկերություն |
| ՓՄՁ | Փոքր և միջին ձեռնարկատիրություն |
| ՔՀԿ | Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ |
| ՖՆ | ՀՀ ֆինանսների նախարարություն |

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ



Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն մեր բոլորիս, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու մեծ ընտանեկան բյուջեն է, որովհետեւ այն ձեւավորվում է մեր բոլորիս, Հայաստանի Հանրապետությունում ապրող եւ գործունեություն ծավալող քաղաքացիների եւ պարզապես բնակիչների աշխատանքի ու գործունեության արդյունքում:

Պետական բյուջեի եկամուտները կախված են նրանից, թե մեզնից յուրաքանչյուրը, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի եւ բնակիչ որքան, ինչ արդյունավետությամբ եւ թափանցիկությամբ է աշխատում:

Պետական բյուջեն նաեւ յուրաքանչյուր քաղաքացու ընտանեկան բյուջեի մաս է բառիս ուղիղ եւ ուղղակի իմաստով, որովհետեւ երկրում չկա գեթ մեկ մարդ, չկա մի ընտանիք, որի համար, որի կարիքների բավարարման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ծախս չի արվում: Օրինակ, թոշակառուները թոշակներ ստանում են պետական բյուջեից, բոլոր ուսուցիչները, զինվորականները, աշխատավարձ ստանում են պետական բյուջեից, բոլոր դպրոցները կառուցվում ու սպասարկվում են պետական բյուջեից, բոլոր ճանապարհները կառուցվում ու սպասարկվում են պետական բյուջեից, տասնյակ հազարավոր ընտանիքներ բնակարանի ձեռքբերման պարագայում հավելյալ վճարումներ են ստանում պետական բյուջեից, հարյուր հազարավոր քաղաքացիներ պետական պատվերի շրջանակներում առողջապահական ծառայություններ են ստանում, որոնք վճարվում են պետական բյուջեից, տասնյակ հազարավոր քաղաքացիներ վարկեր են ստանում (խոսքը սուբսիդավորվող վարկերի մասին է), որոնց տոկոսները մասամբ կամ ամբողջությամբ վճարվում են պետական բյուջեից, տասնյակ հազարավոր անապահով ընտանիքներ նպաստներ են ստանում պետական բյուջեից: Երկրում չկա գեթ մի հոգի, գեթ մի ընտանիք, որի կարիքները հոգալու համար ծախս չի արվում պետական բյուջեից եւ հետեւաբար մեր պետական բյուջեն յուրաքանչյուրի քաղաքացու ընտանեկան բյուջեի անբաժանելի մաս է:

Եւ ակնկալում եմ, որ մեզնից յուրաքանչյուրը հենց այսպես վերաբերվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեին, այն ըմբռնմամբ, որ՝ շատ կլինեն բյուջեի եկամուտները, թե քիչ, արդյունավետ կլինեն ծախսերը, թե ոչ այնքան, բարձր կլինեն թոշակներն ու աշխատավարձերը, թե ոչ այնքան՝ մեր բոլորի՝ Կառավարության, Ազգային ժողովի, դատախիզանական համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների, ժողովրդի համատեղ աշխատանքի արդյունք է: Դա այն արդյունքն է, որը մենք գեներացնում ենք միասին: Եւ հույս ունեմ, որ 2025 թվականին մենք կաշխատենք ավելի արդյունավետ, քան նույնիսկ պլանավորում եւ ակնկալում ենք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ 2025 թվականի պետական բյուջեն հիմնվում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի դրույթների վրա և ուղղված է այդ ծրագրով և ՀՀ կառավարության կողմից հաստատված ոլորտային ռազմավարություններով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1064-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2025-2027թթ. ՄԺԾԾ-ով սահմանված ՀՀ կառավարության նպատակների, առաջնահերթությունների և թիրախների ապահովմանը:
- 2025թ պետական բյուջեի շրջանակներում իրականացվող միջոցառումների հիմնական նպատակը լինելու է տնտեսության մրցունակության և արտադրողականության աճը: 2025 թվականին ՀՀ կառավարությունը շարունակելու է թիրախավորել երկարատև բարձր տնտեսական աճի ապահովումը:
- Պետական բյուջեի նախագծի հիմքում 2025թ. ՀՆԱ-ն կանխատեսվել է 10,891.5 մլրդ դրամ, տնտեսական աճը՝ 5.1%, ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 2.5%, միջին գնաճը՝ 3.6%:

2025թ պետական բյուջեի նախագծով՝

- **պետական բյուջեի եկամուտները** նախատեսվում են 2,837.6 մլրդ դրամ, որից հարկային եկամուտները՝ 2,720.3 մլրդ դրամ: Հարկային վարչարարության բարելավման, ստվերի դեմ պայքարի, ինչպես նաև հարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավում՝ 2024թ. հաստատված բյուջեի համեմատ 0.1, իսկ 2024թ. սպասողականի համեմատ 0.7 տոկոսային կետով, հասնելով ՀՀ կառավարության ծրագրով սահմանված 25% թիրախին:
- **պետական բյուջեի ծախսերը** նախատեսվում են 3,441.6 մլրդ դրամ, որից ընթացիկ ծախսերի գծով՝ 2,706.8 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսերի գծով՝ 734.9 մլրդ դրամ, ընդ որում կապիտալ ծախսերը նախատեսվում են պատմական մակարդակներից զգալիորեն բարձր մակարդակում՝ տնտեսական և անվտանգային ենթակառուցվածքների ամրապնդման համար: Կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2025թ. կհասնի 6.7%-ի: Ծախսային քաղաքականությունը կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության լրացուցիչ նախաձեռնություններով և համակարգային բարեփոխումներով ուղղված է լինելու մարդկային կապիտալի առավել արդյունավետ զարգացմանը և իրացմանը, իսկ պետական ենթակառուցվածքներում (մասնավորապես՝ կրթական և նախակրթական հաստատություններ, ճանապարհներ, ջրամաբարներ և այլն) ներդրումներ իրականացնելու միջոցով ֆիզիկական կապիտալի կուտակմանը: Ծախսային քաղաքականությունը միտված է լինելու նաև պաշտպանական համակարգի ամրապնդմանը՝ բարձրացնելով երկրի դիմադրողականությունը հնարավոր ռիսկերի հանդեպ: Արդյունքում բյուջեի ծախսերի կառուցվածքում միջնաժամկետում կավելանան մարդկային կապիտալին, ենթակառուցվածքներին, և պաշտպանությանն ուղղվող ծախսերի դերը, ինչը կխթանի տնտեսության ներուժը, արտադրողականությունը, դիմադրողականությունը, ներառական

աճը և տարածքային հավասարաչափ զարգացումը՝ հիմքեր ստեղծելով որդեգրած տնտեսական զարգացման մոդելի կայացման համար:

- **պետական բյուջեի պակասուրդը** նախատեսվում է 604.0 մլրդ դրամ: 2025թ-ի հարկաբյուջետային շրջանակը կառուցվել է պետական բյուջեի կապիտալ ծախսերի բարձր մակարդակի սահմանմամբ, որի ազդեցությունն իր վրա կրում է պետական բյուջեի պակասուրդը, որը աճում է 5.5%-ի 2025թ.-ին, այնուհետև միջնաժամկետում նվազելով մինչև պարտքի բեռը կայուն պահող՝ 3.0% մակարդակի: Արդյունքում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2025թ. կազմում է 54.3%:

2025 թվականին ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներն են.

- ներդրումների խրախուսումը, գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը,
- զբոսաշրջության, արդյունաբերության և գյուղատնտեսության մրցունակության աճը,
- ապրանքների և ծառայությունների արտահանման էական ավելացումը,
- հանրային ներդրումների արդյունավետության բարձրացումն ու որակի ենթակառուցվածքների բարելավումը,
- մարդու ներքին կարողությունների զարգացման և իրացման միջոցով՝ միջին խավի բարեկեցության աճն ու աղքատության կրճատումը:
- ՀՀ կառավարության ծրագրի **առաջնահերթություններին** համահունչ 2025 թվականին կիրականացվեն սոցիալական, կրթական, առողջապահական, ենթակառուցվածքային բնույթի մի շարք առաջնահերթ միջոցառումներ, որոնց արդյունքում ի թիվս այլ թիրախների, կապահովվի հետևյալ առանցքային թիրախների իրագործումը.
- Քաղաքացիների համար **առողջապահական ծառայությունների հասանելիության և մատչելիության** ապահովման նպատակով կշարունակվի պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բնակչությանը մատուցվող բժշկական օգնության ու սպասարկման ծառայությունների մատուցումը օֆերտայի /չսահմանափակված բյուջեի/ ֆինանսավորման նոր մեխանիզմով,
- **Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց** բնակարանային աջակցության և ինտեգրման ապահովում, վաղ մանկության զարգացման համակարգի և նախադպրոցական ծառայությունների ցանցի բարելավում և ամբողջական հասանելիության ապահովում,
- հանրակրթական դպրոցների ուսուցիչների, նախնական և միջին մասնագիտական, արտադպրոցական ուսումնական հաստատությունների, մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների ատեստավորման արդյունքում **աշխատավարձերի աճի ապահովում,**
- դպրոցների և մանկապարտեզների **կառուցում, հիմնանորոգում և վերանորոգում՝** ապահովելով նաև դրանց հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով,

- շարունակվելու են ջրային պաշարների մակերևութային հոսքի կառավարման նպատակով ջրամբարաշինության ծրագրերը, որի արդյունքում կապահովվի **ջրային ռեսուրսների պաշարների ավելացումը և ջրային հոսքերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը,**
- կիրականացվի **տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում** գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին **պետական աջակցություն տրամադրման միջոցառումներ՝** ներկայում մշակվող «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքների նախագծերի շրջանակներում:
- շարունակվելու են ՀՀ-ում **ճանապարհային ցանցի զարգացմանն** ուղղված՝ ճանապարհների հիմանորոգման և միջին նորոգման աշխատանքների իրականացումը, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցումը և այլն:

**ՄԱՍ I: ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ,
ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՄԱՍ I-Ա. 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Առաջիկա տարիների տնտեսական զարգացման քաղաքականության հիմնական նպատակն է լինելու տնտեսական աճի շարունակական ապահովումը (առնվազն տարեկան 7%, իսկ բարենպաստ արտաքին միջավայրի դեպքում՝ 9% տնտեսական աճ), Հայաստանի քաղաքացիների բարեկեցության շարունակական բարձրացումը՝ վերջիններիս տնտեսական կյանքում առավել ներառականության ապահովմամբ՝ զուգակցելով այն քաղաքացիների աշխատանքային եկամուտների բարձրացմամբ և ունակությունների ու հնարավորությունների կիրառման համար բարենպաստ պայմանների ստեղծմամբ:

ՀՀ կառավարությունը շարունակելու է հավատարիմ մնալ ՀՀ կառավարության՝ 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի առաջնահերթություններին:

Տնտեսական քաղաքականությունը միտված է լինելու նաև տնտեսության ոլորտներում արտադրողականության աճի ապահովմանը՝ տնտեսության տեխնոլոգիական մոդերնիզացիայի և թվային տնտեսության ձևավորման, ինչպես նաև գործարար միջավայրի շարունակական բարելավման ու այդ ենթատեքստում՝ օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործման գործիքակազմի կիրառմամբ:

Տնտեսական քաղաքականության վերջնարդյունքների ապահովումը հիմնված է լինելու վերջիններիս իրականացմանն ուղղված ռազմավարական փաստաթղթերով նախատեսված միջոցառումների և գործիքակազմի ամբողջական կիրառման վրա, ինչը նպատակաուղղված է լինելու ինչպես օտարերկրյա, այնպես էլ մասնավոր ներդրումների խրախուսմանը, գործարար միջավայրի ու ձեռներեցության զարգացմանը, զբոսաշրջության և զբոսաշրջային ինդուստրիայի զարգացմանը, արդյունաբերության, գյուղատնտեսության, ինչպես նաև ծառայությունների ոլորտի դիվերսիֆիկացմանն ու զարգացմանը:

Շարունակական և կարևորագույն ուղղություններից մեկն է հանդիսանալու արտաքին տնտեսական գործունեության զարգացումը, ինչին միտված է լինելու արտահանման խրախուսմանն ու դիվերսիֆիկացմանը (թե՛ ապրանքների և թե՛ նոր շուկաների գրավման) քաղաքականությունը՝ նպատակադրելով ապահովել արտահանման առնվազն 60-70% աճ:

Տնտեսության մրցունակության բարձրացման տեսանկյունից կառավարության կողմից կարևորվելու է արտադրողականության աճը՝ տեխնոլոգիաների և լավագույն միջազգային փորձի կլանման և կարողությունների զարգացման միջոցով, ՀՀ քաղաքացիների նորարարական ներուժի իրացումը՝ գործարար նախաձեռնողականության խրախուսման միջոցով: Հատուկ ուշադրության է արժանանալու ներքին և օտարերկրյա ներդրումների ներգրավումը՝ որպես տնտեսության որակական փոփոխության շարժիչ ուժ:

Տնտեսական զարգացման քաղաքականությունը խարսխվելու է վեց հենասյուների վրա, որոնք ուղենշում են կառավարության տնտեսական առաջնահերթությունները: Այսպես.

- ներդրումների ներգրավում, ներդրումների դերի կտրուկ մեծացումը տնտեսության կառուցվածքում,
- մրցունակ՝ առավել արտադրողական և տեխնոլոգիատար արդյունաբերության զարգացում, ինչպես նաև տնտեսության ճյուղերի արտադրողականության կտրուկ բարձրացում,
- ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի ակտիվության բարձրացում, որի շնորհիվ հնարավոր կլինի ապահովել ներառական տնտեսական աճ,
- գործարար միջավայրի շարունակական բարելավում, որը ՀՀ քաղաքացիների ստեղծարար ներուժի իրացման առաջնային նախապայմանն է,
- զբոսաշրջության զարգացում: Չնայած առկա մարտահրավերներին՝ զբոսաշրջությունը շարունակում է պահպանել իր երկարաժամկետ մրցունակությունը և աճի ներուժը: Միևնույն ժամանակ, ոլորտի մրցունակության աճը դրական է ազդելու տարածքային համաչափ զարգացման վրա:
- գյուղատնտեսության արդյունավետության բարձրացում և գյուղատնտեսական ամբողջ արժեքայում ընդգրկված սուբյեկտների՝ գյուղացիական տնտեսությունների, կոոպերատիվների, գյուղատնտեսական մթերքներ վերամշակողների, սպասարկող ենթակառուցվածքների եկամուտների ավելացում: Առանձնահատուկ թիրախ է հանդիսանալու պարենային և սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացումը: Այս համատեքստում մեծապես կարևորվում է նաև գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործումը, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրումը և բնակլիմայական ռիսկերի մեղմումը: Այս ուղղություններով արդեն իսկ մշակված են առանցքային ռազմավարական փաստաթղթեր, որոնք հիմնված են խորքային վերլուծությունների և հետազոտությունների վրա:

Արդյունաբերության մրցունակության աճի առաջնային աղբյուր է դիտարկվում արտադրողականության աճը և միջազգային մրցունակության բարձրացումը՝ տեխնոլոգիաների վերագինման, փորձի յուրացման և ներդրման, արտահանման կարողությունների զարգացման, լոգիստիկ խնդիրների մեղմման և՛ ներքին, և՛ միջազգային թիրախային շուկաների մուտքի, և՛ տեղեկատվության հասանելիության ապահովման միջոցով: Առաջիկա 5 տարիներին նախատեսվում է արտադրողականության բարձրացում շուրջ 100 տոկոսով, արտահանման ծավալների տարեկան 10 տոկոս աճի ապահովում և դրա արդյունքում ապրանքների արտահանում/ՀՆԱ ցուցանիշի ապահովում՝ 25-30 տոկոս:

Ծրագրված գործողությունները միտված են հնարավորություն ընձեռելու Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ապրանքները (ծառայությունները), մտավոր գործունեության արդյունքներն արտահանել օտարերկրյա պետությունների շուկաներ՝ ստեղծելով առավել բարենպաստ պայմաններ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական ոլորտներում տնտեսական աճի

ներառականության համար ապահովել քաղաքացիների մասնագիտական կարողությունների ու հմտությունների զարգացումը և աշխատուժի հմտությունների մակարդակի բարձրացումը:

ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի N 1343-Ն որոշմամբ հաստատվել և շարունակում է իրականացվել «Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց» օժանդակության տրամադրման միջոցառումը, որի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում մասնավոր ներդրումները խթանելու նպատակով տրամադրում է օժանդակություն ներդրումային ծրագրի իրականացման համար նախատեսված տարածքն անհրաժեշտ ենթակառուցվածքով ապահովման համար կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման ճանապարհով:

Առաջնահերթություն է լինելու առաջիկա տարիներին ստեղծել արտահանման դիմացկուն և հարմարվողական էկոհամակարգ՝ ամրապնդելով արտահանման խթանման ծրագրերով և համապատասխան ֆինանսական և ոչ ֆինանսական գործիքակազմով:

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

ՓՄՁ սուբյեկտները Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման, ներառականության և կայուն զարգացման ապահովման կարևորագույն մասն են կազմում:

ՓՄՁ զարգացման համար հիմնական քայլերն ուղղվելու են ՀՆԱ-ում ՓՄՁ-ների տեսակարար կշռի աճին և համաչափ տարածքային զարգացմանը:

Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցության ոլորտի ուժեղացման, կազմակերպությունների մրցունակության աճի, ներքին և միջազգային թիրախային շուկաներում ներկայացվածության բարձրացման նպատակով ընդլայնվելու է ձեռներեցների աջակցության գործիքակազմը հետևյալ ուղղություններով.

- ձեռնարկատիրական հմտությունների զարգացում,
- մատչելի ֆինանսական միջոցների հասանելիության ապահովում՝ արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրման միջոցով:

Աջակցության այս մոդելը միջազգային պրակտիկայում ընդունված ամենաարդյունավետ գործիքներից է ՓՄՁ տնտեսական ներուժը բացահայտելու և աճի միտում ունեցող ՓՄՁ-երին աջակցելու տեսանկյունից: Ձեռներեցների միջազգայնացման նպատակով իրականացվող միջոցառումների արդյունքում նախատեսվում է որակական առումով ունենալ.

նորարարական և աճի ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներ, որոնք օգտագործում են իրենց աճի ներուժը նոր շուկաներ մուտք գործելու և որակյալ արտադրանք արտադրելու և ծառայություններ մատուցելու նպատակով,

- ՓՄՁ սուբյեկտներ, ովքեր մրցունակ են արտաքին շուկաներում,
- ՓՄՁ սուբյեկտների կողմից արտահանման ծավալների ավելացում,

- ՓՄՁ սուբյեկտներ, ովքեր ստեղծում են բարձրարժեք արտադրանքներ,
- ՓՄՁ սուբյեկտներ, ովքեր կիրառում են նոր տեխնոլոգիաներ իրենց արտադրական գործընթացում:
- Ձեռներեցության խթանման նպատակով իրականացվելու են միջոցառումներ պետություն և մասնավոր երկխոսության կապը ակտիվացնելու և մարզային հանդիպումներ կազմակերպելու համար:

Գործարար միությունների և ոլորտային ակտիվ ներգրավմամբ պարբերաբար կազմակերպելու են հանդիպումներ և քննարկումներ՝ վերջիններիս կողմից առաջադրված առաջնային խնդիրների օրակարգերի շուրջ՝ մասնավոր հատվածի ուժեղ կողմերի և հնարավորությունների համախմբման միջոցով նպաստելով տնտեսական զարգացմանը Հայաստանում:

Կարևորելով կազմակերպություններում աշխատանքի արտադրողականության բարձրացումը, ինչը հանգեցնելու է Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող տնտեսավարողների մրցունակության բարձրացմանը, Էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվելու են 2 ծրագրեր՝

Արտադրողականության խթանման ծրագիրը, որի նպատակն է խթանել տնտեսավարողներին ձեռք բերել նոր/չօգտագործված մեքենա-սարքավորումներ՝ իրենց գործունեությունը տեխնիկապես վերազինելու նպատակով, ինչպես նաև թվայնացնել տնտեսավարողների բիզնես գործընթացները,

Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման ծրագիրը, որի նպատակն է տնտեսության մեջ ներգրավել արտաքին աշխատաշուկաներից բարձր որակավորում ունեցող մասնագետների:

Թեթև արդյունաբերությունը 5 գերակա ճյուղերից մեկն է: Հիմնական ռազմավարական նպատակն է ապահովել ոլորտի մրցունակության բարելավում՝ խթանելով ավելացված արժեքի և արտադրողականության աճը, ինչպես նաև սեփական ապրանքանիշով նոր շուկաներ մուտքը:

Այս նպատակում առանցքային դեր պետք է հատկացվի Ավելացված արժեքին, իսկ ավելի ստույգ՝ աշխատանքի մեկ ժամում ձևավորվող ավելացված արժեքին: Այս ցուցանիշը արտացոլում է արդյունաբերությունում մեկ ժամվա ընթացքում արտադրվող հավելյալ արժեքը, այլ կերպ ասած՝ արտադրողականությունը:

Հիմնվելով ավելացված արժեքի նկարագրված հասկացողության վրա, մշակվել է պետական աջակցության մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են Հայաստանում տեքստիլ արդյունաբերության որակական զարգացմանը:

Ճանապարհային քարտեզի կարևորագույն մաս է հանդիսանում նաև Մարդու իրավունքների և գենդերային հավասարության սկզբունքների պահպանումը, ինչպես նաև գենդերային ուղղորդման գործիքի կիրառումը ոլորտի բարելավման, ինչպես նաև կանանց

և տղամարդկանց գենդերային կարիքների և ռազմավարական շահերի ապահովման նպատակով:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Զբոսաշրջության ոլորտի զարգացման քաղաքականությունն ուղղված է լինելու Հայաստանի ճանաչելիության և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացմանը, ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանը, կայուն, համաչափ և ներառական տարածքային տնտեսական զարգացմանը, ազգային եկամտի ավելացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի զբաղեցրած տեղի և հասանելիության բարձրացմանը, Հայաստանի Հանրապետության հեղինակության ամրապնդմանը՝ ներկայացնելով հայկական զբոսաշրջային արդյունքը թե՛ չորս հիմնական՝ մշակութային, գաստրո (խոհանոց և գինի), բնահենք և արկածային (ներառյալ՝ ձմեռային), թե՛ զարգացման ներուժ ունեցող ուղղություններով, Հայաստանի դիրքավորմանը որպես որակյալ զբոսաշրջային ծառայություններ առաջարկող երկրի:

Բյուջետային տարվա հիմնական միջոցառումները վերաբերում են ակտիվ մարքեթինգային քաղաքականության իրականացմանը, համայնքային ռեսուրսների հիման վրա զբոսաշրջային արդյունքի բազմազանեցմանը, զբոսաշրջային ենթակառուցվածքների և կարողությունների զարգացման աջակցությանը, միջազգային համագործակցության զարգացմանը, վիճակագրական համակարգի կատարելագործմանը, ծառայությունների որակի բարելավմանը, Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին, ոլորտում բիզնես նախաձեռնություններին աջակցությանը, զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը աջակցությանը: Մեծ ուշադրություն է դարձվելու Հայաստանի զբոսաշրջային գրավչության վերականգնման մարքեթինգային միջոցառումների իրականացմանը:

Մինչև 2027 թվականը նախատեսվում է դեպի Հայաստան միջազգային զբոսաշրջիկների այցելությունների թվի ավելացում տարեկան առնվազն 10 տոկոսով՝ 2027 թվականին այցելությունների թիվը հասցնելով 2,7 միլիոնի, ինչի արդյունքում ստացված եկամուտը 2021 թվականի 370.0 մլրդ դրամից նախատեսվում է հասցնել մոտ 1,000.0 մլրդ դրամի:

Նախատեսվում է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացնել «Զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների բարելավում» ծրագիրը, որի շրջանակում նախատեսվում է կլաստերային համակարգի ներդրում: Զբոսաշրջության ոլորտում Կլաստերային մոտեցման ներդրման հիմնական թիրախները նպատակաուղղված կլինեն դիվերսիֆիկացնել զբոսաշրջությունը Հայաստանում, հանրահռչակել /վերականգնել/ բազմաթիվ մշակութային /պատմական հուշարձաններ, զարգացնել բնության հատուկ պահպանվող տարածքների, այդ թվում բնության հաշարձանների, ինչպես նաև շրջակա միջավայրի այլ օբյեկտների էկոտուրիստական ներուժը և այլն: Միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվում է բարձրացնել ազգային մրցունակությունը, որը կդրսևորվի ՀՆԱ-ի աճի տեմպերով, արտահանման ծավալների մեծացմամբ, դրական

առևտրային հաշվեկշռի ձևավորմամբ, երկրի թույլ զարգացած և ճգնաժամի մեջ գտնվող տարածքների զարգացմամբ:

Հայաստան զբոսաշրջային այցելությունների թվաքանակի աճին զուգահեռ կստեղծվեն նոր աշխատատեղեր, կբարձրանա բնակչության կենսամակարդակը, կլուծվեն մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրներ, կապահովվի տարածքային համաչափ տնտեսական զարգացում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսությունը երկրի կենսագործունեության և տնտեսության կայունացման շարժիչ գործոններից մեկն է: Այն նշանակալի է ոչ միայն որպես ոլորտ, որից ստացվում է որոշակի ավելացված արժեք, այլև առաջին հերթին՝ որպես բնագավառ, որի որակի և զարգացման մակարդակից է կախված բնակչության պարենային անվտանգությունը, գյուղական բնակավայրերի կենսամակարդակն ու զարգացման հնարավորությունները, մարդկանց առողջությունն ու անվտանգությունը:

Գյուղատնտեսության առաջնային արտադրությունն ու գյուղատնտեսական ապրանքների վերամշակումն ապահովում են ՀՆԱ-ի շուրջ 15%-ը:

Կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է լինելու գյուղատնտեսության ինտենսիվացմանը, արդյունավետության բարձրացմանը, հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողաբար ու արդյունավետ օգտագործմանը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը, անասնաբուծության և բուսաբուծության զարգացմանը, արդի տեխնոլոգիաների ներդրմանը, արտադրված արտադրանքի իրացմանն ու արտահանման խթանմանը, գյուղատնտեսական ամբողջ արժեզրթայում ընդգրկված սուբյեկտների՝ գյուղացիական տնտեսությունների, կոոպերատիվների, գյուղատնտեսական մթերք վերամշակողների եկամուտների ավելացմանը:

2025 թվականին Կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված կլինի նաև գյուղատնտեսական նշանակության հողերի չօգտագործման և մասնատվածության մակարդակի նվազեցմանը, դրանց խոշորացմանը, միավորմանը (կոնսոլիդացմանը), գյուղատնտեսության ճյուղերի զարգացմանը, տնտեսավարողների համար գործունեության նպաստավոր և մրցունակ պայմանների ստեղծմանը, կլիմայի հարմարվողականությանն ու մեղմանն ուղղված միջոցառումների իրականացմանը, գյուղատնտեսական տեխնիկայով և ագրոպարենային ոլորտի սարքավորումներով հագեցվածության ապահովմանը, որը կխթանի արտադրողականության բարձրացումն ու մրցունակ և անվտանգ ապրանքների արտադրմանը, գյուղատնտեսական մթերքների շուկայահանմանը և արտաքին շուկաների դիվերսիֆիկացմանը, գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունների խորացմանը, գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ամբողջական ներդրման համար նախադրյալների ստեղծմանը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, խոշոր ներդրումային ծրագրերին աջակցությանը, հայկական աշխարհագրական նշումներով արտադրանքների գրանցմանը և արտադրմանը:

ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Հայաստանը գրավիչ երկիր է ներդրումային և գործարար միջավայրի տեսանկյունից: Ներդրումների ներգրավումը և աջակցությունը, օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ օրենսդրական դաշտի և միջավայրի ստեղծումը Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից են: Անցած տասնամյակի ընթացքում իրականացվել են կարևոր բարեփոխումներ, որոնք նպաստել են Հայաստանի՝ օտարերկրյա ներդրումների համար ավելի բարենպաստ լինելուն՝ ներառելով ինչպես իրավական համակարգի բարեփոխումները, այնպես էլ գործարար ընթացակարգերի հեշտացման գործնական քայլերը:

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը պահանջում է մի շարք շրջանակային բարեփոխումներ՝ ուղղված տնտեսության ներուժի վերականգնմանը, որը հնարավոր կլինի ներդրումային միջավայրի ճկունությունն ապահովելու և ներդրումների ներգրավման միջոցով: Տնտեսական քաղաքականության թիրախներին հասնելու համար անհրաժեշտ է լինելու ներդրում/ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել առնվազն 25%-ի: Կառավարության քաղաքականությունը միտված է լինելու օտարերկրյա ուղղակի ներդրումներ/ՀՆԱ 6% հարաբերակցությունն ապահովելուն՝ շեշտադրելով որակյալ, գիտելիքահենք ներդրումային ծրագրերը: Գործարար և ներդրումային միջավայրի ճկունությունն ապահովելու նպատակով իրականացվելու են կառուցվածքային բարեփոխումներ, որոնք նպատակ են ունենալու ընդլայնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հասանելի տնտեսական հնարավորությունների դաշտը և առավելագույնս խրախուսելու հատկապես գիտելիք ձևավորող ներքին և օտարերկրյա մասնավոր ներդրումները, բարձրացնելու վերջիններիս շահութաբերությունը:

Սահմանափակ ներքին շուկայի պայմաններում ՀՀ ներդրումային գրավչությունը պայմանավորված է լինելու նաև ԵԱՏՄ, ԵՄ, Իրանի շուկաների հասանելիության և միաժամանակ գործարար ու ներդրումային միջավայրի տվյալ շուկաների համադրությամբ առավել բարենպաստ լինելու հանգամանքներով: Ներդրումային քաղաքականության նպատակներից է առնվազն ԵԱՏՄ, հարևան և տարածաշրջանի երկրների համեմատ լավագույն, առավել ճկուն ներդրումային դաշտի ձևավորումը՝ ազատ ու հավասար մրցակցության, ինչպես նաև կանխատեսելիության իմաստով և առաջնային դիրքի պահպանման նպատակով դրա շարունակական բարելավումը: Կառավարության ներդրումային քաղաքականության նպատակներից են նաև ապահովել ներդրումների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ՝ միջազգային լավագույն պրակտիկաների ձևաչափով՝ կարևորելով ազատ ու հավասար մրցակցությունը, բիզնեսի համար կանխատեսելիությունը և առաջնային դիրքի պահպանման նպատակով դրա շարունակական բարելավումը: Ներդրումային քաղաքականության առաջնահերթ թիրախը հանդիսանում է նորարարական, նոր գիտելիք ստեղծող ծրագրերի իրագործման համար առավել արագ և ճկուն գործընթացների, ինչպես նաև մրցունակության գործոնների առավելագույն հասանելիության ապահովումը:

Միաժամանակ ներդրումային և գործարար միջավայրի բարելավման նպատակով նախատեսվում է իրականացնել տնտեսապես բարդ ապրանքների արտահանման դիվերսիֆիկացմանն ուղղված թիրախային միջոցառում՝ արդյունաբերության բնագավառի ներդրումային ծրագրերի համար (Հայաստանի Հանրապետությունում տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ զբաղվող առևտրային ընկերություններին պետական աջակցության տրամադրման ծրագիրը հաստատվել է Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1867-Ն որոշմամբ) :

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության շրջանակներում կշարունակվեն ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի առևտրի և առևտրին առնչվող հարցերի ուղղությամբ ամրագրված դրույթների և պայմանավորվածությունների արդյունավետ ապահովումն ու իրականացումը:

Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում կշարունակվեն երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման և առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրերի և հուշագրերի մշակման աշխատանքները և դրանցից բխող միջոցառումների իրականացումը, ներքին շուկայի գործառնության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների բացահայտմանը և վերացմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև նավթի և նավթամթերքի միասնական շուկայի և ալկոհոլային միասնական շուկայի ձևավորման աշխատանքների իրականացումը և համակարգումը:

ԱՀԿ հետ համագործակցության շրջանակներում կշարունակվեն իրականացվել ԱՀԿ անդամակցությամբ ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարումն ու ԱՀԿ համաձայնագրերով ամրագրված դրույթների կիրառումը, ինչպես նաև կձեռնարկվեն միջոցներ համագործակցության ընդլայնման և խորացման ուղղությամբ:

ԱՊՀ համագործակցության շրջանակներում կշարունակվեն «Ազատ առևտրի գոտու մասին» պայմանագրից, ինչպես նաև մինչև 2030 թվականն ընկած ժամանակահատվածում ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարությունից բխող միջոցառումների իրականացման աշխատանքները:

ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Որակի ենթակառուցվածքի՝ տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտների զարգացումը նպատակուղղված կլինի.

- անվտանգ արտադրանքի շրջանառության ապահովմանը և սպառողների շահերի պաշտպանության մակարդակի բարձրացմանը,
- առևտրում առկա տեխնիկական խոչընդոտների նվազեցմանը, մրցունակ արտադրանքի արտադրության խթանմանը և անբարեխիղճ գործելակերպի կանխարգելմանը,
- տեղական արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանը և նոր շուկաների ձեռքբերմանը, «Արտադրված է Հայաստանում» արտադրանքի ճանաչելիության բարձրացումը,
- տնտեսության զարգացման գերակա ճյուղերում անհրաժեշտ ստանդարտների մշակմանը և ներդրմանը,
- տնտեսության տարբեր ճյուղերում միջազգայնորեն ճանաչելի, հետևելի, ճշգրիտ չափումների ներդրմանը՝ ապահովելով ՀՀ-ի բազմաթիվ ոլորտներում կիրառվող սարքավորումների ճշգրտությունը և չափագիտական անկախությունը,
- ՀՀ-ում փորձարկման լաբորատոր կարողությունների զարգացմանը,
- լաբորատոր փորձարկումների հիման վրա ճշգրիտ ախտորոշումների իրականացմանը,
- տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC, IAF) հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված երկկողմ և բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքմանը և միջազգային ճանաչում ունեցող հավատարմագրման համակարգի ձեռքբերմանը
- համապատասխանության գնահատման փաստաթղթերի հասանելիության ապահովումը հիմնական արտահանման շուկաներում,
- առանց լրացուցիչ համապատասխանության գնահատման, ֆինանսական ռեսուրսների և ժամանակի ծախսի ԵՄ երկրներ արտադրանքի արտահանման ապահովմանը՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ տեղական արտադրողի համար և բացառելով նույն արտադրանքի վերագնահատման (կրկնակի փորձարկման և սերտիֆիկացման) անհրաժեշտությունը:

ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունը աջակցելու է դրամով արժեթղթեր թողարկող ընկերություններին՝ դյուրացնելով վերջիններիս մուտքը դեպի կապիտալի շուկա: Մասնավորապես, աջակցություն է տրամադրվելու ինչպես պարտատոմսերի, այնպես էլ բաժնետոմսերի թողարկման, տեղաբաշխման և բորսայում ցուցակման համար: Ավելին, նախատեսվում է միջազգային վարկանիշային գործակալություններից վարկանիշի ստացման և սպասարկման առաջին տարվա ծախսերի մինչև 50%-ի չափով սուբսիդավորում, սակայն

ՀՀ-ում գործունեություն իրականացնող ֆոնդային բորսայում ցուցակման դեպքում՝ առաջին տարվա ծախսերի մինչև 80%-ի չափով սուբսիդավորում: Արդյունքում, նախնական գնահատմամբ, իրական հատվածը ներկայացնող և միջազգային հեղինակավոր վարկանիշավորող կազմակերպությունների կողմից վարկանիշավորված պարտատոմսերի նոր թողարկողներ ի հայտ կգան, որոնք երկարաժամկետում հնարավորություն կստանան դիվերսիֆիկացնելու իրենց ֆինանսավորման աղբյուրները, ինչը թույլ կտա հաղթահարել ունեցած գրավի իրացվելի արժեքով պայմանավորված վարկավորման սահմանափակումները՝ բիզնեսի հետագա զարգացման ֆինանսավորումը դնելով նոր և առավել հրապարակային և թափանցիկ հիմքերի վրա: Ի հավելումն, ակնկալվում է, որ կմեծանա պարտատոմսերի շուկայում ոչ ֆինանսական հատվածի ընկերությունների ներկայացվածությունը, ինչը կնպաստի նշյալ շուկայում որակական փոփոխությունների ի հայտ գալուն:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՅՆՈՒՄ

Ներկայումս ՀՀ-ում բիզնեսի ֆինանսավորման հիմնական աղբյուրը բանկային վարկն է: Այսպիսի իրավիճակում տնտեսավարող սուբյեկտները հաճախ ի վիճակի չեն լինում ֆինանսավորել ընդլայնման նախագծերը կամ շրջանառու միջոցները բանկերի միջոցով մի շարք պատճառներով, որոնցից են՝ գրավադրման համար ակտիվների պակասը, ակնկալվող դրամական հոսքերի անկանխատեսելիությունը, բարձր տոկոսադրույքները և այլն:

Այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրները չափազանց կարևոր նախապայման են կապիտալի շուկայի զարգացման և ընկերությունների՝ բորսայում ցուցակման համար, քանի որ մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերը ոչ միայն տրամադրում են ֆինանսական կապիտալ, այլ նաև օժանդակում են տնտեսավարողներին՝ զարգացնելու ներքին ֆինանսական կառավարման հմտությունները, ներդնելու կորպորատիվ կառավարման համակարգեր և բերում են թափանցիկ, աուդիտ անցած գործունեության: Առանց նշված նախապայմանների և նմանատիպ արտաքին խթանների, գործնականում դժվար է հանդիպել ընկերությունների, որոնք պատրաստ կլինեն մասնակցել կապիտալի շուկայում՝ ինչպես բաժնեմասերի, այնպես էլ պարտատոմսերի ցուցակման միջոցով:

Արդյունքում բիզնեսը թերի է զարգանում, և տնտեսավարողները չեն իրագործում իրենց ամբողջ ներուժը: Ուստի էլ ավելի կարևոր է դառնում բիզնեսի ֆինանսավորման ավանդական միջոցներից բացի նաև այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների ընձեռած հնարավորությունների օգտագործումը՝ համավարակի ազդեցությունը մեղմելու և ներդրումներ ներգրավելու միջոցով տնտեսության երկարաժամկետ զարգացումն ապահովելու նպատակով:

Տեղական ինքնակառավարման համակարգում նախատեսվում է՝

- ՏԻՄ համակարգի զարգացման և լիազորությունների ապակենտրոնացման քաղաքականության առկա խնդիրների լուծում՝ վարչական (համայնքների միավորման գործընթացի ավարտով և որպես դրա հետևանք վերջիններիս ունակությունների ավելացմամբ պայմանավորված՝ ՏԻՄ հզորացում ու տեղական ժողովրդավարության զարգացում,
- ՏԻՄ-երի կողմից համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և համայնքի տարեկան աշխատանքային պլանը մշակելու, հաստատելու, դրանց կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաշվետվություն ներկայացնելու և հրապարակելու վերաբերյալ օրենսդրական պարտադիր պահանջների կատարմանն ուղղված գործընթացների կազմակերպում,
- ՏՏ կիրառության առումով ՏԻՄ-երի կարողությունների զարգացմանը միտված ծրագրերի իրականացում, տեղեկատվական համակարգերի կիրառության ընդլայնման միջոցով ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովում, ՏԻՄ-երում կիրառվող կառավարման տեղեկատվական համակարգերի և պետական մարմինների էլեկտրոնային համակարգերի փոխգործելիության հաստատում և ընդլայնում:

Տարածքային զարգացման նպատակով նախատեսվում է՝

- մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների մեղմում,
- հանրապետական գործադիր մարմինների կողմից ՀՀ մարզերում իրականացվող ծրագրերի մշտադիտարկման համակարգի կատարելագործում:
- Տեղական ինքնակառավարման համակարգի, տարածքային, տնտեսական, ֆինասական և քաղաքական դերի բարձրացման նպատակով նախատեսվում է՝
- համայնքային ծառայողների կարողությունների կատարելագործում,
- համայնքների միավորման արդյունքում համայնքային ծառայության ոլորտում առաջացած նոր պահանջների գույքագրում, մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացում:

2025 թվականին կշարունակվեն ՀՀ համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման գործընթացները:

ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կներդրվի ԵՄ չափանիշներին համապատասխան աղբահանության ինտեգրված համակարգ, այդ թվում՝ շահագործման կիսնձևվեն հանրապետությունում կառուցված առաջին սանիտարական աղբավայրը և փոխաբեռնման կայանները:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տրանսպորտային համակարգի կարևորագույն խնդիրներից է երկրի ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքների գործունեության արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև տնտեսության և ազգաբնակչության պահանջների բավարարման որակի բարձրացման միջոցով՝ անվտանգ և արդյունավետ տրանսպորտային ծառայությունների ապահովումը:

Երթևեկության ինտենսիվության աճի, ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների անվտանգության և արդյունավետության ապահովման նպատակով 2025թ.-ին նախատեսվում է իրականացնել միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում, միջին նորոգում, ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում՝ ինչը կապահովի ճանապարհների և կառույցների պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:

2025թ.-ին վարկային միջոցների հաշվին կշարունակվի Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի Աշտարակ-Թալին, Քաջարան-Ագարակ, Քաջարանի թունել տանող ճանապարհահատվածների վերակառուցման աշխատանքները, ինչպես նաև կմեկնարկի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի հողերի օտարման և վերակառուցման աշխատանքները:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Կշարունակվեն Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման արդիականացման աշխատանքները՝ ապահովելու Հայկական ԱԷԿ-ի աշխատանքը մինչև 2026 թվականը և «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետը երկարացնելու (ՇԺԵ-2) ծրագրով նախատեսված աշխատանքները, ատոմային էլեկտրակայանի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետը ևս 10 տարով՝ մինչև 2036թ. , երկարաձգելու նպատակով: Կմեկնարկեն 40 և ավելի տարիներ շահագործման մեջ գտնվող «Շահումյան-2», «Մարաշ» և «Եղեգնաձոր» ենթակայաններին վերակառուցման նախապատրաստական աշխատանքները:

ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ջրային տնտեսության ոլորտում կարևորվում է բարեփոխումների շարունակման գործընթացի ապահովումը, նոր գաղափարների իրացումն ու ոլորտի զարգացման քաղաքականությունից բխող հիմնախնդիրների լուծումը՝ մասնավորապես, ջրամատակարարման որակի բարձրացումը, յուրաքանչյուր սոցիալական խմբի և շահառուի համար ծառայությունների հասանելիության ապահովումը, ոռոգվող հողատարածքների ընդլայնումը:

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել համակարգերի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը: Առաջնահերթ խնդիր է համակարգերի կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացումը՝ ներառելով մասնավոր կառավարման բաղադրիչը, ինչպես նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը:

Միաժամանակ, շարունակվելու են կարևորագույն հիդրոտեխնիկական կառուցվածքների, այդ թվում՝ ջրամբարների պատվարների ամրապնդման ու նորոգման աշխատանքները՝ երաշխավորելով դրանց անվտանգ ու անխափան շահագործումը:

Հասանելի և որակյալ ծառայությունների մատուցում ապահովելու նպատակով 2025 թվականին շարունակվելու են ներդրումների կատարումը ջրային ոլորտում: Ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված կլինի համակարգերի պահպանմանը և վերականգնմանը, առկա ենթակառուցվածքների արդիականացման և նորերի կառուցմամբ ծառայությունների մատուցման էներգատար կառուցվածքների փոփոխմանը, համակարգերում հաշվառելիության համակարգի բարելավմանն ու արդիականացմանը:

ՀՀ ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական միջոցառումները՝

- ջրային պաշարների մակերևութային հոսքի կառավարման նպատակով իրականացվելու է ջրամբարների նախագծման աշխատանքները և մեկնարկելու է ջրամբարների կառուցման գործընթացը,
- «Արփա-Սևան» թունելի վթարային առանձին հատվածների հիմնանորոգման աշխատանքներ, որոնց շնորհիվ ապահովվելու է թունելի հուսալի և անխափան շահագործումը,
- ցերեկային ժամերին առաջացած պոտենցիալ ջրերը, ինչպես նաև գիշերային ժամերին չօգտագործելու հետևանքով առաջացած ջրի ծավալները կուտակելու նպատակով մեկնարկելու են օրվա կարգավորման ջրավազանների կառուցման և վերակառուցման գործընթացը,
- իրականացվելու են գետերի ափերի ամրացման համար նախագծման և շինարարական աշխատանքներ,
- շարունակվելու են խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման և կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման աշխատանքները,
- շարունակվելու են ջրի և էլեկտրաէներգիայի խնայողության խրախուսման, ջրամատակարարման տևողության ավելացման և ջրի որակի բարելավման միջոցառումներ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱ

Քաղաքացիական ավիացիայի ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով կշարունակվի թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակների համապատասխանեցումը եվրոպական և միջազգային ստանդարտներին:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ

Պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման շնորհիվ կբարձրացվեն պետական գույքի մասնավորեցումից, օտարումից և օգտագործումից եկամուտները, ինչպես նաև տնտեսական շրջանառության մեջ ներկայումս պետական սեփականություն հանդիսացող գույքի ներգրավվածությունը:

Կիրականացվեն աշխատանքներ պետական համակարգի մարմինների և պետական կազմակերպությունների կողմից վարձակալված՝ ոչ պետական սեփականություն համարվող տարածքները պետության սեփականությունը համարվող համապատասխան տարածքներով փոխարինելու ուղղությամբ:

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունը նպատակադրվել է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր:

Կառավարությունը ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը սահմանում է որպես զինված ուժերի մարտունակության ապահովման և բարձրացման, տնտեսական աճի, գիտական և տեխնոլոգիական առաջընթացի առանցքային գործոններից մեկը:

Բարձր տեխնոլոգիաների և ռազմարդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ միջոցառումների շրջանակներում 2025թ. նախատեսվում է.

Նպաստել Հայաստանում բարձր տեխնոլոգիական ոլորտի մասնագետների պատրաստմանը և կարողությունների զարգացմանը խթանելով Հայաստանի՝ որպես գիտելիքահենք տնտեսություն առաջատար դիրքի ձևավորմանը:

Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիաների ոլորտի տնտեսավարողներին ազգային և միջազգային մակարդակում մրցունակ մնալու և զարգանալու հնարավորություն ընձեռելու նպատակով տրամադրել պետական աջակցություն՝ պետական ու մասնավոր հատվածների համագործակցության միջոցով գիտելիքահենք տնտեսության զարգացման ուղղությամբ իրական հնարավորություններ ստեղծելու հրամայականով:

Զարգացնել բարձր տեխնոլոգիական ոլորտի էկոհամակարգը՝ ներառյալ թիրախավորված գիտահետազոտական աշխատանքների, ստեղծագործական խմբերի, նորաստեղծ ընկերությունների ֆինանսավորումը, ինչպես նաև միջազգային հայտնի աքսելերացիոն ծրագրերին մասնակցելու համար տրամադրվող աջակցության ապահովումը:

Հայաստանում հայկական սփյուռքի ներգրավածությունն ապահովելու նպատակով նախատեսվում է տարբեր ֆորմատներում հայկական ընկերությունների, կազմակերպությունների և անհատների հետ շարունակական համագործակցության հարթակների ձևավորում, որի շնորհիվ հնարավորություն կստեղծվի օգտագործել սփյուռքի մասնագիտական կարողություններն և ձևավորված հսկայական կապերը:

Կշարունակվի Ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների զարգացումը, մասնավորապես՝ բիզնես արքստրատորի շենքի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքները, սուպերհամակարգչի անխափան աշխատանքի ապահովումը:

Կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, գործարար միջավայրի բարելավման, քաղաքացիների կյանքի որակի բարձրացման և պետական մարմինների հետ առնչվելու դյուրացման, ինչպես նաև միջազգային տնտեսական գործընթացներին արդյունավետ մասնակցելու նպատակով, նախատեսվում է զանգվածաբար կիրառել և զարգացնել թվային տեխնոլոգիաներ: Զուգահեռաբար բարձրացվելու է նաև կիրեռանվտանգության և ինտերնետ հասանելիության մակարդակը Հայաստանում:

Աջակցել միջազգային շուկաներում հայկական բարձր տեխնոլոգիական ընկերությունների, նրանց ստեղծած արտադրանքի և ծառայությունների պատշաճ ներկայացմանը և միջազգային G2G (կառավարություն-կառավարության) և B2B (բիզնես-բիզնես) համագործակցության պլատֆորմների զարգացմանը:

Ձեռնարկել միջոցներ բարձր լուծաչափի տիեզերալուսանկարներ ձեռքբերելու և մշակելու ուղղությամբ:

Ռազմարդյունաբերության զարգացման ուղղությամբ պլանավորվում է ավելացնել նոր տեխնոլոգիական ուղղություններով գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը, ինչպես նաև ապահովել արտադրական կարողությունների զարգացումը, զորային և պետական փորձարկումների համար նախատեսված ռազմարդյունաբերական փորձանմուշների համար անհրաժեշտ հումքի, նյութերի, բաղկացուցիչների արտադրության կազմակերպումը:

2025 թվականին կշարունակվեն ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոննիթրինգի համակարգի գործարկման աշխատանքները, որի արդյունքում հաճախականային սպեկտրի հսկումը դարձել է ավելի արդյունավետ՝ զերծ պահելով եթերը վնասակար խանգարումներից:

Թվային փոխակերպման գործընթացի շրջանակներում նախատեսվում է էլեկտրոնային նույնականացման, կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի արդիականացում, բաց տվյալների քաղաքականության, կիրեռանվտանգության, «Ամպայինն առաջինը» քաղաքականության ներդրում: Նախատեսվում է թվային ծառայությունները համապատասխանեցնել Հայաստանի թվային ճարտարապետության հայեցակարգային սկզբունքներին: Թվային փոխակերպման գործընթացի ֆինանսավորման կոնսուլիդացումը կբացառի համակարգերի կրկնությունները և կապահովի արդյունավետություն:

Ոլորտում իրագործվող ծախսային ծրագրերն ունեն ռազմավարական նշանակություն, որոնց իրականացման արդյունքում կապահովվեն ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումն ու քաղաքաշինական միջոցներով բնակչության կյանքի որակի հետևողական բարելավումը, բնակարանային խնդիրների լուծումը:

Ոլորտի քաղաքականության հիմնական թիրախներն են.

- Քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերի միջազգային և եվրոպական նորմերին ու ստանդարտներին համապատասխանեցում,
- Քաղաքաշինության բնագավառում պետական ծրագրերի իրականացման ապահովում:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությունը շարունակում է իրագործել ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով ամրագրված քաղաքականությունը, որն ուղղված է ՀՀ ինքնիշխանության, տարածքային ամբողջականության ու պետական շահերի պաշտպանությանը, ՀՀ շուրջ անվտանգային միջավայրի ձևավորմանն ու անմիջական հարևանությամբ՝ Հարավային Կովկասում կայուն խաղաղության հաստատմանը, տարածաշրջանի ենթակառուցվածքների ապաշրջափակմանը՝ ՀՀ կառավարության մշակած «Խաղաղության խաչմերուկ» հայեցակարգի շրջանակներում, ՀՀ տնտեսական դիմակայունության բարձրացմանը, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների կարիքների հասցեագրմանը, գործընկերների հետ համագործակցության խթանմանը և հարաբերությունների խորացմանը, երկկողմ և բազմակողմ միջազգային հարթակներում գործունեության ծավալմանը, օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց շահերի պաշտպանության ապահովմանը, միջազգային և տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ներգրավվածության շարունակական ավելացմանը, միջազգային կազմակերպություններում արտաքին քաղաքական, անվտանգային, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ ոլորտներին առնչվող ՀՀ հետաքրքրությունների առաջնդմանը:

ՀՀ կառավարությունը, հավատարիմ մնալով տարածաշրջանում խաղաղության հաստատման իր օրակարգին, ջանքեր է գործադրում Ադրբեյջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, այդ թվում՝ խաղաղության համաձայնագրի ստորագրման և 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա սահմանների սահմանազատման ուղղությամբ:

Շարունակվում է աշխատանքը Ադրբեյջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների, պատանդների և պահվող այլ անձանց ազատ արձակման ուղղությամբ:

ՀՀ կառավարությունը կարևորում է Հայաստան-սփյուռք գործակցության զարգացումը, որը նպատակաուղղված է հայ ինքնության պահպանմանը, հայրենադարձությանն ու Հայաստանում հայրենադարձների ինտեգրմանը, աշխարհասփյուռ հայության մարդկային, մտավոր, տնտեսական ներուժի՝ հայրենիքի կայուն զարգացման նպատակի շուրջ համախմբմանը:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման համար կարևորվում է ամուր կապերի հաստատումը՝ սփյուռքի հետ գործընկերության, ծրագրերի և միջոցառումների շնորհիվ:

Սփյուռքում հայության առջև ծառայած հիմնական մարտահրավերներն են հայ երիտասարդների մեջ ազգային ինքնության պահպանման հարցը, ուժացման դեմ պայքարը՝ համայնքային կառույցների գործունեության արդյունավետության բարձրացման ճանապարհով, միջհամայնքային կապերի ընդլայնումն ու զարգացումը, ներուժի օգտագործումը համազգային նշանակության խնդիրների ձևակերպմանն ու լուծման նպատակով:

Հայաստան-Սփյուռք գործակցության համատեքստում անհրաժեշտ է խթանել համայնքային կառույցների գործունեությունը, դրանցում սփյուռքահայ երիտասարդների ներգրավվածության ընդլայնման, համայնքային գործիչների՝ որպես կայացած առաջնորդի, ղեկավարման կարողությունների և հմտությունների զարգացումը, Հայրենիքի հետ բազմակողմանի կապերի ապահովումը:

Հայաստան-Սփյուռք գործակցության համատեքստում կարևորվում է սփյուռքի մասնագիտական ներուժի ներգրավումը Հայաստանի ինստիտուցիոնալ զարգացմանն ու հզորացմանը, որը կնպաստի նաև մասնագիտական հայրենադարձությանը:

Հայաստան-Սփյուռք գործակցության մեջ առանցքային նշանակություն ունեն նաև հանրային կապերն ու աշխարհասփյուռ հայության իրազեկվածության ապահովումը՝ ուղղված Հայաստանի հանրությանն ու Սփյուռքի համայնքներին, ինչպես նաև միջազգային հանրությանը:

Տեղեկատվությունը լսարանին ճիշտ հասցեագրելու համար կարևոր է լրագրողական ու մասնագիտական հանրույթի հետ գործընկերային կայուն կապերի ստեղծումն ու արդյունավետ աշխատանքը, տեղեկատվական դաշտում Հայաստան-Սփյուռք գործակցության ու դրա ամրապնդմանն ուղղված ծրագրերի, սոցիալական մեդիայի բոլոր հարթակների ակտիվ գործածումը, մեդիա արշավների իրականացումը, ներգրավվածությունը սոցիալական նախաձեռնություններում և այլն:

Հայաստան-Սփյուռք գործակցության կարևոր ուղղություններից է աջակցությունը սփյուռքի ներդրողներին և բարեգործներին՝ Հայաստանում իրենց ծրագրերն իրականացնելիս:

ՀՀ պետական քաղաքականությունը միտված է մշակել և իրականացնել միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն Հայաստանի զարգացման գործընթացում Սփյուռքի լիարժեք ներգրավմանը:

ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

2025 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով սահմանված միջոցառումները:

Արդարադատության արդյունավետության բարձրացման համար կշարունակվեն վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացմանն ուղղված աշխատանքները: Այս համատեքստում կարևորվում է հաշտարարության ինքնակարգավորման համակարգի զարգացումը և հաշտարարների համայնքի կարողությունների շարունակական զարգացումը, ինչպես նաև Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնին աջակցություն ցուցաբերելը մինչև վերջինիս կայուն գործունեության հասնելը:

Դատական համակարգի բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է աշխատանքներ տանել նոր մասնագիտացված դատարանների և դատավորների ենթամասնագիտացումների ստեղծման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը գնահատելու ուղղությամբ:

Սնանկության ոլորտի բարեփոխումների համատեքստում նախատեսվում է արդեն իսկ մշակված հայեցակարգի հիման վրա մշակել սնանկության մասին մեկ միասնական իրավական ակտի նախագիծ, որով լուծում կտրվի սնանկության ոլորտի իրավակիրառ պրակտիկայում բացահայտված խնդիրների հիմնական մասին, կկրճատվեն սնանկության գործերի քննության ժամկետները, կավելացվեն ֆինանսական առողջացումների դեպքերը և կներդրվեն սնանկության հատուկ ընթացակարգեր: Ակնկալվում է, որ մեկ միասնական ակտի շրջանակում անդրադարձ կկատարվի սնանկության ինչպես ընթացակարգային, այնպես էլ նյութական ասպեկտներին:

Դատաիրավական բարեփոխումների շրջանակում անհրաժեշտ է նաև անդրադարձ կատարել առևտրային կազմակերպություններին վերաբերող իրավակարգավորումները կորպորատիվ իրավունքի ժամանակակից մոտեցումներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Այդ համատեքստում անհրաժեշտ կլինի մշակել առևտրային իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող համապարփակ իրավական ակտի նախագիծ:

Իրավաբանական օգնության ոլորտի բարեփոխումներով նախատեսվում է անհատույց (pro bono) իրավաբանական օգնության տրամադրման կառուցակարգերի խրախուսման և դրանց պատշաճ տրամադրումն ապահովող այլ միջոցների նախատեսում, ինչպես նաև քայլեր կձեռնարկվեն նման օգնության տրամադրման էլեկտրոնային հարթակի ստեղծման ուղղությամբ:

2025թ. արդարադատության ոլորտում նախատեսվում է իրականացնել տարբեր էլեկտրոնային հարթակների ներդրման և արդիականացման աշխատանքներ, շարունակել և ավարտել ընթացիկ ծրագրերը, ապահովել համակարգերի սպասարկումը: Մասնավորապես՝

2024 թվականի փետրվարի 1-ից պաշտոնապես կիրառվում է քաղաքացիական դատավարության էլեկտրոնային համակարգը: Նախատեսվում է նաև Բարձրագույն դատական խորհրդի՝ սնանկության էլեկտրոնային համակարգի գործարկման մասին հայտարարության հրապարակմամբ պաշտոնապես կիրառել այս համակարգը: 2023 թվականի դեկտեմբերից կիրառվում է բռնագանձման որոշ պահանջներով գործեր նոտարների իրավասությանը հանձնելու օրենսդրական փոփոխություններով պայմանավորված այդ վարույթների ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով քննությունն ապահովող համակարգը: Կիրառվում է հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր և ամբողջական ծրագրային ապահովումը: Ներդրվել է էլեկտրոնային հաշտարարության համակարգը: Արդիականացվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման էլեկտրոնային համակարգը, որն առաջիկայում նախատեսվում է գործարկել: Ավարտական փուլում է գտնվում վարչական գործերով էլեկտրոնային կառավարման համակարգի ներդնումը: 2025թ. կապահովվի նշված համակարգերի անխափան աշխատանքը, շարունակական սպասարկումը և համաչափ զարգացումը: Նախատեսվում է ապահովել նաև առկա այլ համակարգերի սպասարկումը, այդ թվում՝ պրոբացիայի ծառայության համակարգը, լիցենզիաների էլեկտրոնային գրանցամատյանի համակարգը, ՔԿԱԳ գործակալության էլեկտրոնային համակարգը:

Մշակվել են տեխնիկական առաջադրանքներ քրեական գործերով էլեկտրոնային համակարգի, միասնական «էլեկտրոնային նոտար» համակարգի, դատական արխիվի էլեկտրոնային կառավարման համակարգի, քրեակատարողական էլեկտրոնային կառավարման նոր համակարգի համար, նախատեսվում է սկսել մրցութային ընթացակարգեր:

Իրականացվում են իրավաբանական անձանց պետական ռեգիստրի նոր համակարգի մշակման աշխատանքները, որոնք նպատակ ունեն թվայնացնել բիզնես ստեղծելու և վարելու հետ կապված բոլոր գործառույթները:

Նախատեսվում է ներդնել էլեկտրոնային արդարադատության միասնական էլեկտրոնային կառավարման համակարգ, ինչպես նաև ազգային արխիվի միասնական էլեկտրոնային կառավարման համակարգ:

ՀԱԿԱԿՈՒՌՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակելու է իրականացնել հակակոռուպցիոն քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում, որը Կառավարության կողմից հաստատվել է 2023 թվականի հոկտեմբերի 26-ին:

Վերոնշյալ ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի շրջանակներում հիմնական թիրախային նպատակները հանգում են հետևյալին .

Նախատեսվում է կատարելագործել կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմները՝ կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության համակարգի տարրերին առնչվող օրենսդրական դաշտի համապարփակ և միասնական կարգավորումներ ներդնելով: Նշվածի արդյունքում կվերանայվեն կենտրոնական և ՏԻՄ մարմիններում վարքագծի կանոնների առկա կառուցակարգերը, վերոգրյալ մարմիններում կներդրվեն կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգեր, կներդրվեն իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության նոր մեխանիզմներ: Կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների բարելավման նպատակով արդեն իսկ մշակվել են համապատասխան փոփոխությունների նախատեսվող իրավական ակտերի նախագծեր: Ներդրվել են բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության կառուցակարգեր դատավորների, դատախազների և քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար:

Աշխատանքներ են իրականացվում կոռուպցիայի կանխարգելման ոլորտին առնչվող այլ կառուցակարգերի բարելավման, կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ մարմինների կարողությունների հզորացման ուղղությամբ:

Նախատեսվում է ներդնել և կատարելագործել գործարար բարեվարքության, գործարար իրավունքների պաշտպանության կառուցակարգերը, դյուրինացնել պետություն-բիզնես վարչարարությունը: Նշվածը կապահովվի արդեն իսկ ընդունված Կորպորատիվ կառավարման նոր կանոնագրքի շրջանակներում, պետություն-բիզնես հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանի իրավասությունների և կարողությունների ընդլայնման, հարկային և մաքսային ոլորտներում հակակոռուպցիոն և բարեվարքության մեխանիզմների կատարելագործման, իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման ինստիտուտի զարգացման և այլ գործողություններով:

Կհզորացվեն կոռուպցիայի դեմ պայքար մղող իրավապահ մարմինների, հակակոռուպցիոն դատարանների ինստիտուցիոնալ կարողությունները, կկատարելագործվեն կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ձեռք բերված գույքի, ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի և կառավարման, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության և ազդարարման կառուցակարգերը:

Շարունակական հակակոռուպցիոն կրթություն ապահովելու նպատակով՝ մեկնարկել են մանկապարտեզ-դպրոց-բուհ կրթական շղթայում դասավանդողների վերապատրաստման, դասավանդվող առարկայական ծրագրերի վերանայմանն ուղղված աշխատանքները: Հանրության շրջանում հակակոռուպցիոն բարեփոխումների իրազեկվածության բարձրացման, կոռուպցիայի դեմ պայքարում հանրության դերի կարևորման նպատակով ընդունվել և իրականացվում է հակակոռուպցիոն հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունների ծրագիրը:

Մեկնարկել են հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման նկատմամբ մոնիթորինգի և գնահատման ինստիտուտների կատարելագործման աշխատանքները, նախատեսվում է թվայնացնել գործընթացները և այլն:

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Կառավարությունը շարունակելու է վճռական մնալ վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորման, ինչպես նաև քրեակատարողական համակարգի կայուն զարգացումն ապահովելու հարցում:

Այս համատեքստում հիմնական թիրախային ուղղությունները լինելու են.

- զարգացնել Պրոբացիայի ծառայության կարողությունները և հզորացնել կադրային ներուժը, ինչպես նաև բարելավել սոցիալական երաշխիքները.
- խթանել պրոբացիայի համակարգում էլեկտրոնային կառավարման գործիքների կիրառումը՝ ամբողջությամբ գործարկելով E-probation էլեկտրոնային կառավարման համակարգը և դրանով իսկ ապահովելով պրոբացիայի ծառայողների աշխատանքի թվայնացումը, փաստաթղթաշրջանառության կրճատումը, հաշվետու և թափանցիկ աշխատանքը, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը.
- ազատությունից զրկելուն այլընտրանք հանդիսացող նոր պատժատեսակների և խափանման միջոցների արդյունավետ կիրառման նպատակով Պրոբացիայի ծառայությանը զինել էլեկտրոնային հսկողության համար անհրաժեշտ միջոցներով ու ենթակառուցվածքներով և, ըստ այդմ, ապահովել իրավակիրառ պրակտիկայում էլեկտրոնային հսկողության փաստացի կիրառումը.
- ապահովել քրեակատարողական հիմնարկներում գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց, անչափահասների, մինչև 3 տարեկան երեխա ունեցող և հղի կանանց համար անհրաժեշտ և մատչելի պայմանները.
- ապահովել ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ անչափահասների կրթություն ստանալու իրավունքի շարունակականությունը, մասնագիտական կրթության նոր ծրագրերի ներդնումը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց համար հանրակրթության իրականացումը՝ անկախ տարիքից.
- ներդնել քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանության և ինքնավնասման ռիսկի վերհանման և գնահատման, ինչպես նաև հոգեկան առողջության զննության և ռիսկի գնահատման գործիքակազմը՝ նախականիսելով ինքնասպանության և ինքնավնասման

հետագա դեպքերի առաջացումը, ինչպես նաև նախապես բացահայտելով հոգեկան առողջության վիճակի հնարավոր խնդիրը:

- բարելավել քրեակատարողական ծառայողների սոցիալական երաշխիքները, ինչպես նաև նպաստել քրեակատարողական ծառայողի նոր կերպարի ձևավորմանը:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության նախարարությունը շարունակելու է իրականացնել ոլորտի բարեփոխումները Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագրին համապատասխան:

Ներառական քննարկումների արդյունքում Ծրագրում նախատեսվել են միջոցառումներ՝ միտված մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների վերհանմանն ու ինստիտուցիոնալ կերպով դրանց հասցեագրմանը:

Նախատեսվում է ազատությունից զրկման վայրերում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ, Արդարադատության ակադեմիայում դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրում մշակել և ներդնել զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններին վերաբերող առանձին և համապարփակ վերապատրաստման ծրագրեր և այլն:

Նախատեսվում է նաև ընդունել «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցներ՝ միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ, օրենսդրորեն նախատեսել կատարողական վարույթների ձգձգման հետևանքով առաջացած վնասի փոխհատուցում ստանալու համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոց՝ ըստ «Ավակիմյան vs Հայաստան» ՄԻԵԴ որոշման պահանջների, օրենսդրորեն նախատեսել ազատությունից զրկված անձանց բողոքների քննության առավել արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նախատեսել տվյալ քաղաքացու, նրա ընտանիքի անդամների իրավունքը՝ դիմելու հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու վճիռը վերացնելու պահանջով, հասարակական կազմակերպությունների համար սահմանել դատարան դիմելու իրավունք հանրային նշանակության, կարևորության հարցերով, ներդնել «դատավորի ընկեր» (amicus curie) հասկացության մեխանիզմներն ու կանոնակարգերը ներպետական իրավական համակարգում, կատարելագործել պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համակարգը, որոնց համար լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Նախատեսվում է ՔԿԱԳ էլեկտրոնային համակարգի /e-civil/ արդիականացում, մասնավորապես քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման կամ ՔԿԱԳ այլ գործառույթ կատարելու նպատակով՝ էլեկտրոնային դիմում ներկայացնելու համար էլեկտրոնային /www.e-services.moj.am/ հարթակի միջոցով մատուցվող ծառայությունների շրջանակի ավելացում:

Էլեկտրոնային հարթակով մատուցվող ծառայությունների շրջանակի ավելացմամբ կբարելավվի ՔԿԱԳ ոլորտում ծառայութուններ մատուցող կառույցների և դիմումատուների միջև անմիջական անխափան կապի հնարավորությունը, արդյունքում նշված ոլորտում ծառայությունների մատուցման որակը էականորեն կբարելավվի:

Միաժամանակ նախատեսվում է շարունակել ՔԿԱԳ փաստաթղթային արխիվի թվայնացմանն ուղղված աշխատանքները:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Նախատեսվում է արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության նոր տեղեկատվական համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում, առցանց իրականացվող պետական գրանցման/հաշվառման գործընթացների ընդլայնում, պետական գրանցում/հաշվառում ստացած արխիվային գործերի թվայնացմանն ուղղված աշխատանքների շարունակականության ապահովում, տարբեր համակարգերի և տվյալների շտեմարանների միջև փոխգործելիության շարունակականության ապահովում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված վարույթների թափանցիկ և արդյունավետ իրականացմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների ապահովում, վիճակագրության և հաշվետվությունների թափանցիկության ապահովմանն ուղղված ծրագրերի շարունակականության ապահովում:

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվում է ապահովել անձնական տվյալների պաշտպանության ավելի բարձր մակարդակ՝ համապատասխանեցնելով ոլորտի օրենսդրությունը միջազգային լավագույն ստանդարտներին, այդ թվում՝ ՀՀ կողմից վավերացված «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրությանը (108+ կոնվենցիա), ԵՄ Անձնական տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգին (GDPR), ինչպես նաև հաշվի առնելով Եվրոպական միության և Հայաստանի միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 13-րդ կետով ստանձնած պարտավորությունը, ըստ որի՝ Կողմերը անձնական տվյալների բարձր մակարդակով պաշտպանությունն ապահովելու նպատակով համաձայնում են համագործակցել՝ Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային կառույցների միջազգային իրավական փաստաթղթերին և ստանդարտներին համապատասխան:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է՝

- Մշակել և հրապարակել անձնական տվյալների պաշտպանության լավագույն փորձի վերաբերյալ ուղեցույցներ, հասարակության լայն շրջանակներում իրականացնել թիրախային դասընթացներ, տեղեկատվական արշավներ, տրամադրել իրավախորհրդատվություններ:
- Ներդաշնակեցնել և կատարելագործել անձնական տվյալների մշակում նախատեսող օրենսդրական դաշտը:
- Հզորացնել անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կարողությունները, մասնավորապես՝ փոփոխել վերջինիս կառուցվածքային ստորաբաժանումները, ավելացնել լիազոր մարմնի աշխատողների թիվը, ապահովել վերջիններիս մասնագիտական վերապատրաստումը:
- Համագործակցել անձնական տվյալների պաշտպանության ոլորտի միջազգային դերակատարների հետ, մասնավորապես՝ Եվրաջասթի, Եվրոկոնտրոլի, Գաղտնիության ընդհանուր ասամբլեայի, Եվրոպայի խորհրդի մարմինների հետ, ինչպես նաև խորացնել համագործակցությունը տարածաշրջանային, բալկանյան և ԵՄ անդամ երկրների անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինների հետ:

Վերոնշյալ միջոցառումների իրականացումը բխում է նաև ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի» Անձնական տվյալների պաշտպանության մակարդակի բարելավմանն ուղղված միջոցառումների, մասնավորապես՝ Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կարողությունների (մարդկային ռեսուրսների, մասնագիտական, տեխնիկական) հզորացման արդյունավետ իրականացման անհրաժեշտությունից:

ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈԽՈՋՆՈՒԹՅՈՒՆ

Իրավական փոխօգնության վարչության կողմից մշակվել և ներկայումս շրջանառության փուլում է գտնվում «Քրեական վարույթներով իրավական փոխօգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որն ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է առաջին ընթերցմամբ: Նախագծի խորքային ուսումնասիրման նպատակով Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ կազմակերպվում են աշխատանքային քննարկում շահագրգիռ գերատեսչությունների հետ: Այս փուլում հատկապես կարևոր է ոլորտը կարգավորող մասնագետների միջև մտքերի փոխանակումը, ոլորտային առկա խնդիրների վերհանումը, դրանց լուծմանն ուղղված քայլերի վերհանումն ու իրագործումը: Նախատեսվում է նաև ոլորտը համակարգող մասնագետների կարողությունների զարգացման ծրագրերի մշակում և իրագործում, ինչը կնպաստի ոլորտին առնչվող գործառույթների առավել արդյունավետ իրականացմանը: Բացի այդ, իրավական փոխօգնության շրջանակներում նախատեսվում է հանձնան և դատապարտյալների փոխանցման ոլորտներում միջազգային երկկող և բազմակողմ պայմանագրերի մշակման աշխատանքներ՝ խթան հանդիսանալով միջազգային համագործակցության զարգացման և խորացման համար:

Կրթությունը մարդու հիմնարար իրավունք է, և պետության պարտավորությունն է ապահովել համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն: Այն դասվում է կառավարության ծրագրի գերակայությունների շարքում:

Նախադպրոցական կրթության ոլորտում կշարունակվեն աշխատանքները երեխաների կրթության կազմակերպման, նախադպրոցական հաստատությունների շենքային և գույքային հագեցվածությունը սահմանված պահանջներին համապատասխանեցնելու, մանկավարժական աշխատողների վարձատրության միասնական քաղաքականության և շարունակական աճի հնարավորության ապահովման, կառավարչական հմտությունների բարելավման ուղղությամբ:

Հանրակրթության ոլորտի բարեփոխումները կշարունակվեն հիմնական ուղղություններով՝ միտված սովորողների պարտադիր կրթության որակի բարելավմանը՝ հետևյալ թիրախներով.

- ուսուցիչների ատեստավորման, խրախուսման և մասնագիտական զարգացման գործիքակազմի կիրառում,
- հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման արդյունավետության բարձրացում,
- ներառական կրթության գործընթացում սովորողակենտրոն և արդյունավետ մեխանիզմների կիրառում,
- կրթության բովանդակային հենքի՝ առարկայական ծրագրերի և դասագրքերի բովանդակային որակի բարելավում.
- հանրակրթության ոլորտի ենթակառուցվածքների ուսումնանյութական բազայի արդիականացում՝ առաջնահերթությունը տալով սեյսմակայուն դպրոցաշինությանը, ժամանակակից գույքային հագեցվածությանը և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությանը:

Արտադպրոցական կրթության ոլորտում կշարունակվի կամավոր ատեստավորման համակարգի ներդրումը՝ ուղղված արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների վարձատրության բարձրացմանը:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության ոլորտում կզարգացվեն շրջանավարտների գործնական հմտություններն ու ըստ մասնագիտական պահանջների նրանք կպատրաստվեն աշխատաշուկա մուտքին: Կշարունակվի մանկավարժական աշխատողների վերապատրաստման, ատեստավորման գործընթացը՝ փոխկապակցելով դրանք վարձատրության բարձրացման և հավելավճարների տրամադրման հետ: Ոլորտի առանցքային կարգավորումները սահմանվել են 2024 թվականի հունիսի 24-ից ուժի մեջ մտած «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ նոր օրենքով:

Սփյուռքի ոլորտում իրականացվում է կրթական կարողությունների հզորացման, հայրենագիտական նյութերի բովանդակության բարելավման, Հայաստանի հետ կապի ամրապնդման և մշակութային կյանքի աշխուժացման քաղաքականությունը:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ և ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում կիրականացվեն մի շարք միջոցառումներ՝ ուղղված կրթության որակի բարելավմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը, սոցիալապես խոցելի խավերի համար մասնագիտական կրթության մատչելիության և հասանելիության ապահովմանը:

Գիտության ոլորտը պետք է լինի Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման անկյունաքարային ոլորտներից մեկը, որի զարգացումը հնարավորություն է ընձեռելու Հայաստանին դիմակայել ներկայիս և ապագայի մարտահրավերներին, դառնալ Հայաստանի Հանրապետության առաջընթացի կարևոր մաս:

Գիտության ոլորտի 2025 թվականի պետական քաղաքականության հիմնական թիրախներն են՝

- Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացումը, որը գիտական գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման կարևորագույն գրավականներից է, ինչը հնարավորություն է տալու իրականացնելու մրցունակ գիտական հետազոտություններ ոչ միայն ժամանակակից գիտական սարքավորումների և նյութերի միջոցով, այլ նաև ընձեռելու է գիտական գործունեության համար բարենպաստ ֆիզիկական միջավայր:
- Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացումը, երիտասարդ կադրերի ներգրավումը, գիտնականների աշխատավարձի բարձրացումը,
- Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը, որն իրականացվելու է հետազոտությունների միջազգային չափանիշների սահմանմամբ, հնարավորություն է ընձեռելու ներդնել կատարողականի գնահատման մեխանիզմներ:

Վերջիններիս ուղղված միջոցառումներն են՝

- Ոլորտային համալիր հետազոտությունների համար անհրաժեշտ սարքավորումների, հետազոտությունների համար ավելի նպաստավոր միջավայրի, ինչպես նաև մարդկային ռեսուրսի արդյունավետ օգտագործման պայմանների, գիտական և գիտատեխնիկական բնագավառում միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի և համաձայնագրերի, ինչպես նաև Եվրոպական շրջանակային ծրագրերին Հայաստանի մասնակցության խթանմանն ուղղված մեխանիզմների առկայություն:
- Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ու հետդոկտորական հետազոտությունների ծրագրերի իրականացմանն ուղղված ծրագրերի, ինչպես նաև աշխարհի լավագույն գիտական կենտրոններում վերապատրաստված գիտաշխատողների առկայություն:

- Հետազոտությունների միջազգային չափանիշների սահմանում, կատարողականի գնահատման մեխանիզմների, հեռավար ղեկավարվող լաբորատորիաների, հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների, երկակի նշանակության, կիրառական արդյունքի ձեռքբերման, պետական կարիքներից բխող, գերակա ուղղություններով հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի, ինչպես նաև հիմնարար հետազոտությունների ծրագրերի ընտրության մրցակցային մեխանիզմների առկայություն:

2025 թվականին շարունակվելու են Ակադեմիական քաղաքի ստեղծման ծրագրի իրականացման աշխատանքները:

ՄՇԱԿՈՒՅԹ

2025 թվականին կշարունակվեն մշակութային ժառանգության պահպանության և հանրահոշակման աշխատանքները՝ ուղղված ՀՀ տարածքում և արտերկրում գտնվող մշակութային արժեքների և պատմամշակութային հուշարձանների հաշվառմանն ու գիտական ուսումնասիրությունների իրականացմանը, մշակույթի ոլորտի տեղեկատվական և տոմսային տնտեսության միասնական հարթակի գործարկմանը, ինչպես նաև մշակույթի զարգացման հիմնադրամի գործունեության ապահովմանը:

Կշարունակվի ազգային արվեստների և ավանդույթների հենքի վրա ժամանակակից մարդու ընկալումներին ու ձգտումներին համահունչ արվեստի ստեղծման և տարածման, ազգաբնակչության ստեղծագործական ներուժի խթանման, նոր մտահղացումների ու գաղափարների ներդրման անհրաժեշտ պայմանների ապահովման, մշակութային մրցունակ արտադրանքի ստեղծման, մշակութային միջոցառումների իրականացման և այլ ծառայությունների մատուցումը:

Մշակույթի ոլորտի քաղաքականության հիմնական թիրախներն են.

- պատմամշակութային հուշարձանների ամրակայումը, նորոգումը և վերականգնումը, հանրահոշակումը միջազգային հարթակներում,
- թանգարանային ծառայությունների մատուցումը և ցուցահանդեսների կազմակերպումը,
- գրական արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանումը, զարգացումը և հանրահոշակումը,
- գրադարանների գործունեության արդիականացումը և նոր ծառայությունների ներդրումը,
- ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունն ու հանրայնացումը,
- թանգարանների և պատկերասրահների, թատերահամերգային կազմակերպությունների վերանորոգումը, նյութատեխնիկական բազայի համալրումը,
- մշակութային հաստատությունների ֆինանսավորման նոր մոդելի ներդրման գործընթացի շարունակական ապահովումը,

- Հայաստանի կինոյի հիմնադրամի գործունեության ապահովումը, հայկական կինոժառանգության պահպանումն ու հանրահռչակումը, կինոարվեստի աջակցությունն ու կինոարտադրության զարգացումը, միջազգային համագործակցության ընդլայնումը,
- թատերարվեստի, երաժշտարվեստի, կերպարվեստի և պարարվեստի ոլորտների զարգացումն ու հանրահռչակումը, նորարարական մոտեցումների կիրառումը,
- ինքնագրադ արվեստագետների համար ստեղծագործելու բարենպաստ միջավայրի ձևավորումը և ինստիտուցիոնալ և սոցիալական երաշխիքների ստեղծումը, դրամական խրախուսման ծրագրի կիրարկումը,
- մշակութային կյանքի ապակենտրոնացումը, մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացումը, մարզերում մշակութաժամանցային կենտրոնների ստեղծումը,
- գեղարվեստական կրթության զարգացումը, երեխաների հոգևոր և գեղագիտական ընդունակությունների բացահայտումն ու զարգացումը՝ կրթական ծրագրերի իրականացման և վարպետության դասերի կազմակերպման միջոցով,
- պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնումը՝ ստեղծագործական ներուժի խթանման, մրցունակ արտադրանքի տարածման և արտերկրում հայ մշակույթի հանրահռչակման նպատակով,
- օտարերկրյա կազմակերպությունների հետ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով առկա համագործակցության խորացումը և նոր համագործակցությունների ձևավորումը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

Ոլորտում ՀՀ կառավարության սահմանած հիմնական նպատակներն են՝ ֆիզիկական ակտիվությունը և առողջ ապրելակերպը դարձնել ազգային կենսակերպ, Հայաստանի Հանրապետությունը դարձնել սպորտային բարձր նվաճումների երկիր:

Այս նպատակներին հասնելու համար ՀՀ կառավարության գործունեության ուղղություններն են.

- ազգաբնակչության շրջանում առողջ ապրելակերպի խթանումը զանգվածային մարզական միջոցառումներ կազմակերպելու և դրանցում բնակչության տարիքային և սոցիալական տարբեր խմբեր ներգրավելու միջոցով,
- Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության բարձրացումը բարձրակարգ մարզիկների պատրաստման, ՀՀ առաջնությունների անցկացման, օլիմպիական, պարաօլիմպիկ, սուբօլիմպիկ խաղերին, աշխարհի, Եվրոպայի և այլ միջազգային առաջնություններին միջազգային և տեղական մրցումներին հայ մարզիկների մասնակցության և բարձր նվաճումների խրախուսման, Հայաստանի Հանրապետությունում միջազգային մարզական միջոցառումներ կազմակերպելու միջոցով,
- մանկապատանեկան սպորտի զարգացումը, ենթակառուցվածքների ստեղծման և բարելավման միջոցով համայնքներում և մարզերում մարզական կյանքի աշխուժացումը

- հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Երիտասարդական պետական քաղաքականությունն առաջնահերթությունների, ծրագրերի, միջոցառումների և մեխանիզմների համակարգ է, որն ուղղված է երիտասարդության մասնակցության, սոցիալականացման և ինքնաիրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, երիտասարդության ներուժի ներգրավմանն ու դրա զարգացմանը:

Երիտասարդության ծրագրի նպատակն է՝ երիտասարդության ներուժի իրացման և զարգացման, երիտասարդական մասնակցության խթանման համար սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային պայմանների ստեղծումը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության զարգացմանը և հզորացմանը:

Ոլորտային քաղաքականության հիմնական թիրախներն են.

- Երիտասարդների կարողությունների բացահայտումն ու զարգացումը,
- Հայաստանի մարզերում «Երիտասարդական կենտրոնների» ստեղծումը,
- Հանրային կյանքին և որոշումների կայացման գործընթացներին երիտասարդների մասնակցությունը,
- «Բնակարան երիտասարդ ընտանիքներին» ծրագրի իրականացումը,
- Տարբեր ոլորտների և ժամանակակից մարտահրավերների վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը,
- Երիտասարդության՝ միջազգային միջոցառումներին մասնակցությունը:

ԼԵԶՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեզվական պետական քաղաքականությունն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում հայերենի՝ որպես պետական լեզվի լիարժեք գործառնմանը, հայերենի կենսունակության ու հասանելիության բարձրացմանը, հայերենով ստեղծված և ստեղծվող գիտության, գիր ու գրականության պահպանությանն ու տարածմանը, ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների իրացմանը:

Առողջապահության ոլորտը, որպես սոցիալական կարևոր ոլորտ, հանդիսանում է ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից և Կառավարության հիմնական առաջնահերթություններից մեկը:

Քաղաքացիների համար առողջապահական ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովման նպատակով 2024թ.-ի հունվարից ներդրվեց պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բնակչությանը մատուցվող բժշկական օգնության ու սպասարկման ծառայությունների ֆինանսավորման նոր մեխանիզմ՝ օՖերտայի /չսահմանափակված բյուջեի/ սկզբունքով առողջապահական ծառայությունների ֆինանսավորման մեխանիզմը: ՕՖերտայի կիրառումը նպատակ ունի նպաստելու պայմանագրային գործընթացի և ֆինանսավորման հետ կապված հարաբերությունների պարզեցմանը՝ հնարավորություն տալով վերացնել բժշկական օգնության և սպասարկման ֆինանսական սահմանափակումները՝ կապված պայմանագրային գումարի ամսական համամասնության հետ, ինչպես նաև նվազեցնել հերթագրումները (հերթագրումներ կիրականացվեն միայն բուժհաստատությունների թողունակության անբավարարության կամ պետական բյուջեով տվյալ ծրագրի համար հատկացված ընդհանուր գումարի համամասնության ավարտման դեպքում): Առողջապահության ոլորտի որակի բարելավման ուղղությամբ նախատեսվող մի շարք միջոցառումների իրականացմամբ նախատեսվում է առողջապահական համակարգը առաջիկայում նախապատրաստել առողջության համապարփակ ապահովագրության ներդրմանը:

Բնակչության առողջության պահպանման նպատակով որպես գերակա խնդիր շարունակվելու է դիտարկվել **վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ու վաղ հայտնաբերման ուղղությունների զարգացումը**, որոնց շրջանակներում առողջապահության ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման համար իրականացվող բարեփոխումներն ուղղված են լինելու առողջության առաջնային պահպանման օղակի արդիականացմանը, շարունակական զարգացմանը և արդյունավետության բարձրացմանը՝ պայմանավորված բնակչությանը հասանելի որակյալ բժշկական ծառայություններ մատուցելու անհրաժեշտությամբ:

Մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունների բարելավման ոլորտում շարունակվելու են մայրական (վերարտադրողական), մանկական, այդ թվում՝ նորածնային առողջության բարելավմանն ուղղված միջոցառումներ, սկրինինգներ, որոնք միտված են կանխարգելելու հաշմանդամությունը, հնարավորինս խթանելու ծնելիությունը՝ բարելավելով բնակչության վերարտադրողական առողջությունը, նվազեցնելով պերինատալ կորուստները և հաղթահարելով անպտղությունը:

Դեղերի անվտանգության, արդյունավետության և որակի ապահովման ոլորտում աշխատանքներ կիրականացվեն հանրապետությունում անվտանգ, արդյունավետ, որակյալ և մատչելի դեղեր ունենալու ուղղությամբ՝ դեղային ազգային քաղաքականության մշակման, դեղերի շրջանառության բոլոր փուլերի կանոնակարգման, այս ոլորտի պետական

վերահսկողության բարելավման, հայրենական արտադրության դեղերի մրցունակության ապահովման և տեղական դեղարտադրության խրախուսման միջոցով:

Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը ռազմավարական մեկ այլ կարևոր նպատակ է, որի շրջանակներում ապահովվելու է առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման, ախտորոշման ու կանխարգելման ճանապարհով բնակչության առողջության հիմնական ցուցանիշների բարելավում և այդ հիվանդությունների բարդությունների, հաշմանդամության և մահացության ցուցանիշների կրճատում, ինչպես նաև վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցում, կառավարելի վարակիչ հիվանդություններից մահվան դեպքերի կանխում և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովում:

Իրականացվելու են **առողջ ապրելակերպի խթանման ծրագրեր**, որոնք ուղղված են լինելու առողջության ամրապնդմանը և անառողջ սնվելու սահմանափակմանը, ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման ռիսկի գործոնների ազդեցության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, երեխաների և դեռահասների առողջ ապրելակերպին ուղղված համալիր միջոցառումների իրականացմանը:

Ոլորտի հիմնական խնդիրներից է հանրապետությունում **ուռուցքաբանական ծառայությունների շարունակական բարելավումը**: Ուռուցքաբանական վիրահատությունների գների վերանայման, ճառագայթային բուժման դեպքերի, քիմիաթերապիայի դեղերի ցանկի ընդլայնման և պետության կողմից երաշխավորված անվճար պալիատիվ ծառայության ներդրման միջոցով ուռուցքաբանական հիվանդություններով հիվանդ քաղաքացիներին մատուցվելու են որակյալ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ, միաժամանակ վերջիններիս «փրկելով» հիվանդության բուժման հետ կապված կործանարար ծախսեր կատարելու վտանգներից:

Նախատեսվում է նաև կատարելագործել **վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական դիտարկման համակարգը** հնարավորինս ապահովելով երկրի տարածք վարակիչ հիվանդությունների ներմուծման ու տարածման կանխարգելումը, իմունականխարգելումը և ապահովելով իրական ժամանակում հիվանդությունների մասին տեղեկատվության հաղորդումը:

Առողջապահական կադրային ներուժի ապահովման ոլորտում իրականացվելու են աշխատանքներ բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական բարելավման ուղղությամբ: Ներդրվելու են մեխանիզմներ առողջապահական կադրային ներուժի տարածքային օպտիմալ բաշխման, մարզային առողջապահական կազմակերպությունները որակյալ կադրերով ապահովելու և բժշկի աշխատանքը մարզում հնարավորինս խրախուսելու համար:

Իրականացվում են կապիտալ ծախսեր՝ մարզային առողջապահական կազմակերպությունների շենքային և նյութատեխնիկական պայմանների բարելավման նպատակով: Շարունակվելու է բժշկական հաստատությունների արդիականացման գործընթացը:

Շարունակվում է Առողջապահության նախարարի 29.11.2022թ. N 5491-Լ հրամանով հաստատված **շտապ բժշկական օգնության կենտրոնացված ծառայության ներդրման 2022-2025 թվականների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը**, մասնավորապես՝ Կառավարության 06.07.2023թ. N 1121-Ա որոշմամբ ստեղծված ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ի ձևավորման գործընթացը: Ծառայության ստեղծման նպատակն է ողջ հանրապետության տարածքում միասնական շտապ օգնության ծառայության գործարկումը, որը հնարավորություն կտա առավել օպերատիվ և ռացիոնալ կազմակերպել շտապ և անհետաձգելի բժշկական օգնությունը և սպասարկումը, կենտրոնացված դիսպետչերական կենտրոնի միջոցով վերահսկել բոլոր կանչերի ընթացքը, տևողությունը, կանչերի իրականացման ընթացքում հետևել մեքենաների տեղաշարժին, ուղղորդել կանչի վայր մոտակա ազատ շտապ բժշկական օգնության բրիգադը, անհրաժեշտության դեպքում՝ կազմակերպել և կառավարել պացիենտի ստացիոնար բուժօգնության տեղափոխման գործընթացն՝ անկախ վարչատարածքային բաժանումից: «Հանրապետական շտապ օգնության ծառայության» ամբողջական ձևավորման գործընթացն իրականացվում է աստիճանաբար ներառելով ՀՀ մարզային բժշկական կազմակերպությունների շտապ օգնության ծառայությունները:

Առողջապահության ոլորտի հետագա զարգացումը, մատուցվող ծառայությունների մատչելիության ու որակի, բնակչության առողջությունը բնութագրող ցուցանիշների բարելավումը մեծապես կախված են ոլորտի ֆինանսավորման մակարդակից: Ծրագրային բյուջետավորման ժամանակահատվածում առողջապահության ոլորտը պետք է լինի պետական ծախսային առաջնահերթություններից մեկը:

Սոցիալական պաշտպանությունը պատմականորեն պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկն է, որի հիմնական նպատակներն են երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումն ու Հայաստանի Հանրապետության բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը: Այս նպատակներին հասնելու համար ոլորտում իրականացվում է լայնածավալ պետական միջամտություն:

Ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների բնագավառում 2025 թվականին կշարունակվեն իրականացվել պետական աջակցության մի շարք ծրագրեր, այդ թվում՝ սոցիալական դեպքի վարման ծառայությունների ձեռքբերում, որի շրջանակում անապահով սոցիալական խմբերին հայտնաբերելու համար սոցիալական աշխատողների կողմից իրականացվում է ընտանիքի սոցիալական գնահատում, սոցիալական շտապ օգնություն՝ որոշակի սոցիալական կարգավիճակ կամ գնահատված սոցիալական կարիք ունեցող ընտանիքների ու անձանց կարիքներին արագ արձագանքման ապահովում, սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերում ապրող անձանց օրենսդրությամբ սահմանված սպասարկման ծառայությունների տրամադրում, ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում, նրանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցման տրամադրում առավելագույնը 6 ամիս ժամկետով՝ ամսական 60,000 դրամի չափով, ժամանակավոր օթևանում անօթևան անձանց ծառայությունների տրամադրում՝ անհատական սոցիալական ծրագրերի հիման վրա:

Միաժամանակ, նախատեսվում է Հայաստանի Հանրապետության առանձին վարչատարածքային միավորումում փորձարկել **ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգը**, ըստ որի անցումը Հիբրիդային մեթոդին ենթադրում է անցում ընտանիքի տնօրինվող եկամուտների և ակտիվների հիման վրա նպաստի իրավունքի որոշմանը: Այս համատեքստում քաղաքականությունը հիմնվելու է սոցիալական կարիքի գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություններ տրամադրելու սկզբունքի վրա՝ խրախուսելով անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը:

Ժողովրդագրական իրավիճակի բարելավման նպատակով կշարունակվեն կյանքի կոչվել ծնելիության խրախուսման, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության ծրագրերը, իրագործվել միջոցառումներ, որոնց արդյունքում ակնկալվում է, որ ծնելիության գումարային գործակիցը 1.55-ից կբարձրանա 1.65-ի:

2025 թվականին շարունակվելու են երեխայի ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների տրամադրումը, ինչպես նաև ընտանիքում 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում դրամական աջակցությունը: Կշարունակվեն երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցությունը, զոհված զինծառայողների ծնողների՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման որոշ ծախսերի մասնակի փոխհատուցման տրամադրումը:

- Միաժամանակ, կշարունակվի պետական աջակցությունը՝ ուղղված ԼՂ շրջաններից տեղահանված ընտանիքների, սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովմանը:
- **17.10.2024 թվականին N 1641-L որոշմամբ ընդունվել է ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թթ.-ի ռազմավարությունը**, որի տեսլականն է ունենալ բնակչության հավասարակշռված և կայուն կառուցվածք՝ միտված բնակչության երկարաժամկետ մարդկային կապիտալի զարգացմանն ու կյանքի որակի բարձրացմանը:

Հարկ է նշել, որ ներկայումս մշակման փուլում է

- **Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխման և միասնական սոցիալական ծառայության զարգացման ռազմավարական փաստաթուղթը**, որի նպատակն է հզորացնել միասնական սոցիալական ծառայության ինստիտուցիոնալ կարողությունները, ինչպես նաև շարունակաբար զարգացնել սոցիալական ծառայություններ մատուցող տարբեր կառույցների անձնակազմի մասնագիտական կարողությունները:

Կենսաթոշակային ապահովության բնագավառում շարունակվելու են սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների, շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակների, աշխատանքային, ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակների տրամադրումը նախատեսված 547670 կենսաթոշակառուի համար: Միաժամանակ, 2025 թվականին կշարունակվի կուտակային հատկացումները 510000 մասնակցի կենսաթոշակային հաշվին:

Սոցիալական ապահովության բնագավառում կշարունակվեն ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների տրամադրումը, ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումը: Պետություն-մասնավոր սոցիալական փոխգործակցության շրջանակում կշարունակվի անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճարի տրամադրումը, իսկ օգտվողների միջին տարեկան թիվը կկազմի շուրջ շուրջ 280000 կենսաթոշակառու: 2025 թվականին հետվճարի առավելագույն չափը կկազմի 6000 դրամ:

Աշխատանքի և զբաղվածության բնագավառի պետական քաղաքականության մեջ կշարունակվի կարևորվել զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության ու արդյունավետության բարձրացումը, գործատուների շահագրգիռ ներգրավվածության խթանումը, գործազրկության մակարդակի նվազումը, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսդրության կարգավորումների շարունակական բարելավումը:

Աշխատանքի բնագավառում պետական քաղաքականության մեջ կարևոր են համարվելու ՀՀ աշխատանքային օրենսդրության կարգավորումների շարունակական բարելավումը, Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային պայմանագրերի հաշվառման և կնքման թվային համակարգի ներդրումը, որը կնպաստի աշխատանքային իրավունքների

պաշտպանության մակարդակի բարելավմանը: Բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության կարգավորման և խորացման նպատակով կվերանայվեն գործատուների և արհեստակցական միությունների գործունեության օրենսդրական կարգերը, աշխատանքային իրավունքների պաշտպանության արտադատական մեխանիզմների ներդրումը:

Ջբաղվածության բնագավառում բյուջետային ֆինանսավորումը կուղղվի սեզոնային զբաղվածության խթանմանը, առաջնահերթության կարգով կիրականացվեն զբաղվածության ապահովման միջոցառումներ ռազմական գործողությունների մասնակիցների, զորացրված զինծառայողների և Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված գործազուրկների, ինչպես նաև այլ խմբերի համար:

Երեխաների հիմնահարցերի բնագավառում 2025 թվականին պետական քաղաքականությունը կշարունակվի ուղղված լինել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնական պահանջմունքների և սոցիալական կարիքների բավարարմանը՝ նրանց հասարակություն ինտեգրման նպատակով:

Պետական ֆինանսավորմամբ կշարունակվեն բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր և հատուկ/մասնագիտացված տիպի 5 հաստատություններում երեխայի շուրջօրյա խնամքն ու դաստիարակությունը, աջակցությունը՝ ուղղված խնամատար ընտանիքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելուն, 3 աջակցության և 3 ճգնաժամային կենտրոններում ցերեկային խնամք ստացող երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարճաժամկետ շուրջօրյա խնամքի ծառայությունների տրամադրումը, դրամական աջակցությունը մանկատներում և ճգնաժամային կենտրոններում խնամվող դպրոցահասակ երեխաներին, ինչպես նաև կշարունակվի աջակցությունը անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ծնողներին՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կազմակերպման համար:

Միաժամանակ, պետության կողմից հավաստագրված ՀԿ-ների կողմից հանրապետության բոլոր մարզերում՝ նվազագույնը 28 կենտրոնում կտրամադրվեն ցերեկային խնամքի ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև հաշմանդություն ունեցող 3300 երեխայի:

Կանանց հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականությունը ուղղված կլինի խոցելի խմբերին պատկանող կանանց, ինչպես նաև ընտանիքում բռնության և թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց կարիքախեն սոցիալական աջակցությունների տրամադրմանը:

Հարկ է նշել, որ մշակվում է ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թթ. ռազմավարությունը, որով նախատեսվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ կառավարման և որոշումների կայացման ոլորտում կանանց հավասար մասնակցության առկայություն, տնտեսության ոլորտում՝ կանանց ձեռներեցությունը խթանող, կրթական և առողջապահական ոլորտներում՝ հավասար

մատչելիությունն ապահովող ծրագրերի առկայություն, ինչպես նաև կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի ամրապնդմանն ուղղված միջոցառումների առկայություն:

Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բնագավառում աշխատանքները ուղղված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացմանը՝ հնարավորինս բացառելով խտրականության դրսևորումը նրանց հանդեպ՝ նպաստելով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը հասարակություն:

2025 թվականին կշարունակվեն պետական հավաստագրերի հիման վրա շահառուներին (այդ թվում՝ ԼՂ բնակիչներին) տրամադրվել աջակցող միջոցներ (վերին վերջույթների ֆունկցիոնալ և սովորական պրոթեզներ, օրթեզներ, քայլակներ, անվասայլակներ, լսողական սարքեր և այլն) և իրականացվել դրանց վերանորոգում: Միաժամանակ, շարունակվելու է աջակցությունը պետության կողմից հավաստագրված ՀԿ-ներին՝ ցերեկային կենտրոններում և խմբային փոքր տներում հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով: Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքին աջակցելու նպատակով կշարունակվի իրականացվել անձնական օգնականի ծառայությունը :

Միաժամանակ, նախատեսվում է մեկնարկել տնային խնամքի ծառայությունների մատուցումը հաշմանդամություն ունեցող երեխաներին՝ նպաստելով նրանց անկախ ապրելուն՝ կանխարգելելով մուտքը խնամքի հաստատություններ:

Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բնագավառում 2025 թվականին կշարունակվեն խնամքի ծառայությունների տրամադրումը՝ խրախուսելով ծառայությունների պատվիրակումը մրցութային եղանակով ընտրված կազմակերպություններին, շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավումը և խնամքի ծառայությունների ապահինստիտուցիոնալացման գործընթացի համատեքստում այլընտրանքային ծառայությունների ընդլայնումը՝ ներգրավելով համայնքի ներուժը:

Ըստ ծառայությունների տեսակների՝ 2025 թվականին կշարունակվեն տրամադրվել շուրջօրյա, տնային պայմաններում և ցերեկային խնամքի ծառայություններ: Ընդ որում, շուրջօրյա խնամքի ծառայությունները կիրականացվեն 4 պետական և 2 հասարակական կազմակերպությունների, իսկ մյուս ծառայությունները՝ բացառապես մրցութային եղանակով ընտրված պետության կողմից հավաստագրված ՀԿ-ների կողմից:

Կշարունակվի նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական **ավանդների փոխհատուցումը**, որի շրջանակում 2025 թվականին փոխհատուցում ստանալու իրավունք կտրվի նաև մինչև 1942 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված ավանդատու անձանց:

Ճզնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով կշարունակվի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին ժամանակավոր կացարանում բնակվելու և կոմունալ

Ծառայությունների ծախսերի կատարմանն օժանդակելու համար սոցիալական աջակցությունը:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

ՀՀ շրջակա միջավայրի ոլորտի նպատակները և ծախսային գերակայությունները բխում են ՀՀ կառավարության՝ 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի առաջնահերթություններից:

Հիմնական ռազմավարության նպատակները և գերակա վերջնական արդյունքներն են՝

- Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում,
- Ազդակիր համայնքներում բարելավված շրջակա միջավայր,
- Բնական պաշարների և կենսաբազմազանության վերարտադրության աճի ապահովում
- Կայուն կառավարվող անտառային տարածքների աճ,
- Մշտական և ժամանակավոր ցուցահանդեսների միջոցով հավաքածուների ներկայացում հանրությանը և բնապահպանական քարոզչության իրականացում:

ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Բյուջետային գործընթացում բազմամյա բյուջետավորման տարրերի ներդրում.

Կապիտալ ծախսերի՝ հաջորդ բյուջետային տարիներ տեղափոխման մեխանիզմի ներմուծում.

ՀՀ 2025թ պետական բյուջեի մասին օրենքի նախագծով ՀՀ կառավարությանը թույլատրվում է 2025թ պետական բյուջեի փաստացի ձևավորված տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին ֆինանսավորել կապիտալ ծախսերի գծով 2024թ-ին ստանձնված, սակայն 2024թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի չիրականացված պայմանագրային պարտավորությունները: Այդ դրույթները չեն տարածվի պաշտպանության ոլորտի կապիտալ ծախսերի նկատմամբ: Տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին ֆինանսավորման ենթակա կապիտալ ծախսերի ընտրության և ֆինանսավորման կարգը կսահմանվի Կառավարության կողմից:

Բազմամյա պարտավորությունների գծով տեղեկատվության ներկայացում բյուջետային փաստաթղթերում.

ՀՀ 2025թ պետական բյուջեի մասին օրենքի նախագծում (2025թ այն կլինի ՀՀ կառավարության ուղերձի մաս) առանձին հավելվածով կներկայացվեն 2025թ պետական

բյուջեում ներառված այն միջոցառումները, որոնք ունեն հստակ սահմանված ավարտի ժամկետ: Հավելվածով կբացահայտվեն այդ միջոցառումների բովանդակությունը, մեկնարկի և ավարտի տարեթվերը, ընդհանուր և մնացորդային արժեքները, ինչպես նաև 2025թ-ին նախատեսվող ծախսերի մեծությունը¹: Դա հնարավորություն կտա ՀՀ ԱԺ բյուջետային քննարկումներում ծախսային միջոցառումները՝ ինչպես նախկինից շարունակվող, այնպես էլ նոր մեկնարկող, դիտարկել իրենց ողջ կենսացիկլի մեջ՝ հաշվի առնելով դրանց ֆիսկալ ազդեցությունը հետագա տարիների վրա:

Միջնաժամկետ մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակների թարմացված տեղեկատվության ներկայացում բյուջետային փաստաթղթերում.

ՀՀ 2025թ պետական բյուջեի մասին օրենքի նախագծում (ՀՀ կառավարության ուղերձում) վերանայվել է 2025-2027թթ ՄԺԾԾ-ով սահմանված մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակները: Նախկինում վերանայումները վերաբերվում էին միայն առաջիկա բյուջետային տարվա հարկաբյուջետային շրջանակներին: Այս նորամուծությունը հնարավորություն կտա ՀՀ ԱԺ-ում 2025թ պետական բյուջեն քննարկել և հաստատել միջնաժամկետ զարգացումների և ֆիսկալ հնարավորությունների համատեքստում:

Այլ կարևոր փոփոխություններ բյուջետային գործընթացում.

Պետական կառավարման մարմինների կողմից տնօրինվող պետական գույքի համար վարձակալական վճարի արժեքի մոտարկում և ներառում բյուջետային փաստաթղթերում.

ՀՀ 2025թ պետական բյուջեի մասին օրենքի նախագծում (2025թ այն կլինի ՀՀ կառավարության ուղերձի մաս) առանձին հավելվածով կներկայացվեն պետական կառավարման մարմինների կողմից տնօրինվող պետական գույքի դիմաց՝ դրանց վարձակալության տրամադրման դեպքում, մոտարկված վարձակալական վճարների չափի գնահատականները: Հետագայում այդ վարձակալական վճարները կարտացոլվեն պետական բյուջեի համապատասխան եկամուտներում և ծախսերում, դրանով իսկ մեծացնելով հանրային ակտիվների կառավարման թափանցիկությունը և հիմքեր ստեղծելով դրա արդյունավետության բարձրացման և պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների իրական արժեքի գնահատման համար:

Բյուջետային ծախսերի առաջնահերթությունների սահմանում և ծախսերի այլընտրանքային սցենարների մշակում.

Սկսած 2025թ բյուջետային գործընթացից, բյուջետային հայտերի շրջանակներում պետական մարմինները կներկայացնեն իրենց ծախսային ծրագրերի առաջնահերթությունները՝ ՀՀ ՖՆ կողմից մշակված չափորոշիչներին համապատասխան, ինչպես նաև ծախսային քաղաքականության սցենարները՝ իրենց ընդհանուր ծախսերի 5 և 10 տոկոս նվազ պայմաններում: Դա հնարավորություն կտա միասնական չափորոշիչների հիման վրա գնահատել և սահմանել բյուջետային ծախսերի առաջնահերթությունները և մշակել ծախսային քաղաքականության այլընտրանքային սցենարներ՝ հնարավոր տնտեսական և ֆիսկալ ռիսկերին դիմակայելու համար:

¹ Այս պահին ոչ բոլոր ծրագրերի գծով է տեղեկատվությունն ամբողջական

Բյուջետային փաստաթղթերի առանձին ձևաչափերի պարզեցում.

ՀՀ 2025թ պետական բյուջեի մասին օրենքի նախագծում և ուղերձում վերանայվել և պարզեցվել են բյուջետային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը և արդյունքային ցուցանիշները ներկայացվող ձևաչափերը: Այդ ձևաչափերն այսուհետ կներկայացվեն վիզուալ առումով ավելի մատչելի տեսքով և վերջնական օգտագործողի համար կլինեն առավել օգտակար և կիրառելի:

Բյուջետային ծրագրերի գնահատման գործընթացի ներդրում.

Բյուջետային ծրագրի արդյունավետության և օգտավետության բարձրացման նպատակով 2025թ կշարունակվի ՀՀ ֆինանսների նախարարությունում բյուջետային ծրագրերի գնահատման կանոնավոր գործընթացի ներդրման աշխատանքները: Դրա շրջանակներում ավարտին կհասցվեն ինչպես անհրաժեշտ ինստիտուցիոնալ մեխանիզմների և մեթոդաբանական բազայի ձևավորումը, այնպես էլ այդ գործառնությունների իրականացման համար պահանջվող մարդկային ռեսուրսների ձևավորումը: Աստիճանաբար կմեկնարկեն ծրագրերի գնահատման աշխատանքները:

Մասնակցային բյուջետավորման գործընթացի ներդրում.

2025թ կշարունակվի ՀՀ պետական բյուջեից համայնքներին մասնակցային բյուջետավորման հիմունքներով սուբվենցիաների տրամադրման գործընթացը: Մասնավորապես, կվերանայվեն և կլավարկվեն գործող իրավակարգավորումները, գործընթացն առավել մասնակցային և թափանցիկ դարձնելու նպատակով, ինչպես նաև գործընթացում կներգրավվեն նոր համայնքներ: Այդ նպատակով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1.0 մլրդ դրամ հատկացումներ՝ 2024թ 500.0 մլն դրամի դիմաց:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնած հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում իրականացվող բարեփոխումների շրջանակում՝ 2025 թվականի ընթացքում շարունակվելու են «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքներով նախատեսված կառուցակարգերի կատարելագործման աշխատանքները, մասնավորապես նախատեսվում է կատարելագործել աուդիտի որակի հանրային վերահսկողության մեխանիզմները, ինչը թույլ կտա բարձրացնել մատուցվող աուդիտորական ծառայությունների որակը և հանրային վստահությունը:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում՝ 2025 թվականի ընթացքում շարունակվելու է հանրային հատվածի հաշվապահների որակավորման գործընթացը՝ հաշվապահի որակավորման քննությունների կազմակերպման միջոցով: Միաժամանակ, շարունակվելու են հանրային հատվածի կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվապահական հաշվառման գրանցամատյանների և ֆինանսական հաշվետվությունների փաթեթների մշտադիտարկման աշխատանքները:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Եկամուտների քաղաքականության ոլորտում իրականացվելիք միջոցառումները բխելու են ՀՀ կառավարության ծրագրից:

Հարկային քաղաքականության ոլորտում կառավարության կողմից առաջիկայում կատարվելիք աշխատանքներն ուղղված են լինելու՝

- հարկման այլընտրանքային համակարգերի ընդհանուր բարեփոխմանը՝ նպատակ ունենալով ապահովել հարկման տարբեր համակարգերի միջև հարկային բեռի արդարացի և հավասար բաշխում, ինչպես նաև նվազեցնել ստորին մակարդակում գտնվող հարկման համակարգերում արհեստականորեն տեղավորվելու և այդ կերպ հարկերի վճարումից խուսափելու, հարկման տարբեր համակարգերի միջև արհեստական գործարքների իրականացմամբ հարկային պլանավորման և գործարքների փաստաթղթավորման շղթայի ամբողջականության խաթարման ռիսկերը,
- միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի շրջանակում հարկվող գործունեության տեսակների շրջանակի կրճատմանը՝ նպատակ ունենալով ապահովել միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի առավել հասցեականությունը,
- գույքի արժեքի հավելածի տեսքով ստացվող պասիվ եկամուտների հարկման հնարավորությունների քննարկմանը,
- կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրության ընդլայնմանը՝ նպատակ ունենալով նաև գործող համաձայնագրերը համապատասխանեցնել կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերին վերաբերող՝ միջազգայնորեն ընդունված արդի ստանդարտներին և մոտեցումներին:

Պետական եկամուտների վարչարարության ոլորտում իրականացվելիք միջոցառումները բխելու են ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրից, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագրերից:

2025 թվականի ընթացքում պետական եկամուտների կոմիտեի վարչարարությունն ուղղված է լինելու ներքոնշյալ նպատակների իրագործմանը.

Հարկ վճարողների և ԱՏԳ մասնակիցների սպասարկման հաճախորդակենտրոն մոտեցման կիրառում: Այս նպատակի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- ԱՏԳ մասնակիցների համար ընդլայնել ապրանքների և տրանսպորտային միջոցների ավտոմատ բացթողման համակարգի կիրառման շրջանակները, իրականացնել համակարգի շարունակական մշտադիտարկում և օպտիմալացում,
- մեկնարկել ՀՀ ՊԵԿ կողմից ԱՏԳ մասնակիցներին ապրանքի ծագման հավաստագրերի անվճար տրամադրման գործընթացը,
- կատարելագործել ֆիզիկական անձանց համար էլեկտրոնային ծառայությունների (e-services) հարթակը, այդ թվում՝ ֆիզիկական անձանց եկամտային հարկի տարեկան հայտարարագրման ենթահամակարգը՝ հաշվի առնելով հայտարարատուների քանակի ավելացումը,
- կատարելագործել օրինապահ հարկ վճարողների համակարգը՝ հարկ վճարողների բարեխիղճ և օրինապահ վարքագծի խրախուսման, նրանց համար պարզեցված հարկային և մաքսային ընթացակարգերի ընդլայնման և ներդրման միջոցով,
- կատարելագործել հարկ վճարողների սպասարկման միասնական ստանդարտները՝ ապահովելով դրանց հրապարակայնությունը,
- ներդնել նպաստների գծով տեղեկատվության փոխանակման էլեկտրոնային հարթակ ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության միջև:

Հարկ վճարող - ՊԵԿ համագործակցության ամրապնդում, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի կատարելագործում, որի շրջանակներում նախատեսվում են իրականացնել հետևյալ միջոցառումները.

- հարկ վճարողների հետ գործընկերային հարաբերությունների վրա կառուցված միջավայրի ձևավորմանն աջակցելու նպատակով ընդլայնել «Հանրություն – ՊԵԿ» հաղորդակցությունը, արդիականացնել ՊԵԿ կայքէջը՝ համալրելով հաղորդակցության նոր գործիքներով,

- հարկային և մաքսային ընթացակարգերի թափանցիկության ապահովման նպատակով կատարելագործել հարկ վճարողների իրազեկման և ուսուցման համակարգը՝ հարկ վճարողների համար դասընթացների կազմակերպման, ՊԵԿ պաշտոնական կայքով, սոցիալական հարթակներով կամ այլ եղանակներով տեղեկատվական արշավների կազմակերպման և պարբերաբար տեղեկատվության փոխանցման միջոցով,
- իրականացվող հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ հարկ վճարողների դիրքորոշման գնահատման նպատակով կազմակերպել հարկային և մաքսային վարչարարության ընթացակարգերի վերաբերյալ հարցումներ,
- կադրային քաղաքականության բարելավման, մասնագիտական հմտությունների զարգացման, ինչպես նաև հարկ վճարողների համար ուսումնական ծրագրերի կազմակերպման նպատակով զարգացնել «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարողությունները,
- կատարելագործել աշխատանքի կատարողականի գնահատման հիման վրա աշխատողներին մոտիվացնող խրախուսման համակարգը:

Հարկային և մաքսային հսկողական գործիքակազմի կատարելագործում, այդ թվում՝ ռիսկերի կառավարման էլեկտրոնային համակարգերի միջոցով, սուվերի կրճատում և կարգապահության բարելավում, որի շրջանակներում նախատեսվում է.

- բարձրացնել ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության արդյունավետությունը, այդ թվում՝ օրինապահ հարկ վճարողների նկատմամբ մաքսային հսկողությունը հնարավորինս նախաբացթողումային փուլից հետքացթողումային փուլ տեղափոխելու նպատակով,
- շահագործել և շարունակական մշտադիտարկման ենթարկել «Մաքսային իրավախախտումների միասնական շտեմարան» համակարգը,
- ինտեգրել փոստային առաքանիների հաշվառման համակարգը ռիսկերի կառավարման ավտոմատացված համակարգին և Միջազգային փոստային միության համակարգին (International Postal System/ Customs Declaration System),
- ներդնել նախնական տեղեկատվության էլեկտրոնային համակարգ և դրա արդյունքում բարձրացնել մաքսային սահմանին իրականացվող մաքսային գործառնությունների արագությունը,
- ներդնել մաքսային հսկողության գոտիներում ապրանքների հաշվառման համակարգ՝ գործընթացը պարզեցնելու և վերահսկելի դարձնելու նպատակով,
- մաքսային հսկողության ընթացքում կիրառել տեսախցիկներ, այդ թվում՝ աշխատակիցների համազգեստին ամրացվող, արդյունքում նաև հնարավորություն ստեղծել մաքսային հսկողության գործընթացին հայտարարատուների հեռավար մասնակցության համար,
- կատարելագործել և ընդլայնել հարկային և մաքսային ինքնաշխատ ծանուցումների համակարգերը,
- ներդնել դրոշմանիշային վճարի էլեկտրոնային կառավարման ենթահամակարգ,

- ներդնել շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի գործունեության վերահսկողություն իրականացնող էլեկտրոնային կառավարման համակարգ,
- ներդնել միջազգային ստանդարտներին համապատասխան հարկային տեղեկությունների փոխանակման համակարգ,
- գնահատել ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի ոլորտային հարկային պոտենցիալը և հարկային հսկողությունը նպատակաուղղել հարկային ճեղքի ավելացում արձանագրած ոլորտներ,
- հարկային հսկողության գործիքակազմի արդյունավետ կիրառման միջոցով նպաստել հարկման տարբեր համակարգերում գործարքների փաստաթղթավորման մակարդակի բարձրացմանը,
- ռիսկերի գնահատման հիման վրա կատարելագործել համալիր, տրանսֆերային գնագոյացման և թեմատիկ հարկային ստուգումների ընտրողականության ռիսկերի գնահատման համակարգերը,
- ներդնել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող արգելադրման արդյունավետ գործիքակազմ:

Վերոնշյալ միջոցառումների իրագործման արդյունքում 2025 թվականի ընթացքում պետական եկամուտների կոմիտեն նախատեսում է շարունակել հարկ վճարողներին որակյալ և արդի պահանջներին բավարարող ծառայությունների մատուցման ուղղությամբ որդեգրված քաղաքականությունը, ամրապնդել հարկ վճարողների հետ գործընկերային հարաբերությունները և հարկային կարգապահության բարելավման միջոցով նպաստել հարկեր/ՀՆԱ ցուցանիշի ավելացմանը:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ

Կադաստրի կոմիտեն իրականացնում է գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում, գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրում: Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում պետական կառավարման և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի մշակման աշխատանքների՝ սահմանված կարգով, գեոդեզիական և քարտեզագրական գործունեության վերահսկողության իրականացում, գեոդեզիական և քարտեզագրական գործունեության սուբյեկտներին ամբողջական տեղեկությունների տրամադրում՝ իրենց առնչվող տարածքների գեոդեզիական և քարտեզագրական ուսումնասիրվածության մասին:

Հասարակության տեղեկատվական պահանջները բավարարելու նպատակով կոմիտեն կփորձի անցում կատարել առցանց ծառայությունների ինքնաշխատ համակարգի՝ ամբողջությամբ հրաժարվելով թղթային փաստաթղթաշրջառանությունից:

Անշարժ գույքի գրանցաման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է իրականացնել սպասարկման գրասենյակների օպտիմալացում ի հաշիվ առցանց մատուցվող ծառայությունների զարգացման և օպտիմալացված գրասենյակների փոխարեն խորհրդատվական կենտրոնների ստեղծում:

Աշխատանքները շարունակվում են նաև հանրապետության հասցեների վերջնական բազան ամբողջական և ավարտուն տեսքի բերելու ուղղությամբ:

ՀԱՍԱՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, վերջնական կազմավորումից հետո, իր մեջ ներառում է երեք խոշոր ծառայություն՝ **նստիկանություն, փրկարար ծառայություն, միգրացիայի և քաղաքացիության ծառայություն:**

ՀՀ ներքին գործերի նախարարության նստիկանության կարևորագույն հայեցակարգային խնդիրը, նստիկանությունում մեկնարկած բարեփոխումների նպատակը ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, մասնագիտացված ու տեխնիկապես հագեցած, բարեվարք և հարգանքի արժանի նստիկանության վերափոխումն ու ժողովրդավարական իրավակարգին բնորոշ նոր նստիկանի կերպարի ստեղծումն է:

Նշված նպատակադրումների իրականացմանն ուղղված միջոցառումները, որոնք ներառված են նստիկանության բարեփոխումների ռազմավարությունում, հանդիսանալու են նստիկանության գործունեության ոլորտում առաջիկա տարիներին նախատեսվող բոլոր բարեփոխումների հիմքը:

Նախատեսվում է Ոստիկանության զորքերն ապառազմականացնել և վերակազմակերպել նստիկանության գվարդիայի, որը ներառելու է նաև ներկայիս պետական պահպանության գլխավոր վարչությունը, Ճանապարհային ոստիկանության ուղեկցող ստորաբաժանումը, կարանտին վաշտը և հատուկ նշանակության ստորաբաժանումները:

Սկզբունքորեն վերաիմաստավորվելու է Ոստիկանության տարածքային մարմինների կազմակերպական ձևն ու գործառնությունը, որը միտված է լինելու ինչպես ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ այդ մարմինների գործունեությունը առավելապես հանցագործությունների կանխարգելմանը նպատակաուղղելուն:

Ներկայումս ընթանում է ՆԳՆ կրթահամալիրի և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի միավորման գործընթաց: Մշակվում է միասնական կրթահամալիրի ձևավորման հայեցակարգ, որի նպատակն է ստեղծվելիք կրթահամալիրի կրթական ծրագրերի իրականացումը նպատակաուղղել նստիկանության գվարդիայի, պարեկային ծառայության, քրեական ոստիկանության, համայնքային ոստիկանության, փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման կենտրոնի կադրային պահանջարկը բավարարելուն, սկսած նշված համակարգեր առաջին անգամ ծառայության անցնելուց, մինչև ծառայողների մասնագիտական պատրաստվածության բարձրացում:

Փրկարար ծառայության հիմնական նպատակներն են.

- մասնագիտացված փրկարարական ուժերի կարողությունների զարգացում, պատրաստականության բարձրացում, ժամանակակից վարժաիրապարակի կառուցում,

փրկարարական ծառայողների վերապատրաստում, գիտելիքների և հմտությունների կատարելագործում.

- քաղաքացիական պաշտպանության հենակետերի միջոցով ՀՀ սահմանամերձ և բարձր լեռնային համայնքներում փրկարարական և հրդեհաշիջման աշխատանքների իրականացում, բնակչության պաշտպանության, ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների անվտանգության ապահովում.
- աղետների վաղ ազդարարման համակարգի զարգացում, օրենսդրական դաշտի կատարելագործում, հավաստի օպերատիվ տեղեկատվության տրամադրման հնարավորություն, մարդկային կորուստների և տնտեսական վնասների նվազեցում.
- զանգերի միասնական կառավարման կենտրոնի հիմնման, ահազանգման մեկ միասնական հեռախոսահամարի ներդրման հետ կապված աշխատանքների իրականացում, «911» դիսպետչերական ծառայության զարգացում՝ ծառայության մատուցումը հնարավորինս մոտեցնելով միջազգային չափանիշներին.
- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ընթացքում ճգնաժամային կառավարման համակարգի կատարելագործում:

ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական պահուստի համակարգի զարգացման և բարեփոխումների հայեցակարգի դրույթների իրականացում, նյութական արժեքների կուտակում, թարմացում, փոխարինում և պահպանում: Այս ոլորտում նոր քաղաքականության մշակում՝ ընդգրկելով մասնավոր սեկտորի հնարավորություններն ու կարողությունները:

Միգրացիայի և քաղաքացիության ծառայության առաջնահերթ խնդիրներն են.

- ՀՀ-ում կենսաչափական փաստաթղթերի տրամադրման համակարգի արդիականացում և բնակչությանը մատուցվող էլեկտրոնային ծառայությունների հնարավորությունների ավելացում,
- հին անձնագրերի և էլեկտրոնային քարտերի աստիճանաբար փոխարինում ապագա սերնդի տեխնոլոգիաներով,
- ապաստան հայցողներին և նրանց ընտանիքներին ժամանակավոր կացարանի, սննդի, իրավաբանական խորհրդատվական անվճար ծառայությունների մատուցում,
- ապաստան հայցողների հետ իրենց հասկանալի լեզվով հարցազրույցի անցկացման, ինչպես նաև ապաստանի ընթացակարգում անհրաժեշտ փաստաթղթերի թարգմանչական ծառայությունների կազմակերպում:

ՄԱՍ Ի-Բ. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

1.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՇՐՋԱՆԱԿ

- 2021թ. համավարակի շուկից հետո տնտեսական աճի վերականգնման փուլ թևակոխած համաշխարհային տնտեսությունը, այդ թվում՝ ՀՀ գործընկեր երկրների տնտեսությունները, 2022 թվականի տարեսկզբին բախվեցին նոր շուկի, որի արդյունքում տեղի է ունեցել տնտեսական աճի տեմպերի դանդաղում (ՌԴ-ում՝ անկում)՝ պայմանավորված համաշխարհային արժեչափաների խաթարումներով, պարենային և հումքային ապրանքների միջազգային գների բարձրացմամբ, դրանց հետևանքով առաջացած բարձր գնաճին հակազդող աննախադեպ զսպող դրամավարկային քաղաքականություններով ու համաշխարհային ֆինանսական պայմանների խստացմամբ: 2023թ. ՀՀ հիմնական գործընկեր երկրներում, բացառությամբ Եվրագոտու, տեղի է ունեցել տնտեսական աճի տեմպերի վերականգնում: Աճի արագացումը պայմանավորված է եղել պետական ու մասնավոր սպառման աճով, ինչպես նաև գնաճի տեմպերի աստիճանական կայունացմամբ: Եվրագոտում արձանագրված թույլ աճն արտացոլում էր սպառողական թույլ տրամադրությունները, էներգակիրների բարձր գների երկարաձգված ազդեցությունը, ինչպես նաև մշակող արդյունաբերության թույլ ակտիվությունը: Այս պայմաններում 2024 թվականին գործընկեր երկրներից ԱՄՆ-ում և Եվրագոտում կանխատեսվում է տնտեսական աճի տեմպերի արագացում, մինչդեռ ՌԴ-ում և Չինաստանում՝ դանդաղում, իսկ 2025թ. և միջնաժամկետում՝ կանխատեսվում են իրենց պատմական միջին աճերից ցածր տնտեսական աճեր:
- Կորոնավիրուսի համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցություններով պայմանավորված 2020 թվականի տնտեսական անկումից հետո 2021-2023 թվականներին տնտեսությունը թևակոխել է վերականգնման և աճի փուլ և միջինում գրանցել 9.0% իրական աճ՝ իր վրա կրելով 2022 թվականի փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով դեպի Հայաստան մարդկանց ներհոսքի, զբոսաշրջության զգալի ավելացման, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխման, ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման, պետական բյուջեից կապիտալ ծախսերի և բնակարանաշինության բարձր աճերի, ինչպես նաև 2023 թվականի սեպտեմբերի վերջից Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված մեր հայրենակիցների և նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ոսկերչական արտադրատեսակների արտադրության կտրուկ աճի տնտեսական ազդեցությունները:
- Տնտեսական աճի բարձր տեմպերը շարունակվել են նաև 2024 թվականի առաջին կիսամյակում՝ իրենց վրա կրելով նաև ոսկերչական արտադրատեսակների և հիմնային մետաղների արտադրության կտրուկ աճի և Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց աջակցության ծրագրերի և ինտեգրման տնտեսական ազդեցությունները: Արդյունքում գրանցվել է 6.5% տնտեսական աճ՝ պայմանավորված հիմնականում ծառայությունների և արդյունաբերության աճով: Ապրիլ ամսից սկսած տնտեսական ակտիվությունը որոշակիորեն դանդաղել է՝ պայմանավորված հիմնականում արդյունաբերության և առևտրի աճի տեմպերի դանդաղմամբ, սակայն տնտեսական ակտիվության բարձր տեմպը շարունակել է պահպանվել:

- 2024թ. ընթացիկ զարգացումների, պետական կապիտալ ծախսերի դերի շարունակական բարձրացման, ինչպես նաև կառուցվածքային բարեփոխումների ու Սոթքի շահագործման ազդեցությունների արդյունքում 2024 թվականի համար սպասվում է շուրջ 5.8% տնտեսական աճ, 2025թ.՝ 5.1%, իսկ 2026-2027 թվականներին՝ միջինում 5.2% աճ: Այս պայմաններում ՀՀ կառավարության ծրագրի 2021-2026թթ. միջինում 7% աճը կապահովվի: Ընդ որում, վերջին տարիներին ՀՀ տնտեսական աճի ներուժը բարձրացել է՝ հասնելով 5.0-5.5%: Այս աճը պահպանելու և ավելի բարձր և կայուն աճի հասնելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ջանքեր՝ ուղղված արտադրողականության բարձրացմանը, ներդրումների և արտահանման խթանմանը: Այս համատեքստում ՀՀ կառավարությունը հետամուտ է լինելու մարդկային և ֆիզիկական կապիտալում ներդրումների, մասնավոր ներդրումների, զբաղվածության և արտահանման խթանմանն ուղղված ռազմավարությունների արդյունավետ իրականացմանը:
- Տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղման և վերաարտահանման դերի որոշակի նվազման պայմաններում 2024թ. սպասվում է արտահանման և ներմուծման աճի տեմպերի զգալի դանդաղում: Արդյունքում՝ ծառայությունների դրական հաշվեկշի վատթարացմամբ և դրամական փոխանցումների դերի նվազմամբ պայմանավորված 2024թ. ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ում կշարունակի խորանալ՝ հասնելով ՀՆԱ-ում 5%-ի: 2025թ.-ին 2022-2023թթ. առաջացած դրական գործոնների ազդեցությունների աստիճանական չեզոքացման պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը որոշակի կվատթարանա, իսկ միջնաժամկետում կմոտենա իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին:
- 2025թ. և միջնաժամկետ հատվածում հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի կառուցվածքային բարեփոխումների սահուն ընթացքը երաշխավորելու և ֆիզիկական ու մարդկային կապիտալում ներդրումների մակարդակի էական բարձրացման միջոցով տնտեսության դիմակայունության ամրապնդմանն ու աճի ներուժի բարձրացմանը: Ընդ որում, այն իրականացվում է նշված բարեփոխումների համար միջնաժամկետի սկզբում «առաջ ընկած» ռեսուրսների ձևավորման ճանապարհով, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդը 2024-2025 թթ. -ին կաճի՝ հանգեցնելով կառավարության պարտքի բեռի որոշակի մեծացմանը, որից հետո տեղի կունենա հարկաբյուջետային կոնսոլիդացիա, որով պարտքի բեռը 2026-2027 թվականներին կկայունանա 55.6%-ի մակարդակում: Ընդ որում, տնտեսական աճի՝ իր ներուժային մակարդակին մոտենալու պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա միջինում կունենա չեզոք ազդեցություն: Միաժամանակ հարկաբյուջետային քաղաքականության համար առաջնահերթ է առկա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և հնարավոր ռիսկերի կառավարման կարողությունների ձևավորումը, ինչը, աճի ներուժի բարձրացման հետ, պետք է երաշխավորի հարկաբյուջետային կայունությունը երկարաժամկետում:
- 2024թ. -ին ինչպես միջին, այնպես էլ 12 ամսյա գնաճը ցածր կլինեն նպատակային ցուցանիշից և 2025թ. ու միջնաժամկետում կկայունանան 4% մակարդակի շուրջ: Մշտադիտարկելով տնտեսության զարգացման սցենարները, ԿԲ-ը պատրաստ է ձեռնարկել

համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի թիրախային մակարդակի և գների կայունության նպատակի ապահովման համար:

- Ռուս-ուկրաինական շարունակվող հակամարտությունը և Ռուսաստանի դեմ կիրառվող աննախադեպ պատժամիջոցները աշխարհում ստեղծել են նոր իրականություն, որի պայմաններում ինչպես աշխարհի և ՀՀ գործընկեր երկրների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները իրենց մեջ կրում են մեծ անորոշություն: Այս պայմաններում, ինչպես աշխարհի և ՀՀ գործընկերների, այնպես էլ ՄԺԾՑ շրջանակում ՀՀ տնտեսական աճի կանխատեսումների համար առկա են երկկողմանի ռիսկեր, սակայն դեպի ներքև ռիսկերը համեմատաբար մեծ են:

| Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
|---|----------|----------|----------|----------|----------|----------|----------|
| | Փաստ | Փաստ | փաստ | սպասում | ծրագիր | կանխ. | կանխ. |
| Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ | 6,991.8 | 8,501.4 | 9,453.2 | 10,110.2 | 10,891.5 | 11,916.2 | 13,037 |
| Տնտեսական աճ, % | 5.8 | 12.6 | 8.3 | 5.8 | 5.1 | 5.2 | 5.2 |
| ՀՆԱ դեֆլյատորի աճ, % | 6.9 | 8.0 | 2.7 | 1.1 | 2.5 | 4.0 | 4.0 |
| Գնաճ (Ժամանակ. վերջ), % | 7.7 | 8.3 | -0.6 | 2.0 | 4.0 | 4.0 | 4.0 |
| Գնաճ (միջին), % | 7.2 | 8.6 | 2.0 | 0.4 | 3.6 | 4.0 | 4.0 |
| ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, % | | | | | | | |
| Արդյունաբերություն | 2.4 | 6.9 | -2.2 | 3.1 | 5.2 | 5.1 | 5.0 |
| Գյուղատնտեսություն | -0.8 | -2.8 | 2.9 | 3.3 | 2.9 | 3.0 | 3.0 |
| Շինարարություն | 3.1 | 18.6 | 16.0 | 13.2 | 6.3 | 6.2 | 6.0 |
| Ծառայություններ | 8.6 | 18.4 | 11.5 | 6.9 | 5.2 | 5.4 | 5.4 |
| Զուտ հարկեր | 7.4 | 8.1 | 11.0 | 1.4 | 5.1 | 5.2 | 5.5 |
| ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, % | | | | | | | |
| Վերջնական սպառում | 1.3 | 4.3 | 9.0 | 5.6 | 6.2 | 3.5 | 3.8 |
| Պետական | -6.2 | -2.2 | 28.3 | 4.4 | 8.3 | -5.4 | -4.4 |
| Մասնավոր | 2.8 | 5.6 | 5.6 | 5.8 | 5.7 | 5.6 | 5.5 |
| Հիմնական միջոցներում ներդրումներ ² | 23.6 | 14.0 | 10.1 | 11.5 | 5.4 | 11.6 | 5.7 |
| Պետական | 33.9 | 17.9 | 31.5 | 36.6 | -2.2 | 34.8 | 0.7 |
| Մասնավոր | 22.3 | 13.5 | 7.1 | 7.2 | 7.1 | 7.0 | 7.0 |
| Արտահանում | 18.6 | 59.9 | 30.7 | 16.8 | -36.5 | 4.9 | 5.9 |
| Ներմուծում | 12.9 | 35.0 | 30.2 | 20.5 | -33.6 | 3.8 | 5.6 |
| Արտաքին հատված (մլն ԱՄՆ դոլար) | | | | | | | |
| Ընթացիկ հաշիվ | -483.0 | 64.7 | -556.3 | -1,275.1 | -1,406.0 | -1,403.2 | -1,447.8 |
| Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ | -1,115.2 | -147.2 | -193.7 | -845.5 | -1,061.2 | -1,053.4 | -1,048.1 |
| Արտահանում | 5,039.9 | 10,117.8 | 14,338.3 | 16,814.3 | 10,589.3 | 10,831.7 | 11,355.7 |
| Փոփոխություն, % | 30.7 | 100.8 | 41.7 | 17.3 | -37.0 | 2.289 | 4.8 |
| Ներմուծում | 6,155.2 | 10,265.0 | 14,532.1 | 17,659.9 | 11,650.5 | 11,885.0 | 12,403.8 |
| Փոփոխություն, % | 20.3 | 66.8 | 41.6 | 21.5 | -34.0 | 2.013 | 4.4 |
| Դրամական փոխանցումներ | 1,274.0 | 1,449.2 | 979.0 | 637.6 | 669.7 | 695.8 | 721.8 |
| ՀՆԱ-ի նկատմամբ % | | | | | | | |
| Ընթացիկ հաշիվ | -3.5 | 0.3 | -2.3 | -5.0 | -5.3 | -5.1 | -5.0 |
| Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ | -8.0 | -0.8 | -0.8 | -3.3 | -4.0 | -3.8 | -3.7 |
| Արտահանում | 36.3 | 51.9 | 59.5 | 65.6 | 39.9 | 39.6 | 39.5 |
| Ներմուծում | 44.3 | 52.6 | 60.3 | 68.9 | 43.9 | 43.4 | 43.2 |
| Դրամական փոխանցումներ | 9.2 | 7.4 | 4.1 | 2.5 | 2.5 | 2.5 | 2.5 |

Աղյուսակ 1.1. 2025թ. պետական բյուջեի մակրոտնտեսական շրջանակ

² Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019թ.-ից ՀՀ ՎԿ կողմից

1.2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

2023 թվականին, չնայած շարունակվող դրամավարկային խստացման և աշխարհաքաղաքական անորոշություններին, ՀՀ հիմնական գործընկեր երկրներում, բացառությամբ Եվրագոտու, նախորդ տարվա նկատմամբ դիտվել է տնտեսական աճի տեմպերի արագացում: Տնտեսական աճի արագացմանը նպաստել են պետական ու մասնավոր սպառման աճը, իսկ Եվրագոտում արձանագրված թույլ աճն արտացոլում էր սպառողական թույլ տրամադրությունները, էներգակիրների բարձր գների երկարաձգված ազդեցությունը, ինչպես նաև մշակող արդյունաբերության թույլ ակտիվությունը: Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գնահատականներով 2023 թվականին համաաշխարհային տնտեսական աճը կազմել է 3.3%՝ նախորդ տարվա 3.5%-ի դիմաց, իսկ ՀՀ հիմնական գործընկեր երկրներից ՌԴ-ում գրանցվել է 3.6% աճ, Եվրագոտում՝ 0.5%, ԱՄՆ-ում՝ 2.5%, իսկ Չինաստանում՝ 5.2%:

2024 թվականի առաջին կիսամյակում հիմնական գործընկեր երկրներում տնտեսական աճի տեմպերն արագացել են, ինչը զուգորդվել է պետական ու մասնավոր սպառման աճերով: Միաժամանակ, զսպող դրամավարկային քաղաքականության դիրքի պահպանման պայմաններում գործընկեր երկրներում նկատվել է գնաճի կայունացում և որոշ կենտրոնական բանկերի կողմից նաև դրամավարկային պայմանների մեղմացում: 2024 թվականի առաջին կիսամյակում ԱՄՆ տնտեսությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ գրանցել է 3% աճ, ընդ որում առաջին եռամսյակում գրանցել է 2.9% աճ, իսկ երկրորդ եռամսյակում՝ 3.1%³՝ պայմանավորված արտադրողականության և զբաղվածության կայուն աճով, ինչն ուղեկցվել է մասնավոր սպառման և մասնավոր ներդրումների աճով: Եվրագոտու տնտեսությունը 2024 թվականի առաջին կիսամյակում գրանցվել է 0.6% աճ⁴, որը հիմնականում պայմանավորված է եղել մասնավոր սպառման և զուտ արտահանման աճով: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում Չինաստանում տնտեսական աճը կազմել է 5%: առաջին եռամսյակում գրանցվել է 5.3% աճ, երկրորդ եռամսյակում՝ դանդաղելով առաջին եռամսյակի համեմատ կազմել է 4.7%⁵, որը պայմանավորված է եղել անշարժ գույքի շուկայում շարունակվող անկմամբ, թույլ ներքին պահանջարկով, թուլացող յուանով և Արևմուտքի կողմից առևտրային բախումներով: Ռուսաստանի Դաշնությունում առաջին կիսամյակում տնտեսական աճը կազմել է միջինում 4.8%, ընդ որում առաջին եռամսյակում կազմել է 5.4%, երկրորդում՝ 4.1%⁶:

պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն կամ այլ կերպ՝ դրա մեջ ներառվում են նաև վիճակագրական սխալները:

³ Աղբյուրը՝ ԱՄՆ տնտեսական վերլուծությունների բյուրո, <https://www.bea.gov/>


⁴ Աղբյուրը՝ Եվրոստատ, <https://ec.europa.eu/eurostat/>

⁵ Աղբյուրը՝ Չինաստանի վիճակագրության ազգային բյուրո, <http://www.stats.gov.cn/>

⁶ Աղբյուրը՝ ՌԴ դաշնային պետական վիճակագրական ծառայություն, <https://rosstat.gov.ru/>

Առաջին եռամսյակում աճի հիմնական աղբյուրներն են եղել մասնավոր և պետական պահանջարկը, ինչպես նաև մշակող արդյունաբերության աճը:

Գծապատկեր 1.1. Գործընկեր երկրների տնտեսական աճեր, եռամսյակային, տ/տ, %



Աղբյուրը՝ ԱՄՆ՝ Կոնգրեսական վերլուծությունների բյուրո, Եվրոստատ, Չինաստանի վիճակագրության ազգային բյուրո, ՌԴ՝ Ղազնային պետական վիճակագրական ծառայություն

Առաջատար տնտեսությունների կենտրոնական բանկերի կողմից դրամավարկային քաղաքականության զսպող դիրքի պահպանման արդյունքում դիտվել է գնաճի աստիճանական կայունացում, բացառությամբ ՌԴ-ի, որտեղ հունվար-ապրիլ ամսիներին որոշակի կայունացումից հետո, գնաճը մայիսից սկսել է արագանալ՝ օգոստոսին կազմելով 9.1%: ԱՄՆ-ում և ԵԳ-ում դիտվել է գնաճի տեմպերի աստիճանական թուլացում՝ մոտենալով սահմանված 2% թիրախին: Իսկ Չինաստանում տարեսկզբին գրանցված գնանկումից հետո, ներքին պահանջարկի աճին զուգընթաց գնաճ է գրանցվել: Այս համատեքստում կենտրոնական բանկերի կողմից վարվող դրամավարկային քաղաքականությունը, բացառությամբ ՌԴ-ի, որոշակիորեն թուլացրել է դիրքերը⁷:

Մասնավորապես, ԱՄՆ ԴՊՀ կողմից սեպտեմբեր ամսին քաղաքականության տոկոսադրույքն իջեցվել է 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 4.75-5.0 մակարդակում, ԵԿԲ-ն հունիսի նվազեցումից հետո սեպտեմբերին քաղաքականության տոկոսադրույքը նվազեցրել է ևս 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 3.5% մակարդակում: Չինաստանի բանկը հուլիսին 3.35% սահմանելուց հետո, սեպտեմբերին ևս պահպանել է քաղաքականության տոկոսադրույքի մակարդակը՝ պայմանավորված օգոստոսին գրանցված տնտեսական ակտիվության անորոշությամբ, որն էլ իր հերթին պայմանավորված էր մշակող արդյունաբերության թույլ աճով և գործազրկության բարձր մակարդակով:

ՌԴ կենտրոնական բանկը շարունակել է պահպանել դրամավարկային քաղաքականության զսպող դիրքը՝ հուլիսին բարձրացնելով հիմնական տոկոսադրույքը 2 տոկոսային կետով, այնուհետև սեպտեմբերին 1 տոկոսային կետով՝ սահմանելով 19% մակարդակում: Սա

⁷ ԱՄՆ համար դիտարկվել է Ղազնային ֆոնդերի արդյունավետ տոկոսադրույքը, ԵԳ՝ հիմնական վերաֆինանսավորման տոկոսադրույքը, Չինաստանի՝ վարկավորման մեկ տարվա տոկոսադրույք (one-year loan prime rate), ՌԴ՝ հիմնական տոկոսադրույքը:

պայմանավորված էր առաջարկը գերազանցող պահանջարկով, որն էլ խթանում էր գնաճի շարունակական աճը:

Կանխատեսում

ԱՄՀ հուլիս ամսվա կանխատեսումների համաձայն 2024 և 2025 թվականներին համաշխարհային տնտեսական աճը, համապատասխանաբար, կկազմի 3.2% և 3.3%: ՀՀ հիմնական գործընկեր երկրներից ԱՄՆ-ում ում 2024 թվականին աճի արագացումից հետո սպասվում է կտրուկ դանդաղում՝ պայմանավորված աշխատանքի շուկայի և սպառման թուլացմամբ և հարկաբյուջետային քաղաքականության աստիճանական խստացմամբ: Եվրագոտում 2024 թվականին տնտեսությունը կշարունակի աճել՝ պայմանավորված ծառայությունների ոլորտի ավելի արագ աճով և ավելի մեծ զուտ արտահանմամբ, իսկ 2025 թվականի աճին կնպաստի սպառման և ներդրումների աճը՝ պայմանավորված ֆինանսական պայմանների թուլացմամբ: Չինաստանում տնտեսական աճին նպաստող հիմնական գործոնները կլինեն մասնավոր սպառման վերականգնումը և զուտ արտահանման աճը: Մինչդեռ հաջորդող տարիներին ՀՆԱ-ն կդանդաղի (2024թ.՝ 5.0%, 2025թ.՝ 4.5%, 2027թ.՝ 3.6%)՝ պայմանավորված բնակչության ծերացմամբ և արտադրողականության աճի դանդաղմամբ: ՀՀ ամենամեծ առևտրատնտեսական գործընկեր ՌԴ-ում 2024 թվականին կանխատեսվում է 3.2% աճ՝ պայմանավորված ներդրումների և մասնավոր սպառման աճով: Ընդ որում, ի համեմատ ապրիլ ամսվա կանխատեսումների ՀՀ հիմնական գործընկեր երկրների հուլիս ամսվա կանխատեսումները որոշ չափով վերանայվել են՝ հիմնականում, առավել դրական սպասումներով: 2025 թվականին ՌԴ տնտեսության համար ապրիլի 1.5% աճի կանխատեսումը հուլիսին վերանայվել է 1.3%, իսկ Չինաստանի 4.1% աճի կանխատեսումը վերանայվել է դեպի վերև՝ 4.5%: ԱՄՆ-ի և Եվրագոտու 2025 թվականի հուլիս ամսվա աճի կանխատեսումները պահպանվել են նույն մակարդակում՝ 1.9% և 1.5%:

Աղյուսակ 1.2. ԱՄՀ կանխատեսումներ

| | 2023 | 2024թ.-ի կանխատեսում | | | 2025թ.-ի կանխատեսում | | | 2026թ. | 2027 թ. |
|----------------------------|------|----------------------|------------|-------------|----------------------|------------|-------------|------------|------------|
| | Փաստ | 2024 Հունվ. | 2024 Ապրիլ | 2024 Հուլիս | 2024 Հունվ. | 2024 Ապրիլ | 2024 Հուլիս | 2024 Ապրիլ | 2024 Ապրիլ |
| Աշխարհի տնտեսական աճ, % | 3.3 | 3.1 | 3.2 | 3.2 | 3.2 | 3.2 | 3.3 | 3.2 | 3.1 |
| ՌԴ | 3.6 | 2.6 | 3.2 | 3.2 | 1.1 | 1.8 | 1.5 | 1.3 | 1.3 |
| Եվրագոտի | 0.5 | 0.9 | 0.8 | 0.9 | 1.7 | 1.5 | 1.5 | 1.4 | 1.3 |
| Չինաստան | 5.2 | 4.6 | 4.6 | 5.0 | 4.1 | 4.1 | 4.5 | 3.8 | 3.6 |
| ԱՄՆ | 2.5 | 2.1 | 2.7 | 2.6 | 1.7 | 1.9 | 1.9 | 2.0 | 2.1 |
| Համաշխարհային առևտրի աճ, % | 0.8 | 3.3 | 3.0 | 3.1 | 3.6 | 3.3 | 3.4 | 3.5 | 3.4 |

Աղբյուրը՝ ԱՄՀ «World Economic Outlook»


Համաշխարհային տնտեսության զարգացման թույլ տեմպերը, Չինաստանի տնտեսության աճի հեռանկարի հետ կապված անորոշությունները, դրամավարկային

քաղաքականությունների խիստ պայմանների պահպանումը, շարունակվող աշխարհաքաղաքական առճակատումները և դրանցից բխող մատակարարման շղթաների խաթարումները ճնշումներ են գործադրել հումքային և պարենային ապրանքների միջազգային գների վրա: Կանխատեսվող հորիզոնում նավթի միջազգային գինը նվազման միտում ունի, մինչդեռ պղնձի միջազգային գինը՝ աճի: 2023 թվականին պղնձի տարեկան միջին գինը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 3.8%-ով, ինչին նպաստել են Չինաստանի անշարժ գույքի շուկայում ծագած խնդիրները, որոնք առավելապես դրսևորվել են երրորդ եռամսյակում: Նավթի միջազգային գինը 2023 թվականին կազմել է 83 ԱՄՆ դոլար մեկ բարելի դիմաց՝ նվազելով 17.2%-ով, իսկ պարենային ապրանքների միջազգային գինը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 13.8%-ով:

2024 թվականի հունվար-օգոստոս ամիսներին հումքային և պարենային ապրանքների գները որոշակի կայունացման միտում են դրսևորել: Ընթացիկ տարվա հունվար-օգոստոս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պղնձի միջազգային գինն աճել է 5.6%-ով՝ պայմանավորված մետաղի առաջարկի կրճատմամբ, ինչպես նաև մետաղի նկատմամբ Չինաստանի պահանջարկի վերականգնմամբ: Նավթի միջազգային գինն աճել է 3.9%-ով, ինչը, հիմնականում, պայմանավորված է ՕՊԵԿ+ -ի կողմից հայտարարված նավթի արտադրության և արտահանման լրացուցիչ կրճատման երկարաձգմամբ, համաշխարհային տնտեսության վերականգնման ազդակներով: Մինչդեռ, պարենի միջազգային գները նվազել են՝ 5.6%-ով՝ պայմանավորված որոշ ապրանքների (կաթնամթերք, հացահատիկ և շաքարավազ) միջազգային գների նվազմամբ, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության բարձր տոկոսադրույքներով:


Միջազգային տնտեսական և ֆինանսական զարգացումները և կանխատեսումները

Գծապատկեր 1.2. Համաշխարհային և Գծապատկեր 1.3. Հումքային ապրանքների գործընկեր երկրների տնտեսական աճերը (%)




Աղբյուրը՝ ԱՄՀ

Գծապատկեր 1.3. Հումքային ապրանքների գները (ԱՄՆ դոլար)




Աղբյուրը՝ կանխատեսումները ըստ Բյուրմբերգի

Գծապատկեր 1.4. Համաշխարհային առևտրի դոլարային աճերը(%)




Աղբյուրը՝ ԱՄՀ

Գծապատկեր 1.5. Զարգացող երկրների ազգային արժույթների դոլարի նկատմամբ փոփոխությունները⁸




Աղբյուրը՝ Բյուրմբերգ, ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.6. Գործընկեր երկրների բաժնետոմսերի շուկաների ինդեքսները



Աղբյուրը՝ Բյուրմբերգ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.7. Տարածաշրջանի երկրների ռիսկի հավելավճարները⁹



Աղբյուրը՝ Բյուրմբերգ

⁸ Դոլարի ինդեքսը հաշվարկվում է որպես կշռված երկրաչափական միջին՝ հետևյալ արժույթների նկատմամբ. Եվրո, Ճապոնական յեն, Բրիտանական ֆունտ, Կանադական դոլար, Շվեդական կրոն, Շվեյցարական ֆրանկ:

⁹ Երկրի ռիսկի հավելավճարները հաշվարկված են որպես տվյալ երկրի եվրոպարտությունների (դոլարային արժույթով) և ԱՄՆ համապատասխան ժամկետայնությամբ գանձապետական պարտավորումների եկամտաբերությունների տարբերություն (պարտավորումների մարման ժամկետները նշված են երկրների անվանումների կողքը՝ փակագծերում):

«Բլումբերգ» միջազգային կազմակերպության մայիս ամսվա կանխատեսումների համեմատ օգոստոսին 2024 թվականին նավթի միջազգային գնի կանխատեսումը վերանայվել է դեպի ներքև, 2025 թվականի համար մնացել է անփոփոխ, 2026 թվականի կանխատեսումը վերանայվել է դեպի ներքև, մինչդեռ 2027 թվականի համար՝ դեպի վերև: Պղնձի միջազգային գնի 2024 և 2025 թվականներին, ինչպես նաև միջնաժամկետում կանխատեսումը վերանայվել է դեպի վերև:

Միջազգային ապրանքային, արժույթային և ֆինանսական շուկաները էական տատանումների են ենթարկվում: Համաշխարհային առևտրի տեմպերը էապես դանդաղել են, իսկ ֆինանսական շուկաներում նկատվում են բաժնետոմսերի գների վերականգնում, բացառությամբ՝ ՌԴ-ի: Զարգացող երկրների արժույթները վերականգնման միտում ունեն: Սակայն ռուսական ռուբլին ԱՄՆ դոլարի նկատմամբ շարունակել է արժեզրկված մնալ: Այս պայմաններում զարգացող երկրների, այդ թվում տարածաշրջանի երկրների ռիսկի հավելավճարները նվազում են, բացառությամբ ՌԴ-ի, որտեղ հուլիսի վերջից կտրուկ աճ է գրանցվել:


1.3. ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

1.3.1. ՀՆԱ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Կորոնավիրուսի համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցություններով պայմանավորված 2020 թվականի տնտեսական անկումից հետո 2021-2023 թվականներին տնտեսությունը թեկնվել է վերականգնման և աճի փուլ և միջինում գրանցել 9.0% իրական աճ՝ իր վրա կրելով 2022 թվականի փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով դեպի Հայաստան մարդկանց ներհոսքի, զբոսաշրջության զգալի ավելացման, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխման, ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման, պետական բյուջեից կապիտալ ծախսերի և բնակարանաշինության բարձր աճերի, ինչպես նաև 2023 թվականի սեպտեմբերի վերջից Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված մեր հայրենակիցների և նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ոսկերչական արտադրատեսակների արտադրության կտրուկ աճի տնտեսական ազդեցությունները: 2021-2023 թվականներին տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների աճով (նպաստումը՝ միջինում 6.7 տոկոսային կետ): Տնտեսական աճին նպաստել են նաև շինարարության և արդյունաբերության ճյուղերը (նպաստումները՝ համապատասխանաբար՝ միջինում 0.8 և 0.5 տոկոսային կետեր), իսկ գյուղատնտեսությունը տնտեսական աճի վրա ունեցել է փոքր-ինչ բացասական ազդեցություն: Պահանջարկի տեսանկյունից աճին նպաստել է ինչպես ներքին պահանջարկի (հիմնականում սպառման և մասնավոր ներդրումների), այնպես էլ արտահանման աճը:


Տնտեսական աճի տեմպերը շարունակվել են նաև 2024 թվականին՝ կրելով նաև ոսկերչական արտադրատեսակների և հիմնային մետաղների արտադրության կտրուկ աճի և Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված մեր հայրենակիցների սպառման և տնտեսական գործունեության ազդեցությունները: Արդյունքում առաջին կիսամյակում գրանցվել է 6.5% տնտեսական աճ: Տնտեսության բոլոր ճյուղերն աճել են, սակայն տնտեսական աճը պայմանավորված է եղել հիմնականում ծառայությունների աճով (նպաստումը՝ 4.7 տոկոսային կետ): Ծառայությունների 6.7% աճը պայմանավորված է եղել հիմնականում առևտուր (22.1%), ֆինանսական և ապահովագրական գործունեություն (15.3%) ու անշարժ գույքի հետ կապված գործունեություն (12.8%) ենթաճյուղերի աճերով:

Գծապատկեր 1.9. ՀՆԱ աճ (%) և ճյուղերի նպաստումները ՀՆԱ աճին (տ.կ.)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ (տ.կ.)

Գծապատկեր 1.10. ՀՆԱ աճ (%) և պահանջարկի բաղադրիչների նպաստումները ՀՆԱ աճին




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ (տ.կ.)

Հուլիս ամսին տնտեսական ակտիվությունը փոքր-ինչ դանդաղել է՝ պայմանավորված հիմնականում ծառայությունների աճի տեմպի դանդաղմամբ: Արդյունքում 2024 թվականի հունվար-հուլիսին արձանագրվել է տնտեսական ակտիվության (ՏԱՅ) 9.6% աճ՝ պայմանավորված հիմնականում ծառայությունների, առևտրի և արդյունաբերության աճերով (համապատասխանաբար՝ 3.0, 2.9 և 2.8 տոկոսային կետ¹⁰): Շինարարության ճյուղի աճը ևս նպաստել է տնտեսական ակտիվությանը (1.2 տոկոսային կետ):


¹⁰ՏԱՅ-ի աճին ճյուղերի նպաստումները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են: Գյուղատնտեսության ցուցանիշը ոչ բոլոր տեղերում է ներառված հաշվարկներում, քանի որ հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության պահանջարկի հարթեցման անհրաժեշտությամբ:

Գծապատկեր 1.11. SUՑ և տնտեսության ճյուղերի իրական աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուտակ., %)




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.12. SUՑ և տնտեսության ճյուղերի իրական աճերը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (ամսական, %)




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.13. Տնտեսության ճյուղերի նպաստումները SUՑ-ին (կուտակային, տ.կ.)¹¹



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.14. Տնտեսության ճյուղերի նպաստումները SUՑ-ին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (ամսական, տ.կ.)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Ներքին պահանջարկի աճը շարունակվել է նաև 2024 թվականի առաջին կիսամյակում: Տնտեսական աճը պայմանավորված է եղել հիմնականում մասնավոր սպառման և ներդրումների (պետական և մասնավոր) աճով: Պետական սպառումը տարեսկզբից շարունակաբար նվազել է, բացասաբար ազդելով ներքին պահանջարկի աճին: Նույն ժամանակահատվածում գրանցվել են արտահանման և ներմուծման աճի բարձր տեմպեր: Ընդ որում՝ ներմուծման աճը մի փոքր բարձր է եղել արտահանման նկատմամբ, ինչի արդյունքում զուտ արտահանումն ունեցել է փոքր-ինչ բացասական նպաստում ՀՆԱ-ի իրական աճին:

Տնտեսության ներքին պահանջարկի աճի միտումները շարունակվել են նաև հուլիսին՝ պայմանավորված տնօրինվող եկամտի, հիփոթեքային շինարարության, ինչպես նաև սպառողական վարկավորման աճերով, իսկ արտահանումը (առանց վերաարտահանման ազդեցության) որոշակի նվազել է: Ներքին պահանջարկի աճին դրական նպաստում է ունեցել նաև Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված բնակչության սպառումը: Սպառման աճի

¹¹SUՑ-ի նպաստումների «այլ» բաղադրիչի մեջ ներառված են գյուղատնտեսության (բացառությամբ՝ հունվար-մարտի և հունվար-հունիսի) և ոչ շուկայական ծառայությունների նպաստումները:


մասին են վկայում նույն ժամանակաշրջանում առևտրի և ծառայությունների աճը, իսկ ներդրումների աճի մասին՝ շինարարության աճը:

Կանխատեսում

Ընթացիկ տնտեսական զարգացումների, պետական կապիտալ ծախսերի դերի շարունակական բարձրացման, ինչպես նաև Սոթքի հանքի ստորգետնյա եղանակով շահագործման և կառուցվածքային բարեփոխումների (առավել մանրամասն տե՛ս 1.4 բաժնում) հնարավոր ազդեցությունների արդյունքում 2024 թվականի համար սպասվում է շուրջ 5.8% տնտեսական աճ, 2025թ.՝ 5.1%, իսկ 2026-2027 թվականներին՝ միջինում 5.2% աճ: 2024 թվականին և միջնաժամկետում տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների աճով: Տնտեսական աճին իրենց նպաստումը կունենան նաև արդյունաբերության և շինարարության ճյուղերի աճերը: Գյուղատնտեսությունը նույնպես դրական ազդեցություն կունենա տնտեսական աճի վրա: Ամբողջական պահանջարկը կաճի՝ հիմնականում պայմանավորված ներքին սպառողական և ներդրումային պահանջարկի աճով:

2024 և 2025 թվականներին, ինչպես նաև 2026-2027 թվականներին ՀՆԱ-ի դեֆլյատորը կաճի՝ պայմանավորված ՍԳԻ-ի և ապրանքների միջազգային գների զարգացումներով:


Վերոնշյալ զարգացումների պայմաններում անվանական ՀՆԱ-ն 2024 թվականին կկազմի 10,110.2 մլրդ դրամ՝ 125.2 մլրդ դրամով պակաս լինելով 2025-2027թթ. ՄԺԾԾ-ով կանխատեսվող ցուցանիշից և 405.9 մլրդ դրամով պակաս՝ 2024 թվականի բյուջեով ծրագրած ցուցանիշից: Իսկ 2025 թվականին անվանական ՀՆԱ-ն կկազմի 10,891.5 մլրդ դրամ՝ շուրջ 305 մլրդ դրամով պակաս լինելով 2025-2027 թվականների ՄԺԾԾ-ով կանխատեսվող ցուցանիշից: Միջնաժամկետում անվանական ՀՆԱ-ն կաճի միջինում 8.8%-ով՝ 2027 թվականին կազմելով 13,037 մլրդ դրամ:



Գծապատկեր 1.15. Անվանական ՀՆԱ և տնտեսական աճ


Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.16. Տնտեսության առանձին ճյուղերի նպաստումները տնտեսական աճին



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.17. Տնտեսական աճին պահանջարկի բաղադրիչների նպաստումները




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Համախառն առաջարկի կանխատեսում


2024 թվականին տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների աճով (6.9%): Շինարարության, արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերը նույնպես կաճեն (համապատասխանաբար՝ 13.2%, 3.1% և 3.3%)՝ դրական նպաստելով տնտեսական աճին: Միջնաժամկետում՝ պայմանավորված ներքին և արտաքին պահանջարկի աճով, տնտեսությունում իրականացվող պետական և մասնավոր ներդրումներով, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից արտահանման ու ներդրումների խթանմանն ուղղված քաղաքականություններով՝ ծառայությունները կաճեն միջինում 5.3%-ով (ծառայությունների աճը կշարունակի պայմանավորվել ՏՏ, զբոսաշրջության և ֆինանսական ծառայությունների աճերով), արդյունաբերությունը՝ 5.1%-ով (պայմանավորված հանքարդյունաբերության՝ մասնավորապես Ամուլսարի, Սոթքի շահագործմամբ և մշակող արդյունաբերության աճով), շինարարությունը՝ 6.2%-ով (պայմանավորված պետական կապիտալ ծախսերի (հիմնականում ենթակառուցվածքներում ներդրումների) և բնակարանային շինարարության աճերով), իսկ գյուղատնտեսությունը՝ 3.0%-ով (գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերով պայմանավորված ոլորտի աճով):

Գծապատկեր 1.18. Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռները ՀՆԱ-ի կազմում



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.19. Ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ի կազմում



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Ընթացիկ զարգացումների պայմաններում 2024 թվականին վերջնական սպառումը իրական արտահայտությամբ կաճի 5.6%-ով, իսկ ներդրումները՝ 11.5%-ով: Սպառման և ներդրումների աճին կնպաստեն տնօրինվող եկամտի և բնակարանային շինարարության շարունակվող աճերը, ինչպես նաև ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված պետական քաղաքականությունն ու նախատեսվող պետական կապիտալ ծախսերը: Միջնաժամկետում՝ սպառումը միջինում կաճի 4.5%-ով, իսկ ներդրումները՝ 7.6%-ով: Միջնաժամկետում ներդրումների վրա դրական ազդեցություն կունենա ՀՀ կառավարության կողմից ենթակառուցվածքներում ներդրումների նախատեսվող շարունակական աճը, ինչպես նաև մասնավոր ներդրումների խթանմանն ուղղված միջոցառումները, իսկ սպառումը պայմանավորված կլինի տնօրինվող եկամտի աճով:


2024 թվականին արտահանումը և ներմուծումը կաճեն 16.8%-ով և 20.5%-ով՝ պայմանավորված ներքին պահանջարկի և տնտեսական ակտիվության աճով, ինչպես նաև այլ երկրներից (առանց ՌԴ) զբոսաշրջության աճով և վերաարտահանման գործոնով: Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով 2022-2023 թվականներին առաջացած դրական գործոնների աստիճանական թուլացմամբ, մասնավորապես, վերաարտահանման ծավալների նվազմամբ պայմանավորված 2025 թվականին արտահանումը կնվազի 36.5%-ով, իսկ ներմուծումը՝ 33.6%-ով: ՀՀ և համաշխարհային տնտեսական աճերի, ՀՀ տնտեսության արտահանելի հատվածի զարգացումների, տնօրինվող եկամտի և զբոսաշրջության աճի, ինչպես նաև արտահանմանը և ներդրումների խրախուսմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության պայմաններում 2026-2027 թվականներին արտահանումն ու ներմուծումը կաճեն միջինում 5.4% և 4.7%-ով:

1.3.1.1. ԹԻՐԱԽԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՍՅԵՆԱՐ

ՀՀ կառավարությունը նպատակադրել է հասնել միջինում առնվազն 7% տնտեսական աճի: Հատկանշական է, որ կանխատեսված սցենարում 2021-2026թթ. միջինում տնտեսական աճը կազմում է 7.1%, որը փոքր-ինչ բարձր է կառավարության նպատակադրած 7% տնտեսական աճի թիրախից: Ընդ որում, վերջին տարիներին ՀՀ տնտեսական աճի ներուժը բարձրացել է՝ հասնելով 5.0-5.5%: Այս աճը պահպանելու և ավելի բարձր և կայուն աճի հասնելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ջանքեր՝ ուղղված արտադրողականության բարձրացմանը, ներդրումների և արտահանման խթանմանը:

Հաշվի առնելով տնտեսության զարգացման ներկա իրավիճակը, միջնաժամկետում տնտեսական աճի ներուժի պահպանման և հետագա բարձրացման համար հնարավոր է հասնել միայն համապատասխան քաղաքականությունների և միջոցառումների իրականացման միջոցով, ուստի կառավարությունը ջանքեր է գործադրելու նպատակադրած աճի թիրախն ապահովելու համար՝ իրականացնելով տնտեսական աճի ներուժի բարձրացմանն ուղղված գործողություններ:

Գծապատկեր 1 . 20 . Կառավարության թիրախավորած 7% տնտեսական աճի և կանխատեսվող սցենարների համեմատականը, իրական ՀՆԱ, 2020=100



Այդ առումով, սույն բաժնում նկարագրվում է 2025-2027 թվականներին տնտեսության ներուժի աստիճանական բարձրացման և ավելի բարձր տնտեսական աճի ապահովման անհրաժեշտ քաղաքականությունների ուղղությունները և այդ ուղղությամբ ՀՀ կառավարության ներդրած և ներդրվելիք ջանքերը:

Տնտեսական աճ

Չնայած 2021-2023 թվականներին տնտեսությունը վերականգնվել է, և միջինում գրանցվել է բարձր՝ 9.0% իրական աճ, այնուամենայնիվ նշված ժամանակահատվածն աչքի է ընկել մի շարք կարևոր իրադարձություններով, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել բարձր տնտեսական աճի ապահովման գործընթացում, որոնց ազդեցությունն առաջիկա տարիներին զգալի կնվազեն: Մասնավորապես՝ 2022 թվականի փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով նկատվել է դեպի Հայաստան մարդկանց ներհոսք, զբոսաշրջության զգալի ավելացում, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխում, ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացում, գրանցվել են պետական բյուջեից կապիտալ ծախսերի և բնակարանաշինության բարձր աճեր, 2023 թվականի սեպտեմբերի վերջից Լեռնային Ղարաբաղից ՀՀ են բռնի տեղահանվել ավելի քան 100,000 հայրենակիցներ, ինչպես նաև 2023 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներից սկսած տեղի է ունեցել ոսկերչական արտադրատեսակների արտադրության կտրուկ աճ:

Դեպի ՀՀ զբոսաշրջային մեծ հոսքերը, ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների ՀՀ տեղափոխվելը, զբաղվածների թվաքանակի ավելացումը, ինչպես նաև պետական կապիտալ ծախսերի դերի շարունակական բարձրացումը հանգեցրել են տնտեսության ներուժի և ներուժային աճի բարձրացման: Գնահատվում է, որ ՀՀ տնտեսության

ներուժային աճը նախկին 4-4.5% գնահատված միջակայքից աճել է՝ հասնելով 5-5.5% միջակայքի: Չնայած այն հանգամանքին, որ կանխատեսված տնտեսական աճերի պարագայում 2021-2026թթ. տնտեսական աճը միջինում գերազանցում է կառավարության նպատակադրած 7% տնտեսական աճի ցուցանիշը, սակայն միջնաժամկետում նշված ներուժային աճը պահպանելու և ավելի բարձր կայուն աճի հասնելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ջանքեր՝ ուղղված տնտեսական աճի ներուժի բարձրացմանը: Նշված թիրախին հասնելու համար ապագա տարիներին ՀՀ տնտեսությունը պետք է զարգանա ՀՀ կառավարության գործող ծրագրով նախանշված առաջարկի վրա հիմնված տնտեսական աճի մոդելով (որն իր կենսունակությունն ապացուցել է աշխարհի բազմաթիվ երկրներում), որտեղ տնտեսական աճի առանցքային շարժիչը պետք է լինի արտահանելի հատվածը և արտահանումը (export-led growth model):

Ներդրումներ և արտադրողականություն

Միջնաժամկետում բարձր և կայուն տնտեսական աճի հասնելու համար անհրաժեշտ է շարունակաբար բարձրացնել ներդրումների և արտադրողականության մակարդակը: Վերջինիս ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ ներդրումային քաղաքականություն՝ ներդրումներն ուղղելով տնտեսության արտահանելի հատված, դեպի տեխնոլոգիաներ և ենթակառուցվածքներ, ապահովելով կապիտալի բարձր արտադրողականություն:

Բարձր տնտեսական աճի ապահովման համար կարևոր նախադրյալ է աշխատանքի և կապիտալի արտադրողականության բարձրացումը, ինչը հնարավոր է իրականացնել նոր տեխնոլոգիական լուծումների կիրառմամբ, գործարար և ներդրումային միջավայրի բարելավմամբ, աշխատուժի որակի բարձրացման և կրթական միջոցառումների իրականացմամբ. այս ուղղությամբ նշանակալի արդյունքներ կարող են գրանցվել Կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագրի, մշակվող նոր Ջբաղվածության ռազմավարության, ներդրումների խթանման բարեփոխումների արդյունավետ իրականացման արդյունքում (առավել մանրամասն տե՛ս ՄԱՍ II. Ծախսային քաղաքականության ռազմավարությունը բաժնում):

Արտահանելի հատված և արտահանում

Բարձր տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է արտահանման տեմպերի արագացում ի հաշիվ ոչ հումքային բարձր ավելացված արժեք ստեղծող ապրանքատեսակների և արտահանելի ծառայությունների: Այսպես, բարձր աճի հասնելու համար, անհրաժեշտ մասնավոր ներդրումների ծավալների ապահովմանը զուգահեռ անհրաժեշտ է ապրանքների և ծառայությունների արտահանման ավելի բարձր և կայուն աճերը, ինչը հնարավոր կլինի տնտեսության արտահանելի հատվածի արտադրողական ճյուղերի էական բարելավման միջոցով: Այս թիրախների ապահովմանը կարող է նպաստել արտահանման խթանման միջոցառումների, մշակվող նոր Արտահանման խթանման ռազմավարության և SS ոլորտի խթանման նախատեսվող նոր ծրագրերի արդյունավետ իրականացումը (առավել մանրամասն տե՛ս ՄԱՍ II. Ծախսային քաղաքականության ռազմավարությունը բաժնում):

1.3.2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ

Համավարակի և պատերազմի շուկերից հետո 2021 թվականից տնտեսության աճի տեմպերը սկսեցին վերականգնվել, ինչի արդյունքում 2021-2023 թվականներին գործազրկության մակարդակը¹² աստիճանաբար նվազել է, իսկ վարձու աշխատողների թիվն աճել է՝ պայմանավորված նաև ստվերի նվազմամբ: 2021-2023 թվականների բարձր տնտեսական աճի պայմաններում գործազուրկների թվի կրճատումն ուղեկցվել է զբաղվածների թվի աճով: 2021-2023 թվականներին գործազրկության մակարդակը 15.5%-ից նվազել է 12.6%-ի, իսկ վարձու աշխատողների թիվն աճել է միջինում 5.0%-ով՝ պայմանավորված տնտեսական աճով, նոր կազմակերպությունների ստեղծմամբ, ինչպես նաև ստվերի կրճատմամբ:

2021-2023 թվականներին գործազուրկների թվի կրճատումն (կուտակային 63.2 հազ. մարդ) ուղեկցվել է զբաղվածների ավելի մեծ աճով (կուտակային 132.3 հազ. մարդ), հանգեցնելով աշխատուժի ավելացմանը: Միաժամանակ, աշխատուժի մասնակցության մակարդակը 2021 թվականի 57.8%-ից 2023 թվականին հասել է 60.3%-ի:


2024 թվականին գործազրկությունն աճել է, զբաղվածությունը՝ նվազել, իսկ վարձու աշխատողների թիվը և աշխատավարձերը շարունակել են աճել: 2024 թվականի առաջին եռամսյակում գործազրկության մակարդակը կազմել է 15.5%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 1.8 տոկոսային կետով, իսկ զբաղվածության մակարդակը նվազել է 2.2 տոկոսային կետով՝ կազմելով 48.7%: Միաժամանակ նվազել է նաև աշխատուժի մասնակցության մակարդակը՝ 59.0%-ից իջնելով 57.7%-ի: Նույն ժամանակաշրջանում զբաղվածների թիվը նվազել է 1.2%-ով՝ կազմելով 1,116.4 հազ. մարդ, իսկ գործազուրկների թիվն աճել է 13.8%-ով և կազմել՝ 204.4 հազ. մարդ:

2024 թվականի հունվար-հուլիսին պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 4.5%-ով՝ կազմելով 44,063 մարդ: Նշված ժամանակահատվածում 5.0%-ով աճել է վարձու աշխատողների թիվը, որին հիմնականում նպաստել են առևտրի, կրթության և շինարարության ոլորտներում աշխատողների թվի աճը: Վարձու աշխատողների թվի աճին հիմնականում նպաստել են տնտեսության դրական զարգացումները, ԼՂ բնակչության որոշ մասի՝ ՀՀ աշխատանքի շուկայում ընդգրկումը, ինչպես նաև սեզոնային աշխատողների (հիմնականում շինարարության ոլորտում)՝ արտերկրում գործունեության իրականացման փոխարեն ՀՀ-ում գործունեություն իրականացնելու նախընտրությունը և ստվերի կրճատումը:

2024 թվականի տնտեսական աճի պայմաններում աշխատանքի շուկայում կորստորվեն դրական զարգացումներ: Այս պայմաններում ակնկալվում է զբաղվածության աճ և գործազրկության նվազում:


¹²Ի տարբերություն նախկին մեթոդաբանության, երբ աշխատանքի շուկայի ցուցանիշները հիմնված էին առկա բնակչության թվի վրա, 2020թ. սկսած հաշվարկվում են՝ հիմք ընդունելով մշտական բնակչության թիվը (ներառում է նաև մինչև 12 ամիս ժամկետով ՀՀ-ից դուրս գտնվող զբաղվածներին և գործազուրկներին): Հետևաբար աշխատանքի շուկայի ցուցանիշները ներկայացնում են ազգային զբաղվածությունը և գործազրկությունը:

Գծապատկեր 1.21. Գործազրկություն և գրառվածություն




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.22. Աշխատուժի մասնակցության մակարդակ և աշխատավարձ




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.23. Գործազրկություն, գրառվածներ, վարձու աշխատողներ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.24. Աշխատուժի մասնակցության մակարդակ և աշխատավարձ



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

2021-2023 թվականներին տնտեսական աճն ուղեկցվել է միջին աշխատավարձերի աճով:

Վերջին երեք տարիներին գրանցվել է անվանական աշխատավարձերի միջինում 12.6% աճ, իսկ իրական աշխատավարձերը միջինում աճել են 6.4%-ով:

2024 թվականին տնտեսական աճի պայմաններում միջին ամսական անվանական աշխատավարձի աճի տեմպը պահպանվել է, սակայն, հիմնականում դանդաղվարքագծով: Ընդ որում՝ տարեսկզբից նկատվում է պետական հատվածի աշխատավարձերի աճի առաջանցիկ տեմպ մասնավոր հատվածի աշխատավարձերի աճի նկատմամբ:


2024 թվականի հունվար-հուլիսին տնտեսությունում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.7%-ով՝ կազմելով 280,066 դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի, կրթության, մշակող արդյունաբերության, ֆինանսական և ապահովագրական գործունեության, շինարարության, ինչպես նաև առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտների աշխատավարձերի աճով:

Միաժամանակ, սպառողական գների ինդեքսի 0.3% նվազման պայմաններում իրական աշխատավարձն աճել է շուրջ 7.0%-ով: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 10.5%-ով՝ կազմելով 216,251 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 5.4%-ով՝ կազմելով 305,674 դրամ:

1.3.3. ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄ և ՆԵՐՄՈՒԾՈՒՄ


2021-2023թթ. վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ երեք տարիների որոշակի վատթարացումից հետո բարելավվել է՝ միջինում կազմելով ՀՆԱ-ի 1.8%-ը: Նշված տարիներին համավարակի և Արցախյան պատերազմի շուկերից հետո 2021թ. ՀՀ տնտեսության վերականգման և 2022թ. ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ-ի նկատմամբ կիրառվող աննախադեպ պատժամիջոցների հետևանքով ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման, զբոսաշրջության զգալի ավելացման պայմաններում ընթացիկ հաշիվը բնութագրվել է ապրանքների և ծառայությունների հաշվեկշռի բարելավմամբ: Իսկ 2023 թվականին ընթացիկ հաշվի վատթարացել է, հիմնականում պայմանավորված դրամական փոխանցումների (հատկապես՝ ՌԴ-ից) նվազմամբ, ինչպես նաև բացասական առևտրային հաշվեկշռի խորացմամբ: Նշված զարգացումների արդյունքում 2023 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդը վատթարացել է 2.6 տոկոսային կետով՝ գտնվելով երկարաժամկետ կայուն մակարդակից ցածր դիրքում:

Գծապատկեր 1.25. Ընթացիկ հաշվի և դրա բաղադրատարրերի դինամիկան, % ՀՆԱ-ում




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.26. Ապրանքների արտահանման, ներմուծման և առևտրային հաշվի դինամիկան, մլն ԱՄՆ դոլար




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.27. Ծառայությունների արտահանում, ներմուծում և հաշվեկշռի դինամիկան, մլն ԱՄՆ դոլար



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.28. Զուտ դրամական փոխանցումների դինամիկան, մլն ԱՄՆ դոլար



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

2024 թվականի առաջին յոթ ամիսներին ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռը վատթարացել է: Ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը, պայմանավորված ներմուծման մեծ ծավալներով, նախորդ տարվա նկատմամբ վատթարացել է: Միաժամանակ, նշված ժամանակահատվածում ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը նվազել է, մինչդեռ ՀՀ-ից մեկնած զբոսաշրջիկների թվաքանակը աճել՝ թողնելով բացասական ազդեցություն ծառայությունների հաշվեկշիռի վրա: ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված առևտրային և ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումները նույնպես նվազել են:

Կանխատեսում



Պայմանավորված ծառայությունների դրական հաշվեկշիռի վատթարացմամբ և դրամական փոխանցումների դերի նվազմամբ՝ 2024թ. ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ում կշարունակի խորանալ՝ հասնելով ՀՆԱ-ում 5%-ի: 2025թ.-ին 2022-2023թթ. առաջացած դրական գործոնների ազդեցությունների աստիճանական չեզոքացման (մասնավորապես, վերաարտահանման գործոնի չեզոքացման, ՌԴ-ից զբոսաշրջիկների հոսքերի կայունացման) պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը որոշակի կվատթարանա, իսկ միջնաժամկետում կմոտենա իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին:

Արտահանում

2021-2023թթ. միջինում արձանագրվել է ապրանքների և ծառայությունների դոլարային արտահանման 58% աճ: 2022-23թթ արձանագրվել են ապրանքների և ծառայությունների բարձր աճի տեսքեր: Ապրանքների արտահանումը 2022-2023թթ. միջինում աճել է 62.9%-ով, որը հիմնականում պայմանավորվել է արտաքին որոշ շուկաներում (հատկապես՝ ՌԴ-ում և ԱՄԷ-ում) ՀՀ ապրանքների նկատմամբ պահանջարկի ավելացմամբ և վերաարտահանմամբ: Իսկ 2022-23թթ. ծառայությունների արտահանումը միջինում աճել է 90.3%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակի կտրուկ աճով, որին մեծ նպաստում է ունեցել ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում ռուս զբոսաշրջիկների թվաքանակի կտրուկ աճը: Ընդ որում, հատկանշական է այն հանգամանքը, որ 2023թ. ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը հատել է 2019 թվականի նախահամավարակային ժամանակաշրջանի մակարդակը, սակայն այն տեղի է ունեցել միայն ՌԴ-ից զբոսաշրջիկների աճի հաշվին: Ծառայությունների արտահանման աճին դրական նպաստում է ունեցել նաև հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայությունների արտահանումը:

2024թ. հունվար-հուլիս ամիսներին արձանագրվել է ապրանքների արտահանման 2.2 անգամ աճ՝ հիմնականում պայմանավորված վերոնշյալ գործոններով: Սակայն մայիս ամսին արձանագրվել է արտահանման աճի տեմպի զգալի դանդաղում՝ պայմանավորված ոսկու վերաարտահանման ծավալների կտրուկ կրճատմամբ:

Գծապատկեր 1.29 2024թ. ապրանքների արտահանման միտումները, %



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ

2024 թվականի առաջին յոթ ամիսներին ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է, իսկ ՀՀ-ից մեկնած զբոսաշրջիկների թվաքանակն ավելացել է: 2024 թվականի առաջին յոթ ամիսներին ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 6% (շուրջ 75.8 հազար մարդով), որին ՌԴ զբոսաշրջիկների (շուրջ 496 հազար մարդ) նպաստումը կազմել է շուրջ 11.7%-ային կես: Ընդ որում, աճել է այլ երկրներից ժամանած զբոսաշրջիկների, մասնավորապես, Հնդկաստանից ժամանածների թվաքանակը (1.7 անգամ):

Կանխատեսում



Փաստացի և կանխատեսվող հորիզոնում վերաարտահանման գործոնի բացառման պայմաններում 2024թ. սպասվում է ապրանքների և ծառայությունների արտահանման որոշակի նվազում, հիմնականում պայմանավորված դեպի ՌԴ ապրանքների արտահանման նվազմամբ և ՌԴ-ից զբոսաշրջիկների թվաքանակի կրճատմամբ: Առանց վերաարտահանման գործոնի ազդեցության 2025թ. և միջնաժամկետում սպասվում են միջինում շուրջ 5% արտահանման աճեր: Սակայն, պայմանավորված որոշ ապրանքների վերաարտահանման որոշակի պահպանմամբ 2024թ. սպասվում է շուրջ 17.4% արտահանման աճ: Մինչդեռ, ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով 2022-2023թթ. առաջացած դրական գործոնների թուլացման, մասնավորապես վերաարտահանման գործոնի զգալի չեզոքացման պայմաններում՝ 2025թ. համար կանխատեսվում է արտահանման շուրջ 37% անկում, իսկ 2026-2027թթ.-ին կանխատեսվում է արտահանման միջինում շուրջ 3.6% աճ:

Ներմուծում

2021-2023թթ. միջինում արձանագրվել է ապրանքների և ծառայությունների ներմուծման դոլարային 43% աճ: 2021թ. ապրանքների և ծառայությունների ներմուծման աճերը համավարակի հետևանքով կրած անկումից հետո սկսել են վերականգնվել, իսկ 2022-2023թթ. գրանցել բարձր աճ՝ պայմանավորված ներքին պահանջարկով, բարձր տնտեսական ակտիվությամբ և վերաարտահանման նպատակով իրականացված

ներմուծմամբ: Նշված ժամանակահատվածում ծառայությունների ներմուծման աճի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորված են համավարակի հետ կապված սահմանափակումների վերացմամբ և տնտեսական բարձր ակտիվությանը համահունչ բնակչության տնօրինվող եկամտի ավելացմամբ՝ պայմանավորված զբոսաշրջային ծառայությունների նկատմամբ ստեղծված պահանջարկով:

2024 թվականի առաջին յոթ ամիսներին արձանագրվել է ներմուծման երկնիշ աճ՝ պայմանավորված բարձր տնտեսական ակտիվությամբ և վերաարտահանման նպատակով իրականացված ներմուծմամբ: 2024 թվականի յոթ ամիսներին դոլարային արտահայտությամբ ապրանքների ներմուծման ծավալը աճել է 79.1%՝ կազմելով 11685.8 մլն դոլար: Հատկանշական է, որ մայիս ամսից սկսած արձանագրվել է ներմուծման աճի տեմպի կտրուկ դանդաղում՝ պայմանավորված ոսկու ներմուծման ծավալների կտրուկ փոքրացմամբ:



Գծապատկեր 1.30. 2024թ. ապրանքների ներմուծման միտումները, %

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ

Կանխատեսում

Փաստացի և կանխատեսվող հորիզոնում վերաարտահանման գործոնի ազդեցության բացառման պայմաններում 2024թ. և միջնաժամկետում սպասվում են ներքին պահանջարկին և տնտեսական ակտիվությանը համահունչ ներմուծման աճեր: Իսկ ընդհանուր առմամբ, սպասվող տնտեսական աճի և ապրանքների ու ծառայությունների նկատմամբ ներքին պահանջարկի աճով, ինչպես նաև վերաարտահանման գործոնների թուլացմամբ պայմանավորված 2024թ. սպասվում է շուրջ 21.6% ներմուծման աճ: 2025թ. վերաարտահանման գործոնի զգալի չեզոքացման արդյունքում կարճաժամկետային ներմուծման շուրջ 34% անկում: 2026-2027թթ. պայմանավորված ներքին պահանջարկի աճով, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից նախատեսվող պետական ներդրումների իրականացման և մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների ազդեցությամբ պայմանավորված ներմուծման աճը միջինում կկազմի մոտ 3.2%: Նման չափավոր աճը պայմանավորված է վերաարտահանման գործոնի նվազմամբ:


1.3.4. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ ԵՎ ՓՈԽԱՐԺԵՔՆԵՐ

Ֆիզիկական անձանց փոխանցումներ

Դեպի ՀՀ ֆիզիկական անձանց զուտ փոխանցումները 2021-2023թթ. հասել են աննախադեպ մեծ ծավալների, պայմանավորված ՌԴ-ից մեծ ներհոսքով: 2021թ. մինչև 2023թ. առաջին եռամսյակ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից արտերկիր կատարված առևտրային և ոչ առևտրային նպատակով զուտ փոխանցումները աճել են բարձր տեմպով: Սակայն 2023 թվականի երկրորդ եռամսյակից մինչ տարեվերջ սկսել են նվազել արագացող տեմպով: 2023թ. զուտ փոխանցումները հասել են 1.7 մլրդ դոլարի՝ 2022թ. համեմատ նվազելով 36%-ով: Ընդ որում՝ ՌԴ-ից զուտ փոխանցումները 2023թ. կազմել են 3.3 մլրդ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով շուրջ 5.1%՝ հիմնականում պայմանավորված առաջին եռամսյակի աճով: Արդյունքում, 2023թ. ՀՀ-ում արտարժույթի ծավալները նվազել են՝ դեռևս մնալով բարձր մակարդակի վրա:

2024թ. առաջին յոթ ամիսներին դեպի ՀՀ ֆիզիկական անձանց փոխանցումների ծավալները նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ նվազել են: 2024 թվականի առաջին յոթ ամիսներին զուտ փոխանցումները կազմել են 759 մլն դոլար, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրելով 26.4 տոկոս անկում: Ընդ որում՝ ՌԴ-ից զուտ փոխանցումները 2024 թվականի առաջին յոթ ամիսներին կազմել են շուրջ 1.6 մլրդ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով շուրջ 17.6 տոկոսով: Արդյունքում, 2023թ.-ին ավելացած արտարժույթի ծավալները սկսել են նվազել՝ դեռևս մնալով բարձր մակարդակի վրա և պահպանելով ՀՀ-ում արտարժույթի բարձր առաջարկը:

Գծապատկեր 1.31. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված զուտ փոխանցումներ,



մլն ԱՄՆ դոլար


Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Արժութային շուկա

2021-2023թթ. ՀՀ արժութային շուկայի շրջանառության ծավալները եղել են աննախադեպ բարձր մակարդակում: Արժութային շուկայի նման մեծ շրջանառությունը պայմանավորված է 2022թ. սկիզբ առած ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ՀՀ ներհոսած ռուբլու մեծ ծավալներով, որն առաջացրել է դոլարի և եվրոյի նկատմամբ մեծ պահանջարկ: Այս մասին են փաստում 2022թ. երկրորդ եռամսյակից ՀՀ ներբանկային շուկայում ռուբլու զուտ առքի աննախադեպ բարձր ծավալները, որին զուգընթաց կտրուկ ավելացել են դոլարի և եվրոյի զուտ վաճառքի ծավալները: Այս ժամանակահատվածում ՀՀ ԿԲ-ն արժութային շուկայում իրականացրել է միջամտություններ՝ ֆինանսական շուկայի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով՝ մասնավորապես 2022թ. միջամտությունների ծավալը կազմել է 573.8, իսկ 2023թ՝ .1147 մլն դոլար:


2024թ. հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ արժութային շուկայի շրջանառության ծավալները շարունակել են պահպանվել բարձր մակարդակում: 2024 թվականի հունվար-ապրիլ ամիսներին արտարժույթի ներբանկային վաճառքը գերազանցել է առքի ծավալները՝ պայմանավորված դոլարի և եվրոյի վաճառքի ծավալների աճով: Մայիսից օգոստոս ամիսներին առքի ծավալները գերազանցել են վաճառքի ծավալները՝ պայմանավորված եվրոյի և ռուբլու ձեռքբերումներով: 2024 թվականի առաջին յոթ ամիսներին ՀՀ ԿԲ-ն իրականացրել է 347 մլն դոլար արտարժույթի զուտ առք:

Գծապատկեր 1.32. ՀՀ արժութային (ներբանկային) շուկայի շրջանառության տվյալներն ըստ դրամային համարժեքների, զուտ մլրդ դրամ



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.33. Փոխարժեք և ԿԲ գործառնություններ



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Երկկողմանի փոխարժեքներ


2021-2023թթ. ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուբլու նկատմամբ միջինում դրսևորել է արժևորման վարքագիծ՝ հիմնականում պայմանավորված 2022թ. արտարժույթի աննախադեպ մեծ ներհոսքով: ՀՀ փոխարժեքի շուկայում 2021-ից մինչև 2022թ. տարեվերջ արձանագրվել է ՀՀ դրամի արժևորում դոլարի և եվրոյի նկատմամբ, այնուհետև, 2023թ. տարեսկզբից եվրոն և դոլարը դրսևորել են հարաբերական կայուն վարքագիծ: Դոլարի համար 2023թ. -ին գրանցվել է արժևորման առավելագույն 385.8 արժեք օգոստոսի 23-ին: Միջին փոխարժեքը կազմել է 392.5 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա միջին փոխարժեքի՝ 435.7-ի նկատմամբ արժևորվելով 11%-ով: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 8.5%-ով, արժևորման առավելագույն 410 դրամ մեկ եվրոյի դիմաց արժեքին հասնելով 2023թ. սեպտեմբերի 27-ին: ՀՀ դրամը ՌԴ ռուբլու նկատմամբ 2022թ. մարտին կտրուկ արժևորվել է՝ պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտությամբ, ապա սկսել է կրկին արժեզրկվել մինչև հունիս, այնուհետև՝ նորից մտել արժևորման փուլ մինչև սեպտեմբեր, այնուհետև դրսևորել թույլ տատանողականությամբ կայուն վարքագիծ: Տարեվերջին 2022թ. համեմատ արժևորումը կազմել է 39.4 տոկոս:

2024թ. հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ դրամը արժեզրկվել է դոլարի և եվրոյի նկատմամբ, իսկ ռուբլու նկատմամբ շարունակել է թույլ արժևորվել, բայց ավելի դանդաղ տեմպերով: ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը 2024թ. հունվար-օգոստոս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արժեզրկվել է համապատասխանաբար՝ 1.3%, 1.2%-ով, իսկ ռուբլու նկատմամբ՝ արժևորվել 10.7%-ով:

ՀՀ արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր արժույթներից բաղկացած զամբյուղի նկատմամբ ՀՀ ազգային արժույթն իրական արտահայտությամբ 2021-2023թթ. միջինում արժևորվել է 24.1%-ով: Իրական արդյունավետ փոխարժեքի արժևորման տեմպը 2024թ. հունվարին կտրուկ դանդաղել է և պահպանել այդ միտումը:


2024թ. սկզբից դրամը ՀՀ հիմնական գործընկեր երկրների արժույթների նկատմամբ դրսևորել է արդյունավետ փոխարժեքի արժևորման տեմպի դանդաղման վարքագիծ. հունվար-հուլիս ամիսներին ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքի արժևորումը կազմել է 6.2%, իսկ անվանականի արժևորումը՝ 13.6%՝ իր բացասական ազդեցությունը թողնելով տեղական ապրանքների արտաքին մրցունակության վրա:

Գծապատկեր 1.34. ՀՀ դրամի անվանական փոխարժեքի դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ (աճ՝ դրամի արժևորում)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.35. ՀՀ իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների կուտակային տ/տ աճերի դինամիկան (աճ՝ արժևորում)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ


1.3.5. ԳՆԱՃ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2021-2022 թթ. գնաճի տեմպերը զգալիորեն արագացել են ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի գործոնների ազդեցությամբ, ինչին ԿԲ-ը արձագանքել է քաղաքականության դիրքի խստացմամբ, իսկ 2023թ.-ի ընթացքում այդ գործոնների հիմնական մասի չեզոքացման, ինչպես նաև ՀՀ դրամի արժևորմամբ կտրուկ դանդաղել, ապա՝ վերածվել գնանկումային միտումների: 2021թ. առաջարկի (միջազգային ապրանքահումքային շուկաներում դրսևորված գների աճ, բեռնափոխադրումների սակագների աճ, տարվա առաջին կեսին նախորդ համադրելի ժամանակահատվածի համեմատ ՀՀ դրամի արժեզրկված դիրք) և պահանջարկի (մասնավոր սպառման աճ, գնաճային սպասումների ավելացում) գործոնները հանգեցրել են միջին գնաճի արագացմանը մինչև 7.2%՝ նախորդող տարվա 1.2% ցուցանիշի դիմաց: Արձագանքելով ձևավորվող գնանկումային ճնշումներին, ԿԲ-ը սկսել է իրականացնել զսպող քաղաքականություն՝ 2020թ. դեկտեմբերից մինչև 2021թ. -ի վերջ վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացնելով 3.5 տոկոսային կետով: 2022 թ. տարեսկզբին արդեն դիտվել է 12-ամսյա գնաճի տեմպերի դանդաղման գործընթաց, մինչդեռ մարտ ամսից սկսած, պայմանավորված նախ ռուս-ուկրաինական հակամարտության սրման արդյունքում միջազգային ապրանքահումքային շուկաներում դիտված գների կտրուկ աճով և ՀՀ դրամի կարճատև արժեզրկմամբ, ապա՝ համախառն պահանջարկի զգալի աճով (այդ թվում՝ օտարերկրյա այցելուների կտրուկ ավելացմամբ պայմանավորված) 12-ամսյա գնաճը նորից արագացել է՝ հունիսին հասնելով մինչև 10.3%: Այս պայմաններում ԿԲ-ը շարունակել է բարձրացնել տոկոսադրույքը՝ 2022թ.-ի վերջին հասցնելով այն 10.75%-ի, ինչի արդյունքում քաղաքականության կոշտացման ամբողջ շրջափուլում տոկոսադրույքը բարձրացվել է 6.5%-ային կետով: 2023թ.-ին, պայմանավորված արտաքին հատվածից և աշխատաշուկայից փոխանցվող գնաճային ճնշումների թուլացմամբ, իսկ տարեվերջին՝ գնանկումային ազդեցություններով, գնաճային

սպասումների նվազմամբ, ինչպես նաև իրականացված հետևողական զսպող դրամավարկային քաղաքականության ազդեցությամբ գնաճի տեմպերը զգալիորեն դանդաղել են, ապա՝ փոխարինվել գնանկումային միտումներով, ինչի արդյունքում 12 ամսյա գնաճը դեկտեմբերին կազմել է -0.6%, իսկ միջին գնաճը՝ 2.0%:

2024թ. առաջին ամիսներին ՀՀ սպառողական շուկայում պահպանվում է գնանկումային միջավայրը, ինչը մայիս-օգոստոս ամիսներին փոխակերպվել է թույլ գնաճային միտումների, որի պայմաններում ԿԲ-ը հունվար-սեպտեմբեր ամիսներին նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը 1.75 տոկոսային կետով մինչև 7.5%: Գնանկումային միջավայրը ձևավորվել է համաշխարհային տնտեսությունից փոխանցվող գնաճային ճնշումների զգալի թուլացման, փոխարժեքի արժևորման, ինչպես նաև 2020-2022 թթ. իրականացված հետևողական զսպող դրամավարկային քաղաքականության լազային ազդեցությամբ: Այնուամենայնիվ, գնանկումային ճնշումներն աստիճանաբար մարել են, և փոխարինվել թույլ գնաճային ազդեցություններով: Արդյունքում 12 ամսյա գնաճը օգոստոսին կազմել է 1.3%, իսկ միջին գնաճը հունվար-օգոստոս ամիսներին կազմել է -0.1%:

Գծապատկեր 1.36. Գնաճի տեմպերը և ԿԲ տոկոսադրույքը ըստ ամիսների, 2021-2024թ.



օգոստոս, %


Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմը ինչպես քաղաքականության խստացման, այնպես էլ մեղմացման շրջափուլերում համեմատաբար արդյունավետ է գործել պետական պարտատոմսերի, և պակաս արդյունավետ՝ վարկերի և ավանդների շուկաներում՝ այդ թվում պայմանավորված նաև դեպի ՀՀ բանկային համակարգ տեղի ունեցած լրացուցիչ ներհոսքերով: Ինչպես 2020թ. դեկտեմբերից մինչև 2022թ. վերջ ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման, այնպես էլ 2023թ. կեսից դրա նվազեցման փուլերում ֆինանսական շուկաներում վարկերի և ավանդների տոկոսադրույքներն անհամաչափորեն են ճշգրտվել միջբանկային ռեպոյի և կարճաժամկետ պետական պարտատոմսերի շուկաների

համեմատ, որոնք սովորաբար զգայուն են դրամավարկային քաղաքականության որոշումների նկատմամբ:

2024 թվականի ընթացքում դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի շարունակական նվազումը հանգեցրել է պետական պարտատոմսերի տոկոսադրույքների նվազման՝ հիմնականում եկամտաբերության կորի կարճաժամկետ հատվածում: Ավանդների տոկոսադրույքները ընդհանուր առմամբ շարունակել են գտնվել իրենց միջին տոկոսադրույքների շուրջ, իսկ վարկերի տոկոսադրույքները որոշակի բարձրացել են, ինչը մեծապես պայմանավորված է մինչև մեկ տարի ժամկետով իրավաբանական անձանց վարկերի տոկոսադրույքների աճով:

Գծապատկեր 1.37. Գնաճի նպաստումները խոշոր ապրանքախմբերով, ըստ եռամսյակների, տոկոսային կետ




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ

Կանխատեսում

2024թ. -ին ինչպես միջին, այնպես էլ 12 ամսյա գնաճը ցածր կլինեն նպատակային ցուցանիշից և միջնաժամկետում կկայունանան 4% մակարդակի շուրջ: Մշտադիտարկելով տնտեսության զարգացման սցենարները, ԿԲ-ը պատրաստ է ձեռնարկել համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի թիրախային մակարդակի և գների կայունության նպատակի ապահովման համար¹³:

Գծապատկեր 1.38. Դրամավարկային քաղաքականության ազդեցությունները



Ֆինանսական շուկայում և գնաճի կանխատեսումները

¹³ https://www.cba.am/AM/periodicals/MPR_2024Q3_Arm.pdf

1.4. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2025 թվականի Պետական բյուջեի մակրոտնտեսական շրջանակի կանխատեսումներն իրականացվել են ՀՀ ՖՆ կողմից՝ կիրառելով տնտեսաչափական մոդելներ, և առանձին շուկերի և հարկաբյուջետային միջոցառումների ազդեցությունների գնահատման համար՝ ՀՀ ՖՆ Արարատ հարկաբյուջետային ռազմավարության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (Ararat Fiscal Strategy Model) մոդելը¹⁴, որոնց համար տեղեկատվական հիմք են հանդիսացել 2024թ. օգոստոս ամսվա դրությամբ հասանելի նեքին և արտաքին ընթացիկ տնտեսական և ֆինանսական զարգացումները, ինչպես նաև ՀՀ գործընկեր երկրների տնտեսական զարգացումների և հումքային ապրանքների համաշխարհային գների միջազգային կառույցների կողմից արված կանխատեսումները: Մասնավորապես՝

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

- 2023թ. դրսևորված աշխարհաքաղաքական անորոշությունների և շարունակվող զսպող դրամավարկային քաղաքականության պայմաններում 2024թ. հուլիս ամսվա ԱՄՀ կանխատեսումների համաձայն 2024թ. սպասվում է ԵԳ և ԱՄՆ տնտեսական աճերի արագացում (համապատասխանաբար՝ 0.9% և 2.6%), իսկ Չինաստանում սպասվում է ներուժային տնտեսական աճից ավելի ցածր՝ 5.0% տնտեսական աճ: Ըստ ԱՄՀ կանխատեսումների 2024թ. ՌԴ-ում սպասվում է 3.2% տնտեսական աճ: Հատկանշական է, որ ԱՄՀ կողմից ՀՀ հիմնական գործընկեր երկրներից ԵԳ-ի և Չինաստանի 2024թ. տնտեսական աճերի վերջին կանխատեսումները ապրիլ ամսվա կանխատեսումների համեմատ վերանայվել են դեպի վերև՝ պայմանավորված սպասվածից առավել դրական զարգացումներով:
- ՀՀ գործընկեր երկրների տնտեսությունների համար 2025թ. և միջնաժամկետում կանխատեսվում է իրենց նախաճգնաժամային ներուժային աճերից ցածր տնտեսական աճեր: Հատկանշական է այն փաստը, որ Չինաստանի համար սպասվում է պատմական միջին աճից ավելի քան երկու անգամ դանդաղ տնտեսական աճի տեմպ:
- 2024թ. նավթի բորսային գինը կնվազի, իսկ պղնձինը՝ կաճի: Ըստ «Բլումբերգ» միջազգային հեղինակավոր կազմակերպության կանխատեսումների 2024թ. նավթի միջազգային գինը կնվազի 0.8%-ով, իսկ պղնձինը կաճի 2.6%-ով: 2025թ. նավթի գինը կնվազի 3.7%-ով և պղնձի գինը կաճի 6.17%-ով:

¹⁴ ՀՀ ֆինանսների նախարարության Արարատ հարկաբյուջետային ռազմավարության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելը մշակվել է 2018-2020 թվականների ընթացքում՝ ԱՄՀ կողմից փրամադրված տեխնիկական աջակցության շրջանակներում: Առավել մանրամասն տե՛ս ՀՀ կառավարության 2021 թվականի բյուջետային ուղերձ, Երևան 2020, էջ՝ 84, ներդիր 2: Մոդելը և կիրառությունները նկարագրող ամբողջական աշխարհային փաստաթուղթը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2022/06/10/The-Ararat-Fiscal-Strategy-Model-A-Structural-Framework-for-Fiscal-Policy-Analysis-in-519522>:

- Ենթադրվում է, որ ՀՀ ծառայությունների արտահանման տեմպը զգալի դանդաղելու է՝ պայմանավորված ռուս զբոսաշրջիկների ներհոսքի նվազմամբ:
- 2024թ. սպասվում է զուտ դրամական փոխանցումների շուրջ 35% անկում, որին հիմնականում նպաստելու է ՌԴ-ից դրամական փոխանցումների անկումը: Կանխատեսումների համաձայն 2025-2027թթ. դրամական փոխանցումները միջինում կաճեն շուրջ 4.2%-ով:
- ՌԴ դեմ կիրառված պատժամիջոցների արդյունքում ՌԴ-ից դեպի Հայաստան տեղափոխված ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների որոշ մասը 2024թ. ընթացքում և միջնաժամկետում կմնան Հայաստանում:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒԽՈՒՄՆԵՐ

Կառուցվածքային բարեփոխումների ազդեցության չափի գնահատման համար հիմք է հանդիսացել աշխարհի 90 երկրների պանելային տվյալների հիման վրա Արժույթի միջազգային հիմնադրամի կատարած գնահատականները, որոնք հուշում են, որ կառուցվածքային բարեփոխումների (աշխատանքի շուկա, ֆինանսական համակարգ, կապիտալի հաշվի բացություն, արտաքին առևտրի բացություն, ապրանքային շուկաներ և պետական կառավարում) էական ջանքը կարող է 6 տարում ՀՆԱ-ի շուրջ 7% աճ ապահովել¹⁵: Համադրելով ԱՄՀ գնահատականներում կիրառված կառուցվածքային բարեփոխումների ուղղությունները, և ՀՀ կառավարության ծրագրով ուղենշված՝ գործարար միջավայրը և պետական կառավարման արդյունավետությունը բարելավող միջոցառումները, ՀՀ համար կառուցվածքային բարեփոխումների հնարավոր ազդեցությունը գնահատվել է տարեկան 0.5%-ային կետ միջնաժամկետ հատվածի համար:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺ ԵՎ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆՆԵՐ

2022-2023թ. դրական զարգացումների պայմաններում ՀՀ տնտեսությունը գտնվել է ներուժային մակարդակից ավելի բարձր դիրքում՝ մտնելով տնտեսական պարբերաշրջանի վերելքի փուլ: Կանխատեսված տնտեսական զարգացումների պայմաններում 2024թ. ավարտին դրական ճեղքը աստիճանաբար կփոքրանա և 2025թ. տնտեսությունը կմոտենա իր ներուժային մակարդակին: Հատկանշական է, որ վերջին տարիների դրական զարգացումները, մասնավորապես, դեպի ՀՀ զբոսաշրջային մեծ հոսքերը, ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների ՀՀ տեղափոխվելը, զբաղվածների թվաքանակի ավելացումը, ինչպես նաև պետական կապիտալ ծախսերի դերի շարունակական բարձրացումը հանգեցրել են տնտեսության ներուժի և ներուժային աճի բարձրացման: Այժմ, ըստ գնահատումների ներուժային տնտեսական աճը 4-4.5% միջակայքից աճել է՝ հասնելով 5-5.5% միջակայք. այս հանգամանքն իր դրական ազդեցությունը կթողնի միջնաժամկետ հատվածում:

¹⁵ (դե'ս IMF (2019). WEO October 2019, Chapter 3: Reigniting Growth in Emerging Market and Low-Income Economies: What Role for Structural Reforms?
<https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2019/10/01/world-economic-outlook-october-2019>

ՀԱՐԿԱՐՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 2025թ. և միջնաժամկետ հատվածում հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի կառուցվածքային բարեփոխումների սահուն ընթացքը երաշխավորելու և ֆիզիկական ու մարդկային կապիտալում ներդրումների մակարդակի էական բարձրացման միջոցով տնտեսության դիմակայունության ամրապնդմանն ու աճի ներուժի բարձրացմանը: Ընդ որում, այն իրականացվում է նշված բարեփոխումների համար միջնաժամկետի սկզբում «առաջ ընկած» ռեսուրսների ձևավորման ճանապարհով, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդը 2024-2025 թթ. -ին կաճի՝ հանգեցնելով կառավարության պարտքի բեռի որոշակի մեծացմանը, որից հետո տեղի կունենա հարկաբյուջետային կոնսոլիդացիա, որով պարտքի բեռը 2026-2027 թվականներին կկայունանա 55.6%-ի մակարդակում: Ընդ որում, տնտեսական աճի՝ իր ներուժային մակարդակին մոտենալու պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա կունենա չեզոք ազդեցություն: Միաժամանակ, հարկաբյուջետային քաղաքականության համար առաջնահերթ է առկա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և հնարավոր ռիսկերի կառավարման կարողությունների ձևավորումը, ինչը, աճի ներուժի բարձրացման հետ, պետք է երաշխավորի հարկաբյուջետային կայունությունը երկարաժամկետում:
- Միջնաժամկետում հարկային վարչարարության բարելավման, ստվերի դեմ պայքարի, ինչպես նաև հարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շարունակական բարելավում՝ 2025թ. -ին ապահովել 0.7 տոկոսային կետի չափով, իսկ 2026-2027թթ. միջինում 0.5 տոկոսային կետով՝ 2027թ. հասցնելով 26.0%-ի:
- Միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակում ընթացիկ ծախսերը կայունանում են իրենց վերջին տարիների միջին մակարդակների մոտ՝ ուղենիշ վերցնելով հարկաբյուջետային կանոնի տրամաբանությունից, իսկ կապիտալ ծախսերը՝ պատմական մակարդակներից զգալիորեն բարձր մակարդակում՝ տնտեսական և անվտանգային ենթակառուցվածքների ամրապնդման համար: Կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2025թ. կհասնի 6.7%-ի, 2026-ին՝ 6.9%, իսկ 2027-ին կկազմի 6.6%, իսկ ընթացիկ ծախսերը 2025թ-ին կկազմեն 24.9%, այնուհետև կայունանալով 22.9% մակարդակում:

- 2024թ. -ին ինչպես միջին, այնպես էլ 12 ամսյա գնաճը ցածր կլինեն նպատակային ցուցանիշից և միջնաժամկետում կկայունանան 4% մակարդակի շուրջ:
- Մշտադիտարկելով տնտեսության զարգացման սցենարները, ԿԲ-ը պատրաստ է ձեռնարկել համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի թիրախային մակարդակի և գների կայունության նպատակի ապահովման համար:

1.5. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ

Կանխատեսման առկա ռիսկերը պայմանավորվում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, որոնք կարող են հանգեցնել ինչպես տնտեսական աճի տեմպերի ավելացմանը, այնպես էլ նվազմանը՝ ներկայացված կենտրոնական կանխատեսումների համեմատ: Ռիսկերի տեղի ունենալու դեպքում շեղումներ կարձանագրվեն սույն փաստաթղթի 1.4 բաժնում ներկայացված ենթադրություններից՝ հանգեցնելով մակրոտնտեսական կանխատեսումներից շեղումների և դրա հետևանքով էլ հարկաբյուջետային շրջանակի ցուցանիշների շեղման այս պետական բյուջեի շրջանակից:

COVID-19 համավարակի հետևանքները դեռ չհաղթահարած տարածաշրջանում սկսված ռուս-ուկրաինական հակամարտությունը առաջացրել է աշխարհաքաղաքական և տնտեսական մարտահրավերներ, որոնք բացասական հետևանքներ են ունեցել ոչ միայն տարածաշրջանում, այլ նաև ամբողջ աշխարհում, այդ թվում՝ ՀՀ համար Ռուսաստանից հետո երկրորդ ամենամեծ առևտրային գործընկեր՝ Եվրագոտու երկրներում: Թեև նշված գործոնները առաջ են բերել նաև ՀՀ տնտեսության համար դրական զարգացումներ (դեպի Հայաստան մարդկանց ներհոսքի, զբոսաշրջության զգալի ավելացման, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխման, ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման), այնուամենայնիվ Ռուս-ուկրաինական հակամարտությանը, ինչպես նաև Ռուսաստանի դեմ կիրառված աննախադեպ պատժամիջոցների վերաբերյալ անորոշությունները դեռևս պահպանվում են՝ արտացոլվելով ՀՀ տնտեսական աճի կանխատեսումների շուրջ անորոշություններում:

Վերոնշյալ իրողությունների պայմաններում տնտեսական աճի կանխատեսումների շուրջ ինչպես կարճաժամկետում, այնպես էլ միջնաժամկետում առկա են անորոշություններ:

Արտաքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը պայմանավորված են՝

- Ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում առաջացած դրական գործոնների (ՌԴ-ից զբոսաշրջային հոսքերի, դրամական փոխանցումների, ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների դեպի ՀՀ տեղափոխման) չեզոքացմամբ և հոսքերի հետշրջմամբ,
- ՌԴ-ում ՀՀ ապրանքների արտահանման՝ վերջին տարիների վերափոխումների արդյունքում ընդլայնված շուկայի նեղացմամբ,
- ՀՀ ապրանքների արտահանման մատակարարումների լոգիստիկ խնդիրների խորացմամբ,
- Աշխարհաքաղաքական իրավիճակով, այդ թվում՝ տարածաշրջանային ռազմական հակամարտությունների առկայությամբ,
- Տարածաշրջանային հակամարտությունների (մերձավորարևելյան և ռուս-ուկրաինական հակամարտություններ) արդյունքում պարենային և ոչ պարենային ապրանքների գների աճով,
- Աշխարհում գնաճի սպասվածից ավելի դանդաղ նվազմամբ և դրամավարկային պայմանների սպասվածից առավել խստացման արդյունքում տնտեսական աճերի դանդաղմամբ, զարգացած երկրներում տոկոսադրույքների սպասվածից առավել բարձրացման պայմաններում ՀՀ-ից կապիտալի զուտ արտահոսքի և մասնավոր հատվածի և կառավարության արտաքին պարտքով պակասուրդների ֆինանսավորման թանկացմամբ:
- Չինաստանի տնտեսական աճի հետագա դանդաղմամբ:

Ներքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը պայմանավորված են՝


- Պետական կապիտալ ծախսերի հնարավոր թերակատարմամբ,
- Սոթքի հանքավայրի ստորգետնյա եղանակով շահագործման անհնարինության հետ կապված տնտեսական ակտիվության դանդաղմամբ,
- Ամուլսարի շահագործման հնարավոր հետաձգմամբ կամ սպասվածից ավելի քիչ հանքարդյունահանմամբ,
- ՀՀ կառավարության կառուցվածքային բարեփոխումների և արտահանման ու ներդրումների խթանման քաղաքականության ակնկալվող արդյունքների սպասվածից ավելի ուշ արտահայտմամբ,
- Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց ՀՀ տնտեսական գործընթացներում սպասվածից ավելի դանդաղ ինտեգրմամբ,
- Բնակլիմայական անբարենպաստ պայմանների շարունակական դրսևորման հետևանքով գյուղատնտեսության ճյուղում հնարավոր բացասական զարգացումներով:
- Հորդառատ անձրևների հետևանքով Լոռու և Տավուշի մարզերում տեղի ունեցած ջրհեղեղի առաջացրած տնտեսական վնասներով և դրանց ուշ հաղթահարմամբ պայմանավորված՝ այդ մարզերում տնտեսական ակտիվության նվազմամբ:

1.5.2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԴԵՊԻ ՎԵՐԵՎ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՌԻՍԿԵՐ


Արտաքին գործոններից բխող դեպի վերև ռիսկերը պայմանավորված են՝

- Գլոբալ և տարածաշրջանային տնտեսական և աշխարհաքաղաքական վերափոխումների արդյունքում Հայաստանը՝ որպես առևտրային, լոգիստիկ և ֆինանսական հանգույց ծառայելու հնարավորությամբ,
- Ռուսաստանից դեպի Հայաստան կապիտալի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների նոր ներհոսքով:
- Ներքին միջավայրից բխող դեպի վերև ռիսկերը պայմանավորված են՝
- Ավելի բարձր կայուն տնտեսական աճին հասնելու համար անհրաժեշտ լրացուցիչ ջանքերի, մասնավորապես, մարդկային և ֆիզիկական կապիտալում ներդրումների, ինչպես նաև մասնավոր ներդրումների, զբաղվածության, արտահանման խթանմանը և տնտեսության արտադրողականության բարձրացմանն ուղղված միջոցառումների սպասվածից առավել արագ և արդյունավետ իրականացմամբ,
- Թեղուտի հանքավայրի հնարավոր շահագործումից բխող տնտեսական ակտիվության արագացմամբ,
- Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց ՀՀ տնտեսական գործընթացներում սպասվածից ավելի արագ ինտեգրմամբ:

Գծապատկեր 1.39. Իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսման հավանականությունների



բաշխումը (Fan Chart)



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ գնահատումներ և կանխատեսումներ

Աղյուսակ 1.3. Իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսման հավանականությունների բաշխումը¹⁶

| Տնտեսական աճի միջակայքը, % | Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը, % | | | |
|----------------------------|---|-------|-------|-------|
| | 2024 | 2025 | 2026 | 2027 |
| 2.0%-3.5% | 0.161 | 0.151 | 0.151 | 0.150 |
| 3.5%-5.0% | 0.213 | 0.184 | 0.180 | 0.179 |
| 5.0%-6.5% | 0.232 | 0.192 | 0.185 | 0.184 |
| 6.5%-8.0% | 0.155 | 0.143 | 0.138 | 0.138 |

Ինչպես երևում է Գծապատկեր 1.29-ից, իրական ՀՆԱ-ի տարեկան աճի կենտրոնական կանխատեսումներից շեղման ռիսկերը դեպի ներքև են: 2024-2027թթ. տնտեսական աճի ձևավորման ամենաբարձր հավանականությունը գտնվում է կենտրոնական կանխատեսումները ձևավորման ամենաբարձր հավանականությունը գտնվում է կենտրոնում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 1.3-ում՝ հոծ նշումով), իսկ դեպի ներքև ռիսկերը ավելի բարձր են:

¹⁶ Աղյուսակի 1-ին սյունը իրենից ներկայացնում է տնտեսական աճի հնարավոր միջակայքերը, իսկ 2-ից 5-րդ սյուները՝ համապատասխան միջակայքերում միջնաժամկետում տնտեսական աճի գտնվելու հավանականությունները: Աղյուսակում ներկայացվել են տնտեսական աճի ամենահավանական միջակայքերը, որոնք միասին ծածկում են բաշխման ընդհանուր հավանականության շուրջ 80%-ը, այսինքն՝ հավանականությունը, որ տնտեսական աճը կգտնվի 2.0%-ից 8.0% միջակայքում, կազմում է մոտ 80%:

1.6. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

| Ցուցանիշներ | Ծրագիր | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
|--------------------------------|---------------------|-------------|--------|--------|--------|--------|
| | | փաստ*/կանխ. | կանխ. | կանխ. | կանխ. | կանխ. |
| Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ | 2025 Պետական բյուջե | 9,453 | 10,110 | 10,892 | 11,916 | 13,037 |
| | 2025-2027 ՄԺԾԾ | 9,505 | 10,235 | 11,197 | 12,309 | 13,505 |
| | 2024 Պետական բյուջե | 9,450 | 10378 | - | - | - |
| | 2024-2026 ՄԺԾԾ | 9,533 | 10459 | 11628 | 12940 | - |
| Տնտեսական (իրական ՀՆԱ-ի) աճ, % | 2025 Պետական բյուջե | 8.3 | 5.8 | 5.1 | 5.2 | 5.2 |
| | 2025-2027 ՄԺԾԾ | 8.7 | 6.3 | 5.8 | 5.7 | 5.5 |
| | 2024 Պետական բյուջե | 7.4 | 5.6 | - | - | - |
| | 2024-2026 ՄԺԾԾ | 6.0 | 5.5 | 5.4 | 5.4 | - |
| ՀՆԱ-ի դեֆլյատորի աճ, % | 2025 Պետական բյուջե | 2.7 | 1.1 | 2.5 | 4.0 | 4.0 |
| | 2025-2027 ՄԺԾԾ | 2.9 | 1.3 | 3.4 | 4.0 | 4.0 |
| | 2024 Պետական բյուջե | 3.5 | 4.0 | - | - | - |
| | 2024-2026 ՄԺԾԾ | 4.8 | 4.0 | 4.0 | 4.0 | - |

Աղյուսակ 1.4. ՀՆԱ-ի կանխատեսումները

* 2025-2027 ՄԺԾԾ համար 2023թ. ցուցանիշները փաստացի են, Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

Աղյուսակ 1.5. Ընթացիկ հաշվի կանխատեսումները

| Ցուցանիշներ | Ծրագիր | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
|-------------------------------------|---------------------|--------|----------|----------|----------|----------|
| | | փաստ | կանխ. | կանխ. | կանխ. | կանխ. |
| Ընթացիկ հաշիվ, մլն ԱՄՆ դոլար | 2025 Պետական բյուջե | -556.3 | -1,275.1 | -1,406.0 | -1,403.2 | -1,447.8 |
| | 2025-2027 ՄԺԾԾ | -510.1 | -742.8 | -870.9 | -1,206.8 | -1,425.9 |
| | 2024-2026 ՄԺԾԾ | -596.1 | -832.3 | -1,093.6 | -1,377.0 | - |
| Ընթացիկ հաշիվ, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 2025 Պետական բյուջե | -2.3 | -5.0 | -5.3 | -5.1 | -5.0 |
| | 2025-2027 ՄԺԾԾ | -2.1 | -3.0 | -3.4 | -4.4 | -4.9 |
| | 2024-2026 ՄԺԾԾ | -2.7 | -3.5 | -4.2 | -4.9 | - |

* 2025-2027 ՄԺԾԾ համար 2023թ. ցուցանիշները փաստացի են, Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

ՄԱՍ Ի-Գ. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

2.1. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

- 2020-2021 թվականներին կորոնավիրուսի համավարակի և 44-օրյա պատերազմի հետևանքներին հակազդելու համար հարկաբյուջետային կանոնների «բացառիկ դեպքի» կարգավորումների ներքո իրականացված հակապարբերաշրջանային խթանող քաղաքականության արդյունքում գրանցված պարտքի բեռի աճից հետո 2022-2023 թվականներին հարկաբյուջետային քաղաքականությունը ոչ միայն վերադարձել է բնականոն իրավիճակների տրամաբանությանը, այլև հնարավոր է եղել կտրուկ կրճատել բյուջեի պակասուրդը և կառավարության պարտքի մակարդակը՝ հասցնելով վերջինս պարտքի կայունության տեսակետից անվտանգ համարվող 40-50%-ի միջակայք: Միաժամանակ, կառավարությունը սկսել է ձևավորված հարկաբյուջետային տարածքն օգտագործել տնտեսական ներուժի բարձրացմանը, այդ թվում՝ կառուցվածքային բարեփոխումներին, ֆիզիկական և մարդկային կապիտալին ուղղվող ծախսերի դերի բարձրացման համար, այդպիսով ամրապնդելով նաև երկարաժամկետ հարկաբյուջետային կայունությունը: 2024 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը ուղղված է հարկաբյուջետային կանոններին համապատասխանության և կառավարության պարտքի բեռը 50%-ի շրջանակներում պահպանելու ճանապարհով հարկաբյուջետային կայունության երաշխավորմանը, կապիտալ ծախսերի մակարդակի շարունակվող բարելավման՝ հասցնելով այն ՀՆԱ 6.3%-ի, ինչպես նաև ծախսերի արդյունավետության շարունակական բարձրացմանը:
- 2025թ . -ի պետական բյուջեի և միջնաժամկետ հատվածի հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի կառուցվածքային բարեփոխումների սահուն ընթացքը երաշխավորելու և ֆիզիկական ու մարդկային կապիտալում ներդրումների մակարդակի էական բարձրացման միջոցով տնտեսության դիմակայունության ամրապնդմանն ու աճի ներուժի բարձրացմանը: 2025 թ .-ին կառավարությունը նշված բարեփոխումների համար կձևավորի ավելի մեծ ռեսուրսներ, իսկ միջնաժամկետ հատվածում կիրականացնի հարկաբյուջետային ճշգրտում՝ երաշխավորելու պարտքի կայունությունը: Այնուամենայնիվ, եկամուտների և ծախսերի կառուցվածքը նկատի ունենալով, հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա մոտ կլինի չեզոքին: Միաժամանակ հարկաբյուջետային քաղաքականության համար առաջնահերթ է առկա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և հնարավոր ռիսկերի կառավարման կարողությունների ձևավորումը, ինչը, աճի ներուժի բարձրացման հետ, պետք է երաշխավորի հարկաբյուջետային կայունությունը նաև երկարաժամկետում:

- Հարկային վարչարարության բարելավման, ստվերի դեմ պայքարի, ինչպես նաև հարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում ակնկալվում է 2025թ. -ին ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շարունակական բարելավում 0.7 տոկոսային կետ, իսկ 2026-2027թթ. միջինում 0.5 տոկոսային կետով՝ 2027թ. հասցնելով 26.0%-ի:
- 2025թ. -ի պետական բյուջեի հարկաբյուջետային շրջանակը արտացոլում է ծախսերի մակարդակը որոշակի աճ, իսկ միջնաժամկետ հատվածում ընթացիկ ծախսերը կայունանում են իրենց վերջին տարիների միջին մակարդակների մոտ՝ ուղենիշ վերցնելով հարկաբյուջետային կանոնի տրամաբանությունից, իսկ կապիտալ ծախսերը՝ պատմական մակարդակներից զգալիորեն բարձր մակարդակում՝ տնտեսական և անվտանգային ենթակառուցվածքների ամրապնդման համար: Կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2025թ. կհասնի 6.7%-ի, 2026-ին 6.9%, իսկ 2027-ին կկազմի 6.6%, իսկ ընթացիկ ծախսերը 2025թ-ին կկազմեն 24.9%, այնուհետև կկազմեն 23.6 և 22.9%:
- 2025 թվականի պետական բյուջեի և միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակի հիմնական ռիսկերը վերաբերում են մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումներին, հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի թիրախավորված բարելավումների ոչ ամբողջական ապահովմանը, միջազգային ֆինանսական շուկաների իրավիճակի վատթարացմանը և ՀՀ կառավարության փոխառության հնարավորությունների սահմանափակմանը, լրացուցիչ ծախսային կարիքների առաջացմանը, և ծախսերի թերակատարմանը և ավելի թույլ խթանող ազդակի ձևավորմանը: Սցենարային վերլուծության միջոցով նշված ռիսկերին տրվել է քանակական արտահայտություն, և դրանց կառավարման համար ձեռնարկվել են համարժեք միջոցառումներ՝ պետական բյուջեում տնտեսական աճի ռիսկերի համար ՀՆԱ 0.4-0.8% չափով պահուստային ֆոնդի ձևավորման, ինչպես նաև գանձապետական կայունացման հաշվում առնվազն ՀՆԱ 1% չափով «իրացվելիության բարձիկի» ստեղծման ճանապարհով: Միաժամանակ, տարբեր ռիսկերի առարակայացման պարագայում կառավարությունը կկիրառի հասանելի գործիքները եկամտային ներուժի բարձրացման նպատակով (այդ թվում՝ հարկային վարչարարության լրացուցիչ գործիքների կիրառում), կճշգրտվեն ծախսային առաջնահերթություններն ու շրջանակը, իսկ հարկաբյուջետային կայունության ռիսկերի առարակայացման դեպքում՝ կվերանայվի նաև ծախսային շրջանակը:

Աղյուսակ 2.1. 2025 թվականի և միջնաժամկետ հորիզոնի հարկաբյուջետային շրջանակ, մլրդ դրամ

| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
|---|---------|---------|---------|---------|-----------------------|-------------|---------|
| | Փաստացի | | | Սպասում | 2025թ. պետական բյուջե | Կանխատեսում | |
| Պետական բյուջեի եկամուտներ | 1,706.6 | 2,099.6 | 2,410.7 | 2,593.6 | 2,837.6 | 3,123.2 | 3,458.6 |
| Հարկային եկամուտներ և տուրքեր | 1,609.6 | 1,962.5 | 2,273.9 | 2,455.8 | 2,720.3 | 3,047.0 | 3,385.8 |
| Պետական բյուջեի ծախսեր | 2,027.0 | 2,279.1 | 2,599.6 | 3,076.5 | 3,441.6 | 3,629.5 | 3,849.8 |
| Ընթացիկ ծախսեր | 1,810.7 | 1,898.7 | 2,127.0 | 2,437.2 | 2,706.8 | 2,807.5 | 2,988.1 |
| Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ | 216.3 | 380.4 | 472.6 | 639.3 | 734.9 | 822.0 | 861.7 |
| Պետական բյուջեի պակասուրդ | -320.5 | -179.5 | -188.9 | -482.9 | -604.0 | -506.2 | -391.1 |
| Կառավարության պարտք | 4209.8 | 3969.7 | 4571.9 | 5,039.0 | 5,910.0 | 6,634.9 | 7,249.5 |
| Կշիռը ՀՆԱ-ում, % | | | | | | | |
| Պետական բյուջեի եկամուտներ | 24.4 | 24.7 | 25.5 | 25.7 | 26.1 | 26.2 | 26.5 |
| Հարկային եկամուտներ և տուրքեր | 23.0 | 23.1 | 24.1 | 24.3 | 25.0 | 25.6 | 26.0 |
| Պետական բյուջեի ծախսեր | 29.0 | 26.8 | 27.5 | 30.4 | 31.6 | 30.5 | 29.5 |
| Ընթացիկ ծախսեր | 25.9 | 22.3 | 22.5 | 24.1 | 24.9 | 23.6 | 22.9 |
| Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ | 3.1 | 4.5 | 5.0 | 6.3 | 6.7 | 6.9 | 6.6 |
| Պետական բյուջեի պակասուրդ | -4.6 | -2.1 | -2.0 | -4.8 | -5.5 | -4.2 | -3.0 |
| Կառավարության պարտք | 60.2 | 46.7 | 48.4 | 49.8 | 54.3 | 55.7 | 55.6 |

2.2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

ՎԵՐՋԻՆ ԵՐԵՔ ՏԱՐԻՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ

2020-2021 թվականներին կորոնավիրուսի համավարակի և 44-օրյա պատերազմի հետևանքներին հակազդելու համար հարկաբյուջետային կանոնների «բացառիկ դեպքի» կարգավորումների ներքո իրականացվել է հակապարբերաշրջանային խթանող քաղաքականություն՝ հակազդելով բացասական տնտեսական շուկերի ազդեցությանը և նպաստելով տնտեսության վերականգմանը: Տնտեսական ցնցումների հաղթահարումից հետո հարկաբյուջետային քաղաքականության առաջնահերթություն է դարձել բնականոն իրավիճակների համար նախատեսված հարկաբյուջետային կանոններին համապատասխանության վերականգնումն ու տնտեսական ցնցումների արդյունքում բարձրացած պակասուրդի և պարտքի մակարդակների կրճատումը՝ զուգահեռ հարկային քաղաքականության և վարչարարության բարեփոխումների միջոցով ընդլայնելով եկամտային կարողությունը: Արդյունքում 2022-2023 թվականներին հնարավոր է դարձել վերականգնել հարկաբյուջետային քաղաքականության բնականոն իրավիճակների տրամաբանությունը՝ կառավարության պարտքի բեռը նվազեցնելով պարտքի կայունության տեսակետից անվտանգ համարվող 40-50%-ի միջակայք: Միաժամանակ, կառավարությունը սկսել է ձևավորված հարկաբյուջետային տարածքն օգտագործել տնտեսական ներուժի բարձրացմանը, այդ թվում՝ կառուցվածքային բարեփոխումներին, ֆիզիկական և մարդկային կապիտալին ուղղվող ծախսերի դերի բարձրացման համար, այդպիսով ամրապնդելով նաև երկարաժամկետ հարկաբյուջետային կայունությունը:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2021-2023 թվականներին պետական բյուջեի եկամուտների կշիռը ՀՆԱ-ում պահպանվել է նույն մակարդակներում, սակայն անվանական արտահայտությամբ աճը կազմել է 836.7 մլրդ դրամ: Մինչդեռ հարկային եկամուտների կշիռը ՀՆԱ-ում աճել է 1.4%-ային կետով, իսկ անվանական արտահայտությամբ աճը կազմել է 875.3 մլրդ դրամ: Հարկային եկամուտների աճը պայմանավորվել է տնտեսական աճին զուգահեռ հարկման բազաների ընդլայնմամբ, հարկային վարչարարության բարելավմամբ և դրա հետևանքով հարկային ճեղքի փոքրացմամբ, ինչպես նաև տնտեսության կառուցվածքային փոփոխություններով ի օգուտ հարկունակ ոլորտների:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2021-2023 թթ. ՀՀ պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում նվազել է 3.4%-ային կետով, մինչդեռ ծախսերի ծավալն աճել է 691.6 մլրդ դրամով: Ընդ որում, ընթացիկ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում նվազել է 4.7%-ային կետով (բացարձակ ծավալի աճը՝ 445.2 մլրդ դրամ), մինչդեռ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կշիռը ՀՆԱ-ում աճել է 1.3%-ային կետով (բացարձակ ծավալի աճ՝ 246.4 մլրդ դրամ): Նշված ժամանակահատվածում ՀՆԱ-

ում ծախսերի կշռի նվազումը պայմանավորված է 2020թ.-ին հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում ծախսերի մակարդակի զգալի աճով, և հաջորդ տարիներին, հարկաբյուջետային կանոնների տրամաբանությանը համահունչ, իրականացված հարկաբյուջետային կոնսոլիդացիայով և ընթացիկ ծախսերի առավել զսպված վարքագծով: Միաժամանակ, քննարկվող ժամանակահատվածում տեսանելի է ծախսերի կառուցվածքի զգալի փոփոխությունը ի օգուտ կապիտալ ծախսերի, որոնց դեպքում, համահունչ ենթակառուցվածքային ներդրումների դերի մեծացման նպատակադրմանը, գրանցվել են ինչպես ծրագրային մակարդակների բարձրացումներ, այնպես էլ կատարողականի բարելավումներ:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ, ՊԱՐՏՔԸ և ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱԶԴԱԿԸ

2021-2023 թթ. պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը զգալիորեն կճատվել է՝ 2020թ. 5.4% ցուցանիշի դիմաց 2023թ. -ին կազմելով 2.0% (բացարձակ ծավալով պակասուրդը նվազել է 145.1 մլրդ դրամով): Պակասուրդի մակարդակի նվազման պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա զսպող է եղել՝ ինչպես եկամուտների, այնպես էլ ծախսերի մասով:

Ընդ որում, եթե 2021թ.-ին զսպող հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունը պայմանավորված էր հարկաբյուջետային կոնսոլիդացիա իրականացնելու և բնականոն իրավիճակների համար նախատեսված հարկաբյուջետային կանոններին համապատասխանության աստիճանական վերականգման նպատակադրմամբ, 2022-2023 թվականներին, ներուժայինից բարձր տնտեսական աճի պայմաններում, զսպող քաղաքականությունը անհրաժեշտ է դարձել նաև տնտեսական պարբերաշրջանը կայունացնելու տրամաբանությամբ:

2021-2023 թթ. զսպող հարկաբյուջետային քաղաքականության ու բյուջեի պակասուրդի կրճատման, ՀՆԱ աճի բարձր տեմպի և փոխարժեքի արժևորման պայմաններում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2020թ. 63.5% մակարդակից նվազել է 48.4%-ի 2023թ.-ին՝ ընդհանուր առմամբ 15.1%-ային կետով:

2024Թ. ԸՆԹԱՑԻԿ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Հունվար-օգոստոս ամիսներին 2024թ. -ի պետական բյուջեում արձանագրված որոշ մակրոտնտեսական ռիսկեր առարկայացել են, ինչը նյութականացել է հարկային եկամուտների աճի դանդաղմամբ: Այնուամենայնիվ, վերջինս չի հանգեցրել պետական բյուջեի ֆինանսավորման լրացուցիչ պահանջի՝ հաշվի առնելով նշված ռիսկերի կառավարման համար նախատեսված պահուստային ֆոնդը, ինչպես նաև՝ ծրագրվածի համեմատ ծախսերի թերակատարումը:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ


2024թ. ութ ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտներում արձանագրվել է աճի տեմպի դանդաղում՝ պայմանավորված հարկման բազաների ավելի թույլ աճերով: Արդյունքում 2024թ. պետական բյուջեում արձանագրված որոշակի ռիսկեր նյութականացել են, և «գործի զցել» ռիսկերի կառավարման մեխանիզմները:

2024թ. հունվար-օգոստոս ամիսների արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 1,624.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 5.5%-ով, իսկ հարկերը և տուրքերը կազմել են 1,548.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 6.0%-ով: Նկատելի է, որ նախորդ տարվա համեմատությամբ հարկային եկամուտների աճի տեմպը դանդաղել է, ինչը պայմանավորված է հարկման բազաների՝ մասնավորապես հարկունակ սպառման, ներուժման և կազմակերպությունների շահույթների աճի տեմպերի որոշակի դանդաղմամբ: Ընդ որում, դանդաղմանը նպաստել է նաև ընթացիկ ամիսներում ձևավորված ցածր գնաճային միջավայրը: Պետք է նշել, որ 2024թ.-ի պետական բյուջեն ներառում է ռիսկերի կառավարման մեխանիզմներ հարկային եկամուտների ավելի թույլ հավաքագրումների համար, այդ թվում՝ պետական բյուջեի ծախսերում ամրագրված 60.5 մլրդ դրամ չափով պահուստային ֆոնդը, որը հնարավորություն է տալիս կլանել ծրագրվածի համեմատ հարկային եկամուտների ավելի քիչ հավաքագրումները առանց ճնշում գործադրելու ֆինանսավորման պահանջի վրա:


ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2024 թ. ութ ամիսներին պետական բյուջեի ծախսերը աճել են բարձր տեմպերով: Պետական բյուջեի ծախսերը կազմել են 1,708.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 16.4%-ով: Նույն ժամանակահատվածում ընթացիկ ծախսերը կազմել են 1,462.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 14.4%-ով:

Գծապատկեր 2.1. Պետական բյուջեի հարկային եկամուտները և դրանց աճի տեմպը 2023-2024 թթ., կուտակային



Գծապատկեր 2.2. Պետական բյուջեի ծախսերի աճը և դրան նպաստումները 2023-2024 թթ. ըստ ամիսների



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 245.7 մլրդ դրամ, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսեր) կազմել են 256.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 31.7%-ով:

Պետական բյուջեն ընթացիկ ամիսներին, 2024թ. պետական բյուջեի թիրախներին համահունչ ձևավորվել է պակասուրդով: 2024 թ. առաջին ութ ամիսներին ձևավորվել է պետական բյուջեի 84.6 մլրդ դրամ պակասուրդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 71.6 մլրդ դրամ հավելուրդի դիմաց:

ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

2024 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը թիրախավորում է էականորեն մեծացնել կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում՝ հասցնելով 6.3%-ի, բարձրացնել ծախսերի արդյունավետությունը և պահպանել պետական պարտքի կայունությունը: 2024թ. հարկաբյուջետային քաղաքականությունը իրականացվում է բնականոն իրավիճակների համար սահմանված ծախսային կանոնների ներքո, ընդ որում՝ հաշվի առնելով նախորդ տարիներին 50%-ից ցածր մակարդակում ձևավորված կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, հարկաբյուջետային կանոնները վերաբերում են միայն «ոսկե կանոնների» պահպանմանը: Միաժամանակ, կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կպահպանվի 50%-ի շրջանակներում:

2024թ.-ին հարկային վարչարարության բարելավման և օրենսդրության փոփոխությունների արդյունքում եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կբարելավվեն շուրջ 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 24.3% կամ 2,455.8 մլրդ դրամ: 2024թ.-ի պետական բյուջեի ընդհանուր ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կավելանա շուրջ 2.9 տոկոսային կետով՝ կազմելով 30.4%: Ընդհանուր ծախսերում ընթացիկ ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կավելանան 1.6 տոկոսային կետով, իսկ կապիտալ ծախսերը կավելանան 1.3 տոկոսային կետով: Ծախսերի ծավալը նախորդ տարվա համեմատ կաճի շուրջ 18.3%-ով՝ կազմելով 3,076.5 մլրդ դրամ: 2024 թվականին, ընթացիկ և կապիտալ ծախսերի ավելացման հաշվին պետական բյուջեի պակասուրդը կավելանա՝ կազմելով ՀՆԱ-ի 4.8%-ը:

Արդյունքում, պետական բյուջեի պակասուրդը կկազմի 482.9 մլրդ դրամ՝ 2023թ. նկատմամբ ավելանալով շուրջ 294.0 մլրդ դրամով, կամ ՀՆԱ-ի շուրջ 2.8 տոկոսային կետով: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ 2024թ. ծախսերում ներառված են նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության աջակցության միջոցառումների համար նախատեսված ծախսերը (որոնք հարկաբյուջետային տեսանկյունից համադրելի են նախկինում պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում արտացոլվող Լեռնային Ղարաբաղին ուղղվող միջպետական վարկին), հետևաբար պետական բյուջեի ծախսերի և պակասուրդի աճն իրականում ավելի չափավոր է:

Վերոնշյալ սպասումների պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը 2024թ.-ին կլինի չեզոք:

2025թ.-ին, ինչպես նաև միջնաժամկետ հատվածում, հաշվի առնելով տնտեսական աճի կայունացումը ներուժային մակարդակի շուրջ և դրան համահունչ՝ տնտեսությունում ամբողջական պահանջարկի վրա ազդեցություն ունեցող ծախսերի կայուն մակարդակի պահպանումը, հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունը կլինի մոտ չեզոք դիրքին՝

2025թ.-ին դեպի վերև փոքր շեղմամբ, իսկ հաջորդ տարիներին՝ դեպի ներքև՝ արտացոլելով կառավարության պարտքի բեռի կայունացման նպատակադրումը:



2025թ.-ին հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կբարելավվի 0.7%-ային կետով և կկազմի 25%՝ արտացոլելով հարկային վարչարարության ջանքերը (0.4%-ային կետ) և հարկային օրենսդրության բարեփոխումները (0.4%-ային կետ): Բարելավման մեջ ամենամեծ նպաստումը կունենան ավելացված արժեքի հարկը և եկամտային հարկը:

Միջնաժամկետ հատվածում հարկային վարչարարության բարելավման, ստվերի դեմ պայքարի, ինչպես նաև հարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում ակնկալվում է շարունակել ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավումները՝ **2027թ.-ին հասցնելով 26.0%-ի**: Ակնկալվում է, որ հարկային եկամուտների բարելավումը կապահովվի բոլոր հիմնական հարկատեսակների գծով՝ բխելով ինչպես հարկման բազաների, այնպես էլ օրենսդրության և վարչարարության միջոցառումների ազդեցությունից: Միջնաժամկետ հատվածում հարկային վարչարարության ազդեցությունը սպասվում է պահպանել 0.4%-ային կետի շրջանակներում:

Աղյուսակ 2.2. Հարկային եկամուտների կանխատեսումներն ըստ առանձին հարկատեսակների¹⁷

| | Մլրդ դրամ | | | | | % ՀՆԱ-ում | | | | |
|---------------------------|-----------|---------|---------|---------|---------|-----------|------|------|------|------|
| | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
| Ընդամենը հարկեր և տուրքեր | 2,273.9 | 2,455.8 | 2,720.3 | 3,047.0 | 3,385.8 | 24.1 | 24.3 | 25.0 | 25.6 | 26.0 |
| Ավելացված արժեքի հարկ | 767.2 | 787.0 | 870.1 | 960.0 | 1,065.5 | 8.1 | 7.8 | 8.0 | 8.1 | 8.2 |
| Եկամտային հարկ | 606.5 | 683.0 | 764.2 | 853.1 | 955.8 | 6.4 | 6.8 | 7.0 | 7.2 | 7.3 |
| Սոցիալական վճարումներ | 90.3 | 101.3 | 124.1 | 138.2 | 154.5 | 1.0 | 1.0 | 1.1 | 1.2 | 1.2 |
| Շահութահարկ | 321.5 | 354.1 | 371.7 | 406.7 | 448.3 | 3.4 | 3.5 | 3.4 | 3.4 | 3.4 |
| Ալցիզային հարկ | 149.4 | 138.4 | 151.3 | 171.4 | 189.4 | 1.6 | 1.4 | 1.4 | 1.4 | 1.5 |
| Մաքսատուրք | 75.3 | 78.3 | 82.7 | 87.3 | 92.3 | 0.8 | 0.8 | 0.8 | 0.7 | 0.7 |
| Շրջանառության հարկ | 52.2 | 78.3 | 82.7 | 115.7 | 139.1 | 0.6 | 0.8 | 0.8 | 1.0 | 1.1 |
| Այլ հարկեր | 211.5 | 235.5 | 273.6 | 314.6 | 340.9 | 2.2 | 2.3 | 2.5 | 2.6 | 2.6 |

Միջնաժամկետ հատվածում ընթացիկ ծախսերը կայունանում են իրենց վերջին տարիների միջին մակարդակների մոտ՝ պահպանվելով հարկաբյուջետային կանոնի սահմաններում, իսկ կապիտալ ծախսերը՝ պատմական մակարդակներից զգալիորեն բարձր մակարդակում՝




տնտեսական և անվտանգային ենթակառուցվածքների ամրապնդման համար: 2025թ-ի հարկաբյուջետային շրջանակը կառուցվել է պետական բյուջեի կապիտալ ծախսերի համար «առաջ բերված» հնարավորություններ ձևավորելու տրամաբանությամբ, որի ազդեցությունն իր վրա կրում է պետական բյուջեի պակասուրդը, որը աճում է 5.5%-ի 2025թ.-ին, այնուհետև 2027-ին նվազելով մինչև պարտքի բեռը կայուն պահող՝ 3.0% մակարդակի: Արդյունքում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը աճում է, ապա միջնաժամկետի վերջում կայունանում 55.6% մակարդակում: Միջնաժամկետ հատվածում պարտքի բեռի աճին նպաստող հիմնական գործոնները պարտքի իրական տոկոսադրույքի աճը և առաջնային պակասուրդն են, իսկ տնտեսական աճը պարտքի նվազեցման ուղղությամբ է ներգործում:

Գծապատկեր 2.3. Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և հաշվեկշիռը (մլրդ դրամով) և պետական բյուջեի պակասուրդի մակարդակները (կշիռը ՀՆԱ-ում, %)

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ



2025թ-ին հարկաբյուջետային քաղաքականությունը կունանա հիմնականում չեզոքին մոտ ազդեցություն ամբողջական պահանջարկի վրա՝ եկամուտների զսպող և ծախսերի ընդլայնող ազդեցություններով: Միջնաժամկետի վերջում, արտացոլելով պակասուրդի աստիճանական ճշգրտման ազդեցությունը, հարկաբյուջետային քաղաքականությունը կդառնա թույլ զսպող:

Գծապատկեր 2.4. Հարկաբյուջետային ազդակը¹⁸



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ գնահատականներ

2025թ. և միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակն ամրապնդում է «ոսկե կանոնների» տրամաբանությունը: Մասնավորապես, ընդհանուր ծախսերում կապիտալ ծախսերի մասնաբաժնի մեծացման արդյունքում կապիտալ ծախսերի ծավալը միջնաժամկետ ժամանակահատվածում զգալիորեն կգերազանցի պետական բյուջեի պակասուրդի մեծությանը, իսկ հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավման և ընթացիկ ծախսերի աճի պայմաններում կանխատեսվող հորիզոնի վերջում հարկային եկամուտներ/ՀՆԱ-ն կգերազանցի ընթացիկ ծախսերի մակարդակը շուրջ 3.1 տոկոսային կետով:





Գծապատկեր 2.5. Ոսկե կանոններից շեղումը 2021թ. և վերադարձը դրանց պահպանմանը

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

¹⁸ Հարկաբյուջետային ազդակի հաշվարկներում օգտագործված եկամուտների և ծախսերի ցուցանիշներում կատարվել են անհրաժեշտ ճշգրտումներ՝ արտացոլելու կառավարության կողմից իրականացված այն բոլոր գործառնությունները, որոնք չեն ներառվել ծախսերում, սակայն կարող են ազդեցություն ունեցած լինել ամբողջական պահանջարկի վրա, կամ հակառակը:

Գծապատկեր 2.6. ՀՀ կառավարության պարտքի դինամիկան և այն պայմանավորող



գործոնները¹⁹

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2.3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Հարկաբյուջետային կանխատեսումները հիմնված են մի շարք ենթադրությունների և հիմնական դատողությունների վրա, որոնց համար օգտագործվել է տվյալ պահի դրությամբ առկա և հասանելի ամբողջ տեղեկատվությունը: Ինչպես ցանկացած կանխատեսում, հարկաբյուջետային կանխատեսումները նույնպես պարունակում են ռիսկեր կապված նրա հետ, որ փաստացի իրադարձությունները կարող են տարբերվել սպասումներից: 2025-2027 թթ. ՄԺԾԾ հիմնական մակրոտնտեսական հարկաբյուջետային ռիսկերը հետևյալն են.

Ներքին կամ արտաքին ցնցումների ներքո մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումների ռիսկ

«1.5. Մակրոտնտեսական կանխատեսումների ռիսկերը» բաժնում քննարկված՝ արտաքին կամ ներքին միջավայրից բխող ռիսկերը, ինչպես օրինակ ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում առաջացած դրական գործոնների չեզոքացումը և մարդկանց ու կապիտալի գրանցված հոսքերի հետշրջումը, տարածաշրջանային և աշխարհաքաղաքական լարվածությունների սրման պայմաններում ներմուծվող ռազմավարական ապրանքների գների հնարավոր բարձրացումը, ՀՀ ապրանքների արտահանման մատակարարումների լոգիստիկ խնդիրների խորացումը բացասաբար կանդրադառնան ֆինանսավորման

¹⁹ ՀՀ կառավարության պարտքի բեռի փոփոխության փորձումը ըստ գործոնների հաշվարկվել է բաց տնտեսությունում «պարտքի շարժման» բանաձևի օգնությամբ, որտեղ պարտքի փոփոխությունը ֆունկցիա է տնտեսական աճից, բյուջեի առաջնային հաշվեկշռից, փոխարժեքից, իրական տոկոսադրույքից և պարտք առաջացնող այլ հոսքերից (ՀՀ համար՝ զույր վարկավորում պետական բյուջեից): Հաշվարկման ընթացքում այս գործոններով չբացատրված պարտքի փոփոխության չափը արտացոլվում է որպես «մնացորդ», և, կարող է բնութագրել քրոս (արժույթների միմյանց նկատմամբ) փոխարժեքների փոփոխությամբ պայմանավորված վերագնահատման ազդեցությունները:

պահանջի վրա՝ մի կողմից հանգեցնելով սպասվածից փոքր հարկման բազաների ձևավորման, մյուս կողմից՝ ծախսային ճնշումների մեծացման:

Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի՝ հարկային վարչարարության ազդեցությամբ սպասվողից ավելի դանդաղ բարելավման ռիսկ:

Միջնաժամկետ հատվածի համար պլանավորված՝ միջինում 0.56%-ային կետով հարկեր/ՀՆԱ բարելավումներում հարկային վարչարարության մասնակցությունը 0.4%-ային կետ է, իսկ տարբերությունը ձևավորվում է հարկային օրենսդրության բարեփոխումների, տնտեսության կառուցվածքի փոփոխության և տնտեսական պարբերաշրջանի ազդեցության ներքո: Ընդ որում, հարկային վարչարարության արդյունքում հարկեր/ՀՆԱ բարելավումները պետք է տեղի ունենան հարկային վարչարարության առկա ճեղքի նվազեցման հաշվին, որի վրա հարկային վարչարարության միջոցառումների ազդեցությունը ոչ գծային է: Հարկային վարչարարության ազդեցությամբ հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավման ռիսկը ներառվել է «2025թ. պետական բյուջեի և միջնաժամկետ հորիզոնի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվածից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը» բաժնում քանակական տեսքի բերված հարկաբյուջետային ռիսկերի շրջանակում:

Միջազգային ֆինանսական շուկաների անկայունության և ֆինանսավորման պայմանների վատթարացման ռիսկ:

Զարգացած երկրներում տոկոսադրույքների սպասվող նվազեցման փոխարեն դրանց բարձր մակարդակի պահպանումը կամ հետագա աճը, ցածր եկամտային և զարգացող երկրներում պարտքային հիմնախնդիրների սրումը, համաշխարհային ֆինանսական շուկայում այլ ռիսկերի առարկայացումը կարող է վատթարացնել միջազգային ֆինանսական շուկաներից փոխառությունների պայմանները ՀՀ կառավարության համար և դժվարեցնել բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը: Պարտքի կայունության և պարտքի կառավարման ռազմավարության իրականացման համար նման ռիսկերի շրջանակն արտացոլված է համապատասխան բաժիններում:

Լրացուցիչ ֆինանսավորման պահանջ առաջացնող այլ ներքին ռիսկեր:

Նման ռիսկերի շարքում են Լոռու և Տավուշի մարզերում տեղի ունեցած ջրհեղեղի հետևանքների հաղթահարման համար ֆինանսավորման կարիքը, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց՝ ՀՀ տնտեսության ինտեգրման դանդաղումը և աջակցության ծրագրերի երկարաձգումը, տարածաշրջանային անվտանգային միջավայրի վատթարացման պայմաններում անվտանգությանն ու պաշտպանությանն ուղղվող միջոցների ծավալի աճի լրացուցիչ կարիքի առաջացումը, ՀՀ դրամի արժևորման արդյունքում արտահանելի հատվածի համար տնտեսական աջակցության լրացուցիչ ծրագրերի իրականացումը և այլ հնարավոր ծախսային ճնշումները:

Ծախսերի թերակատարում և ավելի թույլ խթանող ազդակի ձևավորում

2025 պետական բյուջեի և միջնաժամկետ հարկաբյուջետային սցենարում նախատեսվել է կապիտալ ծախսերի զգալի աճ՝ 2026 թվականին հասցնելով դրանց մակարդակը ՀՆԱ-ի 6.9%-ի: Սակայն հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի կատարողականները (չնայած այն հանգամանքին, որ առկա է եղել կատարողականների բարելավման միտում), առկա է ծրագրավորված ցուցանիշների թերակատարման ռիսկ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ ինչպես ամբողջական պահանջարկի և ընթացիկ տնտեսական ցուցանիշների վրա, այնպես էլ ունենալ երկարաժամկետ ազդեցություններ տնտեսության ներուժի վրա:

Հարկաբյուջետային շրջանակի հնարավոր փոփոխությունները մակրոտնտեսական կանխատեսումների շեղումների դեպքում և սթրես թեստերի ներքո²⁰.

Հարկային եկամուտներ

2025թ. և միջնաժամկետ հորիզոնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա գնահատվել է մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի շեղման ամփոփ գնահատականը, ինչպես նաև հարկային եկամուտների վարչարարության բարելավման ռիսկեր: Հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից առավելագույն շեղումը 2025-ի համար կկազմի շուրջ 94.3 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2026 և 2027 թթ-ի համար համապատասխանաբար 118.8 մլրդ ՀՀ դրամ և 139.0 մլրդ ՀՀ դրամ

Պետական բյուջեի ծախսեր

Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խաթարող ռիսկերին, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: ՀՀ պետական բյուջեի ծախսերի վրա գնահատված է մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման, կանխատեսումներից շեղման, ինչպես նաև՝ հարկային քաղաքականության և վարչարարության պլանավորված ուղեգծից ավելի դանդաղ իրականացման ռիսկերի ամփոփ գնահատականը: Նշված ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում 2025թ-ի ՀՀ պետական բյուջեի պակասուրդի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը առավելագույնը կկազմի շուրջ 102.3 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 0.9%-ը, իսկ 2026 և 2027 թթ-ին կկազմի համապատասխանաբար 130.9 և 156.5 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 1.1-1.2%-ը: Պետք է նշել, որ գնահատված ռիսկի չափը, առարկայացման դեպքում մասնակիորեն կկլանվի կառավարության պահուստային ֆոնդով, որը նույն ժամանակահատվածի համար նախատեսված է 0.4-0.8%, իսկ լրացուցիչ մասը՝ կկլանվի ՀՀ կառավարության կողմից ապահովվող՝ նվազագույնը ՀՆԱ 1%-ի չափով իրացվելիության «բարձիկի» միջոցով:

²⁰ Այս հարվածում նկարագրված ռիսկերի առավել մանրամասն վերլուծությունը ներկայացված է այս փաստաթղթի ՄԱՍ IV-ի «Պետական բյուջեի վրա մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատում» և «ՀՀ կառավարության պարտքի կայունության վերլուծություն» բաժիններում:

Ամփոփելով հարկաբյուջետային ռիսկերի նկարագրությունը կարող ենք նշել, որ 2025-2027 թթ. հարկաբյուջետային շրջանակի հիմնական ռիսկերը վերաբերում են մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումներին, հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի թիրախավորված բարելավումների ոչ ամբողջական ապահովմանը, միջազգային ֆինանսական շուկաների իրավիճակի վատթարացմանը և ՀՀ կառավարության փոխառության հնարավորությունների սահմանափակմանը, լրացուցիչ ծախսային կարիքների առաջացմանը, ծախսերի թերակատարմանը և ավելի թույլ խթանող ազդակի ձևավորմանը: Այս գնահատականը վերլուծության միջոցով նշված ռիսկերին տրվել է քանակական արտահայտություն, և դրանց կառավարման համար ձեռնարկվել են համարժեք միջոցառումներ՝ պետակաբ բյուջեում պահուստային ֆոնդերի ձևավորմամբ: Մասնավորապես, 2025թ. -ի համար մակրոտնտեսական ռիսկերի կառավարման նպատակով սահմանվել է 47.1 մլրդ դրամի պահուստային ֆոնդ, 2026թ.-ի համար՝ 79.2 մլրդ դրամ, իսկ 2027թ.-ի համար՝ 110.0 մլրդ դրամ: Միաժամանակ, այլ ռիսկերի նկատմամբ դիմակայունության ապահովման համար գանձապետական կայունացման հաշվում նախատեսվում է ապահովել ՀՆԱ առնվազն 1% չափով «իրացվելիության բարձրիկ»: Այս միջոցառումները հնարավորություն կտան ապահովել պետական բյուջեի դիմադրողականությունը հնարավոր ցնցումների նկատմամբ:

Միաժամանակ, տարբեր ռիսկերի առարկայացման պարագայում կառավարությունը կկիրառի հասանելի գործիքները եկամտային ներուժի բարձրացման նպատակով (այդ թվում՝ հարկային վարչարարության լրացուցիչ գործիքների կիրառում), կճշգրտվեն ծախսային առաջնահերթություններն ու շրջանակը, իսկ հարկաբյուջետային կայունության ռիսկերի առարկայացման դեպքում՝ կվերանայվի հարկաբյուջետային շրջանակը:

2.4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ

ՀՀ հարկաբյուջետային կանոնների ներկա համակարգը գործարկվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թ. դեկտեմբերի 20-ին «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պատրի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարող օրենքների, ինչպես նաև են ՀՀ Կառավարության՝ 2018 թ. օգոստոսի 23-ի N 942-Ն որոշման ընդունմամբ: Կանոնների համակարգը ներառում է ծախսային կանոններ, որոնք ուժի մեջ են մտնում պարտքի սահմանված շեմերը գերազանցելիս: Մասնավորապես.

- Երբ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 40%-ը, պետական բյուջեի կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն բյուջեի պակասուրդից:
- ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ 50-60% միջակայքում ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճով, ինչպես նաև հաջորդ տարում կազմվող պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ՀՀ կառավարությունը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ համախառն ներքին

արդյունքի նկատմամբ ՀՀ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 50 տոկոսից նվազեցնելու համար:

- Երբ ՀՀ կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ 60%-ը, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճից 0.5 տոկոսային կետով նվազեցված ցուցանիշով, ընթացիկ ծախսերը սահմանափակվում են հարկերի և տուրքերի մեծությամբ, ինչպես նաև ՀՀ կառավարությունը Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ու տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների քննարկմանը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ ՀՆԱ նկատմամբ ՀՀ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 60 տոկոսից նվազեցնելու համար:
- Ներկայացված սահմանափակումները չեն գործում ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ ելնելով խոշորածավալ տարերային և տեխնաժին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված բացասական տնտեսական զարգացումների պարագայում:

2021-2023 թվականներին հարկաբյուջետային քաղաքականությունը աստիճանաբար վերադարձել է բնականոն իրավիճակների համար գործող կանոններին համապատասխանության տիրույթ՝ COVID-19 համավարակի և 44-օրյա պատերազմի տնտեսական և հարկաբյուջետային հետևանքների ազդեցությամբ «բացառիկ դեպքի» կարգավորումների ակտիվացումից հետո: Ընդ որում, 2021թ.-ին, այդ հետևանքների ոչ ամբողջական հաղթահարման պայմաններում «բացառիկ դեպքի» կարգավորումները պահպանվել են, սակայն կառավարությունը կրճատել է կանոններից շեղման չափերը:

2022 թ.-ին արդեն կապիտալ ծախսերի կանոնին համապատասխանությունը վերականգնվել է, և պետական բյուջեի կապիտալ ծախսերը գերազանցել են պետական բյուջեի պակասուրդը շուրջ 201 մլրդ դրամով, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի շեղման չափը կանոնից կրճատվել է 30 մլրդ դրամի: 2023 թվականին պետական բյուջեի կապիտալ ծախսերը գերազանցել են պետական բյուջեի պակասուրդը շուրջ 283.7 մլրդ դրամով, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի շեղման չափը կանոնից կազմել է 42.6 մլրդ դրամ: Կարևոր է նշել, որ ընթացիկ ծախսերի մասով շեղումները գրանցվել են տարվա ընթացքում պետական բյուջեի եկամուտների պլանի բարձրացման պայմաններում՝ համապատասխան տարիների պետական բյուջեի մասին օրենքի դրույթներին (ինչը թույլ է տալիս ավելացնել ծախսերը հարկային եկամուտների ավելացման պարագայում), բացի այդ՝ պլանավորված մակարդակից ծախսերի ավելացումները հիմնականում միանգամյա ծախսերի բնույթ են կրել և չեն ենթադրել երկարաժամկետ ծախսային պարտավորությունների բեռի ավելացում (օրինակ՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց սոցիալական կարիքների ուղղությամբ կատարված ծախսերը), ինչի արդյունքում հաշվարկված շեղումը գնահատվում է որպես երկարաժամկետ ճնշումներ չառաջացնող և հարկաբյուջետային կայունության տեսակետից վտանգներ չի ստեղծում:

Միաժամանակ, կառավարությունը վերականգնել է համապատասխանությունը նաև պարտքի կանոնին, հաշվի առնելով, որ 2022թ.-ի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 46.7%, իսկ 2023թ.-ի վերջին՝ 48.1%՝ ցածր լինելով 50%-ի շեմից՝ այդպիսով ոչ միայն ապահովելով ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2022-2026թթ. վերանայված ծրագրի թիրախը, այլ նաև նվազեցնելով պարտքը դեպի ապահով մակարդակներ:

2024թ . և միջնաժամկետ հատվածի համար 2022-2023թթ . կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի համար գրանցված 50%-ից ցածր ցուցանիշները ձևավորել են հարկաբյուջետային տարածք ընթացիկ ծախսերի համար, որը, պարտքի բեռի կանխատեսվող աճի հետ արդեն կանոնով է սահմանափակվում 2026թ-ից: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազումը հարկաբյուջետային քաղաքականությունը տեղափոխել է կանոններով սահմանափակման առավել մեղմ ռեժիմների՝ թույլ տալով վարել առավել ճկուն հարկաբյուջետային քաղաքականություն ընթացիկ ծախսերի մասով, սակայն պահպանելով «ոսկե կանոններին» համապատասխանությունը: Այնուամենայնիվ, ընթացիկ ծախսերի հետագա աճը միջնաժամկետի վերջում սահմանափակվում է հարկաբյուջետային կանոնով՝ հաշվի առնելով պարտքի բեռի կանխատեսվող աճը և զսպելով ապագայում եկամուտ գեներացնելու կարողություններին պարտավորությունների (ընթացիկ ծախսերի գծով ստանձնվող օրենսդրական պարտավորությունների և պարտքային պարտավորությունների ձևով) առաջանցիկ ավելացումը: Արդյունքում ընթացիկ ծախսերի համար ևս միջնաժամկետի սկզբում ձևավորվում են «առաջ բերված» լրացուցիչ հնարավորություններ, որոնք նախ և առաջ կծառայեն անհետաձգելի ծախսային կարիքների ֆինանսավորմանը:

Աղյուսակ 2.2. Փաստացի և ծրագրավորված հարկաբյուջետային քաղաքականության համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին

| Կանոնի ցուցանիշ | | Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր | Պետական բյուջեի ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպ | Պետական բյուջեի ընթացիկ ծախսեր | Կառավարության պարտք/ՀՆԱ, % |
|----------------------|---------|---|---|--|----------------------------|
| Ուղենիշային ցուցանիշ | | >/= պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ | </= նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ աճի միջին տեմպ, % | </= հարկային եկամուտների և փոփոխությունների ծավալ, մլրդ դրամ | |
| 2021 | Սահման. | 321 | 6.3 | - | |
| | Պլան | 216 | 12.8 | 1810.7 | 60.2 |
| 2022 | Սահման. | 180 | 4.1 | 1926 | |
| | Պլան | 380 | 5.3 | 1898.7 | 46.7 |
| 2023 | Սահման. | 274 | 5.1 | 2235 | |
| | Պլան | 472.6 | 5.9 | 2127 | 48.4 |
| 2024 | Սահման. | 482.9 | - | - | 49.8 |
| | Պլան | 639.3 | 13.5 | 2437.2 | |
| 2025 | Սահման. | 604.0 | | | |
| | Պլան | 734.9 | 13.5 | 2706.8 | 54.3 |
| 2026 | Սահման. | 506.2 | 9.2 | | |
| | Պլան | 822.0 | 6.0 | 2807.5 | 55.7 |
| 2027 | Սահման. | 391.1 | 9.2 | | |
| | Պլան | 861.7 | 5.4 | 2988.1 | 55.6 |

«-»-ը նշանակում է, որ պետական պարտքի առկա չափի դեպքում կիրառելի չէ

2.5. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 2.3. Պետական բյուջեի եկամուտների կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

| Ընդունման տարին | Ծրագիր | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
|-----------------|-----------------------|---------|---------|---------|---------|---------|
| - | Փաստացի | 2,410.7 | | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 25.50% | | | | |
| 2022 | ՄԺԾԾ 2023-2025 | 2,305.7 | 2,609.6 | 2,940.6 | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 25.47% | 25.81% | 26.15% | | |
| | 2023թ. Պետական բյուջե | 2,353.9 | | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 25.26% | | | | |
| 2023 | ՄԺԾԾ 2024-2026 | 2,385.7 | 2,671.1 | 2,986.4 | 3,367.4 | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 25.02% | 25.18% | 25.30% | 25.63% | |
| | 2024թ. Պետական բյուջե | 2,408.1 | 2,663.1 | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 25.48% | 25.30% | | | |
| 2024 | ՄԺԾԾ 2025-2027 | | 2,634.7 | 2,897.6 | 3,258.2 | 3,614.1 |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 25.74% | 25.88% | 26.47% | 26.76% |
| | 2025թ. Պետական բյուջե | | 2,593.6 | 2,837.6 | 3,123.2 | 3,458.6 |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 25.65% | 26.1% | 26.20% | 26.53% |

Աղյուսակ 2.4. Պետական բյուջեի հարկային եկամուտների կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

| Ընդունման տարին | Ծրագիր | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
|-----------------|-----------------------|---------|---------|---------|---------|---------|
| - | Փաստացի | 2,273.9 | | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 24.05% | | | | |
| 2022 | ՄԺԾԾ 2023-2025 | 2,228.3 | 2,539.0 | 2,874.4 | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 24.57% | 25.11% | 25.55% | | |
| | 2023թ. Պետական բյուջե | 2,255.6 | | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 24.21% | | | | |
| 2023 | ՄԺԾԾ 2024-2026 | 2,287.4 | 2,573.1 | 2,896.9 | 3,281.2 | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 23.99% | 24.26% | 24.54% | 24.98% | |
| | 2024թ. Պետական բյուջե | 2,277.8 | 2,553.1 | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 24.10% | 24.3% | | | |
| 2024 | ՄԺԾԾ 2025-2027 | | 2,496.9 | 2,812.3 | 3,182.0 | 3,541.2 |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 24.39% | 25.12% | 25.85% | 26.22% |
| | 2025թ. Պետական բյուջե | | 2,455.8 | 2,720.3 | 3,047.0 | 3,385.8 |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 24.29% | 24.98% | 25.57% | 25.97% |

Աղյուսակ 2.5. Պետական բյուջեի ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

| Ընդունման տարին | Ծրագիր | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
|-----------------|-----------------------|---------|---------|---------|---------|---------|
| - | Փաստացի | 2,599.6 | | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 27.50% | | | | |
| 2022 | ՄԺԾԾ 2023-2025 | 2,597.9 | 2,882.9 | 3,223.0 | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 28.67% | 28.51% | 28.65% | | |
| | 2023թ. Պետական բյուջե | 2,642.9 | | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 28.36% | | | | |
| 2023 | ՄԺԾԾ 2024-2026 | 2,659.6 | 2,973.6 | 3,306.1 | 3,701.9 | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 27.9% | 28.0% | 28.0% | 28.2% | |
| | 2024թ. Պետական բյուջե | 2,653.4 | 3,146.0 | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 28.1% | 29.9% | | | |
| 2024 | ՄԺԾԾ 2025-2027 | | 3,117.6 | 3,513.4 | 3,812.1 | 4,086.8 |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 30.5% | 31.4% | 31.0% | 30.3% |
| | 2025թ. Պետական բյուջե | | 3,076.5 | 3,441.6 | 3,629.5 | 3,849.8 |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 30.4% | 31.6% | 30.5% | 29.5% |

Աղյուսակ 2.6. Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

| Ընդունման տարին | Ծրագիր | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
|-----------------|-----------------------|---------|---------|---------|---------|---------|
| - | Փաստացի | 2,127.0 | | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 22.50% | | | | |
| 2022 | ՄԺԾԾ 2023-2025 | 2,082.6 | 2,293.2 | 2,512.2 | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 22.97% | 22.71% | 22.35% | | |
| | 2023թ. Պետական բյուջե | 2,095.2 | | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 22.48% | | | | |
| 2023 | ՄԺԾԾ 2024-2026 | 2,095.3 | 2,308.3 | 2,537.2 | 2,839.1 | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 21.98% | 21.76% | 21.49% | 21.61% | |
| | 2024թ. Պետական բյուջե | 2,091.3 | 2,450.7 | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 22.13% | 23.3% | | | |
| 2024 | ՄԺԾԾ 2025-2027 | | 2,451.2 | 2,728.5 | 2,938.2 | 3,228.1 |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 23.95% | 24.37% | 23.87% | 23.90% |
| | 2025թ. Պետական բյուջե | | 2,437.2 | 2,706.8 | 2,807.5 | 2,988.1 |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 24.11% | 24.9% | 23.6% | 22.9% |

Աղյուսակ 2.7. Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

| Ընդունման տարին | Ծրագիր | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
|-----------------|-----------------------|-------|-------|-------|-------|-------|
| - | Փաստացի | 472.6 | | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 5.00% | | | | |
| 2022 | ՄԺԾԾ 2023-2025 | 515.3 | 589.7 | 710.8 | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 5.70% | 5.80% | 6.30% | | |
| | 2023թ. Պետական բյուջե | 547.7 | | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 5.88% | | | | |
| 2023 | ՄԺԾԾ 2024-2026 | 564.3 | 665.3 | 768.9 | 862.9 | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 5.9% | 6.3% | 6.5% | 6.6% | |
| | 2024թ. Պետական բյուջե | 562.1 | 695.3 | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 6.0% | 6.6% | | | |
| 2024 | ՄԺԾԾ 2025-2027 | | 666.4 | 784.9 | 873.9 | 858.6 |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 6.5% | 7.0% | 7.1% | 6.4% |
| | 2025թ. Պետական բյուջե | | 639.3 | 734.9 | 822.0 | 861.7 |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 6.3% | 6.7% | 6.9% | 6.6% |

Աղյուսակ 2.8. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

| Ընդունման տարին | Ծրագիր | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
|-----------------|-----------------------|-------|-------|-------|-------|-------|
| - | Փաստացի | 339.9 | | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 3.60% | | | | |
| 2022 | ՄԺԾԾ 2023-2025 | 436.2 | 417.3 | 426.4 | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 4.79% | 4.12% | 3.78% | | |
| | 2023թ. Պետական բյուջե | 424.9 | | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 4.56% | | | | |
| 2023 | ՄԺԾԾ 2024-2026 | 409.9 | 446.5 | 463.7 | 478.5 | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 4.30% | 4.21% | 3.93% | 3.64% | |
| | 2024թ. Պետական բյուջե | 381.3 | 482.9 | | | |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | 4.04% | 4.59% | | | |
| 2024 | ՄԺԾԾ 2025-2027 | | 482.9 | 615.8 | 553.9 | 472.7 |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 4.72% | 5.50% | 4.50% | 3.50% |
| | 2025թ. Պետական բյուջե | | 482.9 | 604.0 | 506.2 | 391.1 |
| | %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ | | 4.8% | 5.5% | 4.2% | 3.0% |

**ՄԱՍ II. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025
ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԲԱՅԱՏՐԱԳԻՐ**

ՄԱՍ II -Ա ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի մշակման ընթացքում ՀՀ կառավարությունն առաջնորդվել է ՀՀ 2025-2027թթ. ՄԺԾԾ-ով ամրագրված հիմնական սկզբունքներով: Ստորև բերված Աղյուսակ 1-ում ներկայացված են 2021-2025թթ պետական բյուջեների ցուցանիշներն արտացոլող ամփոփ ցուցանիշները:

Աղյուսակ 1. 2021-2025թթ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները, մլրդ դրամ

| Ցուցանիշներ | Փաստ | | | Հաստատված | Ծրագիր |
|--|----------------|----------------|----------------|-----------------|-----------------|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
| Պետական բյուջեի եկամուտներ | 1,706.0 | 2,099.6 | 2,358.8 | 2,723.6 | 2,837.6 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 24.4 | 24.7 | 25.0 | 25.9 | 26.1 |
| Ներքին եկամուտներ | 1,694.1 | 2,084.6 | 2,345.7 | 2,701.3 | 2,816.9 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 24.2 | 24.5 | 24.8 | 25.7 | 25.9 |
| Ընդհանուրի նկատմամբ (%) | 99.3 | 99.3 | 99.4 | 99.2 | 99.3 |
| Հարկային եկամուտներ և պետական տուրքեր | 1,609.6 | 1,962.5 | 2,221.9 | 2,613.6 | 2,720.3 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 23.0 | 23.1 | 23.5 | 24.9 | 25.0 |
| Ընդհանուրի նկատմամբ (%) | 94.3 | 93.5 | 94.2 | 96.0 | 95.9 |
| Պետական բյուջեի ծախսեր | 2,027.0 | 2,279.1 | 2,547.6 | 3,206.5 | 3,441.6 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 29.0 | 26.8 | 27.0 | 30.5 | 31.6 |
| Ընթացիկ ծախսեր | 1,810.7 | 1,898.7 | 2,075.1 | 2,511.2 | 2,706.8 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 25.9 | 22.3 | 22.0 | 23.9 | 24.9 |
| Ընդհանուրի նկատմամբ (%) | 89.3 | 83.3 | 81.4 | 78.3 | 78.6 |
| Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ | 216.3 | 380.4 | 472.6 | 695.3 | 734.9 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 3.1 | 4.5 | 5.0 | 6.6 | 6.7 |
| Ընդհանուրի նկատմամբ (%) | 10.7 | 16.7 | 18.6 | 21.7 | 21.4 |
| Պետական բյուջեի դեֆիցիտ | 320.5 | 179.5 | 188.9 | 482.9 | 604.0 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 4.6 | 2.1 | 2.0 | 4.6 | 5.5 |
| Անվանական ՀՆԱ | 6,991.8 | 8,501.4 | 9,453.2 | 10,516.1 | 10,891.5 |


Հիմք ընդունելով ՀՆԱ-ի 26.1 %-ի չափով կանխատեսված ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի եկամուտների մակարդակը և ելնելով ՀՆԱ-ի 5.5 %-ի չափով դեֆիցիտի ֆինանսա-

վորման հնարավորություններից, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2025 թվականին ապահովել ծախսերը ՀՆԱ-ի 31.6 %-ի կամ 3,441.6 մլրդ դրամի չափով:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված բյուջետային եկամուտների կազմում, ինչպես և նախորդ տարիներին, գերակշիռ մաս են կազմում հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով ակնկալվող մուտքերը, ինչը ներկայացված է գծապատկերում:

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված բյուջետային եկամուտների կառուցվածքը (%-ով ընդհանուրի նկատմամբ):



ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 2,837.6 մլրդ դրամ եկամուտներ, որից հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով՝ 2,720.3 մլրդ դրամ: Բյուջետային եկամուտների՝ ըստ առանձին եկամտատեսակների կանխատեսումների մանրամասները ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բացատրագրի՝ եկամուտների կանխատեսմանը վերաբերվող մասում (սույն ուղերձի մաս 3):

2025 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվի առնելով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի եկամուտների կանխատեսվող մակարդակը և դեֆիցիտի ու պետական պարտքի նպատակային ցուցանիշները, որոնք ներկայացվում են հաջորդ բաժնում, ՀՀ կառավարությունը ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ծախսերի ծավալը առաջարկում է սահմանել 3,441.6 մլրդ դրամի չափով:

ՀՀ կառավարության 2025 թվականի ծախսային գերակայությունները բխում են ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի առաջնահերթություններից:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ) ԵՎ ՊԱՐՏՔԸ

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը ծրագրավորվել է ՀՆԱ-ի 5.5 %-ի չափով և կազմում է 604.1 մլրդ դրամ: Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրների հիմնական մասը ՀՀ 2025 թվականին ձևավորվելու է պետական արժեթղթերի տեղաբաշխումից գոյացող մուտքերից, տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերից, ինչպես նաև ելքերի ֆինանսավորմանն ուղղվող պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներից: Դեռևս զգալի են արտաքին աղբյուրներից՝ միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից ստացվելիք վարկերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորմանն ուղղվող միջոցները:

Համաձայն կանխատեսումների ծրագրային ժամանակահատվածում արտաքին օժանդակության կառուցվածքում գերակշռելու են նպատակային ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսված բյուջետային աջակցության պաշտոնական դրամաշնորհներն ու վարկերը (97.4%):

Աղյուսակ 2. 2025թ ակնկալվող արտաքին օժանդակությունն ըստ բնույթի

| Ցուցանիշներ | Գումարը (մլրդ դրամներով) | Տեսակարար կշիռը արտաքին օժանդակության ընդհանուր գումարում (%) |
|---|--------------------------|---|
| Ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն | 6.2 | 2.6 |
| Պաշտոնական դրամաշնորհներ | 6.2 | X |
| Ծրագրային (նպատակային) օժանդակություն | 231.8 | 97.4 |
| Պաշտոնական դրամաշնորհներ | 14.5 | X |
| Վարկեր | 217.3 | X |
| Ընդամենը արտաքին օժանդակություն | 238 | |

Բյուջետային փաթեթում ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակության թերստացման պայմաններում ծախսերի վերանայման անհրաժեշտության առաջացման դեպքում այդ վերանայումն իրականացվելու է՝ ելնելով ծախսերի գերակայության աստիճանից: Ծրագրային (նպատակային) պաշտոնական դրամաշնորհների և վարկերի թերստացումը հանգեցնելու է այն ծրագրերի գծով ծախսերի կրճատմանը, որոնք անմիջականորեն կապակցված են ֆինանսավորման այդ աղբյուրներին:

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի հաշվարկներում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.1-րդ մասի պահանջի համաձայն կիրառվել են ս.թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ՀՀ արտարժույթային շուկայում ձևավորված տարադրամի փոխարժեքները ՀՀ դրամով:

| Տարադրամի տեսակը | Փոխարժեքը ՀՀ դրամով |
|---------------------------------|---------------------|
| 1 ԱՄՆ դոլար | 387.17 |
| 1 եվրո | 420.51 |
| 1 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստեռլինգ | 499.95 |
| 1 Ռուսաստանյան ռուբլի | 3.95 |
| 1 Շվեյցարական ֆրանկ | 446.2 |
| 1 Կանադական դոլար | 277.86 |
| 10 ճապոնական իեն | 25.36 |
| 1 Չինական յուան | 54.35 |

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Պետական բյուջեի ձևավորումը 2025 թվականին շարունակելու է ընթանալ բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, ընդ որում՝ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից, համապատասխանաբար՝ 255.4 մլրդ դրամի և 348.6 մլրդ դրամի չափով:

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներքին աղբյուրներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ընդհանուր գումարը ծրագրավորվում է շուրջ 291.4 մլրդ դրամի չափով, ընդ որում, փոխառու միջոցների մուտքերի ներգրավումը ամբողջությամբ նախատեսվում է ապահովել պետական արժեթղթերի թողարկումից:

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ծրագրված ընդհանուր գումարը՝ 357.8 մլրդ դրամ է, որը հաշվարկվել է որպես միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետությանը 2025 թվականին տրամադրվելիք վարկերի (որոնց մասն ունի հստակ ծրագրային ուղղվածություն): Ֆինանսական ակտիվներից 2025 թվականի զուտ մուտքերը ծրագրավորվում են շուրջ (9.3) մլրդ դրամ:

Ստորև ներկայացվում են ՀՀ 2021-2025 թվականների պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները:

Աղյուսակ 3. ՀՀ 2021-2025թթ. պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

| Ցուցանիշներ | Փաստ | | | Բյուջե | Ծրագիր |
|-------------|------|------|------|--------|--------|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |

| | | | | | |
|--|-------|---------|---------|-------|-------|
| Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները | 320.5 | 179.5 | 188.8 | 482.9 | 604.0 |
| Ա. Ներքին աղբյուրներ | 101.2 | 288.1 | 412.3 | 351.2 | 255.4 |
| Բ. Արտաքին աղբյուրներ | 219.3 | (108.6) | (223.5) | 131.7 | 348.6 |

Պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2025 թվականին կկազմի 5.5 %: Ինչպես 2025-2027թթ միջնաժամկետ ծախսային ծրագրում, ՀՀ 2025թ բյուջեում նույնպես պահպանվել է ՀՀ պետական բյուջեի կախվածությունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից (արտասահմանյան վարկերից և պաշտոնական դրամաշնորհներից):

Աղյուսակ 4. Ընդհանուր և առաջնային դեֆիցիտները, %-ով ՀՆԱ-ի նկատմամբ

| Ցուցանիշներ | 2025 |
|--|-------|
| Ընդհանուր դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի տարբերությունը | 604.0 |
| Առաջնային դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի (առանց տոկոսավճարների) տարբերությունը | 209.9 |

ՄԱՍ II-Բ. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում (սույն մասում այսուհետ՝ Օրենք) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 2,837.6 մլրդ դրամի չափով, 2024 թվականի համար հաստատված 2,723.6 մլրդ դրամի և 2023 թվականին փաստացի ստացված 2,358.8 մլրդ դրամ գումարների դիմաց: Եկամուտների տարեկան ծրագրային ծավալները կապահովվեն հիմնականում ի հաշիվ հարկային եկամուտների:

Աղյուսակ 5. 2021-2025թթ փաստացի/կանխատեսումային բյուջետային եկամուտները, մլրդ դրամ

| Ցուցանիշներ | Փաստ | | | բյուջե | ծրագիր |
|---------------------------------------|---------|---------|---------|---------|---------|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
| Պետական բյուջեի եկամուտներ | 1,706.5 | 2,099.6 | 2,358.8 | 2,723.6 | 2,837.6 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 24.4% | 24.7% | 25.0% | 25.9% | 26.1% |
| Հարկային եկամուտներ և պետական տուրքեր | 1,609.6 | 1,962.5 | 2,221.9 | 2,613.6 | 2,720.3 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 23.0% | 23.1% | 23.5% | 24.9% | 25.0% |


| | | | | | |
|--------------------------|-------|-------|-------|-------|-------|
| Ընդհանուրի նկատմամբ (%) | 94.3% | 93.5% | 94.2% | 96.0% | 95.9% |
| Այլ եկամուտներ | 84.6 | 122.1 | 123.7 | 87.7 | 96.6 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 1.2% | 1.4% | 1.3% | 0.8% | 0.9% |
| Ընդհանուրի նկատմամբ (%) | 5.0% | 5.8% | 5.2% | 3.2% | 3.4% |
| Պաշտոնական դրամաշնորհներ | 12.4 | 15.0 | 13.1 | 22.3 | 20.7 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.2% | 0.2% | 0.1% | 0.2% | 0.2% |
| Ընդհանուրի նկատմամբ (%) | 0.7% | 0.7% | 0.6% | 0.8% | 0.7% |

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին եկամտատեսակների բազայի ձևավորման կամ հաշվարկման վրա: Առանձին դեպքերում հաշվի են առնվել նաև պայմանագրային հարաբերություններով կարգավորվող ցուցանիշները:

ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 2025 թվականի բյուջետային մուտքերի հաշվարկներում ենթադրվել է, որ հարկերի գծով 2025 թվականի համար հարկային եկամուտներ և պետական տուրքեր /ՀՆԱ ցուցանիշի սպասողական մակարդակը ապահովելու համար բավարար հիմքեր կստեղծեն առկա օրենսդրական նախադրյալները, կիրառվելիք վարչարարական միջոցառումները, ինչպես նաև մակրոտնտեսական զարգացումները:

Գծապատկեր 1. ՀՀ 2021-2025թթ. Հարկային եկամուտները և պետական տուրքերը(մլրդ դրամով) և կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ



2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Պետական տուրքեր

Պետական տուրքերի գծով 2025 թվականի բյուջետային մուտքերը ծրագրվել են 74.8 մլրդ դրամի չափով՝ 2024 թվականի համար հաստատված 66.4 մլրդ դրամի և 2023 թվականին փաստացի ստացված 67.4 մլրդ դրամի դիմաց:

Պետական տուրքերի գծով 2025 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները կատարվել են ըստ դրանց նախորդ տարիների փաստացի հավաքագրումների միտումների, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն և լրացումները, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները:

Մասնավորապես՝

2024 թվականի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 22.12.2023թ. ՀՕ-7-Ն օրենքը, որով սահմանվում է տուրք զբոսաշրջային ավտոբուսների, զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների, զբոսաշրջային փորձառությունների, զբոսավարների և ուղեկցորդների որակավորման համար, ինչպես նաև զբոսաշրջային օպերատորների, զբոսաշրջային գործակալների, զբոսավարների և ուղեկցորդների և հյուրանոցային ծառայություններ մատուցող անձանց գործունեության ծանուցման համար:

2025 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտնելու «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» 22.05.2024թ. ՀՕ-254-Ն

օրենքը, որով սահմանվել է տուրք կրթության բնագավառում մասնագիտական կրթության առաջին մակարդակի և մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի համար:

2025 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտնելու «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 11.04.2024թ. ՀՕ-181-Ն օրենքը, որով սահմանվում են պետական տուրքեր կատարողական վարույթի մասնակիցներին վարույթի նյութերից պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար՝ բազային տուրքի 20 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 10 տոկոսի չափով:

2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտնելու «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» 02.05.2024թ. ՀՕ-218-Ն օրենքը, որով սահմանվում են պետական տուրքեր քաղաքացիական ավիացիայի բնագավառում մատուցված ծառայությունների համար:

2024 թվականի մայիսի 8-ից ուժի մեջ է մտել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 11.04.2024թ. ՀՕ-156-Ն օրենքը, որով սահմանվում է տուրք Հայաստանի Հանրապետությունում դեղերի գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման, Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի դոսյեի՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) կանոններին համապատասխանեցման կամ փոխադարձ ճանաչման նպատակով իրականացվող և հետգրանցումային փոփոխությունների փորձաքննությունների, ինչպես նաև միայն Հայաստանի Հանրապետությունում ԵԱՏՄ կարգով գրանցված կամ դոսյեն համապատասխանեցված դեղի այլ երկրների փոխադարձ ճանաչման նպատակով վերափորձաքննության, ԵԱՏՄ կարգով գրանցումը գործողության մեջ պահելու և փորձաքննություն չպահանջող փոփոխության մասին ծանուցումն ընդունելու համար:

2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտնելու «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 07.02.2024թ. ՀՕ-85-Ն օրենքը, որով սահմանվում է տուրք «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7206 ծածկագրին դասվող ապրանքների յուրաքանչյուր մեկ տոննայի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների՝ բազային տուրքի 110-ապատիկի չափով, «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7207 ծածկագրին դասվող ապրանքների յուրաքանչյուր մեկ տոննայի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների՝ բազային տուրքի 110-ապատիկի չափով, «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7224 ծածկագրին դասվող ապրանքների յուրաքանչյուր մեկ տոննայի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների՝ բազային տուրքի 110-ապատիկի չափով, «Արտաքին

տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7403 ծածկագրին դասվող ապրանքների յուրաքանչյուր մեկ տոննայի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների՝ բազային տուրքի 400-ապատիկի չափով և «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7601, 7603 ծածկագրերին դասվող ապրանքների յուրաքանչյուր մեկ տոննայի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների՝ բազային տուրքի 300-ապատիկի չափով:

2024 թվականի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 08.12.2023թ. ՀՕ-393-Ն օրենքը, որով սահմանվում է տուրք կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներքաղաքային երթուղու շահագործման, կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց կողմից թեթև մարդատար ավտոմոբիլներով ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների, ինչպես նաև մարդատար- նաև մարդատար-տաքսի ավտոմոբիլներով

ուղևորափոխադրումների իրականացման արտոնագիր տրամադրելու համար, որը 01.01.2025թ.-ից կանխիկ վճարումների համար կազմելու է յուրաքանչյուր փոխադրման ընդհանուր արժեքի 3.5 տոկոսը, իսկ անկանխիկի դեպքում՝ 2.5 տոկոսը:

2024 թվականի օգոստոսի 4-ից ուժի մեջ է մտել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 12.07.2024թ. ՀՕ-315-Ն օրենքը, որով սահմանվում է տուրք քարտեզագրական, հողաշինարարական, չափագրման և հաշվառման գործունեության որակավորման վկայականը վերաձևակերպելու կամ կրկնօրինակն ստանալու համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով, և գեոդեզիական և մարկշեյդերական գործունեության որակավորման վկայականը վերաձևակերպելու կամ կրկնօրինակն ստանալու համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով:

2024 թվականի մայիսի 13-ից ուժի մեջ է մտել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 12.04.2024 ՀՕ-146-Ն օրենքը, որով սահմանվում է տուրք «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7108 ծածկագրին դասվող ապրանքների (բացի Հայաստանի Հանրապետության ծագման ոսկի պարունակող համաձուլվածքներից և խտանյութերից) յուրաքանչյուր մեկ կիլոգրամի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ արտահանման (տեղափոխման) և «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանվող և հետագայում ներմուծվող ապրանքների՝ բազային տուրքի 180-ապատիկի չափով, «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7110 ծածկագրին դասվող պլատինե ապրանքների (բացի Հայաստանի Հանրապետության ծագման պլատին պարունակող համաձուլվածքներից և խտանյութերից) յուրաքանչյուր մեկ

կիլոգրամի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ արտահանման (տեղափոխման) և «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանվող և հետագայում ներմուծվող ապրանքների՝ բազային տուրքի 90-ապատիկի չափով, «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7110 ծածկագրին դասվող պալադիումե ապրանքների (բացի Հայաստանի Հանրապետության ծագման պալադիում պարունակող համաձուլվածքներից և խտանյութերից) յուրաքանչյուր մեկ կիլոգրամի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ արտահանման (տեղափոխման) և «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանվող և հետագայում ներմուծվող ապրանքների» համար՝ բազային տուրքի 105-ապատիկի չափով:

2024 թվականի մայիսի 17-ից ուժի մեջ է մտել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 12.04.2024 ՀՕ-212-Ն օրենքը, որով սահմանվում է տուրք կերային հավելումների պետական գրանցման համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով:

2024 թվականի հունիսի 12-ին ընդունվել է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 12.06.2024 ՀՕ-266-Ն օրենքը, որով սահմանվում է տուրք խաղային գործունեության բնագավառի համար:

2024 թվականի հուլիսի 18-ից ուժի մեջ է մտել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 12.06.2024 ՀՕ-300-Ն օրենքը, որով սահմանվում է տուրք ճանապարհային անվտանգության աուդիտորների և թունելի անվտանգության գծով պատասխանատուի որակավորման քննություն ընդունելու համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով, ճանապարհային անվտանգության աուդիտորների և թունելի անվտանգության գծով պատասխանատուի որակավորման վկայական տալու համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով:

2024 թվականի օգոստոսի 1-ից ուժի մեջ է մտել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 16.01.2024 ՀՕ-17-Ն օրենքը:

2025 թվականի փետրվարի 1-ից ուժի մեջ է մտնելու «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 12.06.2024 ՀՕ-290-Ն օրենքը:

2025 թվականի մայիսի 12-ից ուժի մեջ է մտնելու «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 24.10.2024 ՀՕ-390-Ն օրենքը:

2025 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտնելու «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 11.04.2024

ՀՕ-165-Ն օրենքը, որով սահմանվում է տուրք առողջապահության բնագավառում անհատական լիցենզիա ստանալու համար (բացառությամբ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, Ազգային անվտանգության ծառայության, ներքին գործերի նախարարության ենթակայությամբ գործող Ոստիկանության և Փրկարար ծառայության զինվորական հաստիք զբաղեցնող ավագ բուժաշխատողների)՝ բազային տուրքի վեցապատիկի չափով, անցումային անհատական լիցենզիա ստանալու համար (բացառությամբ ռազմաբժշկական հետբուհական ուսուցում իրականացնող հաստատություններում ուսումնառող անձանց)՝ բազային տուրքի եռապատիկի չափով:

Պետական տուրքի գծով փաստացի/կանխատեսումային ցուցանիշների ընդհանուր պատկերն ըստ եկամտի հիմնական աղբյուրների հետևյալն է.

Աղյուսակ 6. Պետական տուրքերի կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2021-2025թթ փաստացի/կանխատեսումային ցուցանիշները, մլրդ դրամ

| Պետական տուրքեր | Փաստ | | | Բյուջե | Ժրագիր |
|--|------|-------|------|--------|--------|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
| Ընդամենը այդ թվում՝ | 66.7 | 106.4 | 67.4 | 66.4 | 74.8 |
| 1. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրի-նակներ) գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների, ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու համար | 2.2 | 2.7 | 2.2 | 2.4 | 2.1 |
| 2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| 3. Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար | 3.1 | 2.6 | 2.8 | 2.7 | 2.5 |
| 4. Պետական գրանցման համար | 5.1 | 4.9 | 6.4 | 6.1 | 6.6 |
| 5. Գյուտերի, արդյունաբերական դիզայնների, բույսերի սորտերի, ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների, երաշխավորված ավանդական | 0.3 | 0.3 | 0.4 | 0.4 | 0.4 |

| | | | | | |
|--|------|------|------|------|------|
| արտադրանքի, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար | | | | | |
| 6. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար | 2.2 | 3.2 | 2.6 | 4.1 | 4.4 |
| 7. Լիցենզավորման ենթակա կամ թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար | 38.3 | 74.1 | 33.8 | 30.4 | 34.6 |
| 8. Օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար | 15.4 | 18.6 | 19.1 | 20.2 | 24.3 |

Պետական տուրքի առանձին տեսակների («Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմնական խմբերի) գծով 2025 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները, հաշվարկման մեթոդների համառոտ նկարագրությունը, ծրագրային և փաստացի ցուցանիշների համեմատականները ներկայացվում են ստորև:

Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2025 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,056.3 մլն դրամի չափով՝ 2024 թվականի համար հաստատված 2,447.3 մլն դրամի դիմաց:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոփոխելու համար գանձվող պետական տուրքի գծով 2025 թվականի մուտքերը կանխատեսվել են փորձագիտական գնահատականով ներկայացված 89.1 մլն դրամի չափով՝ 2024 թվականի համար հաստատված 72.5 մլն դրամի և 2023 թվականին փաստացի ստացված 62.6 մլն դրամի դիմաց:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2025 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,447.0 մլն դրամի չափով՝ 2024 թվականի համար հաստատված 2,687.5 մլն դրամի և 2023 թվականին փաստացի ստացված 2,786.6 մլն դրամի դիմաց:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գծով 2025 թվականի մուտքերը կանխատեսվել են 6,561,8 մլն դրամի չափով՝ 2024 թվականի համար հաստատված 6,120.9 մլն դրամի դիմաց:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գերակշռող մասը 2025 թվականին ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 3 խմբերի հաշվին՝

- ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման, ինչպես նաև պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2025 թվականի մուտքերը ծրագրվել են 2,320.1 մլն դրամի չափով:
- ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) տալու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2025 թվականի մուտքերը կանխատեսվել են փորձագիտական գնահատականով ներկայացված 1,161.6 մլն դրամի չափով:
- գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2025 թվականի մուտքերը կադաստրի կոմիտեի մասով կանխատեսվել են փորձագիտական գնահատականով ներկայացված 1,345.0 մլն դրամի չափով:

Գյուտերի, արդյունաբերական դիզայնների, բույսերի սորտերի, ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների, երաշխավորված ավանդական արտադրանքի, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2025 թվականի մուտքերը կանխատեսվել են 413.7 մլն դրամ:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2025 թվականի մուտքերը կանխատեսվել են 4,366.4 մլն դրամի չափով:

Լիցենզավորման ենթակա կամ թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2025 թվականի մուտքերը կանխատեսվել են 34,581.1 մլն դրամի չափով: Այս խմբի պետական տուրքերի 2025 թվականի մուտքերի գերակշիռ մասը նախատեսվում է գանձել վիճակախաղերի, շահումներով խաղերի, բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների, պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների, ինչպես նաև բանկային, մաքսային, տրանսպորտի և քաղաքաշինության բնագավառներում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար վճարվելիք պետական տուրքերի հաշվին: Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով կանխատեսումներն իրականացվել են ելնելով օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ առկա քանակական տվյալներից, 2023 թվականի փաստացի և 2024 թվականի սպասողական մուտքերից:

Այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2025 թվականի մուտքերը կանխատեսվել են 24,297.9 մլն դրամի չափով: Նշված պետական տուրքերից 2025 թվականի բյուջետային մուտքերի գերակշռող մասը ապահովվելու է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրքի հաշվին: ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով

Ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրքի գծով 2025 թվականի մուտքերը կանխատեսվել են 19,400.0 մլն դրամի չափով:

Պաշտոնական դրամաշնորհներ

Պաշտոնական դրամաշնորհները 2025 թվականի համար ծրագրվել են՝ հաշվի առնելով առկա պայմանագրերը, դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունները և Եվրամիությունից ակնկալվող դրամաշնորհների դեպքում՝ սպասումները:

Աղյուսակ 7. 2021-2025թթ. փաստացի/կանխատեսումային պաշտոնական դրամաշնորհները, մլրդ դրամ

| Պաշտոնական դրամաշնորհներ | Փաստ | | | Բյուջե | Ծրագիր |
|---|------|------|------|--------|--------|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
| Ընդամենը, այդ թվում՝ | 12.4 | 15 | 13.1 | 22.3 | 20.7 |
| ԵՄ (Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված դրամաշնորհային ծրագրեր) | 2.8 | 6.2 | 4.2 | 5 | 6.2 |
| Այլ նպատակային դրամաշնորհներ | 9.6 | 8.8 | 8.9 | 17.3 | 14.5 |

Եվրոպական հարևանության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի շրջանակներում նախատեսվում է դրամաշնորհների ստացում հետևյալ ծրագրերով.

«Աջակցություն Հայաստանում դատական ոլորտի բարեփոխումների իրականացմանը. Փուլ II»՝ 5.5 մլն եվրո կամ 2.3 մլրդ դրամ,

«Հայաստանում ԵՄ աջակցություն կրթությանը»՝ 9.3 մլն եվրո կամ 4 մլրդ դրամ:

Նպատակային օժանդակություն պաշտոնական դրամաշնորհային (կապակցված դրամաշնորհներ) ծրագրերից նախատեսվում է 37.5 մլն ԱՄՆ դոլարի կամ 14.5 մլրդ դրամի ստացում: Նպատակային պաշտոնական դրամաշնորհային ծրագրերի գծով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի ցուցանիշների մանրամասները ներկայացված են Օրենքի N 1 հավելվածի N 5 աղյուսակում:

ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Այլ եկամուտները ներառում են բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները, իրավաբանական անձանց կապիտալում կատարված

ներդրումներից ստացվող շահաբաժինները, պետական ձեռնարկությունների գույքի օգտագործման վճարները, պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարները (տոկոսավճարները), իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ստացվող մուտքերը, պետական մարմինների կողմից ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից մուտքերը և այլ եկամուտները:

Այլ եկամուտների գծով մուտքերը 2025 թվականի համար համար ծրագրվել են 96.6 մլրդ դրամի չափով, հաշվի առնելով գանձման համար պատասխանատու պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ 2025 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում համապատասխան հայտերով ներկայացված կանխատեսումները, կատարված օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև առանձին եկամտատեսակների գծով նախորդ տարիներին արձանագրված միտումները:

Այլ եկամուտների գծով կանխատեսումային ցուցանիշների ընդհանուր պատկերն ըստ եկամտի հիմնական աղբյուրների հետևյալն է.

Աղյուսակ 8. Այլ եկամուտների կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2021-2025թթ փաստացի/կանխատեսումային ցուցանիշները, մլրդ դրամ

| Այլ եկամուտներ | Փաստ | | | Բյուջե | Ծրագիր |
|--|------|-------|-------|--------|--------|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
| Ընդամենը | 84.6 | 122.1 | 123.7 | 87.7 | 96.6 |
| 1. Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ | 1.2 | 3.8 | 3.6 | 5.1 | 5.4 |
| 2. Տոկոսավճարների և շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտներ | 30.3 | 40.0 | 52.3 | 22.3 | 32.0 |
| 3. Պետության տված վարկերի օգտագործման դիմաց վճարներ | 11.6 | 11.7 | 12.4 | 13.0 | 13.3 |
| 4. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր | 16.4 | 19.5 | 25.1 | 21.4 | 22.3 |
| 5. Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներ, | 21.3 | 22.7 | 24.3 | 21.1 | 20.8 |
| 6. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ | 3.8 | 24.4 | 6.0 | 4.7 | 2.7 |

Ստորև ներկայացվում են 2025 թվականի այլ եկամուտների գծով կանխատեսվող մուտքերի հաշվարկներում կիրառված մեթոդաբանության համառոտ նկարագրությունը:

Պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները 2025 թվականի համար

կանխատեսվում են շուրջ 5,444.8 մլն դրամ, 2024 թվականի համար ծրագրված 5,136.3 մլն դրամի և 2023 թվականին փաստացի ստացված 3,551.4 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հիմք են ընդունվել պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկությունները վարձակալական պայմանագրերի համաձայն 2025 թվականներին վճարվելիք վարձավճարների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան բյուջետային փաստացի մուտքերի գծով գանձապետական տվյալները:

Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում գանձապետական միասնական հաշվի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներից, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2025 թվականին ակնկալվում են 32,025.1 մլն դրամի չափով մուտքեր: Մասնավորապես.

Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներից գծով մուտքերը 2025 թվականի համար ծրագրվել են 28,600.0 մլն դրամ՝ 2024 թվականի համար ծրագրված 19,900.0 մլն դրամի և 2023 թվականի փաստացի ստացված 50,065.8 մլն դրամի դիմաց: 2025 թվականի մուտքերն ապահովվելու են հիմնականում ի հաշիվ ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցները ՀՀ ԿԲ-ում ավանդադնելու դիմաց ՀՀ ԿԲ-ի և ՀՀ ՖՆ միջև կնքված «Հաշվի սպասարկման մասին» պայմանագրի հիման վրա վճարվելիք տոկոսավճարների:

Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2025 թվականին ակնկալվում են 3,425.1 մլն դրամի չափով մուտքեր՝ 2024 թվականի համար ծրագրված 2,427.2 մլն դրամի և 2023 թվականին փաստացի ստացված 2,271.5 մլն դրամի դիմաց: Շահաբաժիններից գծով 2025 թվականի կանխատեսվող մուտքերը ծրագրելիս հաշվի է առնվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն պետական մասնակցության դիմաց պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների հաշվարկման բազայի 50%-ի չափով պետական բյուջե կատարվելիք մասհանումների սահմանումը:

Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները 2025 թվականին կանխատեսվում են 13,307.6 մլն դրամի չափով:

Մասնավորապես՝

ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործումից 2025 թվականին ակնկալվում է ստանալ 13,298.6 մլն դրամ՝ 2024 թվականի համար ծրագրված 12,951.6 մլն դրամի և 2023 թվականին փաստացի ստացված 12,417.5 մլն դրամի դիմաց: Այն ծրագրվել է՝ հաշվի առնելով համապատասխան պայմանագրերով նախատեսված դրույթները: Մասնավորա-

պես, 2025 թվականին տոկոսավճարների գծով մուտքերն ապահովվելու են ի հաշիվ «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր», «Հայկական ատոմակայան» ՓԲԸ-ներին, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին, «Հայ-Ալմաստ» ՓԲԸ-ին, «Դի ընդ Էյջ Գրուպ» ՍՊԸ-ին և այլ կազմակերպություններին տրամադրված վարկերի դիմաց հաշվարկված տոկոսավճարների:

Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի գծով 2025 թվականի բյուջետային մուտքերը կգոյանան Վրաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի սպասարկման տոկոսավճարներից, որոնք կկազմեն 23.2 հազ. ԱՄՆ դոլար կամ շուրջ 9 մլն դրամ՝ 2024 թվականի համար ծրագրված 21.3 մլն դրամի և 2023 թվականին փաստացի ստացված 30.9 մլն դրամի դիմաց:

Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից 2025 թվականի մուտքերը գնահատվել են 22,336.0 մլն դրամի չափով՝ 2024 թվականի համար ծրագրված 21,411.7 մլն դրամի և 2023 թվականին փաստացի ստացված 25,119.1 մլն դրամի դիմաց: Կանխատեսումները կատարված են ըստ համապատասխան իրավական հիմքով վարչական պատժամիջոց կիրառող պետական կառավարման մարմինների՝ հաշվի առնելով պատժամիջոցների գծով 2021-2025 թվականների մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև այս բնագավառում իրականացված օրենսդրական փոփոխությունները:

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտների գծով 2025 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 20,798.7 մլն դրամի չափով՝ 2024 թվականի համար ծրագրված 21,097.3 մլն դրամի և 2023 թվականին փաստացի ստացված 24,329.6 մլն դրամի դիմաց: Կանխատեսումները կատարվել են պետական կառավարման մարմիններից ստացված հայտերի և 2021-2025 թվականների մուտքերի հավաքագրման միտումների հիման վրա:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով 2025 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 2,694.5 մլն դրամի չափով՝ 2024 թվականի համար ծրագրված 4,730.6 մլն դրամի և 2023 թվականին փաստացի ստացված 5,810.3 մլն (այդ թվում՝ «Այլ կատեգորիաներում չդասակարգված ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածի գումարը) դրամի դիմաց: Այն կանխատեսվել է՝ ելնելով նախորդ տարիների փաստացի մուտքերի միտումներից:

ՄԱՍ II-Գ. ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ


ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2025 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 24.9 %: Նույն ժամանակահատվածում ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերի հարաբերակցությունները ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 6.7%:

Աղյուսակ 9. 2021-2025թթ ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները, մլրդ դրամ

| Ցուցանիշներ | Փաստ | | | Բյուջե | Ծրագիր |
|---|----------------|----------------|----------------|----------------|----------------|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
| Ընդամենը ծախսեր | 2,004.3 | 2,242.6 | 2,547.6 | 3,206.5 | 3,441.6 |
| Ընթացիկ ծախսեր | 1,788.0 | 1,862.2 | 2,075.1 | 2,511.2 | 2,706.8 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 25.6 | 21.9 | 21.8 | 23.9 | 24.9 |
| Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր ²¹ | 216.3 | 380.4 | 472.6 | 695.3 | 734.8 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 3.1 | 4.5 | 5.0 | 6.6 | 6.7 |

Գծապատկեր 2. 2021-2025թթ . ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների փոփոխության և հարաբերակցության միտումները, մլրդ դրամ




2025 թվականի ծախսերի ընդհանուր ծավալի միջին տարեկանի շուրջ 78.6%-ը կկազմեն ընթացիկ ծախսերը, (2024 թվականին այդ ցուցանիշը ծրագրվել է 78.3%):

²¹ Ոչ ֆինանսական ակտիվների գծով 2025թ ծախսերում ներառված են նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր՝ 15.0 մլրդ դրամ, իսկ ՀՀ 2021-2024թթ. պետական բյուջեով համապարասխանաբար՝ 2.1 մլրդ դրամ, 8.7 մլրդ դրամ, 21.8 մլրդ դրամ և 15 մլրդ դրամ:

Դիտարկվող ժամանակահատվածում ընթացիկ ծախսերն ուղղված կլինի ծառայությունների մատուցման, տրանսֆերտների տրամադրման, ֆինանսավորման ծախսերի իրականացման և հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների հետ կապված միջոցառումներին:

2024թ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ ներկայացված է ստորև:

Գծապատկեր 3. 2021-2025թթ . ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ, %



2025թ. պետական բյուջեից աշխատավարձերին ուղղվող ծախսերը կկազմի ավելի քան 261 մլրդ դրամ կամ 2024թ. հաստատված բյուջեից ավել 8.6 տոկոսով կամ 20.8 մլրդ դրամով: 2025թ. տոկոսավճարների գծով ծախսը կազմում է 394.1 մլրդ դրամ: 2025թ. պետական բյուջեից կազմակերպություններին նախատեսվում է տրամադրել 193 մլրդ դրամի սուբսիդիաներ, որը 2024 թվականի հաստատված բյուջեի համեմատ սուբսիդիաների գծով ծախսն ավել է կանխատեսվել 4.3 տոկոսով կամ 8.0 մլրդ դրամով:

2025թ. ընթացիկ ծախսերի աճը մեծապես ապահովվելու է սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարների գծով պետական բյուջեի ծախսերի (1,092.2 մլրդ դրամ) ավելացման հաշվին, որոնք 2024 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ ավելացել է 24.3 տոկոսով կամ 213.8 մլրդ դրամով:

2025թ պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել դրամաշնորհներ՝ 332.5 մլրդ դրամ 2024 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ համապատասխանաբար 13.1 տոկոսով կամ 38.5 մլրդ դրամով ավել:


2025թ պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել ծառայությունների, ապրանքների ձեռքբերման և այլ ծախսերի գծով 434 մլրդ դրամ, որը 2024 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ համապատասխանաբար 26.5 տոկոսով կամ 156.5 մլրդ դրամով պակաս:

Աղյուսակ 10. 2021-2025թթ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

| Ցուցանիշներ | Փաստ | | | Բյուջե | Ծրագիր |
|---|---------|---------|---------|---------|---------|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
| Ընթացիկ ծախսեր | 1,788.0 | 1,862.2 | 2,075.1 | 2,511.2 | 2,706.8 |
| 1. Աշխատանքի վարձատրություն | 181.4 | 194.1 | 218.0 | 240.5 | 261 |
| 2. Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում | 198.5 | 205.3 | 191.1 | 203.8 | 94.8 |
| 3. Տոկոսավճարներ | 180.8 | 198.3 | 253.4 | 345.1 | 394.1 |
| 4. Սուբսիդիաներ | 136.8 | 150.5 | 164.0 | 184.9 | 193.0 |
| 5. Դրամաշնորհներ | 204.7 | 238.6 | 281.0 | 293.3 | 332.5 |
| 6. Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 621.2 | 613.1 | 710.2 | 878.5 | 1,092.2 |
| 7. Այլ ծախսեր | 264.6 | 262.4 | 257.2 | 365.0 | 339.2 |

2025 թվականի ծախսերի ընդհանուր ծավալի 21.4 %-ը կկազմեն ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, (2024 թվականին այդ ցուցանիշը ծրագրվել է 21.7%):

Գծապատկեր 4. 2021-2025թթ . ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը



2025 թվականի ընթացքում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքում արձանագրվում է ներքին աղբյուրների ծավալի նվազում, իսկ արտաքին աղբյուրների ծավալները ավելացում:


Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի իրականացման գերակայությունները հանդիսանալու են ինչպես ենթակառուցվածքային, այնպես էլ սոցիալական ոլորտներում ներդրումները:

Աղյուսակ 11. Աղյուսակ 10. 2020-2025թթ. ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը ըստ արտաքին և ներքին աղբյուրների, մլրդ դրամ

| Ցուցանիշներ | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
|---|-------|-------|-------|-------|-------|
| Ընդամենը | 218.4 | 389.1 | 494.3 | 710.3 | 749.8 |
| արտաքին աղբյուրներ | 80.5 | 54.0 | 73.4 | 122.2 | 204.2 |
| ներքին աղբյուրներ | 137.8 | 282.3 | 422.0 | 588.1 | 545.6 |
| Տրանսպորտ, այդ թվում | 58.8 | 99.5 | 96.5 | 114.6 | 97.3 |
| արտաքին աղբյուրներ | 24.7 | 14.8 | 27.0 | 43.1 | 25.3 |
| ներքին աղբյուրներ | 34.1 | 47.1 | 69.5 | 71.5 | 72 |
| Էներգետիկա, այդ թվում | 1.2 | 1.1 | 1.1 | 3.9 | 4 |
| արտաքին աղբյուրներ | 1.2 | 1.1 | 1.8 | 3.9 | 4 |
| ներքին աղբյուրներ | 0.0 | 0.0 | 0.4 | 0.0 | 0 |
| Շրջակա միջավայր և գյուղատնտեսություն | 7.3 | 5.8 | 2.7 | 1.2 | 1.7 |
| արտաքին աղբյուրներ | 6.8 | 5.2 | 0.5 | 0.0 | 0 |
| ներքին աղբյուրներ | 0.5 | 0.6 | 2.2 | 1.2 | 1.7 |
| Զրային տնտեսություն | 20.2 | 34.7 | 17.8 | 31.5 | 30.4 |
| արտաքին աղբյուրներ | 18.5 | 10.2 | 13.1 | 23.5 | 19 |
| ներքին աղբյուրներ | 1.7 | 9.2 | 4.7 | 8.0 | 11.4 |
| Առողջապահություն | 1.0 | 7.2 | 7.5 | 11.1 | 12.7 |
| արտաքին աղբյուրներ | 1.0 | 7.2 | 3.0 | 0.0 | 0.5 |
| ներքին աղբյուրներ | 0.0 | 0.0 | 4.5 | 11.1 | 12.2 |
| Կրթություն, գիտություն մշակույթ և սպորտ | 10.0 | 33.3 | 29.6 | 128.9 | 125.1 |
| արտաքին աղբյուրներ | 8.5 | 9.0 | 14.2 | 14.2 | 14.2 |
| ներքին աղբյուրներ | 1.4 | 24.4 | 15.4 | 114.7 | 110.9 |
| Սոցիալական | 2.5 | 2.9 | 1.4 | 1.9 | 2.1 |
| արտաքին աղբյուրներ | 1.2 | 2.6 | 1.3 | 0.8 | 0 |
| ներքին աղբյուրներ | 1.3 | 0.3 | 0.1 | 1.1 | 2.1 |
| Ուժային | 88.7 | 131.3 | 296.1 | 297.3 | 417.5 |
| արտաքին աղբյուրներ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 116.2 |
| ներքին աղբյուրներ | 88.7 | 131.3 | 296.1 | 297.3 | 301.3 |
| Այլ | 28.7 | 73.3 | 41.6 | 119.9 | 59.0 |
| արտաքին աղբյուրներ | 18.6 | 3.9 | 12.5 | 36.7 | 25.0 |
| ներքին աղբյուրներ | 10.1 | 69.4 | 29.1 | 83.2 | 34.0 |

2021-2025թթ. ժամանակահատվածում նկատելի է նախորդ տարվա համեմատությամբ պետական բյուջեի ընդամենը ծախսերի աճը՝ 2022թ թվականին՝ 2021 թվականի համեմատ 238.3 մլրդ. ՀՀ դրամի, 2023 թվականին՝ 2022-ի համեմատ՝ 305.0 մլրդ. ՀՀ դրամի չափով: Բացառություն չէ նաև 2024թ. պետական բյուջեն, որը նախորդ՝ 2023 թվականի համեմատ հաստատվել է ծախսերի 658.9 մլրդ. ՀՀ դրամ ավել չափով: Ծախսերի աճման միտումը պահպանվելու է 2025 թվականին նույնպես քան նախորդ հաստատված՝ 2024 թվականի բյուջետային ծախսերի չափաքանակներն են՝ շուրջ 235.1 մլրդ ՀՀ դրամի չափով:

Գծապատկեր 5. 2021-2024թթ. ծախսերի համեմատականը




ՀՀ 2021-2025 թվականների պետական բյուջեների ծախսեր՝ ըստ ոլորտների բնութագրվում են ստորև ներկայացված աղյուսակի ցուցանիշներով:

Աղյուսակ 12. ՀՀ 2021-2025թթ. պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների (մլրդ դրամ)

| Ցուցանիշ | Փաստ | | | Բյուջե | Ծրագիր |
|--|----------------|----------------|----------------|----------------|----------------|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
| Ընդամենը | 2,004.3 | 2,242.6 | 2,547.6 | 3,206.5 | 3,441.6 |
| <ՆԱ-ի նկատմամբ (%) | 28.7 | 26.4 | 26.8 | 30.5 | 31.6 |
| 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 397.1 | 430.1 | 513.1 | 678.9 | 777.9 |
| <ՆԱ-ի նկատմամբ (%) | 5.7 | 5.1 | 5.4 | 6.7 | 7.1 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 19.8 | 19.2 | 20.1 | 21.2 | 22.6 |
| 2. Պահուստային ֆոնդեր | 3.9 | 68.4 | 36.2 | 155.9 | 64.9 |
| <ՆԱ-ի նկատմամբ (%) | 0.1 | 0.8 | 0.4 | 1.5 | 0.6 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 0.2 | 3.1 | 1.4 | 4.9 | 1.9 |

| | | | | | |
|---|-------|-------|---------|---------|---------|
| 2. Պաշտպանություն, հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն | 496.0 | 677.3 | 733.4 | 780.5 | 915.4 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 7.1 | 8.0 | 7.7 | 7.4 | 8.4 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 24.7 | 30.2 | 28.8 | 24.3 | 26.6 |
| 3. Տնտեսական ոլորտ | 167.3 | 192.1 | 217.8 | 296.0 | 262.5 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 2.4 | 2.3 | 2.3 | 2.8 | 2.4 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 8.3 | 8.6 | 8.5 | 9.2 | 7.6 |
| 4. Սոցիալական ոլորտ | 960.0 | 965.8 | 1,073.9 | 1,295.2 | 1,420.9 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 13.7 | 11.4 | 11.3 | 12.3 | 13.0 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 47.9 | 43.1 | 42.2 | 40.4 | 41.3 |

ՀՀ 2021-2025 թվականների պետական բյուջեի ծախսերն ըստ ոլորտների ունեն հետևյալ գրաֆիկական տեսքը.



2021-2024թթ. պետական բյուջեի ընդամենը ծախսերում գերակայել են սոցիալական բնույթի ծախսերը (կրթություն, սոցիալական պաշտպանություն, առողջապահություն և այլն) միջինում 41.3%, պաշտպանության, հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեությանն՝ միջինում 26.6%, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների՝ միջինում 22.6%, հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդերի՝ միջինում 1.9%, տնտեսական ոլորտի՝ միջինում 7.6% ֆինանսավորումը: Այս միտումը կշանունակվի նաև 2025 թվականին:

2025թ. ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների և պահուստային ֆոնդերի ոլորտին ուղղվելիք միջոցները նախատեսվել են շուրջ 8.0 մլրդ. դրամով ավել՝ համեմատած 2024 թվականի հետ:

2025թ. պետական բյուջեով նախատեսվում է նաև պաշտպանության, հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության ոլորտին հատկացվելիք միջոցների աճ՝ 2024 թվականի համեմատ շուրջ 134.9 մլրդ. դրամի չափով, որը հիմնականում ուղղվելու է ռազմական պաշտպանության, հասարակական կարգի և անվտանգության, ազգային անվտանգության, դատական գործունեություն և իրավական պաշտպանության ապահովմանը:

2025 թվականին, ինչպես և 2023 թվականին, տնտեսության ճյուղերի պետական ֆինանսավորումը նպատակաուղղված է լինելու ենթակառուցվածքների, տնտեսության իրական հատվածի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերական, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող՝ արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսության կառուցմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: 2025 թվականին տնտեսության ոլորտի հատկացումներն ուղղվելու են ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով սահմանված տնտեսության մրցունակության և արտադրողականության աճի, տնտեսական հնարավորությունների ընդլայնման և դրանց հավասար հասանելիության ապահովմանը:

Աղյուսակ 13. Տնտեսական ոլորտի 2021-2025թթ. բյուջետային ծախսերը (մլրդ. դրամ)

| Ցուցանիշներ | Փաստ | | | Բյուջե | Ծրագիր |
|---|-------|-------|-------|--------|--------|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
| Տնտեսական ոլորտ ընդամենը | 167.3 | 192.1 | 217.8 | 296.0 | 262.5 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 2.4 | 2.3 | 2.3 | 2.8 | 2.4 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 8.3 | 8.6 | 8.5 | 9.2 | 7.6 |
| 1. Տնտեսական հարաբերություններ | 151.8 | 175.8 | 199.2 | 266.0 | 229.9 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 2.2 | 2.1 | 2.1 | 2.5 | 2.1 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 7.6 | 7.8 | 7.8 | 8.3 | 6.7 |
| 2. Շրջակա միջավայրի պաշտպանություն | 6.0 | 6.8 | 7.7 | 11.0 | 15.8 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.2 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 0.3 | 0.3 | 0.3 | 0.3 | 0.5 |
| 3. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ | 9.5 | 9.5 | 10.9 | 19.0 | 16.8 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.1 | 0.1 | 0.1 | 0.2 | 0.2 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 0.5 | 0.4 | 0.4 | 0.6 | 0.5 |

Սոցիալական ոլորտի խմբում 2021-2024 թվականներին առանցքային են եղել և 2025 շարունակվելու են կարևորվել հատկապես սոցիալական ապահովության, կրթության և առողջապահության բնագավառների զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացումը:

Աղյուսակ 14. Սոցիալական ոլորտի 2021-2025թթ. բյուջետային ծախսերը (մլրդ դրամ)

| Ցուցանիշներ | Փաստ | | | Բյուջե | Ծրագիր |
|-------------------------------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
| Սոցիալական ոլորտ ընդամենը | 960.0 | 965.8 | 1,073.9 | 1,295.2 | 1,420.9 |
| <ՆԱ-ի նկատմամբ (%) | 13.7 | 11.4 | 11.3 | 12.3 | 13.0 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 47.9 | 43.1 | 42.2 | 40.4 | 41.3 |
| 1. Կրթություն | 149.1 | 165.4 | 183.6 | 290.7 | 299.7 |
| <ՆԱ-ի նկատմամբ (%) | 2.1 | 1.9 | 1.9 | 2.8 | 2.8 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 7.4 | 7.4 | 7.2 | 9.1 | 8.7 |
| 2. Սոցիալական պաշտպանություն | 620.0 | 614.5 | 705.8 | 794.5 | 905.6 |
| <ՆԱ-ի նկատմամբ (%) | 8.9 | 7.2 | 7.4 | 7.6 | 8.3 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 30.9 | 27.4 | 27.7 | 24.8 | 26.3 |
| 3. Առողջապահություն | 160.5 | 142.2 | 141.3 | 169.9 | 168.1 |
| <ՆԱ-ի նկատմամբ (%) | 2.3 | 1.7 | 1.5 | 1.6 | 1.5 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 8.0 | 6.3 | 5.5 | 5.3 | 4.9 |
| 4. Հանգիստ, մշակույթ և կրոն | 30.4 | 43.9 | 43.3 | 40.2 | 47.4 |
| <ՆԱ-ի նկատմամբ (%) | 0.4 | 0.5 | 0.5 | 0.4 | 0.4 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 1.5 | 2.0 | 1.7 | 1.3 | 1.4 |

2021-2025թթ. ժամանակահատվածում կրթության և առողջապահության ոլորտների ֆինանսավորումը <ՆԱ նկատմամբ փոփոխական բնույթ է կրել:

Միաժամանակ, համաձայն ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի առաջնահերթությունների, առողջապահության ոլորտի ֆինանսավորումը 2025 թվականին ուղղվելու է նաև առողջապահական կազմակերպությունների շենքային և նյութատեխնիկական պայմանների բարելավման աշխատանքների իրականացմանը:

Սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորումն աճողական բնույթ է կրել՝ առաջնահերթ ուղղվելու է ժողովրդագրական վիճակի բարելավմանը, ինչպես նաև զբաղվածության ծրագրերին, բնակարային ապահովման, ընտանեկան նպաստների տրամադրման և այլ սոցիալական ծառայությունների ապահովմանը: Բացի այդ, ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով սահմանված առաջնահերթություններից ելնելով, ոլորտի հատկացումները ուղղվելու են ծնելիության խթանմանը և բազմազավակ ընտանիքներին պետական աջակցության ցուցաբերմանը:

2025 թվականի ընթացքում պետական բյուջեների ծախսերի ընդհանուր ծավալը որոշ կախվածության մեջ կլինի նաև արտաքին հոսքերից:

Աղյուսակ 15. Արտաքին աղբյուրներից 2025թ. ստացվելիք միջոցների (վարկերի և պաշտոնական դրամաշնորհներ) հաշվին ֆինանսավորվող ծախսերը

| Ցուցանիշներ | Փաստ | | | Բյուջե | Ծրագիր |
|--|------|------|------|--------|--------|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
| Արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվող ծախսերի ծավալը (մլն դրամ) | 81.1 | 57.1 | 65.1 | 103.8 | 195 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 1.2 | 0.7 | 0.7 | 1.0 | 1.8 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 4.0 | 2.5 | 2.6 | 3.2 | 5.7 |
| 1. Վարկային ծրագրերի և միջոցառումներ | 73.6 | 46.9 | 56.2 | 86.5 | 180.5 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 1.1 | 0.6 | 0.6 | 0.8 | 1.7 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 3.7 | 2.1 | 2.2 | 2.7 | 5.2 |
| 2. Դրամաշնորհային ծրագրերի և միջոցառումներ | 7.6 | 10.2 | 8.9 | 17.3 | 14.5 |
| ՀՆԱ-ի նկատմամբ (%) | 0.1 | 0.1 | 0.1 | 0.2 | 0.1 |
| Ընդհանուր ծախսերում (%) | 0.4 | 0.5 | 0.3 | 0.5 | 0.4 |

Արտաքին աղբյուրներից վարկերի և պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվելիք միջոցների հաշվին 2025 թվականին ֆինանսավորվող ծախսերի տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 5.7% և ՀՆԱ-ի նկատմամբ՝ 1.8%:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության համար 2025թ. նախատեսվել են տարբեր օժանդակության ծրագրեր, այդ թվում.

- Կրթության ոլորտի գծով՝ 1,263.1 մլն դրամի չափով, որից՝ 1,060.3 մլն դրամը՝ ՀՀ-ում կրթություն ստացող ուսանողների ուսման վարձի փոխհատուցման նպատակով, 202.8 մլն դրամը՝ ուսուցիչների օժանդակության ծրագրի գծով:
- Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի գծով՝ 42,067.5 մլն դրամի չափով, այդ թվում.
- «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին օժանդակելու համար աջակցություն» միջոցառման գծով - 35,000.0 մլն դրամ,
- «Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության տրամադրում» միջոցառման գծով - 7,067.5 մլն դրամ:
- Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածները ընդգրկված են նաև «Կենսաթոշակային ապահովություն», «Ժողովրդագրական վիճակի բարելավում», «Սոցիալական աջակցություն»

անաշխատունակության դեպքում», «Անապահով սոցիալական խմբերին աջակցություն», «Զբաղվածության» ծրագրերում և սոցիալական ոլորտի մի շարք այլ միջոցառումներում:

ՀՀ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՋԵՏԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՐԱՄԱՊԵՏՈՒՄՆԵՐԸ

2025 թվականի պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել հատկացումներ ՀՀ համայնքներին, որը կազմել է շուրջ 176.1 մլրդ դրամ (2024 թվականին այն կազմել է՝ շուրջ 160.3 մլրդ դրամ) կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 5.1 և ՀՆԱ-ի 1.6 տոկոսը:

Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրման նպատակով 2025 թվականին նախատեսվում է տրամադրել շուրջ 98.2 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 2.9 և ՀՆԱ-ի 0.9 տոկոսը:

2025 թվականի պետական բյուջեից նախատեսվում է համայնքներին տրամադրել սուբվենցիաներ՝ շուրջ 20.9 մլրդ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 0.6 և ՀՆԱ-ի 0.2 տոկոսը:

Պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման գծով համայնքներին 2025 թվականի պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել՝ շուրջ 57.0 մլրդ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 1.7 և ՀՆԱ-ի 0.5 տոկոսը:

Աղյուսակ 16. ՀՀ պետական բյուջեից ՀՀ համայնքների բյուջեներին տրվող հատկացումները, մլրդ դրամ

| Ցուցանիշներ | Փաստ | | | Բյուջե | Ծրագիր |
|---|-------|-------|-------|--------|--------|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 115.4 | 120.2 | 151.9 | 160.3 | 176.1 |
| Ֆինանսական համահարթեցման դոտացիաներ | 64.6 | 64.3 | 69.8 | 85.3 | 98.2 |
| Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին | 0.0 | 0.0 | 0.2 | 5.7 | 0 |
| Սուբվենցիաներ համայնքներին | 21.0 | 27.0 | 39.5 | 25.3 | 20.9 |
| ընթացիկ սուբվենցիաներ | 7.1 | 7.5 | 7.7 | 1.0 | 1.0 |
| կապիտալ սուբվենցիաներ | 13.9 | 19.5 | 31.8 | 24.3 | 19.9 |
| Պատվիրակված լիազորությունների ֆինանսավորում | 29.8 | 28.9 | 42.5 | 44.0 | 57.0 |

2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՋԵՏԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ կառավարության ծրագրին համապատասխան ծախսային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից միջնաժամկետ ժամանակահատվածում կարևորվում է հանրային ֆինանսների նպատակային, խնայողաբար և աղյուսավետ օգտագործումը, ինչի արդյունքում ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում աստիճանաբար հնարավորության սահմաններում կմեծանա մարդկային կապիտալին և ենթակառուցվածքներին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը:

2025թ. բյուջեի 6-րդ հավելվածով ներկայացվել են ծախսային առաջնահերթությունները՝ 135.4 մլրդ դրամի չափով:

ԲԳԿ-ների կողմից ներկայացված առաջնահերթությունները 2025թ. բյուջեում լրացուցիչ ֆինանսական միջոցների առկայության պայմաններում (Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման բարենպաստ միջավայրի և այլ գործոններով պայմանավորված), ինչպես նաև 2025թ ընթացքում բյուջեով նախատեսված ծախսերի կրճատման, ծախսային ուղղությունների գծով հնարավոր գերակայությունների (առաջնահերթությունների) փոփոխման արդյունքում վերաբաշխումների (փոխատեղումների), խնայողությունների առկայության, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի դեֆիցիտի սահմանաչափի ավելացման պարագայում վերջիններիս ֆինանսավորումը պետք է իրականացվեն առաջնահերթ կարգով՝ կապիտալ ծախսերի դեպքում հիմք ընդունելով համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա այդ աշխատանքների արժեքների ճշգրտումները:

Առաջնահերթություններում կարևորվում է նաև կապիտալ ծրագրերի դերը, որոնք իրենց ուրույն տեղն են գտել նաև ՊՖԿՀ բարեփոխումների ռազմավարությունում, որտեղ «Հանրային ներդրումների կառավարման» համակարգի ներդրումը դիտվում է որպես կապիտալ ծրագրերի գնահատման, առաջնահերթությունների որոշման և ֆինանսավորման համար անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկման առանցքային գործիքակազմի բաղադրիչներից մեկը: Այս միջոցառման իրականացումը ապագայում կնպաստի կապիտալ ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացմանը՝ խթանելով երկարաժամկետ տնտեսական աճի արագացումը:

ՄԱՍ II-Դ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Ոլորտը ներառում է Սահմանադրությամբ և օրենքով ստեղծված պետական մարմինների պահպանմանն ուղղված բյուջետային ծրագրերի ու միջոցառումների շրջանակը, որն ընդգրկում է պետական իշխանության մարմինների (օրենսդիր, գործադիր և դատական), Սահմանադրությամբ և օրենքով ստեղծված ինքնավար և անկախ մարմինների ընթացիկ պահպանումը և տեխնիկական միջոցներով ապահովումը:

Պետական իշխանության մարմինների (բացառությամբ ուժային մարմինների) պահպանման ծախսերի ընդհանուր գումարը ՀՀ 2025 թվականի պետական բյուջեում ծրագրավորված է 164,790.6 մլն դրամի չափով, որը 2023 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2024 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների նկատմամբ կազմում է համապատասխանաբար 109.0 և 101.7 տոկոս: Նշված ցուցանիշների համեմատությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2 աղյուսակում:

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեում ծրագրավորված պետական իշխանության մարմինների պահպանման ընթացիկ ծախսերը նախատեսվել են 161,836.9 մլն դրամի չափով, իսկ ոչ ֆինանսական (կապիտալ) ակտիվների գծով ծախսերը նախատեսվել են 2,953.6 մլն դրամի չափով՝ առանձին պետական մարմիններում տեխնիկական կարողությունների զարգացման նպատակով:

Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերը ծրագրավորելիս դիտարկվում է Կառավարության ծրագրով նախանշված ուղղություններին և նպատակներին դրանց համապատասխանությունը, ինչպես նաև հաշվի են առնվում պետական կառավարման համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումները՝ համաձայն առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերի:

Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորման առանձնահատկությունները

Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերը ՀՀ 2025 թվականի պետական բյուջեում գլխավորապես ծրագրավորվել են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1064-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2025-2027 թվականների պետական ՄԺԾ ցուցանիշները, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, կատարվել են փոփոխություններ՝ պայմանավորված ՄԺԾ-ի ընդունումից հետո պահպանման ծախսերին առնչվող օրենսդրական և իրավական ակտերում կատարված փոփոխություններով, ինչպես նաև 2024 թվականի սեպտեմբերի 17-ին ՀՀ վարչապետի մոտ կայացած՝ 2025 թվականի

պետական բյուջեի նախագծի և հարկաբյուջետային շրջանակի մասին խորհրդակցության N Վ/123-2024 արձանագրության 3-րդ կետի 3-րդ ենթակետի ա) կետի համաձայն, ելնելով մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակներից, **վերանայվել են պետական բյուջեի նախագծի ծախսային շրջանակները և բոլոր մարմինների գծով (բացառությամբ ուժային և տեսչական մարմինների) նախատեսվել է 2025-2027թթ. ՄԺԾԾ-ի նկատմամբ նվազեցնել պահպանման ծախսերը օպտիմալացման միջոցով:**

2025 թվականին, ինչպես նախորդ տարի՝ հաշվի առնելով առանձին պաշտոն զբաղեցնող անձանց սահմանված պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելման կամ հավելավճարի բարձր տոկոսը, համապատասխան մարմինների պահպանման ծախսերում պարզևատրման միջոցներ չեն նախատեսվել հետևյալ պաշտոն զբաղեցնող անձանց համար՝ Սահմանադրական դատարանի դատավորների, Բարձրագույն դատական խորհրդի անդամների, Վճռաբեկ, վերաքննիչ, ինչպես նաև առաջին ատյանի մասնագիտացված և ընդհանուր իրավասության դատարանների դատավորների, դատախազների, Քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց, Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող և օպերատիվ-հետախուզական գործառույթ իրականացնող անձանց համար:

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեում պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերը հաշվարկելիս հաշվի են առնվել կառուցվածքային և գործառույթային կարգավորումների արդյունքում ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատված համապատասխան մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակի փոփոխությունները:

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեում պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով 21320 հաստիքային միավորների քանակը, որը 2024 թվականի համեմատ ավելացել է 41 միավորով:

ՀՀ պետական իշխանության մարմինների (բացառությամբ ուժային մարմինների) աշխատողների թվաքանակի փոփոխությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2ա աղյուսակում:

ՀՀ առողջապահության նախարարության գծով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվում է հատկացնել 166,598.6 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Հանրային առողջության պահպանում ծրագրի գծով 2025թ. նախատեսվել է 7,361.1 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառումը և նվազեցումը, կառավարելի վարակիչ հիվանդությունների դեմ պայքարը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել թվով 580,142 հատ հետազոտություններ վարակիչ օջախների ախտահանման նպատակով՝ 60% ՀՀ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում վարակի հսկողության առանձին բաղադրիչների գնահատում, 99%-ով ապահովել համաճարակաբանական հետազոտության ենթակա հիվանդությունների օջախների ընդգրկվածությունը, 90%-ով բնական օջախների տարածքների կենդանամակաբուժական հետազոտություններով ընդգրկվածությունը: Պատվաստանյութերի արդյունավետ կառավարման նպատակով՝ ապահովել 1,272,073 դեղաչափ պատվաստանյութերի ստացումը՝ 890,000 պատվաստումներ իրականացնելու համար, հանրապետությունում արյան, արյան բաղադրամասերի և արյան պատրաստուկների անհրաժեշտ քանակության (100%) ապահովումը, իրականացնել 5 տեսակի առողջ ապրելակերպի խթանմանն ու ծխելու դեմ պայքարին ուղղված և 6 առողջ ապրելակերպի հանրային իրազեկման թեմատիկ միջոցառումներ:

Առողջության առաջնային պահպանում ծրագրի գծով նախատեսվել է 31,100.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է բնակչությանը մատչելի և որակյալ առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը, առողջության վատթարացման ռիսկի գործոնների վերհանումը և դրանց հնարավոր անբարենպաստ ազդեցության կանխարգելումը, որը ներառում է առողջության առաջնային պահպանման գծով կազմակերպություններում գրանցված 3,000,166 բնակչի՝ ընտանեկան բժշկի, ընդհանուր պրակտիկայի թերապևտի, ընդհանուր պրակտիկայի մանկաբույժի կողմից մատուցվող ծառայություններ՝ հավաքագրված բնակչության շրջանում հիվանդությունների կանխարգելումը, վաղ հայտնաբերումը, ախտորոշումը, բուժումը, քրոնիկ հիվանդների դինամիկ հսկողությունը (ներառյալ ակտիվ կանչերը), ժամանակավոր անաշխատունակության փորձաքննությունը, տնային կանչերի իրականացումը, ըստ ցուցումների, հիվանդների հոսպիտալացման կազմակերպումը, բնակչության բժշկահիգիենիկ կրթումը, թվով 941350 հղիների նախաձննդյան և հետձննդյան հսկողության ընթացքում իրականացվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ և հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ընթացքում

կատարված հետազոտությունները, հիպերտոնիկ հիվանդության և շաքարային դիաբետի վարման ընթացքում կատարվող թվով 28,400 հետազոտությունները, 35-68 տարեկան սոց անապահով անձանց թվով 110,000 կանխարգելիչ այցերը, ինչպես նաև ախտորոշման ճշտման նպատակով նեղ մասնագիտական կենտրոններում լաբորատոր-գործիքային 166,500 հետազոտությունները:

Դատաբժշկական և ախտաբանաանատոմիական ծառայություններ ծրագրի գծով նախատեսվել է 694.1 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է հանրապետության ուժային մարմինների որոշումների հիման վրա դատաբժշկական և գենետիկ փորձաքննությունների ապահովումը՝ մահերի պատճառների վերհանման նպատակով դիակների փորձաքննությունների միջոցով, ինչպես նաև պաթանատոմիական կանխորոշումների հիման վրա ախտորոշման և բուժման արդյունավետության բարձրացումը: Ծրագրի ակնկալվող արդյունքը մահերի պատճառների բացահայտումն է:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել դատաբժշկական և գենետիկ ծառայությունների գծով 48,800 փորձաքննություն և 530 ախտաբանաանատոմիական դիախերձումներ:

Դեղապահովում ծրագրի գծով նախատեսվել է 5,525.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակը դեղերի անվտանգության, արդյունավետության և որակի ապահովումն է, ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա կենսականորեն անհրաժեշտ դեղերի ֆինանսական և տնտեսական մատչելիության բարձրացումը: Ծրագրի շրջանակներում նախատեսված հատկացումներն ուղղվելու են ՀՀ կառավարության 2019թ.-ի մայիսի 30-ի N 642-Ն որոշմամբ սահմանված թվով 222,681 շահառուներին՝ պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրման համար՝ ապահովվելով 18 հիվանդության ծածկույթ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև թվով 167 հատ մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և բժշկական պարագաների բեռների ստացման, մաքսազերծման և պահպանման ծառայություններ, ինչպես նաև դեղերի թվով 52,500 փորձաքննությունների իրականացում:

Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ ծրագրի գծով նախատեսվել է 407.4 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է բժշկական օգնության կազմակերպման ու որակի բարձրացման կարգավորման մասնագիտական, խորհրդատվական, կազմակերպամեթոդական ապահովումը, համակարգի գործունեության արդյունքների գնահատումը, ինչպես նաև բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման միջոցով ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 250 հատ շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտային համակարգի ծառայություններ, 52 ուղեցույցների, գործելակարգերի, հաշվառման ձևերի, զեկույցների և այլ փաստաթղթերի մշակման ծառայություններ, 60 բժիշկ-մասնագետների ուղեգրումն ընդունած 20 մարզային

առողջապահական կազմակերպություններ, ինչպես նաև 1,200 բուժաշխատողների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ:

Մոր և մանկան առողջության պահպանում ծրագրի գծով նախատեսվել է 22,770.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է մոր և մանկան առողջության պահպանումը, կանանց և երեխաներին մատուցվող բժշկական ծառայությունների մատչելիության և որակի բարելավումը, որի արդյունքում ակնկալվում է մանկական և մայրական մահացության և հիվանդացության կրճատում, կանանց վերարտադրողական առողջության բարելավում:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններից օգտվելու 47,940 դեպք, 33,310 հատ ծնունդներ, 13,300 կեսարյան հատում, երեխաների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու 108,700 դեպք, մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և զարգացման այլ խանգարումներով երեխաների վերականգնողական բուժման գծով ծառայություններից օգտվելու 93,350 դեպք, 3,540 ամուսնական զույգերի տրամադրել վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններ, այդ թվում՝ իրականացնել 42,400 հատ հետազոտություններ, ինչպես նաև անցկացնել, 191,600 հատ բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկենտոնուրիայի և լսողության խանգարումների վաղ հայտնաբերման նպատակով նորածնային սքրինինգի հետազոտություններ:

Շտապ բժշկական օգնություն ծրագրի գծով նախատեսվել է 5,600.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է մարդու կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող վիճակներում որակյալ շտապ բժշկական օգնության ծառայությունների տրամադրումը, որի արդյունքում նախատեսվում է բարելավել շտապ օգնության համակարգի պատրաստվածությունը, արձագանքման արագությունը, հասանելիության և բժշկական օգնության ծառայությունների որակը:

Ծրագրի շրջանակներում նախատեսված է իրականացնել 599,500 հատ շտապ օգնության և 42 հատ օդային ճանապարհով սանիտարական ավիացիայի կանչեր:

Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում ծրագրի գծով նախատեսվել է 26,916.4 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ոչ վարակիչ հիվանդությունների (մասնավորապես՝ սիրտանոթային, շաքարային դիաբետի և չարորակ նորագոյացությունների) բուժման արդյունավետության բարձրացումը: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է նվազեցնել ոչ վարակիչ հիվանդություններով պայմանավորված հիվանդացությունը և մահացությունը:

Ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներից 2,756.4 մլն դրամ հատկացումներն ուղղվելու են առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրման նախապատրաստական միջոցառումներին, 198,000 հատ հեմոդիալիզի անցկացման սեանսներին, գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ ինսուլտի բուժման՝ 727 դեպքի, աորտայի շերտազատված անևրիզմայի վիրահատական բուժման՝ 747 դեպքի,

հիվանդանոցային պայմաններում արտահիվանդանոցային բժշկական օգնության (emergency)՝ 133,720 դեպքի, անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններից օգտվելու, այդ թվում սրտի վիրահատությունների 24,100 դեպքի, հոգեկան առողջության խնդիրներ և կախվածություն (թմրաբանական) ունեցող հիվանդների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու՝ 12,175 դեպքի, ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու՝ 43,520 դեպքի և 9,570 վիրաբուժական միջամտությունների, ինչպես նաև սրտի անհետաձգելի վիրահատությունների (ստենտ) գծով՝ 2,490 դեպքի իրականացմանը:

Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն ծրագրի գծով նախատեսվել է 47,689.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության հասանելիության և մատչելիության մակարդակի բարձրացումը, հիվանդանոցային որակյալ բժշկական օգնության ապահովումը:

Ծրագիրը հանդիսանում է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված շահառուների սոցիալական երաշխիքի առողջապահական բաղադրիչը և ապահովում է բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների, ԼԴ-ից տարիանված բնակչության, զինծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքի անդամների, պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների և թրաֆիքինգի զոհերի գծով բժշկական օգնության ծառայություններից օգտվելու 450,736 դեպքի, ինչպես նաև ստոմատոլոգիական բժշկական օգնության գծով 119,100 դեպքի, մարդու օրգանների փոխպատվաստման 25 դեպքի և ոսկրածուծի փոխպատվաստման 55 դեպքի իրականացումը:

Վարակիչ հիվանդությունների կանխարգելում ծրագիր գծով նախատեսվել է 3,018.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է վարակիչ և բնակչության համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների (մալարիա, տուբերկուլյոզ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ և այլն) վաղ հայտնաբերումը, արդյունավետ հակազդումը և բժշկական օգնության ապահովումը, որի իրականացման արդյունքում նախատեսվում է նվազեցնել վարակի փոխանցումը, վարակիչ հիվանդություններով պայմանավորված հիվանդացությունը և մահացությունը:

Ծրագրի շրջանակներում նախատեսված հատկացումներն ուղղվելու են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայությունների գծով 10,600 հետազոտությունների, 42,700 ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների դիսպանսերային հսկողության, տուբերկուլյոզի բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու 570 դեպքի, ինչպես նաև աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու 16,100 դեպքի իրականացմանը:

Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագիր:

Ծրագրի նպատակն է Առողջապահության համակարգի արդիականացումը և զարգացումը, վարակիչ և բնակչության համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների (մալարիա, տուբերկուլյոզ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ և այլն) վաղ հայտնաբերումը, արդյունավետ հակազդումը և բժշկական օգնության ապահովումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝ խորհրդատվական ծառայությունների մատուցում, սքրինինգային հետազոտությունների իրականացում, հանրապետության տարբեր մարզերում ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավում, նոր բժշկական կենտրոնների կառուցում, տուբերկուլյոզի բոլոր տեսակների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ախտորոշման հասանելիության բուժման մոնիթորինգի և կանխարգելման ապահովում, տուբերկուլյոզով հիվանդների սոցիալական և հոգեբանական օժանդակություն, հիվանդների ակտիվ հայտնաբերման միջոցառումներ, բուժման մոնիթորինգի, վարակի վերահսկման բարելավում, ներառյալ մեթադոնային փոխարինող բուժման իրականացում, որի արդյունքում նվազեցվում է վարակի փոխանցումը, վարակիչ հիվանդություններով պայմանավորված հիվանդացությունը և մահացությունը:

Ծրագրի համար ՀՀ 2025թ. պետական բյուջեով նախատեսվել է 1,771.5 մլն դրամ, որից՝ վարկային և դրամաշնորհային միջոցների գծով 1,547.9 մլն դրամ, համաֆինանսավորման գծով՝ 223.6 մլն դրամ:

Առողջապահական կազմակերպությունների շինարարական, նախագծային և վերազինման աշխատանքների համար ՀՀ 2025թ. պետական բյուջեով նախատեսվել է 12,283.1 մլն դրամ:

Ծրագրի համար նախատեսված միջոցների շրջանակներում նախատեսվում է իրականացնել 46 բժշկական կազմակերպությունների շինարարական և 13 բժշկական կազմակերպությունների վերազինման աշխատանքները:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ գծով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվում է հատկացնել 362,664.4 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 15,268.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակավորում ունեցող մասնագետների պատրաստումը, կրթության մատչելիության ապահովումը: Ծրագրով ծախսերը նախատեսվել են հանրապետության 20 արհեստագործական ուսումնարաններում արհեստագործական կրթության մեջ ընդգրկվող 8.1 հազար սովորողների, 65

հաստատություններում միջին մասնագիտական կրթության մեջ ընդգրկվող 19.9 հազար սովորողների ուսուցման գծով: Պետական բյուջեով միջոցներ են նախատեսվել ՀՀ կառավարության կողմից հաստատված առաջնահերթ և կարևոր ոլորտների մասնագիտությունների ցանկով հիմնական կրթության հիմքով ընդունված ուսանողներին տրվող կրթաթոշակների գծով: Միջոցներ են նախատեսվել նաև ատեստավորման արդյունքում, ինչպես նաև տարակարգի որակավորում ստացած մանկավարժական աշխատողներին հավելավճարների տրամադրման, մարզերում գործող մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և մանկավարժական աշխատողների տրանսպորտային ծախսերի փոխհատուցման, 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում արհեստագործական և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների ուսման վարձի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման, ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման և կառուցման, ուսումնաարտադրական բազայով ապահովման նպատակով:

Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի բարեփոխումներն ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրի «4.3 Կրթություն» բաժնում:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 14,164.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ ապահովել մատչելի, որակյալ և մրցունակ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն: Ծրագրով ծախսերը նախատեսվել են 12.3 հազար ուսանողների կրթության, մարտական գործողություններին մասնակցած ուսանողների, երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողների ուսման վճարի մասնակի փոխհատուցման գծով: Պետական բյուջեով միջոցներ են նախատեսվել պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող մանկավարժական և ագրարային մասնագիտություններով (կրթական ծրագրերով) ՀՀ բուհերում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով առկա ուսուցմամբ սովորողներին տրվող պետական կրթաթոշակների գծով, 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման գծով կրթաթոշակի տրամադրման նպատակով, ինչպես նաև «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի շինարարական աշխատանքների գծով:

Բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումներն ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրի «4.3 Կրթություն» բաժնում:

Հանրակրթության ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 132,760.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ ապահովել անվճար և որակյալ հանրակրթություն: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել պարտադիր կրթության երեք մակարդակներում սովորողների ուսուցման գծով: Մասնավորապես. ծախսերը հաշվարկվել են 1325 հանրակրթական դպրոցների 20.6 հազար դասարաններում ընդգրկվող, միջին

տարեկան հաշվարկով, 409.4 հազար աշակերտի ուսուցման, հատուկ և մասնագիտացված հանրակրթության մեջ ընդգրկվող՝ համապատասխանաբար, 0.5 և 3.3 հազար սովորողների կրթության գծով:

Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման, սոցիալական աջակցություն ստացող ՀՀ սահմանամերձ համայնքների և Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման, հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցման գծով: Ծախսեր են նախատեսվել նաև սովորողների միջազգային գնահատման ծրագրին (PISA) մասնակցության, ՀՀ պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկայի) և գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցներում դասավանդող, համապատասխանաբար՝ 8612 և 3143 ուսուցիչներին հավելավճարների տրամադրման, 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և մարզերի հանրակրթական դպրոցներում դասավանդող 409 ուսուցիչների օժանդակության ծրագրի գծով:

Հանրակրթության վերաբերյալ դրույթներն ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրի «4.3 Կրթություն» բաժնում:

Արտադպրոցական դաստիարակության ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 3,940.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ նպաստել հանրակրթական ուսուցման համակարգում ընդգրկված երեխաների ֆիզիկական, հոգևոր և գեղագիտական զարգացմանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը:

Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել 3200 դպրոցականների ամառային հանգստի, ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանների աշակերտների ռազմամարզական ճամբարի կազմակերպման, ատեստավորման արդյունքում արտադպրոցական ուսումնական հաստատություններում դասավանդող մանկավարժական աշխատողներին հավելավճարների տրամադրման գծով:

Արտադպրոցական դաստիարակության վերաբերյալ դրույթներն ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրի «4.3 Կրթություն», «4.8 Սպորտ» բաժիններում, «4.9 Մշակույթ» բաժնի մշակութային կրթության վերաբերյալ ենթաբաժնում:

Ապահով դպրոց ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 791.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ դպրոցներին սպառնացող աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացում, դպրոցի անձնակազմի և աշակերտների անվտանգության ապահովման մակարդակի բարձրացում՝ կիրառելով ներառական և երեխայակենտրոն մոտեցում: Միաժամանակ, Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի

բարձրացման ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 10,704.8 մլն դրամ:

«Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 84,420.2 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների շրջանակներում առնվազն 300 դպրոցի և 500 մանկապարտեզի կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման ծրագրերի իրականացում: Ծրագրի շրջանակներում զգալի միջոցներ են նախատեսվել կրթահամալիրների կառուցման, հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների շենքերի կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման, ինչպես նաև նշված հաստատությունների՝ գույքով և տեխնիկայով ապահովման գծով:

Վերոնշյալ աշխատանքների իրականացման վերաբերյալ դրույթներն ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրի «4.3 Կրթություն» բաժնում:

Կրթության որակի ապահովում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 15,757.4 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ ընթացիկ աշխատանքների, բարեփոխումների միջոցով կրթության ոլորտում իրականացվող միջոցառումների, մատուցվող ծառայությունների բովանդակության և կազմակերպման որակի շարունակական բարելավում: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել հանրակրթության պետական կրթական չափորոշի ու առարկայական ծրագրերին համապատասխան ուսուցիչների վերապատրաստման, կամավոր ատեստավորման արդյունքում ուսուցիչներին հավելավճարների տրամադրման, հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման գծով:

Ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմի ներդրման վերաբերյալ դրույթն ամրագրված է ՀՀ կառավարության ծրագրի «4.3 Կրթություն» բաժնում:

Ծրագրի շրջանակներում զգալի միջոցներ են նախատեսվել մարզերի պետական հանրակրթական դպրոցները ԳՏՃՄ լաբորատորիաներով ապահովման, նշված առարկաները դասավանդող ուսուցիչների վերապատրաստման գծով: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավում» ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է օժանդակել կրթության կառավարման և տեղեկատվական համակարգի բարելավմանը: Նախատեսվում է նաև բուհերում նորարարական և զարգացման ծրագրերի իրականացման նպատակով դրամաշնորհների տրամադրում, ուսումնական գործընթացում լաբորատոր սարքավորումների կիրառման ուղղությամբ ուսուցիչների վերապատրաստում, 4 ավագ դպրոցների կառուցում և հիմնանորոգում:

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 3,804.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի համար կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովում՝ զարգացման առանձնահատկություններին համապատասխան և անհրաժեշտ պայմանների ստեղծման միջոցով: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեության, ինչպես նաև նշված կենտրոնների՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մասնագետների ատեստավորման համակարգի ներդրման գծով:

Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 1,003.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ երեխաների հոգևոր և գեղագիտական ընդունակությունների բացահայտումը և զարգացումը: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցներում 3300 աշակերտների և 900 ուսուցիչների համար ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման, ազգային, փողային և լարային նվագարանների գծով 1181 սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցման, շնորհալի պատանի 15 երաժիշտ կատարողների մասնագիտական կարողությունների զարգացման և կատարելագործման նպատակով: Ծախսեր են նախատեսվել նաև «Ստեղծագործական կրթամշակութային մանկապատանեկան ծրագրեր և նախագծեր» և «Դպրոցական բաժանորդային համակարգի ծրագրի իրականացում» միջոցառումների գծով:

Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 398.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային համագործակցության ընդլայնումը, սփյուռքում և օտարերկրյա պետություններում հայկական կրթական կարողությունների հզորացումը: Ծրագրով նախատեսվող միջոցները կուղղվեն Սփյուռքի կրթօջախների ուսուցիչների կարողությունների հզորացմանը, դասագրքերի և այլ ուսումնական նյութերի մշակմանն ու տրամադրմանը, օտարերկրյա պետություններում հայերենի և հայագիտական առարկաների դասավանդմանը:

Սփյուռքի հետ համագործակցության վերաբերյալ դրույթներն ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրի «1.4 Սփյուռք», «4.7 Երիտասարդություն» բաժիններում, «4.9 Մշակույթ» բաժնի մշակութային ժառանգության վերաբերյալ ենթաբաժնում:

Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 876.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնումը: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում տվյալների

փոխանակման կապի ապահովման և սպասարկման, հեռավար դասընթացների կազմակերպման, կրթության ոլորտում SCS բնագավառի ծրագրերի համակարգման գծով:

«Նախադպրոցական կրթություն» ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 4,031.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ ապահովել հասանելի և որակյալ նախադպրոցական կրթություն: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել նախակրթարաններում ընդգրկվող 7.2 հազար երեխաների, մինչև 5 տարեկան կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և զինծառայող ծնողների, համապատասխանաբար՝ 1.8 և 5.6 հազար երեխաների նախադպրոցական կրթության ապահովման, նախադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստման, վերջիններիս տարակարգի շնորհման արդյունքում հավելավճարի տրամադրման գծով:

Նախադպրոցական կրթության վերաբերյալ դրույթներն ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրի «4.3 Կրթություն» բաժնում:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի նպատակն է՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար, կիրառական և թեմատիկ հետազոտությունների իրականացում, ենթակառուցվածքի և ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում և զարգացում, գիտական ներուժի վերարտադրության ապահովում: Ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 33,912.2 մլն դրամ:

«Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» միջոցառման գծով ծախսերը նախատեսվել են գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացման, ծրագրերի իրականացման, գիտական սարքավորումների արդիականացման, միջազգային համագործակցության աջակցության նպատակով: Միջոցառմանը հատկացվող միջոցներում ընդգրկված է գիտաշխատողների աշխատավարձի ավելացումը, ինչպես նաև միջազգային գիտական ծրագրերի, կառույցների անդամակցությունը և գիտատեղեկատվական շտեմարանի ռեսուրսների օգտագործումը («Հորիզոն Եվրոպա» շրջանակային (9-րդ) ծրագրին մասնակցություն, Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ, Բարձր էներգիաների ստերեոսկոպիկ համակարգ, Տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոն, Բլարիվեյթ Անալիտիքս):

Աշխատավարձերի բարձրացման գծով համապատասխան միջոցներ են նախատեսվել նաև «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին՝ արագացուցչային ֆիզիկայի և տեխնիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների, «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամին՝ ֆիզիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման նպատակով, «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն»

միջոցառման մեջ ընդգրկված՝ Հին ձեռագրերի ինստիտուտին, Յեղասպանության թանգարանին, Բյուրականի աստղադիտարանին:

«Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» միջոցառման գծով նախատեսված միջոցներում հաշվի է առնվել նոր մրցութային ծրագրերի իրականացումը: Միջոցառման շրջանակում իրականացվում են դրամաշնորհային մրցույթներ, որոնց համար, որպես արդյունքային ցուցանիշներ, սահմանվում են միջազգային չափանիշներին համապատասխան գիտական արդյունքները:

Ծրագրում նախատեսվել են ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից 77 անդամների պատվովճարների տրամադրումը, պետական գիտական ծրագրերում ընդգրկված՝ գիտական աստիճան ունեցող 968 թեկնածուներին և 266 դոկտորներին հավելավճարների տրամադրումը, գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների համար միջոցները:

2025 թվականին կշարունակվեն գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինման աշխատանքները:

«Ակադեմիական քաղաքի ստեղծում» ծրագիրը, որի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 2,114.1 մլն դրամ, նպատակ ունի շարունակել «Ակադեմիական քաղաք» նախագծի իրականացումը, «Ակադեմիական քաղաք» հիմնադրամին պետական աջակցությունը և «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացման համար միջազգային խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումն ու պայմանագրերի սպասարկումը (Մյունխենի տեխնիկական համալսարան՝ տեխնոլոգիական կլաստերի աջակցության մասով, Լոնդոնի համալսարանական քոլեջ՝ կրթական կլաստերի վերաբերյալ բովանդակային խորհրդատվության մասով, RSUP խորհրդատվական կազմակերպություն՝ քաղաքային կառավարման և ընդհանուր քաղաքային տնտեսության հայեցակարգի մշակման մասով):

Գիտության ոլորտի զարգացման վերաբերյալ դրույթներն ամրագրված են ՀՀ կառավարության ծրագրի «4.4 Գիտություն» բաժնում:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՀ կառավարության վարած մշակութային քաղաքականությանը համապատասխան մշակույթի ոլորտում իրականացվող ծրագրերը միտված են մշակութային ժառանգության պահպանությանը և տարածմանը, մշակութային և ստեղծարար ոլորտների խթանմանը և երկրի կայուն զարգացման գործընթացներում վերջիններիս դերի ընդլայնմանը, մշակույթի և ժամանակակից արվեստի հասանելիությանը և սոցիալական ներառականությանը, բարեկեցիկ հասարակության ձևավորմանը, հայկական մշակույթի միջազգային ինտեգրմանը և միջազգային շուկաներում մրցունակության ապահովմանը (հիմք՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9 Մշակույթ» բաժին):

Մշակույթի ոլորտի համար նախատեսված հատկացումներն ուղղվելու են 5 ծրագրերի իրականացմանը:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի համար 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 842.2 մլն դրամ:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի նպատակն է աջակցել կինոարվեստի և կինոարտադրության զարգացմանը, հայկական ավանդույթների շարունակականության ապահովմանը և կինոարվեստի հանրահռչակմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են ֆիլմերի արտադրությանը, կինոֆոտոֆոնո հավաքածուի պահպանմանը, թվայնացմանը, կինոարվեստի նախագծերի, միջազգային կինոնախագծերին մասնակցությանը (արտադրվող կինոնկարների թիվը նախատեսվում է 18, միջազգային կինոփառատոների, կինոշուկաներին, կինոծրագրերին մասնակցության թիվը՝ 9), ինչպես նաև կինոարտադրության ներդրումների վերադարձի իրականացմանը:

Մշակութային ժառանգության ծրագրի համար 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 5,459.7 մլն դրամ:

Մշակութային ժառանգության ծրագրի նպատակն է ապահովել մշակութային ժառանգության պահպանումը, օգտագործումը, համալրումը և հանրահռչակումը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական աշխատանքների, մշակութային արժեքների փորձաքննության, թանգարանային ծառայությունների իրականացմանը, թանգարաններում էլեկտրոնային տոմսերի միասնական ավտոմատացված համակարգերի, մշակույթի զարգացման հիմնադրամի գործունեության ապահովմանը, թանգարանների հիմնանորոգմանը, տեղեկատվական մոդուլային կենտրոնների ստեղծմանը, ՀՀ տարածքում և օտարերկրյա պետություններում գտնվող հայ ճարտարապետության, մշակույթին և պատմությանն առնչվող հուշարձանների ուսումնասիրմանը և պահպանմանը, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների հանրահռչակմանը միջազգային հարթակներում, հուշարձանների ամրակայմանը, նորոգմանը, վերականգնմանը:

Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի համար 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 1,783.4 մլն դրամ:

Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի նպատակն է նպաստել գրականության հրատարակմանը, տարածմանը և հանրահռչակմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են թարգմանական ծրագրերին և ստեղծագործողներին աջակցմանը, գրականության և ոչ պետական մամուլի հրատարակմանը, գրադարանային ծառայությունների իրականացմանը, գրականության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը (թարգմանական ծրագրերի և աջակցություն ստացած ստեղծագործողների ու հետազոտողների թիվը նախատեսվում է 38, պետական աջակցություն ստացող ազգային փոքրամասնությունների, գրական, մշակութային ոչ պետական լրատվամիջոցների քանակը՝ 26, գրականության հանրահռչակմանը և գրական ծրագրերին ու գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցության թիվը՝ 3):

Արվեստների ծրագրի համար 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 10,161.7 մլն դրամ:

Արվեստների ծրագրի նպատակն է նպաստել ազգային հենքի վրա ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, կերպարվեստի և պարարվեստի զարգացմանը և հանրահռչակմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են օպերային և բալետային արվեստի, թատերական ներկայացումների, երաժշտարվեստի և պարարվեստի համերգների, մշակութային միջոցառումների իրականացմանը, թատերահամերգային կազմակերպությունների ֆինանսավորման նոր մոդելի շարունակական ներդրմանը, մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների մրցանակաբաշխություններին մասնակցած և մրցանակի արժանացած մշակույթի գործիչների դրամական խրախուսմանը, «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց պատվովճարի հատկացմանը, թատերահամերգային կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի համալրմանը, թատրոնների շենքերի կապիտալ վերանորոգման համար ներդրումների իրականացմանը (արվեստի տարբեր ոլորտներում ստեղծագործական ծրագրերի քանակը նախատեսվում է 55, արվեստի միջազգային նախագծերին մասնակցող ստեղծագործողների քանակը՝ 63, հանրապետությունում իրականացվող արվեստի միջազգային նախագծերի քանակը՝ 16):

Մարզերի մշակութային զարգացման ծրագրի նպատակն է նպաստել մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացմանը:

Ծրագրի շրջանակներում **444.8 մլն դրամ հատկացումներն** ուղղվելու են մարզերում մշակութային միջոցառումների իրականացմանը, համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը, ինչպես նաև համայնքային մշակութային-ժամանցային կենտրոնի ստեղծմանը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ և ՍՊՈՐՏ

Սպորտի ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված է բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և ակտիվ հանգստի արմատավորմանը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով բնակչության առողջության ամրապնդմանը: ՀՀ կառավարությունը խրախուսում է նաև մարզական բարձր արդյունքները միջազգային մրցասպարեզներում, աջակցում է մարզական ֆեդերացիաների գործունեությանը (հիմք՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.8 Սպորտ» բաժին):

Սպորտի համար նախատեսված հատկացումներն ուղղվելու են 2 ծրագրերի իրականացմանը:

«Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի համար 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 9,615.0 մլն դրամ:

Մեծ նվաճումների սպորտ ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում մեծ սպորտի շարունակական զարգացմանը և միջազգային հարթակներում ՀՀ դիրքի բարելավմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են միջազգային տարբեր մակարդակի միջոցառումներին, ուսումնամարզական հավաքներին, հանրապետական առաջնություններին Հայաստանի հավաքական թիմերի մասնակցության ապահովմանը, աշխարհի, Եվրոպայի առաջնություններում հաղթողների և մրցանակակիրների պարգևատրման ծախսերի իրականացմանը, ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրությանը և աշխարհի չեմպիոններին, օլիմպիական խաղերի և շախմատի համաշխարհային օլիմպիադայի մրցանակակիրներին պատվովճարի, օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին անվանական թոշակի հատկացմանը, շախմատիստների պատրաստմանը, հաշմանդամային սպորտին աջակցմանը, սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության և շախմատի մրցույթների պատրաստման ծառայությունների իրականացմանը (ՀՀ առաջնությունների և միջազգային մարզական միջոցառումների մասնակիցների թիվը նախատեսվում է, համապատասխանաբար՝ 9600 և 2850):

2025 թվականին նախատեսված հատկացումները կուղղվեն նաև Հայաստանում խոշոր մրցաշարերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների կազմակերպմանը և անցկացմանը, ինչպես նաև Հայաստանում Ֆրանկոֆոնիայի մարզամշակութային խաղերի նախապատրաստման աշխատանքների իրականացմանը՝ նշված նպատակով ենթակառուցվածքների ապահովմանը:

«Մասսայական սպորտ» ծրագրի համար 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 6,113.3 մլն դրամ:

Մասսայական սպորտ ծրագրի նպատակն է ապահովել բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը:

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են Համաշխարհային ունիվերսիադային Հայաստանի ուսանողական մարզական պատվիրակության մասնակցության ապահովմանը, մասսայական սպորտի միջոցառումների իրականացմանը (մասսայական սպորտային միջոցառումներին մասնակիցների թիվը կանխատեսվում է 47000), մարզական օբյեկտների շինարարությանը և հիմնանորոգմանը, թեթև կոնստրուկցիաներով մարզադահլիճների, ինչպես նաև ֆուտբոլի ենթակառուցվածքների զարգացման նպատակով՝ մարզադաշտերի և մարզադպրոցների կառուցմանը:

Երիտասարդության ծրագրի համար 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 2,385.9 մլն դրամ:

Երիտասարդության ծրագրի նպատակն է նպաստել սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին երիտասարդների լիարժեք ներգրավմանը և նրանց ստեղծագործական ներուժի ամբողջական դրսևորմանը (հիմք՝ ՀՀ կառավարության «4.7 Երիտասարդություն» բաժին):

Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների, «ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» միջոցառման, երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումների իրականացմանը, «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում երիտասարդ ընտանիքներին աջակցմանը (սուբսիդավորում ստացող ընտանիքների թիվը կկազմի 9938):

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվում է շուրջ 905,640.4 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը), որի շրջանակներում կիրականացվեն հետևյալ ծրագրերը.

Պարգևավճարներ և պատվովճարներ ծրագրի համար նախատեսվում է հատկացնել շուրջ 11,107.1 մլն դրամ:

Պարգևավճարներ և պատվովճարներ ծրագրի վերջնական արդյունքը ՀՄՊ մասնակիցների, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքների, այդ թվում՝ ՀՄՊ վետերանների և նրանց ընտանիքների անդամների, Ծնողական փառքի մեդալով պարգևատրված անձանց սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացումն է՝ պետական հոգածության դրսևորման միջոցով:

2025 թվականին ծրագրի համար նախատեսվում է շուրջ 11,107.1 մլն դրամ, որի շրջանակում պարգևավճարներ կտրամադրվի 38048 շահառու ընտանիքի, ինչպես նաև պատվովճար կստանան 75 շահառու ընտանիք:

Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 23,410.9 մլն դրամ:

Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն ծրագրի վերջնական արդյունքը՝ օժանդակել անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը՝ մեղմելով աղքատությունը և կրճատելով ծայրահեղ աղքատությունը:

Ծրագրի համար նախատեսվում է 23,410.9 մլն դրամ, ընդ որում.

ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղվող նպաստի և իրականացման ապահովման գծով նախատեսվել է շուրջ 22,866.7 մլն դրամ, որի շրջանակում նպաստ կտրամադրվի շուրջ 51269 ընտանիքի, նպաստի միջին ամսական չափը կկազմի շուրջ 35744 դրամ, սոցիալական դեպքի վարման ծառայությունների ձեռքբերմանը կուղղվի շուրջ 78.8 մլն դրամ՝ 99500 այցելության համար, որոշակի սոցիալական կարգավիճակ կամ գնահատված սոցիալական կարիք ունեցող 702 ընտանիքի սոցիալական շտապ օգնություն

ցուցաբերելու նպատակով կտրամադրվի շուրջ 27.1 մլն դրամ, սոցիալական բնակարանային ֆոնդի 20 շենքերում ապրող անձանց օրենսդրությամբ սահմանված սպասարկման ծառայությունների մատուցման համար կհատկացվի շուրջ 55.4 մլն դրամ, ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծմանը կուղղվի 34.8 մլն դրամ, նրանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցմանը (առավելագույնը 6 ամիս ժամկետով՝ ամսական 60000 դրամի չափով) կհատկացվի շուրջ 23.8 մլն դրամ, ժամանակավոր օթևաններում (ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված), ընդունիչ-ախտորոշիչ կենտրոնում, ճգնաժամային կենտրոններում) 100 անօթևան անձանց ծառայությունների տրամադրմանը կուղղվի 70.8 մլն դրամ, 21.6 մլն դրամ է նախատեսվում սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող 150 միայնակ կենսաթոշակառուի կոմունալ վճարների փոխհատուցման համար, մանկատների 31 շրջանավարտներին ամսական 75000 դրամ դրամական աջակցության, ինչպես նաև ամսական 100,000 դրամ՝ բնակելի տարածության վարձավճարի հատուցման համար նախատեսվում է հատկացնել 65.1 մլն դրամ:

«Սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» և «Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերի վերանորոգում» միջոցառումների շրջանակում նահատեսվում է հատկացվել շուրջ 167.0 մլն դրամ:

2025 թվականից շուրջ 167.0 մլն դրամի շրջանակում նախատեսվում է մեկնարկել «Սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» միջոցառումը՝ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում սոցիալապես անապահով 700 անձանց սննդի կազմակերպման ծառայության համար շուրջ 92.2 մլն դրամի շրջանակում, ինչպես նաև սոցիալական բնակարանային ֆոնդի 4 շենքերի նախագծման համար՝ շուրջ 74.8 մլն դրամի շրջանակում:

2025 թվականի համար սոցիալական փաթեթների ապահովում ծրագրով նախատեսվում է 11,694.1 մլն դրամ՝ 162418 շահառուի հաշվարկով:

Սոցիալական փաթեթների ապահովում ծրագրի վերջնական արդյունքը պետական մարմինների աշխատողների կյանքի որակի բարելավումն է՝ սոցիալական երաշխիքների ապահովման և աշխատանքային մոտիվացիայի բարձրացման նպատակով:

Ծրագրի շահառուներին տրամադրվող միջոցները 2015 թ. հունվարի 1-ից կազմում են տարեկան առավելագույնը 72,000 դրամ (համամասնորեն նվազում է կախված աշխատողի ծանրաբեռնվածությունից (աշխատաժամանակի տևողությունից)):

Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն վերջնական արդյունքը շահառուներին իրենց գնահատված անհատական սոցիալական կարիքներին համապատասխան խնամքի ծառայությունների տրամադրումն է՝ բնականոն կենսագործունեության ապահովման նպատակով:

2025 թվականին նախատեսվում է 4,860.7 մլն դրամ, որի շրջանակում կտրամադրվեն շուրջօրյա խնամքի ծառայություններ 1340 շահառուի, որից 80-ը՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, տնային պայմաններում խնամքի ծառայություններ (այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող) 1325 անձի, որից 100-ը Լեռնային Ղարաբաղից

բռնի տեղահանված, ցերեկային խնամքի ծառայություններ՝ 600 անձի: Միաժամանակ, ԱՊՀ տարածքում Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամների և մասնակիցների օդային տրանսպորտով մատուցվող ծառայությունների դիմաց կտրամադրվի 2.0 մլն դրամ փոխհատուցում՝ 15 ուղևորի հաշվարկով, իսկ «ՀՀ մարշալ Բաղրամյանի անվան վետերանների միավորում» ՀԿ-ին՝ 20.0 մլն դրամ աջակցություն՝ 20 վետերանի համար:

Ծրագրի շրջանակում կիրականացվեն նաև տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամք մատուցող ՊՈԱԿ-ների շենքային պայմանների բարելավման աշխատանքներ, որի համար նախատեսվում է շուրջ 1,158.3 մլն դրամ:

Ժողովրդագրական վիճակի բարելավում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել շուրջ 80,087.6 մլն դրամ:

Ծրագրի շրջանակում մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի համար նախատեսվում է շուրջ 30,237.8 մլն դրամ՝ 67943 շահառուի համար, ընդ որում, 2025 թվականին պահպանվելու են նպաստի այս տեսակի՝ 2024 թվականի չափերը. խնամքի արձակուրդում գտնվող ծնողի դեպքում՝ 37500 դրամ, խնամքի արձակուրդում չգտնվող ծնողի դեպքում՝ 31600 դրամ, գյուղաբնակ և խնամքի արձակուրդում գտնվող ծնողի դեպքում՝ 69100 դրամ: Միաժամանակ, պետական բյուջեից 20,905.0 մլն դրամ կուղղվի 37420 նորածինների համար երեխայի ծննդյան միանվագ նպաստ տրամադրելուն, որի դեպքում ևս պահպանվելու են նպաստի՝ 2024 թվականի չափերը՝ 1-ին կամ 2-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 300 հազ. դրամ, 3-րդ կամ 4-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1.0 մլն դրամ, 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1.5 մլն դրամ: 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծնված երեխայի ծնողին՝ ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու կապակցությամբ մինչև երեխայի 6 տարեկանը լրանալն ամսական 50,000 դրամ դրամական աջակցության տրամադրմանը կուղղվի 27,061.8 մլն դրամ՝ միջին ամսական շուրջ 45103 երեխայի ծննդյան կապակցությամբ: Միաժամանակ, կշարունակվի երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված աջակցությունը, որի համար նախատեսվում է 1,800.0 մլն դրամ՝ 3500 շահառուի համար:

2025 թվականից պետական բյուջեով նախատեսվել է 82.3 մլն դրամ 55 շահառուի համար՝ զոհված զինծառայողների ծնողների՝ փոխնակ մոր ծառայություններից օգտվելու և դոնորական ձվաբջիջի ձեռքբերման ծախսերը մասնակի փոխհատուցելու նպատակով:

Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում ծրագրին նախատեսվում է ուղղել շուրջ 24,976.8 մլն դրամ:

Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում ծրագրի վերջնական արդյունքը անաշխատունակության հետևանքով եկամտի կորստի մասնակի փոխհատուցման ապահովումն է:

Ծրագրին նախատեսվում է ուղղել շուրջ 24,976.8 մլն դրամ, այդ թվում՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստների գծով՝ 5,800.0 մլն դրամ, մայրության նպաստ ստացող աշխատող՝ 18370 և չաշխատող՝ 19790 անձանց գծով՝ 19,010.5 մլն դրամ: Միաժամանակ, կշարունակվի աշխատանքային պարտականությունների կատարման հետ

կապված խեղում, մասնագիտական հիվանդություն և առողջության այլ վնաս ստացած 292 աշխատող անձի վնասի փոխհատուցումը շուրջ 166.3 մլն դրամի շրջանակում, որում 40.0 մլն դրամը կուղղվի կուտակված պարտքերը միանվագ պետական բյուջեից մարելու համար (Սահմանադրական դատարանի 30.11.2021 ՍԴՈ-1618 որոշման կատարման շրջանակներում):

Զբաղվածության ծրագրին նախատեսվել է հատկացնել 1,733.1 մլն դրամ:

Զբաղվածության ծրագրի վերջնական արդյունքը կայուն և ժամանակավոր զբաղվածների թվաքանակի աճն է՝ բնակչության կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովմանը միտված պայմանների ստեղծման նպատակով:

2025 թվականին զբաղվածության ծրագրին նախատեսվել է հատկացնել 1,733.1 մլն դրամ, որը կուղղվի զբաղվածության պետական 3 միջոցառումների իրականացմանը. սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրմանը՝ 504.6 մլն դրամ՝ 2000 շահառուի համար, Ադրբեջանի կողմից 2016, 2020 և 2022 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած, ինչպես նաև 2020 թվականից հետո ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման նպատակով՝ շուրջ 355.4 մլն դրամ՝ 500 շահառուի համար, ինչպես նաև 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրմանը՝ 873.2 մլն դրամ՝ 1000 շահառուի հաշվարկով:

Բնակարանային ապահովում ծրագրի իրականացմանը 2025 թվականին նախատեսվում է ուղղել շուրջ 12,006.8 մլն դրամ:

Այդ թվում՝ Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանը՝ շուրջ 51.8 մլն դրամ՝ 7 շահառուի համար, ՀՀ ՊՆ համակարգի զոհված (մահացած) առաջին, երկրորդ և երրորդ խմբի հաշմանդամ զինծառայողների 43 անօթևան ընտանիքների բնակարանով ապահովմանը և բնակարանային պայմանների բարելավմանը՝ 494.0 մլն դրամ, ՀՀ ՊՆ համակարգի՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող 100 զինծառայողներին, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամներին բնակարան ձեռք բերելուն՝ շուրջ 921.0 մլն դրամի չափով անհատույց աջակցություն: Ծրագրի շրջանակում նախատեսվում է նաև Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից բռնի տեղահանված 4167 ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովմանը կուղղվի 7,067.5 մլն դրամի չափով ֆինանսական աջակցություն՝ հիփոթեքային վարկի գծով վարկի մայր գումարի և տոկոսագումարի սուբսիդավորման եղանակով, ինչպես նաև 3,456.0 մլն դրամի չափ գումար է նախատեսվում ՀՀ սահմանամերձ գյուղական բնակավայրում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով 2000 շահառուի համար: 2025 թվականին 46 շահառուի հաշվարկով շուրջ 16.6 մլն դրամ կտրամադրվի պատժից ազատվող այն դատապարտյալներին, ովքեր չունեն բնակության վայր, որպես բնակարանի

վարձակալության վարձավճարի հատուցում մինչև վեց ամիս ժամկետով՝ ամսական 60.0 հազ. դրամի չափով:

2025 թվականին այս կենսաթոշակային ապահովություն ծրագրի գծով նախատեսվում է հատկացնել 560,271.5 մլն դրամ:

Կենսաթոշակային ապահովություն ծրագրի վերջնական արդյունքը օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական կենսաթոշակների տրամադրման (նշանակման և վճարման), ինչպես նաև պետական բյուջեի միջոցների հաշվին օրենքով սահմանված դեպքերում պարտադիր կուտակային համակարգի մասնակցի համար (օգտին) մինչև նրա կենսաթոշակային տարիքը լրանալը կուտակային հատկացումների կատարման ապահովումն է:

2025 թվականին այս ծրագրի գծով նախատեսվում է հատկացնել 560,271.5 մլն դրամ, որից 210,000.0 մլն դրամը կուտակային կենսաթոշակն է՝ 510000 մասնակցի հաշվարկով:

2025 թվականին պահպանվելու են 2024 թվականին գործող՝ հիմնական կենսաթոշակի չափերը, աշխատանքային ստաժի, զինվորական ծառայության չափերը, պարտադիր ժամկետային (շարքային) զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափերը:

աշխատանքային կենսաթոշակը հաշվարկելու համար՝

- հիմնական կենսաթոշակի չափը, հիմնական կենսաթոշակ՝ 24000 դրամ և նվազագույն կենսաթոշակ՝ 36000 դրամ,
- աշխատանքային ստաժի 1 տարվա արժեք՝ 950 դրամ մինչև 10 տարվա ստաժի 1 տարվա համար և 500 դրամ՝ 10-ից ավելի ստաժի 1 տարվա համար,

զինվորական կենսաթոշակը հաշվարկելու համար՝

- հիմնական կենսաթոշակի չափը՝ 20000 դրամ,
- զինվորական ծառայության մեկ տարվա արժեքը՝ 1750 դրամ,

պարտադիր ժամկետային (շարքային) զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափերը, համապատասխանաբար՝

- 1-ին խմբի դեպքում՝ 50600 դրամ,
- 2-րդ խմբի դեպքում՝ 41400 դրամ,
- 3-րդ խմբի դեպքում՝ 38000 դրամ,

պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափերը, համապատասխանաբար՝

- կերակրողը կորցնելու դեպքում (միակողմանի ծնողազուրկ երեխա, այլ անդամ)՝ 38000 դրամ,

- կերակրողը կորցնելու դեպքում (երկկողմանի ծնողազուրկ երեխա)՝ 120000 դրամ,
պետական պաշտոն զբաղեցրած անձանց կենսաթոշակի չափը հաշվարկելու համար՝
- հիմնական կենսաթոշակի չափը՝ 14000 դրամ,
- մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 5000 դրամ:

2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց փաստացի քանակական տվյալներով աշխատանքային կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուների թիվը 2025 թվականի համար կանխատեսվել է 504990 անձ, իսկ միջին կենսաթոշակի չափը՝ 49,275 դրամ. ֆինանսավորման համար նախատեսվում է 298,601.0 մլն դրամ: Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների համար նախատեսվում է հատկացնել 46,338.0 մլն դրամ, ըստ որում անհրաժեշտ միջոցները հաշվարկելիս, կենսաթոշակառուների միջին ամսական թիվը կանխատեսվել է 40405 անձ, իսկ միջին զինվորական կենսաթոշակի չափը՝ 95570 դրամ: Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակների վճարման համար նախատեսվել է 687.9 մլն դրամ՝ 1402 շահառուի համար: Կշարունայվի ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակների վճարումը, որի համար պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 3,992.4 մլն դրամ՝ 873 շահառուի հաշվարկով:

Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի գծով 2025 թվականի համար նախատեսվել է շուրջ 8,232.1 մլն դրամ:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել «11001 Սոցիալական պաշտպանության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ»՝ շուրջ 1,100.8 մլն դրամ, «11002 Սոցիալական պաշտպանության առանձին ծրագրերի իրականացման ապահովում»՝ շուրջ 6,790.9 մլն դրամ, «11003 Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում»՝ շուրջ 21.3 մլն դրամ, «11004 Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման, (կատարելագործման)՝ շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ»՝ շուրջ 311.2 դրամ, միջոցառումները: Միասնական սոցիալական ծառայության կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման նպատակով նախատեսվում է շուրջ 8.0 մլն դրամ:

Երեխաների հիմնահարցեր ծրագրի վերջնական արդյունքը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին մատուցվող սոցիալական ծառայությունների և դրանց հասցեականության բարելավումն է՝ նրանց հասարակություն ինտեգրման նպատակով:

ՀՀ 2025 թվականին պետական բյուջեով նախատեսվում է շուրջ **4,965.3 մլն դրամ**, որի շրջանակում կշարունակվի բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր և հատուկ/մասնագիտացված տիպի 5 հաստատություններում 635, որից 20 շահառու Լեռնային Ղարաբաղից բնակչության բռնի տեղահանման հետևանքով առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, երեխայի խնամքն ու դաստիարակությունը, որի համար

պետական բյուջեով նախատեսվում է 2,647.2 մլն դրամ: Կշարունակվի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին՝ երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոններում ծառայությունների տրամադրումը 833.3 մլն դրամի չափով, որի շրջանակում 3 աջակցության կենտրոնում սոցիալ-հոգեբանական ծառայություններ կտրամադրվեն 300 երեխայի և նրանց ընտանիքներին, ինչպես նաև 3 ճգնաժամային կենտրոնում 0-18 տարեկան 150 երեխայի կարճաժամկետ ճգնաժամային բաղադրիչի կիրառմամբ կմատուցվեն շուրջօրյա խնամքի ծառայություններ և 2-18 տարեկան 300 երեխայի և նրանց ընտանիքներին՝ ցերեկային ծառայություններ: Ծրագրի շրջանակում կշարունակվեն պետության կողմից հավաստագրված ՀԿ-ների կողմից հանրապետության բոլոր մարզերի առնվազն 28 սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոններում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3300 երեխայի, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից բնակչության բռնի տեղահանման հետևանքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 500 երեխայի և նրանց ծնողներին սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրումը, ինչպես նաև սոցիալական, հոգեբանական, իրավաբանական խորհրդատվությունը և աջակցությունը՝ 477.8 մլն դրամի շրջանակում: Միաժամանակ, շուրջ 395.3 մլն դրամի շրջանակում կկազմակերպվի 131 խնամատար ընտանիքներում 190 խնամատարության ենթակա երեխայի, որից 20-ը Լեռնային Ղարաբաղից բնակչության բռնի տեղահանման հետևանքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ, խնամքն ու դաստիարակությունը, կշարունակվի նաև 31.4 մլն դրամի շրջանակում մանկատներում և ճգնաժամային կենտրոններում խնամվող 231 դպրոցահասակ երեխաներին դրամական աջակցության տրամադրումը՝ կենցաղային որոշակի հմտությունների ուսուցանման նպատակով: Նախատեսվում է նաև 124.8 մլն դրամ գումարի չափով պետական աջակցություն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների շուրջ 100 ծնողներին՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կազմակերպման:

2025 թվականից շուրջ 100.5 մլն դրամի շրջանակում նախատեսվում է մեկնարկել շուրջ 170 հաշմանդամություն ունեցող երեխայի տնային խնամքի ծառայություններ տրամադրումը՝ նպաստելով նրանց անկախ ապրելուն՝ կանխարգելելով մուտքը խնամքի հաստատություններ:

Կանանց հիմնահարցեր, ընտանիքում բռնության և մարդկանց թրաֆիքինգի զոհերին աջակցություն ծրագրին նախատեսվում է հատկացնել շուրջ 157.8 մլն դրամ:

Կանանց հիմնահարցեր, ընտանիքում բռնության և մարդկանց թրաֆիքինգի զոհերին աջակցություն ծրագրի վերջանական արդյունքը խոցելի խմբերին պատկանող կանանց, ինչպես նաև ընտանիքում բռնության և թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց կարիքահեն սոցիական աջակցությունների տրամադրման միջոցով նպաստել խտրականության և գենդերային անհավասարության հաղթահարմանը:

ՀՀ 2025 թվականին պետական բյուջեով նախատեսվում է շուրջ 157.8 մլն դրամ, որի շրջանակում ընտանիքում բռնության ենթարկված 60 անձանց կմատուցվեն ապաստարանի ծառայություններ, աջակցության կենտրոնների ծառայություններ

կտրամադրվեն շուրջ 1500 շահառուի, որպես ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցություն՝ 150 շահառու կստանա միանվագ դրամական փոխհատուցում, մարդկանց թրաֆիքինգի (և/կամ) շահագործման 7 զոհերին կտրամադրվի միանվագ դրամական փոխհատուցում, ինչպես նաև 15 շահառուի կտրամադրվեն սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ:

Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագրի գծով նախատեսվում է 149.7 մլն դրամ:

Ծրագրի շրջանակում կմշակվի 1 մեթոդական նյութ վերապատրաստումների համար, կանցկացվեն 8 հետազոտություններ, կվերապատրաստվեն սոցիալական ապահովության ոլորտի 700 կադր, մասնագիտական կողմնորոշման շրջանակում կմշակվի 1 մեթոդական ուղեցույց և կուսուցանվեն 220 մասնագետ:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում ծրագրին նախատեսվում է հատկացնել շուրջ 3,300.6 մլն դրամ:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում ծրագրի վերջնական արդյունքը հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող սոցիալական ծառայությունների հասցեականության և արդյունավետության բարձրացումն է՝ հասարակություն սոցիալական ներառման նպատակով:

2025 թվականին նախատեսվում է շուրջ 3,300.6 մլն դրամ, այդ թվում՝ շուրջ 867.8 մլն դրամը նախատեսվում է նոր՝ Մեծամորում հաշմանդամություն ունեցող անձանց համար անկախ կյանքի կենտրոնի կառուցման համար:

Ծրագրի շրջանակում հաշմանդամություն ունեցող անձանց պետական հավաստագրերի հիման վրա նախարարության կողմից որակավորված կազմակերպությունների կողմից շուրջ 1,924.3 մլն դրամի շրջանակում կտրամադրվեն 24399 աջակցող միջոց (պրոթեզներ, օրթեզներ, քայլակներ, անվասայլակներ, լսողական սարքեր և այլն) (399-ը՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձ), ինչպես նաև կիրականացվի 60 աջակցող միջոցի վերանորոգում (5-ը՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձ):

Պետության կողմից հավաստագրված ՀԿ-ների կողմից դրամաշնորհի պայմանագրի հիման վրա հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցմանը կուղղվի 218.6 մլն դրամի՝ 445 շահառուի համար (35-ը՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված): Միաժամանակ, շուրջ 127.1 մլն դրամի շրջանակում համայնքահենք 5 փոքր խմբային տներում շուրջօրյա խնամքի ծառայություններ կստանան 70 հաշմանդամություն ունեցող անձիք, շուրջ 11.6 մլն դրամի շրջանակում կշարունակվի տեսողության խնդիրներ ունեցող 28 անձանց համապատասխան հմտությունների ուսուցում՝ տարածության մեջ սպիտակ ձեռնափայտերի օգնությամբ ինքնուրույն տեղաշարժվելու և հասարակության մեջ ներառվելու համար, շուրջ 151.1 մլն դրամի շրջանակում 100 հաշմանդամ անձ կստանա անձնական օգնականի ծառայություններ:

Ավանդների փոխհատուցում ծրագրի գծով նախատեսվում է 1,010.0 մլն դրամ

Ծրագրի շրջանակում «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող և նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների փոխհատուցում կստանան շուրջ 5333 շահառու. փոխհատուցում ստանալու իրավունք կտրվի նաև մինչև 1942 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված ավանդատու անձանց:

Սոցիալական ապահովություն ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է շուրջ 122,676.5 մլն դրամ:

Ծրագրի շրջանակում կշարունակվի պետական աջակցության տրամադրումը՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների վճարումը, ՀՀ ՊՆ զինվորական կոչում ունեցող անձնակազմին, ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների փոխհատուցումը:

2025 թվականին պահպանվելու են 2024 թվականին գործող՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը, ըստ որում նախատեսվում է 50,131.0 մլն դրամ՝ 113990 նպաստառուի ֆինանսավորման համար: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վճիռների համաձայն կերակրողը կորցրած անձանց կրած վնասի փոխհատուցման համար նախատեսվում է 12.7 մլն դրամ՝ 4 ընտանիքի համար, ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման համար նախատեսվում է 55,500.0 մլն դրամ:

Կշարունակվի անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճարի տրամադրումը, հետվճարի առավելագույն չափը կկազմի 6000 դրամ, տարեկան գումարը նախատեսվում է 12,432.0 մլն դրամ, օգտվողների միջին ամսական թիվը՝ շուրջ 280000 կենսաթոշակառու:

Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն ծրագրի համար 2025 թվականին նախատեսվում է շուրջ 35,000.0 մլն դրամի շրջանակում աջակցել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 58080 շահառուի, ընդ որում ժամանակավոր կացարանում բնակվելու և կոմունալ ծառայությունների ծախսերի համար՝ 53880 շահառուի և բնակարանային խնդիրների լուծման համար՝ 4200 շահառուի:

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գծով 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվում է 288,386.1 մլն դրամի ծախսեր (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը), որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

Ոռոգման համակարգի առողջացում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 26,305.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ստեղծել ոռոգման ոլորտի զարգացման և բարեփոխումների շարունակականության, ֆինանսական կայունության համար բավարար հիմքեր, ապահովել ենթակառուցվածքների և ոլորտային կազմակերպությունների ինքնաբավ և տնտեսապես անկախ գործունեությունը, որով ակնկալվում է նվազեցնել ոռոգման ջրի կորուստները, ավելացնել փաստացի ոռոգելի հողատարածքների մակերեսը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է սուբսիդավորել «Ջրառ» ՓԲԸ-ի և 15 ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքը:

Կշարունակվեն փոքր և միջին ջրամբարների կառուցման աշխատանքները, որի ներքո 2025 թվականին 1 ջրամբարի համար նախատեսվում է ձեռք բերել նախագծանախահաշվային փաստաթղթեր, 12-ի մասով՝ տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ և մեկնարկել 5 ջրամբարների կառուցման աշխատանքներ: Նախատեսվում են նաև գետերի և հեղեղատարների տեղամասերի ամրացման և մաքրման աշխատանքներ, որի շրջանակում կիրականացվի թվով 5 նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում և 5 օբյեկտների ափապատնեշների բարձրացման և վերականգնման աշխատանքներ: Կիրականացվեն թվով 2 ջրամբարի (Տավուշի և Ապարանի) վերականգնման և վերազինման, ինչպես նաև 28 օրվա կարգավորման ջրավազանների կառուցման ու վերակառուցման աշխատանքներ:

2025 թվականին արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ իրականացվող շարունակական ծրագրերի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

«Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգերի կառուցման ծրագրի» ներքո նախատեսվում է Վեդու ջրամբարի ավարտական, փորձարկումների և շահագործման հանձնման, ինչպես նաև ծրագրի փակման աշխատանքների իրականացում:

«Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի» շրջանակներում ևս նախատեսվում է շինարարական աշխատանքների ավարտական, շահագործման հանձնման և ծրագրի փակման աշխատանքների իրականացում:

«Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարում ծրագիր, Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ, փուլ 1 և փուլ 2» (ներառյալ՝ Ջրածոր գյուղի վերաբնակեցման ծրագրի՝ Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացում) ծրագրի շրջանակներում նախատեսվում է Կապսի ջրամբարի բուն պատվարի շնարարության համար անհրաժեշտ Ախուրյան գետի ջրերի հեռացման համար 545 մ երկարությամբ վարարային ջրհեռի և 300 մ երկարությամբ թունելների կառուցում, պատվարի հիմքի հիմնական շինարարական աշխատանքների իրականացում: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև Նոր Ջրածոր գյուղի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկը և որոշ մասի իրականացումը:

Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 1,600.9 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է վերականգնել Արփա-Սևան թունելի վթարային հատվածներն ու պահպանել այն, որից ակնկալվող վերջնական արդյունքն է առավելագույն քանակի ջուր տեղափոխել Սևանա լիճ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Որոտան-Արփա-Սևան թունելի 235 գծմ հատվածի երեսարկների վերակառուցման աշխատանքներ:

Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 1,644.1 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել բնակչության նյութական և ոչ նյութական բարեկեցության աճին, որով նախատեսվում է համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքների և որակի հասանելիության բարելավում, ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունների հզորացում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ավարտել կառուցվող/վերակառուցվող 3 մանկապարտեզների շինարարական աշխատանքները, բարեհաջող ավարտել խմելու ջրի ջրամատակարարման 2 ենթածրագրերը և 12 համայնքներին տրամադրել 14 միավոր տեխնիկա՝ շուրջ 72,750 շահառուների կենսապայմանների բարելավման համար, ինչպես նաև ծրագրի փակման և կատարված աշխատանքների ավարտական-հանձնման գործընթացները:

Կոլեկտորադրենաժային ծառայություններ ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 300.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է բարելավել ՀՀ ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակը, կարգավորել գրունտային ջրերի մակարդակները, կանխել հողատեսքերի աղակալումը, բնակավայրերի ջրակալումը և ապահովել մշակաբույսերի բնականոն աճը, որի վերջնական արդյունքն է ավելացնել մշակելի հողատարածքների մակերեսը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հանրապետության 6 մարզերում մաքրել և վերանորոգել 175.5 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանց՝ 1582 մլն խմ ջրահեռացման ծավալով:

Տարածքային կառավարման և ՏԻՄ ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստում և հատուկ ուսուցում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 14.6 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է տարածքային կառավարման և ՏԻՄ-երի, ինչպես նաև համայնքային ծառայողների աշխատանքի արդյունավետության բարելավումը:

Միջոցառմամբ նախատեսվում է իրականացնել համայնքային ծառայողների, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմիններ 1050 աշխատակիցների վերապատրաստում:

Կոշտ թափոնների կառավարում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 1,333.1 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է կենցաղային թափոնների արդյունավետ կառավարումը, սոցիալական և բնապահպանական խնդիրների լուծումը, մասնավորապես հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման համակարգի բարելավումը, ինչպես նաև հանրապետությունում ԿԿԹ-ի արդյունավետ կառավարմանը նպաստելը:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է բարելավել 2 մարզերի աղբահանության համակարգը և կառուցել ԵՄ չափանիշներին համապատասխան աղբավայր Հրազդան քաղաքում, ինչպես նաև երկու մարզերում ներդնել ԵՄ չափանիշներին համապատասխան աղբահանության համակարգ, այդ թվում կառուցել 2 փոխաբեռնման կայան՝ Ակունք և Մարտունի համայնքներում, ձեռք բերել անհրաժեշտ տեխնիկա, աղբատար մեքենաներ, աղբամաններ:

Միաժամանակ միջազգային կազմակերպությունների կողմից վարկային և դրամաշնորհային միջոցների ֆինանսավորմամբ (քննարկման փուլում է) նախատեսվում է 8 մարզերի աղբահանության և կոշտ թափոնների ինտեգրված համակարգի (4 սանիտարական աղբավայր, 16 փոխբեռնման կայան) ներդրման ծրագիր:

Ճանապարհային ցանցի բարելավում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 97,168.9 մլն դրամ.

Ծրագրի նպատակն է ճանապարհային ցանցի բարելավումն ու անվտանգ երթևեկության ապահովումը, որի շրջանակներում 2025 թվականին ակնկալվում է համայնքների տրանսպորտային կապի ցուցանիշի (հիմնական ճանապարհային ցանցի կամ մարզկենտրոնների հետ առնվազն մեկ բավարար կամ ավելի լավ վիճակում գտնվող ճանապարհներ ունեցող բնակավայրերի մասնաբաժինը բնակավայրերի ընդհանուր թվում) մասով բազային 94.0 տոկոսի դիմաց ապահովել 95.5 տոկոս թիրախային ցուցանիշը, իսկ միջպետական նշանակության ճանապարհների անհարթության IRI գործակցի միջին թվաբանականի համար բազային 6.1 մ/կմ դիմաց ապահովել թիրախային 5.8 մ/կմ ցուցանիշը:

Ծրագրի շրջանակներում ներքին և արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ նախատեսվում է իրականացնել միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ցանցի նորոգում, հիմնանորոգում և որակի շարունակական բարձրացում:

Ներքին աղբյուրների հաշվին նախատեսվում է իրականացնել շուրջ 284 կմ երկարությամբ միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և 15 տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման, 116 կմ միջին նորոգման, 4,004.3 կմ ամառային և 5,190.0 կմ ձմեռային պահպանման, ինչպես նաև 3 թունելների և 5 կամուրջների պահպանման ու շահագործման աշխատանքներ:

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագրի իրականացման գծով կիրականացվեն Քաջարան-Ագարակ 32 կմ հատվածի, Աշտարակ-Թալին 8 կմ և 34 կմ հատվածների կառուցման աշխատանքներ, ինչպես նաև նախատեսվում է մեկնարկել

Սիսիան-Քաջարան 60կմ ճանապարհահատվածի և Քաջարանի թունելի և մոտեցումների, Գյումրու շրջանցիկ ճանապարհի կառուցման և հիմնանորոգման աշխատանքները

Ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 12,575.5 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման աշխատանքների արդյունավետության բարձրացումը, համակարգերում ջրամատակարարման շարունակականության և ջրի որակի բարելավման ապահովումը, կառավարման բարեփոխումների խորացումն ու ամրապնդումը, կատարելագործումը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը և իրականացումը:

Ծրագրի շրջանակներում ներքին աղբյուրների հաշվին կշարունակվեն թվով 7 բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ:

Արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ իրականացվող շարունակական ծրագրերի ներքո նախատեսվում են.

«Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի» շրջանակներում շարունակել և ամբողջությամբ ավարտվել Հաղթանակ-Մալաթիա և Նոր Խարբերդ թաղամասերի ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգման աշխատանքները՝ նորոգել մնացած 15.5 կմ ջրագծերը և 600 հատ տնային միացումները: Ծրագրի շրջանակում նախատեսվում է նաև Հաղթանակ-Մալաթիա, Սիլիկյան և Նոր Խարբերդ թաղամասերում իրականացված շինարարական աշխատանքների ավարտական, շահագործման հանձնման և ծրագրի փակման աշխատանքների իրականացումը:

«Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 – Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» ծրագրի շրջանակներում ՀՀ 13 համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման հիմնանորոգման աշխատանքների մեկնարկը և 60 կմ ջրամատակարարման ցանցի հիմնանորոգումը, ինչպես նաև վարձակալի կողմից չսպասարկվող Արզական, Մարգարա, Խնածախ, Ուռուտ և Ագարակ համայնքներում 62.9 կմ ջրամատակարարման և 26.0 կմ ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների, ինչպես նաև 1004 հատ տնային միացումների իրականացումը:

Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 42.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է երկրաբանական տեղեկության ընդունումը և պահպանումը, ընդերքօգտագործման ֆոնդի ստեղծումը և վարումը, պաշարների պետական հաշվեկշռի, հանքավայրերի և երևակումների պետական կադաստրի վարումը, իրավունքների պետական հաշվառումը, տեղեկատվության վերլուծումը և տրամադրումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 1580 երկրաբանական նյութերի ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկությունների ընդունում, թվայնացում և կայքում տեղադրում, 970 հանքավայրերի օգտակար հանածոների պաշարների, 175 ընդերքի

տեղամասերի ներկայացված կոորդինատների վերաբերյալ տեղեկությունների և տրամադրված 475 ընդերքօգտագործման իրավունքների հաշվառում:

Երկաթուղային ցանցի զարգացում ծրագրի գծով ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրման համար նախատեսվում է 2025 թվականին հատկացնել 231.0 մլն դրամ:

Միջոցառման նպատակն է ՀՀ կառավարության 07.02.2008թ. N 83-Ա որոշմամբ հաստատված Կոնցեսիոն պայմանագրի համաձայն մասնակի (30%) սուբսիդավորել համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումներից «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի նախորդ տարվա արդյունքներով առաջացած տարեկան վնասը (ՀՀ կառավարության 07.02.2008թ. N 83-Ա որոշումից բխող՝ կոնցեսիոնների կողմից կանխատեսվող կոնցեսիոն տարեկան վճարի չափով):

Պետական գույքի կառավարում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է.

422.8 մլն դրամ՝ պետական գույքի հաշվառման, գույքագրման, գնահատման, անշարժ գույքի պահառության, սպասարկման աշխատանքների և աճուրդների իրականացման ծառայությունների և պետական մարմիններին և կազմակերպություններին ամրացված՝ յուրաքանչյուր միավոր մինչև 5 մլն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի օտարման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում գույքի պահառության կազմակերպման համար: Նշվածի շրջանակներում նախատեսվում է ապահովել պետական սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման, գնահատման, հաշվառման, հաշվառված գույքի տվյալների մշակման, փոփոխությունների գրանցման, տեղեկատվության տրամադրման աշխատանքների, պահառության, աճուրդների կազմակերպման և անցկացման ծառայությունների իրականացումը, ինչպես նաև պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի և էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ծրագրերի սպասարկումը:

Բացի այդ պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների օտարումից նախատեսվում է (15,000.0 մլն դրամի) մուտքեր:

Այլընտրանքային աշխատանքային ծառայություն ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 35.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է քաղաքացիական պարտքի կատարման այլընտրանքային տարբերակների ապահովումը, որի շրջանակում թվով 114 այլընտրանքային աշխատանքային ծառայողների կտրամադրվի դրամական բավարարում և փոխհատուցում:

Քաղաքային զարգացում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 28,382.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է քաղաքային ենթակառուցվածքների զարգացումը, որի շրջանակներում ներքին և արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ նախատեսվում է իրականացնել Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների և Երևանի տարածքում ճանապարհային երթևեկության կարգավորման գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման, Երևան

և Գյումրի քաղաքների փողոցների և արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման, շահագործման ու պահպանման աշխատանքների իրականացում:

Մասնավորապես 2025 թվականին ներքին աղբյուրների հաշվին նախատեսվում է սուբսիդավորել Երևանի մետրոպոլիտենի ուղևորափոխադրման ծառայությունները ապահովելով 26.5 մլն ուղևորների անվտանգ ուղևորափոխադրումը, իրականացնել մետրոպոլիտենի հիմնանորոգման և Աջափնյակ կայարանի կառուցման աշխատանքները: Կշարունակվեն մանկապարտեզների հիմնանորոգման ու Երևանի բուսաբանական այգու տարածքում անտառապուրակի կառուցապատման աշխատանքները:

Արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ իրականացվող շարունակական ծրագրերի ներքո նախատեսվում է՝ Երևան քաղաքում 28 փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացում, Գյումրի քաղաքում՝ ընտրված փողոցների վերանորոգում և լուսավորության ցանցի արդիականացում, ինչպես նաև կշարունակվեն Երևան քաղաքի Իսակով-Արշակունյաց ճանապարհի կառուցման աշխատանքները:

Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 1,779.6 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել էլեկտրաէներգետիկ համակարգի հուսալիության բարձրացմանը և էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման ապահովմանը:

Դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կիրականացվեն Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օղային գծերի և համապատասխան ենթակայանների կառուցման գլխավոր կապալառուների ընտրության և գլխավոր կապալառուների հետ համապատասխան պայմանագրերի կնքման աշխատանքները, որը կապված է համանուն վարկային ծրագրի հետ:

Արդյունքում՝ հայկական և վրացական էներգահամակարգերի միացման հետևանքով Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 200 մՎտ-ից առաջին փուլում կհասցվի 350 մՎտ-ի, հետագայում՝ ելնելով տարածաշրջանային շուկայի պահանջարկից մինչև 1050 մՎտ-ի:

Հայաստանի Հանրապետությունում նոր ատոմային էներգաբլոկի (էներգաբլոկների) կառուցման ծրագրի կառավարման նպատակով նոր ատոմային էներգաբլոկի (էներգաբլոկների) կառուցման աշխատանքների նախապատրաստման և իրականացման համար նախատեսվում է 628.0 մլն դրամ: Բացի այդ 200.0 մլն դրամ կուղղվի «Ատոմային նոր էներգաբլոկի կառուցում» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի ավելացմանը:

Ռադիոակտիվ թափոնների կառավարում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 40.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրման, ուսումնասիրման, պահպանման, վնասագերծման և թաղման ապահովումը՝ մարդկանց և շրջակա միջավայրի իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար: Ծրագրի կատարումից ակնկալվում է հայտնաբերված ռադիոակտիվ թափոնների

100% վնասագերծում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 150 ռադիոակտիվ թափոնների միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ կենտրոնացված փոխադրման, ուսումնասիրման, պահպանման և վնասագերծման աշխատանքներ:

Ավիացիայի բնագավառում վերահսկողության, կանոնակարգման և զարգացման ապահովում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 583,1 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Նշված ծրագրի շրջանակներում կվերապատրաստվեն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի 114 աշխատակիցներ (78.8 մլն դրամ):

Տարածքային զարգացում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 120,834.1 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է տարածքային համաչափ զարգացման խթանումը (մասնավորապես ՀՀ համայնքների կառավարման արդյունավետության բարձրացումն ու տնտեսական գործունեության խթանումը (ներառյալ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն բնակավայրի):

Ծրագրի շրջանակներում կիրականացվեն.

Համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով Տարածքային զարգացում ծրագրի շրջանակում նախատեսվում են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով՝ համայնքների ընթացիկ ծախսերի ծածկման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաներ:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքներով սահմանված համապատասխան դրույթները՝ 2025 թվականին համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) չպետք է պակաս լինի ՀՀ 2023 թվականի համախմբված բյուջեի փաստացի եկամուտների ընդհանուր գումարի՝ 2,455.1 մլրդ դրամի 4%-ը կազմող 98,205.6 մլն դրամից: ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է ֆինանսական համահարթեցման սկզբունքով ՀՀ համայնքներին (71 համայնքներին) տրամադրել ընդհանուր գումարով 98,205.6 մլն դրամի դոտացիաներ: ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների բաշխումն ըստ առանձին համայնքների իրականացվել է «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

Կշարունակվեն ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորման սկզբունքով համայնքներում սուբվենցիոն ծրագրերի իրականացումը (ներառյալ մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված), ինչպես նաև սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների (13 համայնքների 82 բնակավայրեր) կողմից ծախսված

բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի, սահմանամերձ համայնքների վարչական տարածքում գտնվող մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների և (կամ) դրանց բարելավումների անշարժ գույքի հարկի ծախսերի փոխհատուցումը:

Ազդակիր բնակավայրերի և համայնքների բյուջեներին համայնքային մասհանումների հատկացումը («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» 11.03.2022թ. ՀՕ-52-Ն օրենքի 2-րդ հոդվածի պահանջով պայմանավորված նախատեսվում է յուրաքանչյուր ոռոգման վճարողի կողմից նախորդող երրորդ տարվա փաստացի բյուջե վճարված ոռոգման չափի երկու տոկոսից ՀՀ բնակավայրերին և համայնքներին անվերադարձ կարգով տրամադրել մասհանումներ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման համար):

Էներգաարդյունավետության զարգացման ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 5,984.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել էներգախնայողության բարձրացման և վերականգնվող էներգետիկայի ներուժի առավելագույն իրացմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է սուբսիդավորել բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրով ընտրված շուրջ 18000 շահառուների կողմից էներգաարդյունավետ վերանորոգման համար ներգրավված վարկերի տոկոսադրույքը (վարկի գործողության ողջ ընթացքում, բայց ոչ ավելի, քան 7 տարի):

Արտաքին աղբյուրների ֆինանսավորմամբ իրականացվող շարունակական ծրագրերի շրջանակներում նախատեսվում է թվով 38 հասարակական շենքերի (6 պոլիկլինիկա և 32 մանկապարտեզ) իրականացնել էներգաարդյունավետությանը և էներգախնայողությանն ուղղված հիմնանորոգման աշխատանքներ, որի արդյունքում կապահովվեն հանրային շենքերի սեյսմակայունությունը, ջերմամեկուսացման և լուսավորության համակարգերի, վերականգնվող էներգիայի աղբյուրների ինտեգրման, հաշմանդամների համար շենքերի հասանելիությունը, կկրճատվեն էներգետիկ սպասարկման ֆինանսական ծախսերը, ինչպես նաև տեղի կունենա արտանետվող CO2 գազի նվազեցում, կերկարաձգվի վերանորոգվող շենքերի շահագործման ժամկետ:

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ՀՀ պետական բյուջեով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը նախատեսվում է հատկացնել 47,510.3 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 32,810.9 մլն դրամ:

Ծրագրի նպատակը տեխնոլոգիական ոլորտի էկոհամակարգի բարելավումն ու զարգացումն է, մասնավորապես.

- Նպաստել Հայաստանում բարձր տեխնոլոգիական ոլորտի մասնագետների պատրաստմանը և կարողությունների զարգացմանը՝ խթանելով Հայաստանի որպես գիտելիքահենք տնտեսության առաջատար դիրքի ձևավորմանը:
- Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիաների ոլորտի տնտեսավարողներին ազգային և միջազգային մակարդակում մրցունակ մնալու և զարգանալու հնարավորություն ընձեռելու նպատակով տրամադրել պետական աջակցություն՝ պետական ու մասնավոր հատվածների համագործակցության միջոցով գիտելիքահենք տնտեսության զարգացման ուղղությամբ իրական հնարավորություններ ստեղծելու հրամայականով:
- Զարգացնել բարձր տեխնոլոգիական ոլորտի էկոհամակարգը՝ ներառյալ թիրախավորված գիտահետազոտական աշխատանքների, ստեղծագործական խմբերի, նորաստեղծ ընկերությունների ֆինանսավորումը, ինչպես նաև միջազգային հայտնի աքսելերացիոն ծրագրերին մասնակցելու համար տրամադրվող աջակցության ապահովումը:
- Հայաստանում հայկական սփյուռքի ներգրավվածությունն ապահովելու համար հայկական ընկերությունների, կազմակերպությունների և անհատների հետ ստեղծել շարունակական համագործակցության հարթակ:

Նշվածի շրջանակներում կապահովվի հետևյալ արդյունքային ցուցանիշները՝ կպատրաստվեն շուրջ 2350 մասնագետներ, կիրականացվի մեկ աքսելերացիոն ծրագիր՝ 20 շահառու թիմերի և 80 մասնակիցների համար, 90 շահառուների համար կիրականացվեն ձեռնարկատիրական ինկուբացիոն դասընթացներ, «Ներուժ» ծրագրին կմասնակցեն 6 սփյուռքահայ ձեռներեցներից բաղկացած շահառու թիմեր:

Բացի այդ շուրջ 29.4 մլրդ դրամ է նախատեսվել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցություն տրամադրելու նպատակով: Վերջինս բխում է ներկայում շրջանառվող «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքների նախագծերով ամրագրված մոտեցումներից:

Տիեզերական բնագավառում ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ կիրականացվեն 2 ծրագիր, որոնցից մեկը նոր նախաձեռնություն է: Մասնավորապես, 2025 թվականից ձեռքբերվեն արբանյակի և երկրային կառավարման կենտրոնի ծրագրային ապահովման նպատակով թարմացման ծառայությունների, ինչպես նաև արտերկրի ընդունիչ կայանների միջոցով ՀՀ արբանյակից տվյալներ ստանալու ծառայություններ:

Կշարունակվի թվային ծառայությունների ձեռքբերումը, որի շրջանակում Երկրի հեռակա դիտարկման ոլորտի տեխնոլոգիաների միջոցով առկա ռազմավարական խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է ձեռքբերել տարբեր լուծաչափի տիեզերալուսանկարներ՝ պետական մարմինների կողմից օգտագործման համար:

Հեռահաղորդակցության ապահովում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 714.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ապահովել ՀՀ հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ռադիոհաճախականությունների տիրույթի 92 տոկոս մաքրության ապահովում, հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավում, ռադիոէթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացում, Հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալում, ՀՀ-ում պետական մարմինների տվյալների փոխանակման կապի ապահովում և սպասարկում:

Ռազմարդյունաբերության համակարգի զարգացում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 5,719.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել ՀՀ պաշտպանության և անվտանգության համակարգերի զարգացմանը, մասնավորապես իրականացնել գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացում պաշտպանության համակարգի ապահովման համար:

2025թ. նախատեսվում է.

- ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում շահագործվող սպառազինության և ռազմական տեխնիկայի ու ռազմատեխնիկական ունեցվածքի նորոգման համար անհրաժեշտ հզորությունների ստեղծումը, պահպանումը և զարգացումը,
- ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում շահագործվող սպառազինության և ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական ունեցվածքի արդիականացման գործընթացի յուրացում,
- Ռազմարդյունաբերության ոլորտի նեղ մասնագետների պատրաստում:

Միասնական թվային միջավայրի ձևավորում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 6,987.8 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է պետական մարմինների կողմից իրականացվող թվային փոխակերպման միջոցառումների իրականացում, տեղեկատվական անվտանգության, էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և զարգացման ոլորտներում քաղաքականության իրականացում: Թվայնացման հետ կապված բոլոր ծախսերը խմբավորվել են այս ծրագրի ներքո: Թվայնացման առաջարկները կընտրվեն և

կֆինանսավորվեն ըստ դրանց առաջնահերթության՝ թվայնացման օրակարգին համահունչ, թվայնացման խորհրդի դրական եզրակացության և տեխնիկական առաջադրանքների բավարար պատրաստվածության պարագայում: Ծրագրի շրջանակներում նախատեսված է նաև ՀՀ ՖՆ և ՌԴ ֆինանսների նախարարության միջև՝ ՌԴ կողմից ՀՀ-ին անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրում և մի շարք այլ միջոցառումների իրականացումը:

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության գծով Նախագծով նախատեսվում է հատկացնել 14,545.3 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը), որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 2,984.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների) պահպանությանը՝ վերջինիս վերաբերյալ տեղեկատվության հրապարակմամբ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Սևանա լճի ջրի որակի ֆիզիկաքիմիական, հիդրոկենսաբանական, լճի հատակային նստվածքների ֆիզիկական և քիմիական պարամետրերի, մթնոլորտային տեղումների որակական կազմի մոնիթորինգ, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակով իրականացնել 210 հայտերի գնահատման, փորձաքննության և եզրակացությունների տրամադրման աշխատանքներ, հիդրոոդերևութաբանական աշխատանքներ՝ մթնոլորտի և ջրոլորտի ուսումնասիրությունների ձևով՝ շուրջ 152,746.0 օդերևութաբանական, հելիոերկրաֆիզիկական, ագրոօդերևութաբանական և 87,918.0 հիդրոլոգիական և ռադիոլոգիական դիտարկումների իրականացում, փաստացի և սպասվող փոփոխությունների, ինչպես նաև դրանց հնարավոր հետևանքների մասին անհրաժեշտ տեղեկատվության ապահովում և մթնոլորտային երևույթների կառավարում:

Ծրագրում ներառված 4 միջազգային դրամաշնորհային միջոցառումների շրջանակներում կմշակվեն Սյունիքի մարզի Հյուսիսային Կապան և Տանձուտի լքված հանքավայրերի տարածքում ռեկուլտիվացիայի աշխատանքների բնապահպանական և սոցիալական կառավարման պլանները, կիրականացվի հանրային նշանակության շենքերի՝ հիվանդանոցների, մանկապարտեզների, դպրոցների և այլ հասարակական կառույցների էներգախնայողության հաշվարկման համակարգի ստեղծման աշխատանքներ, ինչպես նաև Սևանա լճի ավազանի լանդշաֆտում հողերի դեգրադացիայի չեզոքության խթանման, արտադրողականության և էկոլոգիական լանդշաֆտի դիմակայունության ապահովմանն ուղղված աշխատանքներ:

Բնապահպանական ծրագրերի իրականացում համայնքներում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 1,046.1 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է մեղմել հանքարդյունաբերության ոլորտում տնտեսական գործունեության հետևանքով շրջակա միջավայրին և բնակչության առողջությանը պատճառված վնասները: Նախատեսվում է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ թվով 15 համայնքների տրամադրել սուբվենցիաներ՝ թվով 25 բնապահպանական և 8 առողջապահական ծրագրերի իրականացման համար:

Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 1.156.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ապահովել բնական պաշարների և կենսաբազմազանության արդյունավետ կառավարումն ու պահպանությունը՝ ակնկալելով ապահովել բնական պաշարների և կենսաբազմազանության վերարտադրության աճը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մաքրել Սևանա լճի շրջակայքի 43.95 հա ջրածածկ անտառտնկարկներ, իրականացնել Սևանա լճի ջրահավաք ավազանի կենդանական ռեսուրսների (ձկան և խեցգետնի) պաշարների հաշվառման, «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում, «Սոսու պուրակ», «Ձանգեզուր» և «Ձիկատար» արգելավայրերում, ինչպես նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող 325.4 հազ. հա տարածքներում կառավարում, աջակցել Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամին, իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի անձնագրավորման ենթակա բնության հուշարձանների թվով 22 ուսումնասիրման և 19 անձնագրերի նախագծերի ներկայացման աշխատանքներ, ինչպես նաև իրականացնել որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների հաշվառում, որը հնարավորություն կնձեռնի սահմանել որսի կենդանիների տարեկան օգտագործման թույլատրելի չափաքանակներն ու որսի ժամկետները:

Անտառների կառավարում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 8,049.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ապահովել անտառային տարածքների կայուն կառավարումը՝ նպաստելով կայուն կառավարվող անտառային տարածքների աճին: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Էկոպարեկային ծառայություն տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող 325.4 հազ. հա և անտառային 342.4 հազ. հա տարածքների պահպանության իրականացում, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 17 «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում անտառկառավարման և անտառատնտեսական աշխատանքների իրականացում, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի անտառածածկ 9000 հա տարածքում վնասատուների դեմ ավիացիոն պայքարի միջոցառումներ կենսաբանական եղանակով, 170 հա տարածքում անտառվերականգնման և

անտառապատման աշխատանքներ, այդ թվում նաև նախորդ տարիներին տնկված ծառերի խնամքի միջոցառումներ:

Բնապահպանական նմուշների պահպանություն և ցուցադրություն ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է 40.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է մշտական և ժամանակավոր ցուցահանդեսների միջոցով հավաքածուները ներկայացնել հանրությանը և իրականացնել բնապահպանական քարոզչություն՝ նպաստելով բնապահպանական աշխարհայացքի ձևավորմանը, բնակչության էկոլոգիական դաստիարակությանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել «Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի իրավասության ներքո գտնվող Հայաստանին բնորոշ 6760 բնության օբյեկտների թանգարանային ցուցանմուշների պահպանության և ցուցադրության միջոցառումներ:

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության գծով նախատեսվում է հատկացնել 79,520.9 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 627.6 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է աջակցել հայրենական արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանը, հայրենական արտադրողներին հնարավորություն տալ ապահովել տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջները, արտադրել միջազգային շուկայում մրցունակ արտադրանք: Ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրումը, հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ սպառողների վստահության բարձրացումը, ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների և գրանցված համապատասխանության հայտարարագրերի, հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների ռեեստրների ձևավորումը, վարումը և արդիականացումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է արտադրանքի և ծառայությունների գծով մշակել 30 ազգային ստանդարտներ, հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների ազգային, արտադրանքի սերտիֆիկացման մարմինների, լաբորատորիաների ԵԱՏՄ, համապատասխանության սերտիֆիկատների, հայտարարագրերի ՀՀ և ԵԱՏՄ միասնական ռեեստրների և հավատարմագրման փորձագետների, գնահատողների, տեխնիկական փորձագետների ռեեստրների վարում՝ 5 հատ:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է նաև ԱԶԱՄ ՓԲԸ-ում տրամաչափարկման կարողությունների հիմնում, փորձարկման կարողությունների ընդլայնում՝ նոր լաբորատոր սարքավորումների ձեռքբերում, լաբորատորիաների վերազինում և ստեղծում:

Գիտելիքահենք, նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 22,072.9 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է արտադրողականության բարձրացման նպատակով տնտեսության թվայնացման, նորարարական էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման, գիտելիքահենք գործարարությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասընթացին 400 շահառուի մասնակցություն, հովանոցային մեխանիզմով երաշխավորությունների տրամադրում 3 շահառուի: Տնտեսավարողների կողմից ներգրավված 550 բարձր որակավորում ունեցող մասնագետների ծախսերի մասնակի փոխհատուցում, ինչպես նաև 1800 տնտեսավարող սուբյեկտների սուբսիդավորում:

Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 4,730.6 մլն դրամ:

Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված երկարաժամկետ հեռանկարում նպաստել տնտեսական աճի նոր շարժիչ ուղրտների ձևավորմանը, վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացմանը, արտահանման զարգացման ներուժ ունեցող ուղրտների հավասարակշռված և փուլային միջոցառումների իրականացմանը: Աջակցել ներդրողների սպասարկմանը, օտարերկրյա ներդրողների ներգրավմանը և հետներդրումային սպասարկմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում 14 ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում, գործարար 7 համաժողովների (ֆորումների), 40 ներդրումային ծրագրերի ուղեկցում, ՀՀ-ում գործող օտարերկրյա ներդրողների 50 հետներդրումային շարունակական սպասարկում, ինչպես նաև հանրային ներդրումային ծրագրերի տեխնիկատնտեսական ուսումնասիրություն:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև նոր միջոցառումների իրականացում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ զբաղվող (այն տնտեսավարողները, որոնք պատրաստվում են արտադրել 0.2 տնտեսական բարդության ցուցիչից ավելի բարձր ինդեքս ունեցող ապրանքներ) 2 առևտրային ընկերություններին, ինչպես նաև մշակող արդյունաբերությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին նոր աշխատողների, այդ թվում՝ աշխատանքային փորձ չունեցող կամ վերաորակավորման կարիք ունեցող անձանց ուղրտում ներգրավելու նպատակով տրամադրել պետական աջակցություն:

Գյուղատնտեսության խթանման ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 11,876.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է գյուղատնտեսական մթերքի և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների ավելացումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է սուբսիդավորել 5220 տնտեսավարող սուբյեկտի՝ նախորդ տարիներին տրամադրված գյուղատնտեսական վարկերը, 216 տնտեսավարող սուբյեկտի՝ 2025թ. տրամադրվելիք և նախորդ տարիներին տրամադրված գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով վարկերը, սուբսիդավորել 15000 հա հողատարածքի ապահովագրավճարները, ՀՀ տարածքից դուրս իրականացնել հայկական գինեգործության հանրահոգակմանը, հայկական գինիների առաջնորդմանն ու արտահանմանն ուղղված 15 միջոցառումներ, միջազգային և տեղական բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում տպագրել հայկական գինեգործության մասին թվով 20 հոդվածներ, գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման ծրագրի շրջանակներում միավորել 145 հա հողեր և այլն:

Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 125.4 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է հողագործությունից ստացվող արդյունքի բարելավումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով հետազոտել 180,000 հեկտար տարածք, 85 համայնքի տրամադրել գյուղատնտեսական նշանակության հողերի կազմված ագրոքիմիական քարտեզներ, գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վնասակար օրգանիզմների դեմ իրականացնել պայքար 53,000.0 հեկտար տարածքում, իրականացնել բույսերի սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում՝ 12 հազար տոննա, ինչպես նաև բույսերի նոր տրտերի ստուգիչ ցանքեր և դաշտային փորձարկումներ՝ 100 հատ:

Անասնաբուժական ծառայություններ ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 2,945.4 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է անասնահամաճարակային կայուն ֆոնի ապահովումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ախտորոշիչ և կանխարգելիչ (պատվաստումներ) միջոցառումներ, 185,847 խոշոր եղջերավոր, 1,227,474 մանր եղջերավոր կենդանու համարակալում և 12640 գլուխ կովերի արհեստական սերմնավորում:

Գյուղատնտեսության արդիականացման ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 25,685.4 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է գյուղատնտեսական տեխնիկական համակարգերի արդիականացումը, ինտենսիվ այգիների ներդրման և տոհմաբուծության մեջ նոր ցեղատեսակների բուծման գծով աջակցությունը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է սուբսիդավորել՝

- նախորդ տարիներին հիմնված՝ 5,755 հեկտար նոր ինտենսիվ պտղատու այգիների համար տրամադրված վարկերը,

- 2,018 տնտեսավարող սուբյեկտի՝ 2025 թվականին տրամադրվելիք և նախորդ տարիներին տրամադրված՝ գյուղատնտեսական տեխնիկա ձեռքբերելու նպատակով վարկերը,
- 533 տնտեսավարող սուբյեկտի՝ 2025 թվականին տրամադրվելիք և նախորդ տարիներին տրամադրված ագրոպարենային ոլորտի սարքավորումներ ձեռքբերելու նպատակով վարկերը,
- 1,568.5 հեկտար տարածքում ոռոգման արդիական համակարգ ներդնելու նպատակով նախորդ տարիներին տրամադրված վարկերը,
- նախորդ տարիներին 194.1 հեկտար տարածքում տեղակայված կարկտապաշտպան ցանցային համակարգերի համար տրամադրված վարկերը,
- 2532 գլուխ խոշոր եղջերավոր տոհմային կենդանիների ձեռքբերման համար նախորդ տարիներին տրամադրված վարկերը,
- 10 հեկտար ջերմատների կառուցման նպատակով տրամադրվող վարկերը:
- Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև մասնակի փոխհատուցել նախորդ տարիներից կառուցվող կամ վերակառուցվող 19 անասնաշենքի, նոր հիմնվող 500 հեկտար ինտենսիվ պտղատու այգիների և ներդրվող 100 հեկտար ոռոգման արդիական համակարգերի, ինչպես նաև ձեռքբերվող 1,488 գլուխ մանր եղջերավոր տոհմային կենդանիների և 7,000 մեղափեթակների գծով կատարվող ծախսերը:

Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 2,345.4 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է բարձրացնել գյուղատնտեսության ոլորտի արդյունավետությունը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերում ներդնել ժամանակակից ոռոգման համակարգեր՝ գյուղացիական տնտեսավարողներին աջակցության նպատակով:

Զբոսաշրջության զարգացման ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 6,513.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել ապահովել Հայաստան զբոսաշրջային այցելությունների դինամիկ աճին, Հայաստանի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, պատմամշակութային և բնության ժառանգության պահպանությանը, զարգացմանը և պատշաճ ներկայացմանն ու խթանմանը:

Զբոսաշրջության աջակցության հետ կապված գործողությունների միջոցով կստեղծվեն ժամանակավոր և մշտական աշխատատեղեր, միջազգային ցուցահանդեսներին մասնակցություն, միջազգային ճանաչողական այցերի կազմակերպում, պետական աջակցություն ՀՀ մարզերում փառատոների կազմակերպմանը, միջազգային միջոցառման կազմակերպում, աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը, պետական աջակցություն DMO-ների (զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպություններ) գործունեությանը, միջազգային միջոցառման կազմակերպում:

ՀՀ ֆինանսների նախարարության գծով նախատեսվում է հատկացնել 399,578.7 մլն դրամ: Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Պետական պարտքի կառավարում. ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 395,251.1 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է Կառավարության ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորության ապահովումը՝ երկարաժամկետ հատվածում նվազեցնելով պարտքի սպասարկման մեծությունը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է արտարժույթային պետական պարտատոմսերի թողարկում, ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովում, պարտքի կառավարմանն առնչվող տեղեկատվական համակարգերի և ծրագրերի սպասարկում և կառավարության պարտքի և մուրհակների սպասարկում:

Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 18.6 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների աշխատանքի արդյունավետության բարելավումը, հանրային ֆինանսների կառավարման նոր գիտելիքների և փորձի յուրացումը:

Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել է հատկացնել 4,189.7 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակումը և դրա կատարման համակարգում, պետական ծրագրերի պլանավորումը, մշակումը, մոնիթորինգի (վերահսկման) ծառայությունների իրականացումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային ծառայությունների մատուցում, համագործակցության շարունակություն միջազգային վարկանիշային գործակալությունների հետ՝ ՀՀ սուվերեն վարկանիշի շնորհման ուղղությամբ և մի շարք այլ միջոցառումների իրականացումը:

Գնումների գործընթացի կարգավորում և համակարգում ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 119.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է հանրային միջոցների ծախսման արդյունավետության բարձրացումը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է պետական գնումների գործընթացի թափանցիկության՝ հրապարակայնության և մրցակցության աստիճանի բարձրացում՝ էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկում և գնումների պլանավորում, պայմանագրերի կառավարման ու գնումների հաշվետվողականության էլեկտրոնային համակարգի սպասարկում, LSFinance (ԳԳՕ) և «CLIENT-TREASURY» համակարգի անխափան գործունեության ապահովում:

ՀՀ արդարադատության ոլորտի քաղաքականության իրականացման նպատակով 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 23.8 մլրդ դրամ, այդ թվում՝ կապիտալ ծախսերի գծով՝ 1.04 մլրդ դրամ:

Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման, խորհրդատվության և մոնիտորինգի ծրագրի գծով 2025 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող 2022-2026 թվականների գործողությունների ծրագրով և Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում սահմանված միջոցառումները: Մասնավորապես, նախատեսվում է ապահովել ռազմավարություններից բխող 435 իրավական ակտերի նախագծերի մշակում, 5000 պետական փորձագիտական եզրակացությունների, կարծիքների, դիրքորոշումների տրամադրում: Նախատեսվում է իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված շարունակական աշխատանքների իրականացում և պետական ռեգիստրում գրանցման ենթակա 65,000 սուբյեկտների և նրանց առանձնացված ստորաբաժանումների պետական գրանցում և հաշվառում:

Նախատեսվում է ապահովել անձնական տվյալների պաշտպանության ավելի բարձր մակարդակ, մասնավորապես՝ համապատասխանեցնել անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կարգավիճակն օրենքով սահմանված և միջազգային չափանիշներին՝ ապահովելով նաև մարդկային ռեսուրսների, մասնագիտական, նյութական և տեխնիկական կարողությունների զարգացում: Անձնական տվյալների պաշտպանության նպատակով հասարակության իրազեկվածության նպատակով 2025 թվականին նախատեսվում է տրամադրել 300 խորհրդատվություն:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է շարունակել նվազեցնել ոլորտում առկա վարչարարությունը՝ ապահովելով շուրջ 166,000 գրանցումներ, վկայականների կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրում, մատուցվող ծառայությունների ավտոմատացման 100 տոկոս, մատուցվող ծառայությունների դիմաց ներկայացված բողոքների կրճատում՝ մինչև 5 տոկոս:

Դատական և հանրային պաշտպանություն ծրագրի գծով միջոցներն, ինչպես և նախկինում, ուղղվելու են իրավունքի պաշտպանության հասանելիության և օբյեկտիվության ապահովմանը: Ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել են միջոցներ՝ փորձաքննությունների ծառայությունների ձեռքբերման նպատակով, միաժամանակ ապահովելով առաջադրված հարցերի ընդհանուր քանակի մեջ փորձաքննությամբ լուծված հարցերի 95 տոկոս տեսակարար կշիռ:

«Քրեակատարողական ծառայություններ» ծրագրի գծով 2025 թվականին հատկացված գումարները նախատեսվում է ուղղել քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման

և արդիականացման ռազմավարական պլանները կյանքի կոչելուն, ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավմանը, վերասոցիալականացման միջոցառումների իրականացմանը, տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարձրացմանը, պրոբացիայի ինստիտուտի զարգացմանն ու արձանագրված ոլորտային խնդիրների լուծմանը:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է դատապարտյալների 15 տոկոսին ապահովել աշխատանքով, աստիճանաբար ավելացնել ՔԿՀ-ում միջին մասնագիտական /տեխնիկական կրթություն ստացող, սոցիալական /սոցիալական վերականգնում և խորհրդատվություն/ աջակցություն ստացած դատապարտյալների և կալանավորվածների թիվը, ՔԿՀ-ում մշակութային կամ մարզական միջոցառումներին մասնակցած դատապարտյալների տեսակարար կշիռը ընդհանուր դատապարտյալների մեջ:

2025 թվականին շարունակվելու է քրեակատարողական հիմնարկներում գտնվող, իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագրերի իրականացումը: Տարեկան հաստատված ծրագրերին մասնակցած և հավաստագրեր ստացած ունկնդիրների տեսակարար կշիռը մասնակիցների ընդհանուր թվաքանակի մեջ նախատեսվում է 80 տոկոս:

Կառավարությունը շարունակելու է վճռական մնալ վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորման հարցում: Այս համատեքստում հիմնական թիրախային ուղղությունները լինելու են զարգացնել Պրոբացիայի ծառայության կարողությունները և հզորացնել կադրային ներուժը: Պրոբացիայի ծառայությունում հաշվառված շահառուների համար նախատեսվում է իրականացնել 260 կրթական, կրոնական, սպորտային, մշակութային միջոցառումներ, ավելացնել վերասոցիալականացման ծրագրերին մասնակցած շահառուների թիվը, հանրային աշխատանքներ պատժատեսակում ներգրավված շահառուների թիվը, արդյունքում ապահովելով կրկնահանգագործություն կատարած շահառուների թվի կրճատում:

Ազատությունից զրկելուն այլընտրանք հանդիսացող նոր պատժատեսակների և խափանման միջոցների արդյունավետ կիրառման նպատակով Պրոբացիայի ծառայությանը 2025 թվականին շարունակվելու է էլեկտրոնային հսկողության համար անհրաժեշտ միջոցներով ու ենթակառուցվածքներով վերազինումը և, ըստ այդմ, իրավակիրառ պրակտիկայում էլեկտրոնային հսկողության փաստացի և պատշաճ կիրառումը:

«Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգում՝ «ԱՐԼԻՍ» կայքում լրացուցիչ մոտ 5,000 իրավական ակտի հրատարակում, տեղեկատվական համակարգի ամենշաբաթյա թարմացում, իրավական ակտերի էլեկտրոնային ժողովածուի պարբերական համալրում և ՀՀ, ԵՏՄ, ԵՄ իրավական ակտերի, ՀՀ ազգային զեկույցների, ՀՀ պետական մարմինների կողմից միջազգային կառույցներ ներկայացվող և այդ կառույցների կողմից ՀՀ մարմիններ ներկայացվող փաստաթղթերի և հանձնարարվող այլ առանցքային փաստաթղթերի թարգմանությունների կատարումը: Ծրագրի նպատակն է ապահովել մոտ 3 տոկոս հանրային իրազեկվածության բարձրացում:

«Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 2250 հատուկ ծառայողների, 327 դատավորների, 257 դատախազների, 250 դատական կարգադրիչների վերապատրաստումն ու հատուկ ուսուցումը, ապահովելով վերապատրաստման հավաստագիր ստացած ունկնդիրների 99 տոկոս տեսակարար կշիռ:

2025 թվականին Դատաիրավական բարեփոխումների շրջանակում իրականացվելու է հարկադիր կատարման ոլորտի համընդհանուր բարեփոխումներ՝ բարձրացնելու կատարողական գործողությունների արդյունավետությունը, առավելագույնս ապահովելու կատարողական վարույթի մասնակիցների օրինական շահերի պաշտպանությունը, նրանց խնդիրներին ու կարիքներին արագ և արդյունավետ արձագանքելու կառուցակարգերի ներդրմանը: 2025 թվականին նախատեսվում է ավարտել ընթացքի մեջ գտնվող կատարողական վարույթների 58 տոկոսը, բռնագանձման ենթակա գումարի նկատմամբ բռնագանձված գումարի տեսակարար կշիռը նախատեսվել է 15 տոկոս, իսկ աճուրդով վերականգնված գումարի տեսակարար կշիռը՝ 7 տոկոս:

Հարկադիր կատարման վարույթի ամբողջական թվայնացման, ըստ այդմ՝ քաղաքացի-հարկադիր կատարող արդյունավետ հաղորդակցության ապահովման նպատակով հարկադիր կատարման ծառայության գծով 2025 թվականին նախատեսվել են միջոցներ տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, ՀՀ Կառավարության ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է ՀՀ արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև կազմակերպում և ղեկավարում է դիվանագիտական ծառայությունն օտարերկրյա պետություններում և միջազգային կառույցներում:

ՀՀ արտաքին գործերի նախարարության գծով 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվում է հատկացնել շուրջ 18,083.7 մլն դրամ:

Հատկացվող միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում: ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 301.5 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ Դիվանագիտական և պետական ծառայության արդյունավետության բարձրացում, դիվանագիտական ծառայության համալրում նոր և որակյալ մասնագետներով, պետական ծառայության, այդ թվում՝ դիվանագիտական ծառայողների վերապատրաստում, տեսական գիտելիքների և գործնական հմտությունների բարելավում և նրանց աշխատանքի արդյունավետության բարձրացում: Հայաստանի դիվանագիտական դպրոցը նախատեսում է իրականացնել վերապատրաստման նոր ծրագրեր և ընդլայնել

շահառուների շրջանակը՝ ընդգրկելով թե՛ դիվանագետներ, թե՛ պետական այլ մարմինների աշխատակիցների նոր խմբերի: Այդ ծրագրերը նպատակ ունեն բարելավել դիվանագիտական ծառայության որակը և ընդլայնել շահառուների շրջանակը:

Արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականության մշակում և իրականացում: ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 3,322.5 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և պետական շահերի պաշտպանությունը, միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատումը և զարգացումը, միջազգային հարաբերություններում ՀՀ շահերի և իրավունքների ներկայացումը: Ծրագիրն ուղղված է տարածաշրջանային խաղաղության և կայունության հաստատմանը, գործընկերների հետ համագործակցության խթանմանը և հարաբերությունների կարգավորմանը:

Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ: ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 1,936.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է միջազգային կազմակերպությունների հետ և դրանց շրջանակներում բնականոն փոխհարաբերությունների ու արդյունավետ համագործակցության ապահովում և ընդլայնում:

Ծրագիրն ուղղված է միջազգային կազմակերպությունների աշխատանքներին ՀՀ մասնակցության, երկրում նրանց կողմից տարբեր ծրագրերի իրականացման ապահովմանը և միջազգային հարաբերություններում ՀՀ առաջնահերթությունների սպասարկմանը: Հայաստանն անդամակցում է 113 միջազգային կազմակերպության, այդ թվում՝ մասնագիտացված մարմինների, ծրագրերի, կոնվենցիաների և միջազգային հանրության կողմից ընկալվում է որպես կանխատեսելի և հուսալի գործընկեր:

Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում: ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 12,315.6 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է երկկողմ և բազմակողմ միջազգային հարաբերություններում ՀՀ ներկայացում, օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց շահերի պաշտպանություն:

1991 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել 182 պետության հետ: Արտերկրում Հայաստանի Հանրապետությունը ունի 44 ռեզիդենտ դեսպան, հավատարմագրված դեսպանություններ ընդհանուր առմամբ 116 երկրում, 2 ՀՀ դեսպանության գրասենյակ (Լյուքսեմբուրգ, Սերբիա), ՀՀ մշտական ներկայացուցիչներ են նշանակված 24 միջազգային կազմակերպություններում, արտերկրում գործում են 10 ՀՀ գլխավոր հյուպատոսություն, 2 հյուպատոսական գրասենյակ և 63 պատվավոր հյուպատոս:

Ծրագիրն ուղղված է միջազգային ասպարեզում ՀՀ շահերի պաշտպանությանը և դիրքորոշումների առաջ մղմանը:

Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում: ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 207.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում և ՀՀ միջազգային հարաբերություններում պետական արարողակարգային կանոնների միասնական կիրառում, միջազգային արարողակարգային չափանիշներին համապատասխան միջոցառումների ընթացակարգերի և ծիսակարգերի կազմակերպում և իրականացում:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊՆ կողմից 2025 թվականին ծախսերը նախատեսվում է իրականացնել **հինգ ծրագրերի շրջանակներում**, որոնց գծով պետական բյուջեով նախատեսվում է **664,636.9 մլն դրամ**, որից ընթացիկ ծախսերի գծով՝ 256,954.2 մլն դրամ կամ 38.9%, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով՝ 407,682.7 մլն դրամ կամ 61.1%: Ծախսերի աճը ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նկատմամբ կկազմի 110,738.4 մլն դրամ:

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրով նախատեսվել է 660,912.5 մլն դրամ՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից 110,981.4 մլն դրամով ավել:

«ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագիրը ՀՀ ՊՆ համակարգի գործունեությունն ապահովող հիմնական ծրագիրն է, որի շրջանակներում նախատեսվում են ՀՀ զինված ուժերի պահպանման, ռազմական, մարտական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, կապի համակարգի սարքավորումների, զորանոցային և տեխնիկական գույքի, պարենի, հանդերձանքի, վառելիքաքսուքային նյութերի սահմանված պաշարների մակարդակի, զենքի և զինամթերքի հնարավոր ներհանրապետական գնումների, բանակի մարտունակության և կենսաապահովման պահանջների բավարարման ծախսերը:

«Ռազմաբժշկական սպասարկում և առողջապահական ծառայություններ» ծրագրի գծով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 1,405.8 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու են վերականգնողական մասնագիտացված բուժօգնության գծով ծառայությունների տրամադրում, համաճարակային միջոցառումների կազմակերպում, զինվորական հոսպիտալների և բժշկական կետերի սարքավորումների ընթացիկ վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ:

«Ռազմական ուսուցում և վերապատրաստում» ծրագրի շրջանակներում ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 1,065.3 մլն դրամ:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել ուսուցում արտերկրի ռազմական ուսումնական հաստատություններում և ակադեմիաներում:

«Միջազգային ռազմական համագործակցություն» ծրագրով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 932.1 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում կիրականացվի օտարերկրյա պետություններում ՀՀ ռազմական կցորդների և միջազգային կազմակերպություններում ռազմաքաղաքական և ռազմական ներկայացուցիչների պահպանման ծախսերի ֆինանսավորումը: Ծախսերը ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել են 112 մլն դրամով՝ պայմանավորված գործուղված կցորդների ընտանիքի անդամների թվի փոփոխությամբ, նոր նշանակումներով և կցորդների ու ներկայացուցիչների ռոտացիոն ծախսերի փոփոխությամբ:

«Հումանիտար ակնազերծման և փորձագիտական ծառայություններ» ծրագրի գծով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 321.1 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հակաականային գործողությունների ենթակա տարածքի հետազննում, քարտեզագրում, նախատեսվող ծավալի աշխատանքների հստակեցում և իրականացվող միջոցառումների պլանավորում:

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով ՀՀ ներքին գործերի նախարարության ընդհանուր հատկացումները կազմում են 105,000.0 մլն դրամ:

Նախատեսվող հատկացումները հիմնականում վերագրվում են ընթացիկ ծախսերին՝ 99,100.5 մլն դրամ, իսկ կապիտալ ծախսերը կազմել են 5,899.5 մլն դրամ:

Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների մոնիթորինգ և վերահսկողություն ծրագրի գծով հատկացումները կազմում են 86,925.5 մլն դրամ, որից ընթացիկ ծախսերի գծով հատկացումները կազմում են 82,208.5 մլն դրամ, իսկ կապիտալ ծախսերը՝ 4,717.0 մլն դրամ:

Ծրագրով իրականացվող ներքին գործերի նախարարության գործունեության հիմնական նպատակներ են.

- հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգության ապահովումը,
- պետական շենքերի կարևորագույն օբյեկտների անվտանգության ապահովումը,
- հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովմանն աջակցելը,
- ռազմական և արտակարգ դրությունների իրավական ռեժիմի ապահովմանը մասնակցելը,
- քրեական վարույթի իրականացնող մարմիններին օժանդակելը,
- միգրացիոն քաղաքականության մշակումը և իրականացումը,
- Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական փաստաթղթերի տրամադրման համակարգի արդիականացումը և բնակչությանը մատուցվող էլեկտրոնային ծառայությունների հնարավորությունների ավելացումը:

ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայություններ ծրագրի գծով հատկացումները կազմում են 14,924.2 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում հատկացված միջոցներն ուղղվելու են փրկարարական ուժերի կարողությունների զարգացմանը և պատրաստականության բարձրացմանը:

ՀՀ ներքին գործերի նախարարության կրթական ծառայություններ ծրագրի գծով հատկացումները կազմում են 2,129.9 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների մասնագիտական գիտելիքների և գործնական հմտությունների ձևավորումը: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել ոստիկանության ծառայողների նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթության գծով:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ազգային անվտանգությունը կառույց է, որն ապահովում է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:

ՀՀ արտաքին և ներքին անվտանգության ապահովման կարևորագույն նախապայմանն անվտանգության միջավայրի համակողմանի գնահատման հիման վրա արտաքին, ներքին և պաշտպանական քաղաքականության ճկուն գործիքակազմի ձևավորումն է, ինչը հնարավորություն կտա Կառավարության քաղաքական առաջնահերթությունները կյանքի կոչելու համար ստեղծել կայուն և կանխատեսելի մթնոլորտ, իսկ արտաքին անվտանգության ապահովման երաշխիքների համար՝ բավարար կարողություններ:

Ազգային անվտանգության ծառայության նպատակներն են հետախուզական գործունեությունը, հակահետախուզական գործունեությունը, ռազմական հակահետախուզական գործունեությունը, պետական սահմանի պահպանությունը և պայքարը հանցագործությունների դեմ: Այս առումով վերջնական արդյունքներն են ՀՀ ազգային անվտանգության սպառնալիքների մասին տեղեկությունների ստացումը և կանխարգելիչ միջոցառումների անցկացումը, օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական գործունեության բացահայտումը, կանխումը և խափանումը, օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հանցագործությունների բացահայտումը, կանխումը և խափանումը, ՀՀ պետական սահմանի անձեռնմխելիության ապահովումը, սահմանափակումների կանխումը և խափանումը:

Ազգային անվտանգության ծառայության գերակա վերջնական արդյունքն է ազգային անվտանգության ապահովումը:

Ազգային անվտանգության համակարգի զարգացման հիմնական միտումները նպատակաուղղված են ներքին և արտաքին սպառնալիքներից անձի, հասարակության ու պետության անվտանգության ապահովման բարձրացմանը, տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների, այդ թվում՝ կոռուպցիայի տարբեր դրսևորումների և տնտեսության զարգացմանը խոչընդոտող այլ երևույթների ժամանակին հայտնաբերման ու բացահայտման աշխատանքների ակտիվացմանը, օպերատիվ գործունեության արդյունավետության բարձրացմանը, պետական սահմանի շրջօրյա հսկման և պահպանման բարելավմանը, այդ թվում նաև էլեկտրոնային համակարգերով և ծառայողական կենդանիներով (շներ, ձիեր և այլն), հետախուզության, հակահետախուզության ոլորտի ընդլայնմանը, օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից օգտագործվող գործակալական ցանցի բացահայտման հետ կապված աշխատանքների զարգացմանը, գաղտնի տեղեկատվության անվտանգության մակարդակի բարելավմանը, նոր համակարգի ներդրման ապահովմանը:

Ոլորտային քաղաքականության թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացվում է ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով հատկացնել 61,093.2 մլն դրամ, կամ 9,085.1 մլն դրամով ավել ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նկատմամբ՝ պայմանավորված ծառայության բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությամբ:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտաքին հետախուզության ծառայությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կենսական շահերին սպառնացող արտաքին վտանգներից անձի, հասարակության և պետության պաշտպանության, ինչպես նաև պետության կենսական ոլորտների բնականոն զարգացման նպատակով արտաքին քաղաքական, ռազմական, տնտեսական, գիտատեխնիկական, բնապահպանական և կենսական այլ ոլորտներում հետախուզական տեղեկությունների հավաքագրում, մշակում, ամփոփում և ներկայացում ՀՀ վարչապետին:

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 3,826.4 մլն դրամ, կամ 636.7 մլն դրամով ավել՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նկատմամբ:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Պետական պահպանության ծառայությունն իրականացնում է պետական պահպանության ենթակա օբյեկտների անվտանգության ապահովման և պետական օբյեկտների

պաշտպանության ոլորտի գործառույթ, իրավական, կազմակերպական, պահպանական, ռեժիմային, օպերատիվ-հետախուզական, տեխնիկական և այլ միջոցառումների համակցմամբ:

Պետական պահպանության ծառայության նպատակներն են՝ իր իրավասության սահմաններում կազմակերպել պետական պահպանության ենթակա օբյեկտների անվտանգությունը, կանխատեսել և բացահայտել այդ օբյեկտներին սպառնացող վտանգը և նրանց կանխարգելման համար իրականացնել համալիր միջոցառումներ, պետական պահպանության օբյեկտների անվտանգությունն ապահովել նրանց մշտական կամ ժամանակավոր գտնվելու վայրում, իր իրավասության շրջանակներում մասնակցել ահաբեկչության դեմ պայքարին, պաշտպանել պահպանվող օբյեկտները, կանխել և խափանել պահպանվող օբյեկտներում հանցագործությունները և այլ իրավախախտումները, ապահովել սահմանված անցագրային ռեժիմն ու կարգը:

Պետական պահպանության ծառայության զարգացման հիմնական միտումները նպատակաուղղված են պետական պահպանության ծառայության հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց, ինչպես նաև մշտական և ժամանակավոր պահպանվող օբյեկտների անվտանգության ապահովման բարձրացմանը, պետական պահպանության ապահովման համար տեխնիկատնտեսական բազայի ամրապնդմանը, զենք-զինամթերքի արդիականացմանը և ավելացմանը, անհրաժեշտ նյութական ռեսուրսներով ապահովմանը, զինծառայողների և զինվորական կոչում չունեցող աշխատակիցների ֆինանսական և սոցիալական վիճակի բարելավմանը, սեփական ուսումնական կենտրոնը, նրան կից անհրաժեշտ շինությունները լրացուցիչ պահեստներով ապահովմանը, ինչպես նաև անձնակազմի մասնագիտական պատրաստականության բարձրացմանը:

Ոլորտային քաղաքականության թիրախների (վերջնական արդյունքների) ապահովման նպատակով ՀՀ պետական պահպանության ծառայության կողմից իրականացվում է «Պետական պահպանության ապահովում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվում է հատկացնել 7,704.2 մլն դրամ, կամ 1,719.6 մլն դրամով ավել՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նկատմամբ:

ՀՀ ԿԱՐԶԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀՀ վարչապետի աշխատակազմի գծով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվում է հատկացնել 24,284.0 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Տեսչական վերահսկողության ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 7,248.7 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերի):

Ծրագրի նպատակն է ՀՀ-ում ապրանք արտադրողների և ծառայություն մատուցողների կողմից սպառողներին իրացվող արտադրանքի նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը՝ ստանդարտացման և չափագիտական նորմերի ապահովման միջոցով, առողջապահական և աշխատանքի վերահսկողության շրջանակներում լաբորատոր փորձաքննությունների իրականացումը, շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների և բնական ռեսուրսների գերշահագործման վերահսկողության իրականացումը, կրթության ոլորտում տեսչական վերահսկողության ծառայությունների իրականացումը, քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառներում վերահսկողության իրականացումը, ինչպես նաև սննդամթերքի անվտանգության և որակի ապահովման բնագավառներում միջազգային չափորոշիչների պահանջներին համապատասխան լաբորատոր փորձաքննությունների իրականացումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել արտադրական կանեփի նկատմամբ վերահսկողության գծով 20 փորձարկումներ, սննդամթերքի 868 լաբորատոր փորձաքննություններ, գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի 995000 լաբորատոր փորձաքննություններ, գյուղատնտեսական մշակաբույսերի ու բույսերի պաշտպանության միջոցների 5500 լաբորատոր փորձաքննություններ, մեղրի մեջ մնացորդային նյութերի լաբորատոր հսկողության նպատակով 863 հետազոտություններ և ձկան մեջ մնացորդային նյութերի լաբորատոր հսկողության նպատակով 792 հետազոտություններ, ինչպես նաև խոշոր և մանր եղջերավոր կենդանիների շճաբանական 4400 հետազոտություն:

Ծրագրի շրջանակում նախատեսվել են նաև ոչ սպանդանոցային մորթի հետևաքով ստացված կենդանական ծագման հումքի տեղափոխման և ոչնչացման, ինչպես նաև սահմանային պետական վերահսկողության շրջանակներում ներմուծվող սննդամթերքի պահեստային նմուշը այլ պետության ռեֆերենս փորձարկման լաբորատորիա ուղարկելու ծառայությունների գծով միջոցառումներ:

Աջակցություն հասարակական և այլ կազմակերպություններին ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 75.9 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերի):

Ծրագրի նպատակն է նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը: Ծրագրի շրջանակներում հատկացումներն ուղղվելու են պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը, հասարակական կազմակերպություններին, ազգային փոքրամասնություններին աջակցմանը:

Հանրային իրազեկում ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 1,263.5 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ապահովել հանրային կապերի՝ պետական մարմինների թափանցիկությունը, տեղեկատվության մատչելիությունը:

Ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվելու են հանրային իրազեկման ապահովմանը, ՀՀ վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության ապահովմանը նաև

միջազգային հարթակներում, «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության ՀՀ մասնաբաժնի վճարմանը, տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայությունների իրականացմանը:

Տոների և հիշատակի օրերի ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 202.5 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացումը՝ ի նպաստ Ազգային ինքնության պահպանմանը:

Ծրագրի շրջանակներում հատկացումները կուղղվեն Քաղաքացու օրվան նվիրված և «Մեր ժամանակների հերոսը» միջոցառումներին:

Սփյուռքի գծով իրականացվում է 2 ծրագիր, որից.

Հայաստան-Սփյուռք գործակցության ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 551.5 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը, հայապահպանությանն ու ազգային ինքնության պահպանմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Սփյուռքի հայ երիտասարդության և պատանիների ուսումնաճանաչողական այցելություններ, հայերենի ուսուցման դասընթացներ՝ ընդգրկելով շուրջ 600 մասնակցի («Քայլ դեպի տուն»), Հայաստանի Հանրապետության մասին սփյուռքի երիտասարդ առաջնորդների ճանաչողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում 30 մասնակցի համար, ինչպես նաև 18 այցելություններ սփյուռքի համայնքներ՝ խնդիրներին ծանոթանալու, դրանց լուծման ուղիների քննարկման, համայնքներում կազմակերպված միջոցառումներին մասնակցության և այլ նպատակներով, հնարավորություն է ընձեռնվում սփյուռքահայ լավագույն որակավորում ունեցող 100 մասնագետներին, իրենց մասնագիտական և փորձագիտական հմտություններով, ներգրավվելու ՀՀ պետական կառավարման համակարգում («ԻԳործ»), պատրաստվելու և հեռարձակվելու են հայրենադարձության քարոզչության վերաբերյալ 108 հեռուստահաղորդումներ, տեսահոլովակներ և գովազդային նյութեր՝ ապահովելով սփյուռքահայերի իրազեկվածությունը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև իրականացնել Հայրենադարձության ինտեգրման կենտրոնի ընթացիկ աշխատանքները, որը հնարավորություն է ընձեռում կարգավորել հայրենադարձության հետ կապված տարատեսակ հարցեր՝ սպասարկելով շուրջ 2500 անձանց և նպաստելով ՀՀ-ում հայրենադարձների արագ և արդյունավետ ինտեգրմանը:

ՀՀ զարգացման գործընթացներում Սփյուռքի ներուժի ներգրավում ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 294.1 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ապահովել սփյուռքի ներուժի բացահայտումը, տեղեկատվական համակարգերի ստեղծումը, կատարելագործումը և համալրումը, համատեղ ծրագրերի իրականացումը, համահայկական մասնագիտական ցանցերի ստեղծումը, որի արդյունքում հնարավոր կլինի համախմբել Հայաստանի և Սփյուռքի գիտական, կրթական,

տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժը և այն արդյունավետ կիրառել առաջադրված խնդիրների լուծման համար:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ազգային երիտասարդական և մասնագիտական համաժողովներ, որը ներգրավելու է շուրջ 650 մասնակից:

Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում ծրագրի գծով նախատեսվել է հատկացնել 7.3 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է 1100 քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների հետևողական վերապատրաստումը և ուսուցումը:

Պետական հատվածի արդիականացման ծրագրի գծով նախատեսվել է 3,954.4 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է Հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավումը:

Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային Բանկի միջև 2022թ. մարտի 18-ին ստորագրված և 2022թ. նոյեմբերի 14-ին ուժի մեջ մտած Պետական հատվածի արդիականացման չորրորդ վարկային ծրագրի շրջանակներում 2025 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ Ներքին գործերի նախարարության, այդ թվում նաև վերջինիս ենթակա պետական մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների ֆունկցիոնալ գնահատումը, նոտարիատի մասին նոր օրենսդրական ակտերի նախագծերի մշակումը և ծրագրի մոնիթորինգի և գնահատման աշխատանքները, ինչպես նաև դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների ինքնաշխատ հաշվառման համակարգի հիմնական ճարտարապետության (architecture) և նախատիպի մշակում, նոր բիզնես ռեգիստրի և իրական շահառուների հայտարարագրման համակարգի ներդրում, Ֆիզիկական անձանց եկամուտների ինքնահայտարարագրման համակարգի ներդրում, արհեստական բանականության/մեքենայական ուսուցման համակարգի ներդրում, պետական տուրքի հաշվառման համակարգի ներդրում, ՆԳՆ օպերատիվ կառավարման համակարգի նոր մոդուլի ներդրում, ՆԳՆ-ի համար սարքավորումների ձեռքբերում, քրեական դատավարության էլեկտրոնային համակարգի հիմնական ճարտարապետության (architecture) մշակում և քրեակատարողական ծառայության էլեկտրոնային համակարգի հիմնական ճարտարապետության (architecture) մշակում:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գծով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվում է հատկացնել 115,883.7 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

Հարկային և մաքսային ծառայություններ ծրագրի գծով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով, ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը, նախատեսվել է հատկացնել 31,813.1 մլն դրամ:

Ծրագրի նպատակը հարկային և մաքսային միասնական պետական քաղաքականության իրականացումն է, հարկային և մաքսային օրենսդրության ամբողջական և համահավասար կիրառումը ՀՀ տարածքում: Ծրագրի վերջնական արդյունքը՝ արդյունավետ հարկային և մաքսային հսկողության իրականացումն է և պետական բյուջեի եկամուտների ապահովումը:

Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվել է **թվով 12 միջոցառում, որից 6-ը՝ կապիտալ բնույթի** (այդ թվում՝ վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող): Մասնավորապես, նախատեսվում է **Կոմիտեի պահպանման ծախսերի համար հատկացնել 24,742.3 մլն դրամ:**

Նախատեսվում է շարունակել Կոմիտեի կարիքների համար անհրաժեշտ փորձաքննությունների կատարումը, եզրակացությունների տրամադրումը և անվճարունակ քաղաքացիներին իրավական ծառայությունների տրամադրումը: Միաժամանակ, նախատեսվում է իրականացնել հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման մեթոդիկայի մշակում, պլանավորում, ծրագրերի իրականացում, աջակցության ծառայությունների մատուցում և 1800 ծառայողների վերապատրաստում:

Բացի վերը նշվածից, նախատեսվում է նաև շենքային ապահովվածության պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում, որոնց նպատակն է Կոմիտեի կարիքների համար նոր շենքերի կառուցումը: Մասնավորապես, նախատեսվում է Արևելյան մաքսատան-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի ենթակառուցվածքների վերակառուցում աշխատանքների իրականացում:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև ՎՋԵԲ-ի աջակցությամբ իրականացվող «Մեղրիի սահմանային անցակետի ծրագիր» դրամաշնորհային և վարկային ծրագրերով Կոմիտեի նոր շենքային պայմանների ապահովում, որի նպատակն է դրամաշնորհային և վարկային միջոցների շրջանակներում Կոմիտեի Մեղրիի սահմանային անցակետում ունենալ միջազգային չափորոշիչներին համապատասխան նոր մաքսային անցակետ: Ծրագրի մեկնարկը տրվել է 2023 թվականին: Միաժամանակ ՎՋԵԲ-ի աջակցությամբ իրականացվող «Սյունիքի մարզում մաքսային և լոգիստիկ կենտրոն» վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում նախատեսվում է «Սյունիքի մարզում մաքսային և լոգիստիկ կենտրոնի» կառուցում և ժամանակակից տեխնիկական համակարգերով վերազինում:

Հիպոթեկային վարկի վճարված տոկոսների գումարի վերադարձ ծրագրի գծով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է հատկացնել 84,070.6 մլն դրամ:

ՀՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

Անշարժ գույքի պետական ռեգիստրի համակարգի գծով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվում է 3,978,9 մլն դրամի ծախսեր (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Նշված գումարի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Անշարժ գույքի կադաստրի վարման բնագավառում պետական քաղաքականության իրականացում ծրագիրը: Ծրագրի նպատակն է անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգի զարգացումը, պետության կողմից անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը:

Գեոդեզիայի ու քարտեզագրության բնագավառի զարգացման նպատակով նախատեսվում է շարունակել իրականացնել երկրատեղեկատվական համակարգում ՀՀ բնակավայրերի քարտեզագրական հենքի ստեղծման աշխատանքները, կադաստրային քարտեզում չտեղադրված գույքերի նույնականացումն ու դաշտային հանութագրման աշխատանքները և ՀՀ համայնքների կադաստրային թաղամասերի ուղղման նպատակով լրացուցիչ կետերի դիտարկման և թաղամասերի արտաքին սահմանների ամբողջական ուղղման աշխատանքները:

Անշարժ գույքի գրանցման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է իրականացնել գրանցման միասնական ստրաթեգիան ստեղծում:

ՀՀ ԿԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՀ վիճակագրական կոմիտեն ՀՀ կառավարությանը ենթակա պետական մարմին է, որն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքով և այլ իրավական ակտերով:

ՀՀ վիճակագրական կոմիտեն ՀՀ պաշտոնական վիճակագրության գլխավոր արտադրողն է և համակարգում է ազգային վիճակագրական համակարգում պաշտոնական վիճակագրության մշակմանը, արտադրությանը և տարածմանն ուղղված ողջ գործունեությունը, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի:

Վիճակագրական համակարգի նպատակը պաշտոնական վիճակագրություն օգտագործողների ազգային, տարածաշրջանային և միջազգային պահանջները բավարարելն է, նրանց ընթացիկ և առաջացող պահանջմունքներին և քաղաքացիների՝ հանրամատչելի տեղեկություններ ստանալու իրավունքներին համապատասխանեցնելու միջոցով:

Պաշտոնական վիճակագրության ոլորտում որդեգրված ռազմավարությունն ուղղորդված է «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքով սահմանված հիմնական խնդիրների իրագործման ապահովմանը, և խարսխվում է պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների, այն է՝ պրոֆեսիոնալ անկախություն, անաչառություն, օբյեկտիվություն,

ճշգրտություն, հուսալիություն, ոչ հակասականություն, համադրելիություն, պարզություն, թափանցիկություն, վիճակագրական գաղտնիություն և բացառապես վիճակագրական նպատակներով օգտագործելիություն ու արդիականություն, Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագրքով սահմանված սկզբունքների, Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտների և նորմերի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի մոդեռնիզացման ստանդարտների և գործիքների, ԱՄՀ-ի Տվյալների տարածման հատուկ ստանդարտի պահանջների, ինչպես նաև Եվրամիության փորձագետների կողմից Կոմիտեի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության փորձագիտական գնահատման արդյունքների (2018թ.) և Եվրոստատի փորձագետների կողմից ոլորտային գնահատումների դրույթների վրա:

Համաձայն պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների՝ հարկ է, որ օգտագործողներն Կոմիտեն ընկալեն որպես որոշակի քաղաքական ուղղվածությամբ պետական ինստիտուտներից արմատապես տարբերվող մարմին: Քաղաքական, վարչական, գերատեսչական շահերի միջև առկա բախումներում պաշտոնական վիճակագրությունը չներքաշելու երաշխիքները սահմանված են պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներով:

ՀՀ վիճակագրական կոմիտեն նախաձեռնողական է հասարակության նոր կարիքները բավարարելու գործում, երաշխավորելու է կիրառվող գիտելիքների և մեթոդների, ինչպես նաև սխալների դեպքում թափանցիկությունը:

Ոլորտի քաղաքականության հիմնական թիրախն է՝ ազգային պաշտոնական վիճակագրության արտադրություն և տարածում՝ միջազգային վիճակագրական ստանդարտների (ներառյալ՝ Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտը) պահանջներին համապատասխան (այդ թվում՝ ռեսուրսների մասով, հոդված 13, մաս 1 և հոդված 14, մաս 2 և 3):

ՀՀ վիճակագրական կոմիտեի գծով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվում է հատկացնել 2,129.9 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

2025թ. նախատեսվում է իրականացնել «Ազգային պաշտոնական վիճակագրության արտադրություն և տարածում» ծրագիրը, որի նպատակն է տնտեսական և հասարակական գործընթացների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության մշակումը, արտադրումն ու տարածումը:

Ղեկավարվելով «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 8-րդ մասերով, Հայաստանի Հանրապետությունում 2024թ. հոկտեմբերի 11-31-ը ներառյալ նախատեսվում է անցկացնել հերթական գյուղատնտեսական համատարած հաշվառում (ԳՀՀ), որի համար հատկացվել է 2,176.8 մլն դրամ, իսկ 2025թ.՝ ԳՀՀ շրջանակում իրականացնել արդյունքների ամփոփում, որի համար կհատկացի 59.7 մլն դրամ:

ԳՀՀ նպատակն է գյուղատնտեսության կառուցվածքի՝ գյուղատնտեսական նշանակության հողերի, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի, գյուղատնտեսական նշանակության շինությունների, առկա ներուժի՝ մարդկային, նյութական և դրա օգտագործման վերաբերյալ պահն արտացոլող տեղեկատվության հավաքումը, մշակումը և տարածումը: ԳՀՀ արդյունքում ստացված տեղեկատվական բազան հնարավորություն կընձեռի վիճակագրական տեղեկություն օգտագործողների համար ապահովել ոլորտի վերաբերյալ առավել ընդգրկուն և ամբողջական տեղեկություն:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում պետական քաղաքականության իրականացում և կանոնակարգում ծրագրի շրջանակներում 2025 թվականի համար նախատեսվել է շուրջ 3,305.9 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Ծրագրի նպատակն է շարունակել քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց հանդիսացող նորմատիվ փաստաթղթերի մշակումն ու շարունակական արդիականացումը, դրանց ներդաշնակեցումը միջազգային նորմերին, տարածքների և բնակավայրերի կայուն քաղաքաշինական զարգացումն ու դրան նպաստող համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը: Նշված նպատակին հասնելու համար մշակվելու և տեղայնացվելու են թվով 23 նորմատիվատեխնիկական փաստաթղթեր:

Դրանց հետ մեկտեղ, կշարունակվեն ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աշտարբերդի նոր թաղամասի կառուցապատման աշխատանքները (թվով 24 վթարային փայտյա բազմաբնակարան շենքերի փոխարեն կկառուցվեն թվով 15 եռահարկ բազմաբնակարան շենքեր):

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐԾԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Հանրային հեռարձակողի խորհրդի համար 2025 թվականին նախատեսվում է հատկացնել 8,374.1 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Հանրային հեռարձակողի խորհուրդն իրականացնում է «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» ծրագիրը, որի նպատակն է ապահովել բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, ժամանցային հեռուստատեսային և ռադիո հաղորդումների արտադրությունը և հեռարձակումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել Հանրային հեռուստաընկերության առաջին ալիքի եթերում՝ 2893 ժամ, Հանրային ռադիոընկերության Առաջին ծրագրերի

Եթերում՝ 4205 ժամ օրիգինալ (նոր) հաղորդումների հեռարձակում, Հանրային հեռուստաընկերության եթերում 55 բազմազան հաղորդաշարերի պատրաստում և հեռարձակում:

2025 թվականին նախատեսված հատկացումները կուղղվեն նաև ՉԺՀ-ի հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստաընկերության ենթակառուցվածքների ապահովմանը, ԱՄՆ Կալիֆորնիա նահանգում հեռուստատեսային արտադրանքի հեռարձակմանը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Կանխատեսումների համաձայն 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական պարտքը կկազմի 5,272 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 52.1%-ը, իսկ 2025 թվականի տարեվերջին այն կկազմի 6,159 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 56.5%-ը:

Աղյուսակ 17. Պետական պարտքի կառուցվածքը, մլրդ դրամ

| | 31.12.2023 | 31.12.2024 | 31.12.2025 |
|----------------------------------|--------------|--------------|--------------|
| ՀՀ պետական պարտք | 4,807 | 5,272 | 6,159 |
| այդ թվում՝ | | | |
| արտաքին պետական պարտք | 2,644 | 2,777 | 3,352 |
| որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք | 236 | 233 | 248 |
| ներքին պետական պարտք | 2,163 | 2,494 | 2,806 |
| տոկոսներով ՀՆԱ-ի նկատմամբ | | | |
| ՀՀ պետական պարտք | 50.9 | 52.1 | 56.5 |
| այդ թվում՝ | | | |
| արտաքին պետական պարտք | 28.0 | 27.5 | 30.8 |
| որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք | 2.5 | 2.3 | 2.3 |
| ներքին պետական պարտք | 22.9 | 24.7 | 25.8 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ

Կառավարության պարտքի 2024 և 2025 թվականների կանխատեսումները կատարվել են հետևյալ ենթադրությունների հիման վրա.

- ՀՀ 2024թ. պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը պարտքային գործիքների հաշվին կիրականացվի 490.9 մլրդ դրամի չափով, որից.
- 350.8 մլրդ դրամը պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին,
- 140.1 մլրդ դրամը արտաքին աղբյուրների հաշվին՝ (315.1 մլրդ դրամի մասհանումներ և 175.0 մլրդ դրամի արտաքին վարկերի գծով մարումներ):
- ՀՀ 2025թ. պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը պարտքային գործիքների հաշվին կիրականացվի 649.2 մլրդ դրամի չափով, որից 291.4 մլրդ դրամը պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին, 357.8 մլրդ դրամը՝ արտաքին աղբյուրների հաշվին, այդ թվում՝ վարկերի հաշվին 296.6 մլրդ դրամ (կատարվելիք մասհանումների և մայր գումարի մարումների տարբերություն), արտարժույթային պետական պարտատոմսերի հաշվին (տեղաբաշխումից մուտքերի և մարումների տարբերություն)՝ 61.3 մլրդ դրամ:

Պարտքի կանխատեսումների վրա ազդել են նաև հետևյալ գործոնները.

- Առկա և նոր պարտքի սպասարկման և մարման պայմանները,
- ՀՀ 2025թ. պետական բյուջեի հիմքում դրված 2024թ. և 2025թ. ՀՆԱ-ի և այլ մակրոտնտեսական կանխատեսումային ցուցանիշները:
- 2025թ. պետական բյուջեի ծրագրային ցուցանիշների համաձայն 2025թ. համախառն ֆինանսական կարիքը կազմել է 1,372.2 մլրդ դրամ, որը նախատեսվում է ֆինանսավորել հետևյալ պարտքային գործիքներով.
- Գանձապետական պարտատոմսեր – 700.0 մլրդ դրամ,
- Բյուջետային աջակցության վարկեր – 261.3 մլրդ դրամ,
- Ծրագրային վարկեր – 217.3 մլրդ դրամ,
- Արտարժույթային պարտատոմսեր – 193.6 մլրդ դրամ:

Կանխատեսվում է, որ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքը կկազմի 5,910.4 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 54.3 տոկոսը և 2024 թվականի տարեվերջի համեմատությամբ ՀՆԱ-ի նկատմամբ կաճի 4.4 տոկոսային կետով: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նշված կանխատեսումը տարբերվում է կառավարության պարտքի կառավարման 2025-2027 թվականների միջնաժամկետ ռազմավարական ծրագրով սահմանված ցուցանիշից՝ պայմանավորված հիմնականում կանխատեսումների հիմքում ընկած տարբեր մակրոտնտեսական ու հարկաբյուջետային շրջանակներով, այդ թվում՝ փոխարժեքներով:

Աղյուսակ 18. Կառավարության պարտքը

| | 31.12.2023 | 31.12.2024 | 31.12.2025 |
|--|------------|------------|------------|
| ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ | 4,572.0 | 5,038.5 | 5,910.4 |
| ՀՀ կառավարության պարտք, մլն ԱՄՆ դոլար | 11,294.6 | 12,647.9 | 13,963.1 |
| ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ի նկատմամբ | 48.4 | 49.8 | 54.3 |

Պարտքի կառավարելի մակարդակում պահպանմանը զուգահեռ ՀՀ կառավարությունը կշարունակի պարտքի պորտֆելի բարելավման ջանքերը՝ նպատակ ունենալով պահպանել դիմակայունությունը հնարավոր ցնցումներին, ապահովել պետական պարտատոմսերի շուկայի շարունակական զարգացումը և խորացումը, մշտական հասանելիությունը ներքին ու արտաքին ֆինանսական շուկաներին, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրների ու գործիքների դիվերսիֆիկացումը:

Այս տեսանկյունից ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքին արժույթով պարտքը կշարունակի պահպանվել պատմականորեն բարձր մակարդակներում,

կշարունակվեն արտաքին ներդրողների մոտ պարտատոմսերի շուկայի գրավչության պահպանման ջանքերը, ինչպես նաև կընդլայնվի միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցությունը: Կառավարության պարտքը կունենա հետևյալ կառուցվածքը.





Աղյուսակ 19. Կառավարության պարտքի կառուցվածքը

| | 31.12.2023 | 31.12.2024 | 31.12.2025 |
|--|------------|------------|------------|
| Կառուցվածքն ըստ ռեզիդենտության, մլրդ դրամ* | | | |
| ներքին պարտք | 2,163.2 | 2,494.3 | 2,806.1 |
| արտաքին պարտք | 2,408.8 | 2,544.2 | 3,104.4 |
| Կառուցվածքն ըստ գործիքակազմի, մլրդ դրամ | | | |
| արտաքին վարկեր և փոխառություններ | 1,836.1 | 1,954.4 | 2,415.1 |
| պետական գանձապետական պարտատոմսեր | 2,092.9 | 2,450.7 | 2,747.9 |
| արտարժույթային պետական պարտատոմսեր | 632.8 | 622.7 | 740.8 |
| արտաքին երաշխիքներ | 3.0 | 2.7 | 2.6 |
| ներքին երաշխիքներ | 7.2 | 8.0 | 4.0 |
| Արժույթային կառուցվածքը, մլրդ դրամ | | | |
| ՀՀ դրամով ներգրավված պարտք | 2,100.0 | 2,458.7 | 2,751.9 |
| արտարժույթով ներգրավված պարտք | 2,471.9 | 2,579.9 | 3,158.5 |
| Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի, մլրդ դրամ | | | |
| լողացող տոկոսադրույքով | 734.4 | 833.2 | 1,267.1 |
| ֆիքսված տոկոսադրույքով | 3,837.5 | 4,205.3 | 4,643.3 |

*2024 և 2025 թվականների համար պետական գանձապետական և արտարժույթային պարտատոմսերի գծով պարտքի մնացորդը բաշխվել է ըստ ռեզիդենտության՝ հիմք ընդունելով 2024թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի ձևավորված տեսակարար կշիռները:

Տոկոսավճարների բեռը էական չավելացնելու, ինչպես նաև պետական բյուջեի արտարժույթային մուտքերի կարիքն ապահովելու նպատակով, 2025 թվականի տարեվերջին՝ 2024 թվականի կանխատեսումային մակարդակների նկատմամբ, ներքին պարտքի և դրամային պարտքի մասնաբաժինները պարտքի կառուցվածքում կնվազեն համապատասխանաբար 2.0 և 2.2 տոկոսային կետով: Այնուամենայնիվ, ներքին պարտքի և դրամային պարտքի մասնաբաժինները 2025 թվականին կպահպանվեն պատմականորեն բարձր մակարդակներում:

Գծապատկեր 6. Կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տարրերի դասակարգումների



Հաշվի առնելով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումները և պարտքի գծով ծրագրավորված գործառնությունները, ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2025-2027 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված ուղենշային ցուցանիշները 2025 թվականի տարեվերջի դրությամբ կկազմեն.

Աղյուսակ 20. ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2025-2027 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված ուղենշային ցուցանիշները 2025 թվականի տարեվերջին


| | Ուղենիշ | 2025 |
|---|-------------------|----------|
| Վերաֆինանսավորման ռիսկ | | |
| Մինչև մարում միջին ժամկետը | 7 – 10 տարի | 7.6 տարի |
| Առաջիկա երեք տարվա ընթացքում մարման ենթակա պարտքի տեսակարար կշիռ, % | առավելագույնը 35% | 24.8% |
| Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատուների (ՊԳՊ) առավելագույն կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին) | առավելագույնը 20% | 13.2% |
| Տոկոսադրույքի ռիսկ | | |
| Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | առնվազն 80% | 78.6% |

| | Ուղենիշ | 2025 |
|---|-------------|-------|
| Փոխարժեքի դիսկ | | |
| Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | առնվազն 40% | 47.5% |
| ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | առնվազն 40% | 46.6% |

ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կառուցվածքում ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցները բաշխվել են այնպես, որ պահպանվի ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքին պարտքի տեսակարար կշռի նվազագույն 40% ուղենիշը: Միաժամանակ, հաշվի են առնվել 2025-2027թթ. հարկաբյուջետային շրջանակի առանձնահատկությունները, այդ թվում՝ աճող ֆինանսական կարիքի պայմաններում ներքին շուկայի հագեցվածություն չառաջացնելու մղումը և արտարժույթային ելքերի առկայությունը: Այս պայմաններում, չնվազեցնելով ներքին պարտքի շուկայում ակտիվությունը, անհրաժեշտություն է առաջացել որոշակիորեն նվազեցնել գանձապետական պարտատոմսերի տարեկան զուտ թողարկումների ծավալը:

2025 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորվող կառավարության պարտքի մարման ժամանակացույցը սփռված կլինի մինչև 2054 թվականը և կունենա հետևյալ տեսքը:

Գծապատկեր 7. Կառավարության պարտքի մարման ժամանակացույցը 31.12.2025թ. դրությամբ, մլրդ դրամ



2025 թվականին կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի 7.4%: Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն ՀՆԱ-ի 3.6%-ը:

Աղյուսակ 21. Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ)

| | 2023 | 2024 | 2025 |
|---|-------|-------|-------|
| Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճար), մլրդ դրամ | 253.4 | 345.0 | 394.1 |
| %-ներով ՀՆԱ-ի նկատմամբ | 2.7 | 3.4 | 3.6 |
| Կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույք, % | 7.0 | 7.6 | 7.4 |

ՊԱԿԱՍՈՒՐԴԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

Պակասուրդի ֆինանսավորման փոխառու աղբյուրների կառուցվածքն ընտրվել է ծախսերի և ռիսկերի ցուցանիշների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում: Ընտրվել է փոխառու միջոցներով պակասուրդի ֆինանսավորման այնպիսի կառուցվածք, որը կնպաստի ներքին պարտքի շուկայի զարգացմանը, կապահովի ՀՀ կառավարության պարտքի գծով ռիսկերի չափավոր մակարդակ, միաժամանակ, կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածներում հնարավորինս կսահմանափակի պետական պարտքի գծով ծախսերի աճը:

Ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքը նախատեսելիս հաշվի են առնվել տնտեսությունում մակրոմիջավայրի զարգացումներն ըստ կանխատեսումների բազային սցենարի, իրացվելիության առկա մակարդակը, պետական գանձապետական պարտատոմսերի նկատմամբ ձևավորված կայուն պահանջարկը և պարտքի սպասարկման մեծությունը:

2025 թվականին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին կկազմի 649.2 մլրդ դրամ, ինչը կիրականացվի պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին՝ 291.4 մլրդ դրամի չափով, արտաքին վարկերի հաշվին՝ 296.6 մլրդ դրամի չափով և արտարժույթային պետական պարտատոմսերի հաշվին՝ 61.3 մլրդ դրամի չափով:

ՊԱԿԱՍՈՒՐԴԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ

Ներքին պարտքի շուկայում իրականացվելիք միջոցառումները

ՀՀ ֆինանսների նախարարությունը կշարունակի պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումների, փոխանակումների իրականացումը՝ նպատակ ունենալով հարթեցնել պարտքի մարման գրաֆիկը և նվազեցնել վերաֆինանսավորման ռիսկը, ինչպես նաև բարձրացնել տեղաբաշխվող պարտատոմսերի իրացվելիությունը և նպաստել երկրորդային շուկայի զարգացմանը:

Պետական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության նվազման պայմաններում աստիճանաբար կավելացվի երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումների ծավալը՝ դրանք կենտրոնացնելով 10 տարի մարման ժամկետի շուրջ՝ որպես հիմնական ուղենիշ:

Պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման միջոցով կշարունակվի շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի կոնսոլիդացիան՝ կրճատելով դրանց քանակը:

Կիրականացվի գնաճով ինդեքսավորվող պարտատոմսերի դեբյուտային թողարկում:

Պետական բյուջեով նախատեսված որոշակի ոլորտներում առանձին նախագծերի ֆինանսավորման նպատակով կդիտարկվի նպատակային պարտատոմսերի թողարկման հնարավորությունը:

Կարևորելով պետական գանձապետական պարտատոմսերի մանրածախ շուկայի զարգացումը՝ կընդլայնվի մանրածախ առցանց հարթակի (gp.minfin.am) հասանելիությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս և սպահովելու և ոչ ռեզիդենտների մուտքը պետական գանձապետական պարտատոմսերի շուկա առավել մատչելի դարձնելու համար: Կառավարության նկատմամբ վստահության ամրապնդման ուղղությամբ քայլերին զուգահեռ, կշարունակվեն հանրային իրազեկման աշխատանքները պոտենցիալ ներդրողների շրջանում:

Պակասորդի ֆինանսավորման գործիքակազմը

Պետական գանձապետական պարտատոմսերով բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է կարճաժամկետ (3, 6, 9 և 12 ամիս), միջնաժամկետ (3 և 5 տարի), երկարաժամկետ (10 և 30 տարի) և խնայողական պարտատոմսերի հաշվին:

Յուրաքանչյուր երկու ամիսն առնվազն մեկ անգամ կկազմակերպվի 52, 39, 26 և 13 շաբաթ մարման ժամկետ ունեցող պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդներ: Կարող են իրականացվել նաև պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներ, ընդ որում մինչև 3 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ կարող են իրականացվել կանխիկ հոսքերի կառավարման նպատակով, իսկ 3-12 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման շրջանակներում:

2025 թվականի ապրիլի 29-ին կթողարկվեն 3 և 5 տարի մարման ժամկետայնությամբ նոր միջնաժամկետ պետական գանձապետական պարտատոմսեր:

Աճուրդների կողմնորոշիչ ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը կիրապարակվի եռամսյակային կտրվածքով:

Յուրաքանչյուր աճուրդին տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը կիրապարակվի աճուրդից առաջ՝ գործակալների հետ խորհրդակցելուց հետո:

2025 թվականի ընթացքում կիրականացվեն նաև պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումներ և փոխանակումներ: 2025 թվականի ընթացքում պարտատոմսերի հետգնումների 70-80%-ը կիրականացվեն մարման գրաֆիկի

հարթեցման, իսկ 20-30%-ը՝ պարտատոմսերի իրացվելիությունը խթանելու նպատակով: ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր թողարկման պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում այդ պարտատոմսերի հետգնում չի իրականացնի:

ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջում եռամսյակային կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ կիրապարակվի ուղենշային համարվող պարտատոմսերի ցանկը:

ՊԱԿԱՍՈՒՐԴԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՎԱՐԿԵՐՈՎ

Համագործակցությունն արտաքին վարկատուների հետ կշարունակվի՝ նախապատվությունը տալով վարկավորման առավել բարենպաստ պայմաններով և ազատ փոխարկելի արժույթով փոխառու միջոցներ տրամադրող վարկատուների հետ համագործակցությանը, և աստիճանաբար անցում կկատարվի շուկայական գործիքներով պակասուրդի ֆինանսավորմանը:

ՀՀ 2025 թվականին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու համար նախատեսվում է արտաքին վարկերի գծով կատարել 478.7 մլրդ դրամի (1,236.3 մլն ԱՄՆ դոլար) մասհանումներ: Ընդ որում մասհանումներից 217.3 մլրդ դրամը (561.3 մլն ԱՄՆ դոլար) նախատեսվում է կատարել նպատակային վարկային ծրագրերի գծով, իսկ մնացած 261.3 մլրդ դրամը (675.0 մլն ԱՄՆ դոլար)՝ բյուջետային աջակցության վարկերի գծով:

2025 թվականի համար ծրագրավորված բյուջետային աջակցության վարկերի ստացման համար բանակցություններ են վարվում ՀՀ հիմնական գործընկեր միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ. Ասիական Ջարգացման Բանկ, Ջարգացման Ֆրանսիական Գործակալություն, Կայունացման և Ջարգացման Եվրասիական Հիմնադրամ, Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկ, ՕՊԵԿ-ի Միջազգային Ջարգացման Հիմնադրամ և այլն:

ՊԱԿԱՍՈՒՐԴԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ (ԵՎՐԱՊԱՐԱՏՈՄՍԵՐՈՎ)

ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել է 2025 թվականին մարվող 313.2 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով եվրապարտատոմսերը վերաֆինանսավորելու նպատակով իրականացնել նոր եվրապարտատոմսերի տեղաբաշխում՝ 500 մլն ԱՄՆ դոլար ուղենշային ծավալով: Սակայն, միջազգային ֆինանսական կառույցներից առավել նպաստավոր պայմաններով փոխառությունների ներգրավման հնարավորության առկայության կամ ներքին շուկայում բարենպաստ պայմանների առկայության դեպքերում, կառավարության կողմից կդիտարկվեն այդ աղբյուրներից յուրաքանչյուրի կամ դրանց համատեղման միջոցով 2025 թվականին մարվող եվրապարտատոմսերը վերաֆինանսավորելու նպատակահարմարությունը:


ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՄԱՐՈՒՄԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

2025 թվականին կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կպահանջվի 1,117.1 մլրդ դրամ, որից 723.0 մլրդ դրամը կկազմեն պարտքի գծով մարումները, իսկ 394.1 մլրդ դրամը՝ տոկոսավճարները:

Աղյուսակ 22. Կառավարության պարտքի մարման և սպասարկման ծախսերը (մլրդ դրամ)

| | Մարում | Սպասարկում | Ընդամենը |
|------------------------------------|--------------|--------------|----------------|
| Պետական գանձապետական պարտատոմսեր | 408.5 | 253.2 | 661.7 |
| Արտարժույթային պետական պարտատոմսեր | 132.3 | 32.4 | 164.7 |
| Արտաքին վարկեր | 182.1 | 108.5 | 290.6 |
| Ընդամենը | 723.0 | 394.1 | 1,117.1 |

Գծապատկեր 8. Սպասարկման ծախսերի կառուցվածքը (%)



Պետական գանձապետական պարտատոմսերի մարման համար նախատեսված 408.5 մլրդ դրամի մեջ 30 մլրդ դրամը կազմում է պարտատոմսերի հետգնումների համար ծրագրավորված գումարը:

Արտաքին վարկերի մարման և սպասարկման գծով նախատեսվում է վճարել 290.6 մլրդ դրամ (749.7 մլն ԱՄՆ դոլար):

Արտարժույթային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը 2025 թվականին կկազմեն 83.6 մլն ԱՄՆ դոլար՝ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի գծով արժեկտրոնային վճարումների համար:

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1.1. 2025ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀՈՐԻԶՈՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Միջնաժամկետ հատվածում հարկային եկամուտների կանխատեսվող հոսքերի վրա մակրոտնտեսական բնույթի ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը հիմնվել է ստորև նկարագրված **ՀՆԱ կանխատեսումներից շեղումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի վրա**: Ռիսկերի առարակայացման գնահատումն իրականացվել է Բայեսյան Վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելով, որի նախնական արժեքները նշանակվել են հիմք ընդունելով ՀՀ ՖՆ «AFSM DSGE» կառուցվածքային մոդելով²² գնահատված զգայունության գործակիցները:

1. ՀՆԱ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻՑ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿ

ՀՆԱ-ի կանխատեսումների ռիսկը գնահատվել է 2010-2023 թվականներին միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հիմքում դրվող ՀՆԱ-ի կանխատեսված ցուցանիշների և ՀՆԱ-ի փաստացի ցուցանիշների միջև շեղման հիման վրա, որոնք վերջին տարիների համար եղել են 3.3-ից 4.1 տոկոսային կետ: Ընդ որում, պետք է նշել, որ այս գնահատականներն ամփոփում են կանխատեսումներից ինչպես դրական, այնպես էլ բացասական շեղումները՝ ըստ էության արտացոլելով ՀՆԱ պատմական տատանողականության և ՀՆԱ կանխատեսումների շուրջ ձևավորվող անորոշության ազդեցությունը:

2025-2027թթ-ի համար որպես ռիսկ է դիտարկվել ՀՆԱ-ի իրական աճի հավանականությունների բաշխման գծապատկերի 40% հավանականությանը համապատասխանող մակարդակը, որ կլինի 1 տոկոսային կետով ավելի ցածր կանխատեսված մակարդակից, և 30% հավանականությանը համապատասխանող մակարդակը, որ կլինի 2.1-2.2 տոկոսային կետով ավելի ցածր (տե՛ս 1.5. Մակրոտնտեսական կանխատեսումների ռիսկերը բաժինը):

Արդյունքում, ՀՆԱ նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 1 տոկոսային կետով ցածր լինելու հավանականությունը 2025թվականին գնահատվում է 14.7 մլրդ դրամ, իսկ 2026 և 2027 թվականների համար գնահատվում է համապատասխանաբար 16.5 և 18.6 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ: ՀՆԱ նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2.1-2.2 տոկոսային կետով ցածր լինելու հավանականությունը 2025թվականին գնահատվում է 30.9 մլրդ դրամ, իսկ 2026 և 2027 թվականների համար գնահատվում է համապատասխանաբար 34.7 և 40.9 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

²² *Տե՛ս Babajanyan, V., Baksa, D., Fukac, M. M., Hakobyan, E., Harutyunyan, A., Karapetyan, N., ... & Zanna, L. (2022). The ararat fiscal strategy model: a structural framework for fiscal policy analysis in Armenia. International Monetary Fund. <https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2022/06/10/The-Ararat-Fiscal-Strategy-Model-A-Structural-Framework-for-Fiscal-Policy-Analysis-in-519522>*

2. ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿ

ՄԺԾԾ հիմքում դրվող կանխատեսումները կառուցվում են որոշակի ենթադրությունների հիման վրա, որոնք էլ իրենց հերթին կախված են արտաքին կամ ներքին գործոններից: Սակայն միշտ չէ, որ այդ ենթադրությունները կանխատեսվող հորիզոնում իրականություն են դառնում՝ կապված ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կառավարման դաշտից դուրս ի հայտ եկող երևույթների հետ:

Բացի արտաքին կամ ներքին գործոններից, ենթադրությունների ռիսկ է հարկեր/ՀՆԱ թիրախավորված բարելավման չապահովումը՝ հարկային վարչարարության կատարելագործման ոչ բավարար տեմպ ապահովելու դեպքում:

Ենթադրություններից շեղումների ռիսկ է նաև ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսական զարգացումները: Միաժամանակ, ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում մաքսատուրքերի մասնաբաժինը կարող է փոփոխվել նոր պետությունների ԵԱՏՄ-ին անդամակցությունից:

2.1. Գնաճի շեղման հնարավոր չափը

Գնաճի ցուցանիշի շեղման հնարավոր չափ է դիտարկվում է վերջին տասնամյակում միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հիմքում դրվող գնաճի կանխատեսումներից փաստացի շեղումների միջին չափը:

Կանխատեսված ցուցանիշից գնաճի շեղման ռիսկերը միջնաժամկետ հորիզոնում գնահատվում են միջինում դեպի ներքև՝ 2.6 տոկոսային կետի չափով:

Գնաճի շեղման ռիսկը կարող է ազդեցություն ունենալ ՀՀ պետական բյուջեի և՛ եկամտային, և՛ ծախսային կատարողականների վրա՝ անուղղակի հարկերի, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների գծով ծախսերի ուղղությամբ: Գնանկումային պայմաններում հարկերից մուտքերը կկրճատվեն և ընդհակառակը:

Արդյունքում, գնաճի դանդաղման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2025, 2026 և 2027 թվականների համար գնահատվում է համապատասխանաբար 23.7, 26.1 և 28.1 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2.2. Փոխարժեքի շեղման հնարավոր չափը

Չնայած ՀՀ ԿԲ-ն և ՀՀ ՖՆ-ն մշակում են փոխարժեքի վերաբերյալ սցենարներ, որոնք արտացոլում են փոխարժեքի վարքագիծը տարբեր մակրոտնտեսական հիմնարարների ներքո, ՀՀ-ում իրականացվում է լողացող փոխարժեքի քաղաքականություն, իսկ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ցուցանիշների կանխատեսումների հիմքում դրվում է փոխարժեքի անփոփոխ (որոշակի պահի դրությամբ) մակարդակ: Սակայն փոխարժեքի տատանումները կազդեն ներմուծումից ՀՀ պետական բյուջե մուտքագրվող հարկային եկամուտների վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիների համար *և՛* արժևորման, *և՛* արժեզրկման ուղղությամբ փոխարժեքի տատանումների բացարձակ շեղման միջին չափը չի գերազանցել 6.3 տոկոսը՝ որպես ռիսկ է դիտարկվել ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի առավելագույնը 6.3 տոկոս արժեզրկումը:

Արդյունքում, փոխարժեքի 6.3 տոկոսով արժեզրկման ռիսկի դրսևորման դեպքում, այլ հավասար պայմաններում, 2025, 2026 և 2027 թվականներին կարելի է ապահովել հարկային եկամուտների համապատասխանաբար 16.0, 18.1 և 20.5 մլրդ ՀՀ դրամ լրացուցիչ մուտք:

2.3. Ներմուծման գծով ռիսկի հնարավոր չափը

Քանի որ մաքսային սահմանին ներմուծումից գանձվող անուղղակի հարկերը էական կշիռ ունեն պետական բյուջեի ընդհանուր հարկային եկամուտներում, անհրաժեշտ է գնահատել նաև ներմուծման հնարավոր նվազման պարագայում հարկային եկամուտների նվազման ռիսկի չափը: 2010-2023 թվականների ընթացքում ՄԺԾԾ-ում ներմուծման գծով կանխատեսումների շեղման միջին բացարձակ չափը գտնվում է 7.3-14.3%-ի միջակայքում, ինչն էլ հաշվի է առնվել այս գործոնի ազդեցությունը գնահատելու համար: 2022-2024 թթ. գնահատականներում ներմուծման ցուցանիշները դիտարկվել են առանց վերաարտահանման ծավալների: 2025, 2026 և 2027 թվականների համար ծրագրվածից համապատասխանաբար 7.3, 12.3 և 14.3% պակաս ներմուծման ռիսկի դրսևորման պայմաններում հարկային եկամուտների վրա ազդեցությունը գնահատվել է համապատասխանաբար՝ 23.1, 43.9 և 57.7 մլրդ ՀՀ դրամ՝ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2.4. Հարկեր/ՀՆԱ թիրախավորված բարելավումը չապահովելու ռիսկի չափը

ՀՀ հարկեր/ՀՆԱ ցուցանիշը վերջին տասնամյակում միջինում բարելավվել է շուրջ 0.2 տոկոսային կետով, որին նպաստել են ինչպես տնտեսության կառուցվածքային փոփոխությունները (հարկունակ ճյուղերի մասնաբաժնի ավելացում), այնպես էլ հարկային օրենսդրական բարեփոխումները և վարչարարության արդյունավետության բարձրացումը՝ ստվերի դեմ պայքարի և հարկային վարչարարության ճեղքի աստիճանական կրճատման ճանապարհով: Այնուամենայնիվ, վերջին տարիներին հարկային վարչարարության ճեղքի կրճատման ավելի բարձր արագության հաշվին հարկեր/ՀՆԱ բարելավումների տեմպը արագացել է (2021-2023թթ. հարկային ճեղքը միջինում կրճատվել է 0.6%-ային կետով): Ըստ այդմ, համահունչ նաև ՀՀ կառավարության ծրագրով մինչև 2026 թ. թիրախավորված առնվազն 25% հարկեր/ՀՆԱ ցուցանիշ գրանցելու թիրախկին, միջնաժամկետ հատվածում ծրագրվել է տարեկան 0.6 տոկոսային կետով բարելավման տեմպ, որում հարկային վարչարարության ազդեցությունը 0 . 4%-ային կետ է: Այնուամենայնիվ, հարկային վարչարարության ազդեցությունը ճեղքի կրճատման վրա ոչ գծային է, և կարող է թուլանալ ճեղքի ավելի ցածր մակարդակներում: Ըստ այդմ, ռիսկի չափ է դիտարկվել ծրագրվածից ավելի դանդաղ հարկեր/ՀՆԱ բարելավման սցենարը 0 . 3%-ային կետի չափով, որը ենթադրում է ցուցանիշի բարելավում վերջին տասնամյակի միտումներին համահունչ:

Վերը նկարագրված ռիսկի առարկայացման դեպքում 2025, 2026 և 2027 թվականներին հարկային եկամուտները առավել ցածր կձևավորվեն համապատասխանաբար 32.7, 35.7, 39.1 մլրդ դրամով:

Ամփոփելով վերը նկարագրված կանխատեսումների ռիսկի, ենթադրություններից շեղումների և հարկեր/ՀՆԱ թիրախավորված բարելավումը չապահովելու ռիսկի գնահատականները, միջնաժամկետ հորիզոնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման, ինչպես նաև հարկային վարչաչարության լրացուցիչ ջանքի չապահովման ռիսկերի ազդեցության քանակական ամփոփ գնահատականները ներկայացվում են ստորև.

Աղյուսակ 3.1.1 Հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերի ազդեցություն, մլրդ դրամ²³

| | 2025 | 2026 | 2027 |
|---|--------------------------------|--------|--------|
| Ռիսկի տեսակը | Ազդեցության գնահատականը | | |
| Ռիսկերի առանձին հանդես գալու պայմաններում | | | |
| 1. Կանխատեսվածից ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ | | | |
| Կանխատեսումից 1.0 տոկոսային կետով ցածր աճ | -14.7 | -16.5 | -18.6 |
| Կանխատեսումից 2.1-2.2 տոկոսային կետով ցածր աճ | -30.9 | -34.7 | -40.9 |
| 2. Ավելի ցածր գնաճի ռիսկ, 2.6 տոկոսային կետ | -23.7 | -26.1 | -28.1 |
| 3. Փոխարժեքի 6.3 տոկոս արժեզրկման ռիսկ | 16.0 | 18.1 | 20.5 |
| 4. Ներմուծման նվազման ռիսկ, 7.3-14.3 տոկոսային կետ | -23.1 | -43.9 | -57.7 |
| Վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում | | | |
| 1.0 տոկոսային կետով ավելի ցածր ՀՆԱ աճ | -47.2 | -66.8 | -80.0 |
| 2.1-2.2 տոկոսային կետով ավելի ցածր ՀՆԱ աճ | -61.6 | -83.0 | -99.9 |
| Հարկային եկամուտների վարչարարության ռիսկ, 0.3 տոկոսային կետ | -32.7 | -35.7 | -39.1 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | |
| 1.0 տոկոսային կետով ավելի ցածր ՀՆԱ աճ | -79.9 | -102.6 | -119.1 |
| 2.1-2.2 տոկոսային կետով ավելի ցածր ՀՆԱ աճ | -94.3 | -118.8 | -139.0 |

Այսպիսով, գնահատվում է, որ հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված

²³ՀՆԱ, ներմուծման, փոխարժեքի և գների գծով հավանական ռիսկերի քանակային գնահատականը ստացվել է՝ հիմք ընդունելով այս գործոնների պայմական շարժի բացարձակ միջին սխալը:

մակարդակից առավելագույն շեղումը 2025-ի համար կկազմի շուրջ 94.3 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2026 և 2027 թթ-ի համար համապատասխանաբար 118.8 մլրդ ՀՀ դրամ և 139.0 մլրդ ՀՀ դրամ:

Հարկային եկամուտների վրա առանձին ռիսկերի ազդեցության չափի վերաբերյալ պատկերացում են տալիս նաև ստորև ներկայացվող զգայունության գնահատականները, սակայն այս դեպքում դիտարկվում է հարկային եկամուտների աճի վրա ազդող գործոնների աճերի 1% փոփոխության ազդեցությունը, ինչը ներկայացված է հարկային եկամուտների զգայունության աղյուսակում:


Աղյուսակ 3.1.2 Հարկային եկամուտների զգայունությունը հիմնական տնտեսական գործոնների նկատմամբ, %

| | ՀՆԱ | Գնաճ | Փոխարժեք | Ներմուծում |
|--|------|------|----------|------------|
| Տարեկան (շրկին հաջորդող 4 եռամսյակների) ազդեցություն | 0.99 | 0.66 | 0.26 | 0.13 |

Ինչպես երևում է աղյուսակից, հարկերի հավաքագրման առումով առավել էական գործոններ են հանդիսանում ՀՆԱ-ի և գնաճի փոփոխությունները:

Հարկային եկամուտների կանխատեսումների հետ կապված անորոշությունների և ռիսկերի հաշվեկշռի վերաբերյալ գնահատականներն իրենց արտացոլումն են գտել ստորև ներկայացվող հարկային եկամուտների հավանականային բաշխման գծապատկերում և համապատասխան աղյուսակում (տես՝ Գծապատկեր 3.1 և Աղյուսակ 3.1.3): Հավանականային բաշխման գրաֆիկի կառուցման ժամանակ օգտագործվել է աղյուսակ 3.1.1-ում գնահատված ամբողջական ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում ի հայտ եկող բացասական ռիսկերը:

Գծապատկեր 3.1. Հարկային եկամուտների տարեկան աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը, %



Կանխատեսումների բաշխման հավանականություններն առավել պարզորոշ երևում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 3.1.3 Հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը

| | 2025 | 2026 | 2027 |
|------------------------------------|---|------|------|
| Հարկային եկամուտների աճի միջակայքը | Հարկային եկամուտների աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը | | |
| 3-8 տոկոս | 0.27 | 0.28 | 0.32 |
| 8-13 տոկոս | 0.47 | 0.44 | 0.43 |
| 13-18 տոկոս | 0.16 | 0.15 | 0.08 |

Աղյուսակ 3.1.3-ի առաջին սյունը ներկայացնում է հարկային եկամուտների աճի միջակայքերը, իսկ 2-ից 4-րդ սյուները՝ նշված միջակայքերից յուրաքանչյուրում այդ աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ միջնաժամկետ կանխատեսումների: Համաձայն գնահատականների, 2025-2027 թվականներին հարկային եկամուտների աճի տեմպի՝ 8-13% միջակայքում գտնվելու հավանականությունն ամենաբարձրն է (Գծապատկեր 3.1-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 3.1.3-ում՝ հոծ նշումով):

2.1.2. 2025ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀՈՐԻԶՈՆԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԵՂՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խաթարող ռիսկերին, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման:

Աղյուսակ 3.2.1 ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և ծախսերի, ինչպես նաև այլ հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցությունը²⁴ (ֆինանսավորման պահանջ՝ - պահանջի մեծացում, + պահանջի նվազում), մլրդ ՀՀ դրամ

| Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող ռիսկեր | 2025 | 2026 | 2027 |
|--|--------|--------|--------|
| 1. Կանխատեսվածից ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ | | | |
| 1.0 տոկոսային կետ | -14.7 | -16.5 | -18.6 |
| 2.1-2.2 տոկոսային կետ | -30.9 | -34.7 | -40.9 |
| 2. Ավելի ցածր գնաճի ռիսկ, 2.6 տոկոսային կետ | | | |
| 2.6 տոկոսային կետ | -21.2 | -23.5 | -25.3 |
| 3. Փոխարժեքի 6.3 տոկոս արժեզրկման ռիսկ | | | |
| 6.3 տոկոս արժեզրկման ռիսկ | 5.6 | 7.0 | 6.6 |
| 4. Ներմուծման նվազման ռիսկ, 7.3-14.3 տոկոսային կետ | | | |
| 7.3-14.3 տոկոսային կետ | -23.1 | -43.9 | -57.7 |
| Հարկային եկամուտների վարչարարության ռիսկ, 0.3 տոկոսային կետ | | | |
| 0.3 տոկոսային կետ | -32.7 | -35.7 | -39.1 |
| Ընդամենը | | | |
| 1.0 տոկոսային կետով ավելի ցածր ՀՆԱ աճ | -86.1 | -112.6 | -134.2 |
| 2.1-2.2 տոկոսային կետով ավելի ցածր ՀՆԱ աճ | -102.3 | -130.9 | -156.5 |

Աղյուսակ 3.2.1-ում ցույց են տրված գնահատված լրացուցիչ ռիսկերը, որոնք կհանգեցնեն լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: Ակնհայտորեն երևում է, որ գնաճի տատանումների հետևանքով կնվազի նախատեսված ֆինանսավորման պահանջը և համապատասխանաբար կփոփոխվեն նաև պետական բյուջեի ծախսերը՝ նվազման ուղղությամբ:

Հաշվի առնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող մակարդակից վերոնշյալ հնարավոր շեղումների ռիսկերի գնահատականները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման տեսանկյունից 2025- թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը առավելագույնը կկազմի շուրջ

²⁴ Ընդհանուր ազդեցության գնահատականը հիմնված է մակրոտնտեսական ռիսկերի առանձին հանդես գալու ենթադրության վրա:

102.3 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 0.9%-ը, իսկ 2026 և 2027 թթ-ին կկազմի համապատասխանաբար 130.9 և 156.5 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 1.1-1.2%-ը:

Պետք է նշել, որ գնահատված ռիսկի չափը, առարկայացման դեպքում մասնակիորեն կկլանվի կառավարության պահուստային ֆոնդով, որը նույն ժամանակահատվածի համար նախատեսված է 0.4-0.8%, իսկ լրացուցիչ մասը՝ կկլանվի ՀՀ կառավարության կողմից ապահովվող՝ նվազագույնը ՀՆԱ 1%-ի չափով իրացվելիության «բարձիկի» միջոցով:

3.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

3.1 ՀԱՏՈՒԿ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հարկաբյուջետային ռիսկերն այն կառուցվածքային և հատուկ գործոններն են, որոնք կարող են հանգեցնել հարկաբյուջետային արդյունքների շեղմանը՝ նախապես սպասված կամ կանխատեսված ցուցանիշներից: Հարկաբյուջետային արդյունքների շեղումը առավել հաճախ արտահայտվում է պետության ստանձնած պարտավորությունների նյութականացմամբ: Այդ պարտավորությունները կարող են լինել բացահայտ, երբ առկա է իրավական պարտավորություն (օրինակ՝ պետական վարկի երաշխիքներ), կամ թաքնված, երբ կա պետության պատասխանատվության հանրային ակնկալիք, որը սահմանված չէ օրենքով (օրինակ՝ բնական կամ մարդածին աղետներից առաջացող վնասների փոխհատուցումը):

Հարկաբյուջետային ռիսկերի կառավարումը կարևոր է, քանի որ այդ ռիսկերը չբացահայտելը և դրանց չնախապատրաստվելը կարող է հանգեցնել զգալի բացասական հետևանքների, ինչպիսիք են լրացուցիչ պետական պարտավորությունները, պետական պարտքի ավելացումը ու ճգնաժամերը: Հարկաբյուջետային ռիսկերի արդյունավետ բացահայտումը, ազդեցության չափի գնահատումը և կառավարումը նպաստում է հարկաբյուջետային կայունության բարձրացմանը, փոխառությունների ծախսերի և հարկաբյուջետային ճգնաժամերի հավանականության նվազեցմանը, ինչպես նաև արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության իրականացմանը:

Ստորև նկարագրված են հարկաբյուջետային ռիսկերի այն աղբյուրները, որոնք պետական բյուջեի կայունության տեսանկյունից համարվում են էական, և դրանց ազդեցության գնահատումն ու կառավարմանն ուղղված քայլերը նշանակալի են ֆիսկալ կայունության տեսանկյունից: Հատուկ ռիսկերի տեսանկյունից դիտարկվել են այնպիսի ռիսկեր, որոնք բխում են պետական մասնակցությամբ ընկերություններից, պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերից, բյուջետային վարկերից և երաշխիքներից, բնական և մարդածին աղետներից, բնապահպանական պարտավորություններից, շրջակա միջավայրի ղեգրադաջիայից, ինչպես նաև պետության դեմ դատական վարույթներից:

3.1.1 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Այս բաժինը վերլուծում է պետական մասնակցությամբ ընկերությունների (այսուհետ՝ ՊՄԸ) առկա վիճակից և գործունեությունից բխող ֆինանսական ռիսկերի մակարդակը:

Ֆինանսական ռիսկերը կարող է ի հայտ գալ այն ժամանակ, երբ ՊՄԸ-ների գործունեությունը կամ ֆինանսական վիճակը հանգեցնում է լրացուցիչ փոխառությունների, սուբսիդիաների, սեփական կապիտալի ներարկումների կամ պետական բյուջեից այլ վճարումների անհրաժեշտության: Բացի այդ, ֆինանսական դժվարություններ ունեցող ՊՄԸ-ներից ակնկալվող շահութաբաժինների կամ փոխառությունների սպասարկման վճարումների չկատարումը կարող է բացասաբար անդրադառնալ պետական եկամուտների վրա:

ՊՄԸ-ՆԵՐԻ ՊՈՐՏՖԵԼԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՊՄԸ է համարվում այն ընկերությունը, որի բաժնետոմսերի 50 կամ ավելի տոկոսը պետության կամ համայնքի սեփականությունն է²⁵:

Ըստ դիտարկված տեղեկությունների՝ 2023 թվականի տվյալներով ՀՀ-ում գործում է 187 շահույթ հետապնդող պետական մասնակցությամբ և համայնքային մասնակցությամբ ընկերություն, որոնցից 34-ը գտնվում է Երևանի քաղաքապետարանի կառավարման ներքո: Առկա է նաև 15 ընկերություն, որտեղ պետությունն ունի մինչև 50 տոկոս բաժնեմաս (տե՛ս աղյուսակ 1):


Աղյուսակ 1. Պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների դասակարգումն՝ ըստ բաժնեմասնակցության

| 50 տոկոս և ավել | Երևանի քաղաքապետարան | Մինչև 50 տոկոս | Ընդհանուր |
|-----------------|----------------------|----------------|-----------|
| 153 | 34 | 15 | 202 |

ՊՄԸ-ները հիմնականում գործում են այնպիսի ռազմավարական ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկան, առողջապահությունը, ջրային տնտեսությունը և այլն: Ընկերությունների ակտիվների և պարտավորությունների մեծ մասը կենտրոնացված է էներգետիկ ոլորտում՝ կազմելով ՊՄԸ-ների ընդհանուր պորտֆելի, համապատասխանաբար, 56%-ը և 73%-ը (տե՛ս գծապատկեր 1):

²⁵ «Պետական գույքի մասնավորեցման մասին» ՀՀ օրենք:


Գծապատկեր 1. Պետական մասնակցությամբ ընկերությունների ակտիվները և պարտավորություններն՝ ըստ ոլորտների



Հարկ է նշել, որ ՀՀ-ում ՊՄԸ-ների եկամտաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ ցածր է համաշխարհային միջին մակարդակից: Մասնավորապես, ՀՀ-ում ՊՄԸ-ների եկամուտ/ՀՆԱ հարաբերակցությունը 2023թ.-ին կազմել է շուրջ 3.8%²⁶, մինչդեռ, Համաշխարհային բանկի զեկույցի համաձայն, որտեղ 91 երկրում ուսումնասիրվել է առնվազն 10% պետական մասնաբաժին ունեցող 76,000 ընկերություն, միջին եկամուտը կազմել է ՀՆԱ-ի 17%-ը²⁷:

2023թ.-ին ՊՄԸ-ների ակտիվների ծավալը կազմել է 854.5 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 2020թ.-ի նկատմամբ 7.3%-ով, իսկ պարտավորությունների ծավալը կազմել է 477.1 մլրդ ՀՀ դրամ՝ 2020թ.-ի նկատմամբ նվազելով 12.9%-ով (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2. ՊՄԸ-ների ակտիվների և պարտավորությունների ծավալը 2020-2023թթ.²⁸



9 ընկերության ակտիվների ծավալը կազմում է ընդհանուր ակտիվների պորտֆելի 61.4%-ը, մինչդեռ նրանց պարտավորությունները կազմում են ընդհանուր պարտավորությունների

²⁶ Հաշվարկում ներառվել են միայն 50 % և ավել մասնակցություն ունեցող ընկերությունները:

²⁷ Աղբյուրը՝ World Bank, *The business of the state*, 2023.

²⁸ Ներառված են նաև Երևան քաղաքապետարանի ենթակայության տակ գործող համայնքային մասնակցությամբ ընկերությունների տվյալները:

պորտֆելի 77.6%-ը: Այդ ընտրություններն են՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, «Հայփոստ» ՓԲԸ, «Էլեկտրաէներգետիկական Համակարգի Օպերատոր» ՓԲԸ, «Վ. Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ: Հաշվի առնելով վերջիններիս ակտիվների գերակշռող մակարդակը՝ հետևաբար դրանց նշանակությունը թե՛ հանրային շահի, թե՛ ֆինանսական կայունության տեսանկյունից՝ ստորև վերլուծվել են 9 ՊՄԸ-ի ֆինանսական առողջության մակարդակը: Ներկայացվել է նաև այդ ընկերությունների շարքում քվազի-ֆիսկալ գործունեության օրինակներ:

Քվազի-ֆիսկալ են համարվում գործունեության այն տեսակները, որոնք, չնայած վատթարացնում են հանրային ընկերությունների ֆինանսական վիճակը՝ համեմատած զուտ առևտրային առավելագույն շահույթի մակարդակի հետ, սակայն ուղղված են հանրային քաղաքականության նպատակներին: Քվազի-ֆիսկալ գործունեությունը կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ ներառյալ իրենց առևտրային արժեքից ցածր գնով ապրանքների և ծառայությունների վաճառքը կամ ընտրված մատակարարներին առևտրային արժեքից բարձր գնով վճարումները²⁹:

Հաշվի առնելով, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների արժեքը ցածր է շուկայականից, պետությունն աջակցում է ընկերությանը՝ գործառնական գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի չափով: Մասնավորապես, 2024թ-ին ֆինանսական ճեղքվածքի ծածկմանն ուղղվելու է շուրջ 1.9 մլրդ ՀՀ դրամ: «Ջրառ» ՓԲԸ-ին ուղղվելու է շուրջ 1.3 մլրդ ՀՀ դրամ՝ ոռոգման ջրի սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով³⁰:

ՊՄԸ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ³¹

Վերլուծությունը կատարվել է շահութաբերության, իրացվելիության և վճարունակության ցուցանիշների գնահատումների հիման վրա, որոնց արդյունքում ռիսկայնության մակարդակը դասակարգվել է ըստ կատեգորիաների: Ընդ որում, 1-ին կատեգորիան նշում է ռիսկի ցածր մակարդակ, իսկ 5-րդը՝ ռիսկի բարձր մակարդակ (տե՛ս աղյուսակ 2): Վերլուծության համաձայն՝ ՊՄԸ-ների ռիսկի միջին կշռված մակարդակը 2023թ. դրությամբ 3-րդ կատեգորիայում է (տե՛ս աղյուսակ 3): 2023 թ.-ին վերլուծության են հետևյալ ընկերությունները՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, «Էլեկտրաէներգետիկական Համակարգի Օպերատոր» ՓԲԸ-ն, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն, «Վ. Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն, քանի որ ոչ բոլոր ընկերություններն են ներկայացրել իրենց ֆինանսական հաշվետվությունները: Ի թիվս այլ ֆինանսական


²⁹ Աղբյուրը՝ IMF, *Fiscal Transparency Handbook* (2018).

³⁰ Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ, 2024թ. պետական բյուջե:

³¹ Որոշ ՊՄԸ-ների 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունները դեռևս հրապարակված չեն:

ցուցանիշների՝ ընկերությունների պարտքի մակարդակը³² շարունակում է մնալ բարձր: Պարտքի բարձր մակարդակը կարող է հանգեցնել պետության կողմից աջակցության կարիքի առաջացման հավանականության բարձրացմանը՝ ֆինանսական անկայունության պայմաններում: ՊՄԸ-ների ֆինանսական առողջությունը հատկապես վատթարացել է 2020 և 2021 թվականներին, ինչը պայմանավորված է COVID-19-ի համաճարակի ազդեցությամբ: 2023թ.-ին, չնայած պարտքի մակարդակի իջեցմանը, այն դեռևս մնում է էական:

Աղյուսակ 2. Ռիսկի դասակարգում



2023թ.-ին դիտարկված ընկերություններից 3-ը շահութաբեր են եղել, իսկ 5-ը՝ աշխատել են վնասով: Դիտարկված 8 ընկերությունների զուտ շահույթի մարժան³³ 2023թ.-ին կազմել է 0%, իսկ գործառնական շահույթի մարժան³⁴ 5% (տե՛ս գծապատկեր 3):

³² Պարտքի մակարդակը բնութագրող հիմնական ֆինանսական ցուցանիշներն են պարտքը՝ ակտիվների նկատմամբ (debt to assets), պարտքը՝ սեփական կապիտալի նկատմամբ (debt to equity), պարտքը՝ ճշգրտված շահույթը նախքան տոկոսների վճարումը, հարկումը, մաշվածության և ամորտիզացիայի մասհանումների (debt to EBITDA) նկատմամբ:


³³ Ցույց է տալիս եկամտի այն տոկոսը, որը մնում է որպես շահույթ, երբ բոլոր ծախսերը հանվում են ընդհանուր եկամտից: Հարաբերակցության ավելի բարձր ցուցանիշը ցույց է տալիս, որ ստացված եկամուտների մեծ մասն իրացվում է որպես շահույթ:

³⁴ Չափում է ընկերության գործառնական գործունեության արդյունքում ստացված շահույթի մակարդակը՝ նախքան ֆինանսավորման ծախսերը նվազեցնելը: Հարաբերակցության ավելի բարձր ցուցանիշը ցույց է տալիս, որ ստացված եկամուտների մեծ մասն իրացվում է որպես գործառնական շահույթ:

Աղյուսակ 3. ՊՄԸ-ների ռիսկայնության մակարդակը

| Կազմակերպության անվանում | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
|--|--------|--------|--------|--------|--------|
| «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ | Orange | Red | Red | Yellow | Orange |
| «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ | Red | Red | Red | Orange | Red |
| «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ | Orange | Red | Orange | Orange | Orange |
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | Orange | Red | Yellow | Yellow | Orange |
| «Հայփոստ» ՓԲԸ ³⁵ | Orange | Red | Red | Red | |
| «Էլեկտրաէներգետիկական Համակարգի Օպերատոր» ՓԲԸ | Red | Orange | Orange | Orange | Orange |
| «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ | Orange | Orange | Orange | Orange | Orange |
| «Երևանի ավտոբուս» ՓԲԸ | Red | Red | Red | Red | Red |
| «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ | Yellow | Green | Yellow | Orange | Orange |
| Միջին ռիսկայնության մակարդակ | Red | Red | Red | Orange | Orange |

Գծապատկեր 3: ՊՄԸ-ների պոտենցիլ ընդհանուր շահութաբերությունը




2023թ.-ին ընդհանուր ՊՄԸ-ների կողմից փաստացի վճարված շահութաբաժինների գումարը ՀՀ պետական բյուջե կազմել է 2.98 մլրդ ՀՀ դրամ: Գծապատկեր 4-ում ներկայացված են փաստացի վճարված շահութաբաժինների չափերը՝ 2017-2023թթ.-ին³⁶:

³⁵ Հայփոստ ՓԲԸ-ի 2023թ-ի ֆինանսական հաշվետվության աուդիտորական եզրակացությունը բացակայում է:


³⁶ Գծապատկերը ներառում է նաև այն ընկերությունները, որտեղ պետության մասնաբաժինը 50%-ից ցածր է:

Գծապատկեր 4. Շահութաբաժինների գծով փաստացի բյուջետային մուտքեր (հազար ՀՀ դրամ)



Չնայած նրան, որ ընկերությունների վճարունակությունը բարելավման միտումներ ունի, այնուամենայնիվ, պարտք/ակտիվներ հարաբերակցությունը (աջ առանցք)³⁷, և պարտք/սեփական կապիտալ հարաբերակցությունը (ձախ առանցք)³⁸ 2022-2023 բարձրացման միտում ունի (տե՛ս գծապատկեր 5):

Գծապատկեր 5. ՊՄԸ-ների վճարունակություն




Ըստ առանձին ՊՄԸ-ների պարտավորությունների չափի և ընդհանուր ռիսկի փախկապվածությունը ներկայացված է Գծապատկեր 6-ում: Վերջինից երևում է, որ չնայած ընկերությունների պարտավորությունների բարձր չափի, նրանք գտնվում են ռիսկայնության ավելի ցածր մակարդակում, քան այն ընկերությունները, որոնց պարտավորությունները ավելի ցածր են: Այս հանգամանքը հիմնավորվում է նրանով, որ մոդելի յուրաքանչյուր ցուցանիշին

³⁷ Չափում է ընկերության ֆինանսավորման մասնաբաժինը, ինչը բխում է պարտավորություններից: Բարձր հարաբերակցությունը ցույց է տալիս ավելի մեծ կախվածություն պարտքի ֆինանսավորումից:
³⁸ Չափում է ընկերության ֆինանսավորման մասնաբաժինը, որը բխում է պարտավորություններից սեփական կապիտալի նկատմամբ: Բարձր հարաբերակցությունը ցույց է տալիս ավելի մեծ կախվածություն պարտքի ֆինանսավորումից և ավելի քիչ ֆինանսական ճկունություն:

տրված է հավասար կշիռ և մեկ ցուցանիշի բարձր ռիսկային արդյունքը կարող է փոխհատուցվել մեկ այլ ցուցանիշի ցածր ռիսկային արդյունքով:

Գծապատկեր 6. ՊՄԸ-ների պարտավորությունների չափի և ընդհանուր ռիսկի փոխկապվածությունը 2023 թ. (հազար ՀՀ դրամ)



1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
2. «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
3. «Էլեկտրաէներգետիկական Համակարգի Օպերատոր» ՓԲԸ
4. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
5. «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ
6. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
7. «Երևան Ավտոբուս» ՓԲԸ
8. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ

ՊՄԸ-ՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ և ԵՆԹԱՎԱՐԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՊՄԸ-ների ռիսկը բյուջետային վարկերից (ենթավարկերից) և երաշխիքներից բխում է նրանից, որ դրանք արտահայտված են հիմնականում արտարժույթով: Արժույթի տատանումները կարող են բացասաբար ազդել պարտքի սպասարկման ծախսերի վրա և մեծացնել ՊՄԸ-ների վճարման ընդհանուր ֆինանսական բեռը: Վարկերի և ենթավարկերի հիմնական մասը կենտրոնացված է էներգետիկ ոլորտում («Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ, «Երևան ԶԷԿ» ՓԲԸ, «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, «Էլեկտրաէներգետիկական Համակարգի Օպերատոր» ՓԲԸ): Աղյուսակ 4-ում նշված ՊՄԸ-ներին տրամադրված վարկերը և ենթավարկերը կազմում են ընդհանուր վարկային պորտֆելի 71%:

Աղյուսակ 4. Բյուջետային վարկեր և երաշխիքներ, ինչպես նաև պետական օժանդակություն ունեցող ՊՄԸ-ների վերլուծություն (մլն ՀՀ դրամ)³⁹

| ՀՀ մլն դրամ | 2020 | 2021 | 2022 | 2023 | 29.02.2024 |
|--|-------------|-------------|-------------|-------------|-------------------|
| «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ | | | | | |
| Պետության կողմից տրամադրված վարկեր | | | | | |
| Բյուջետային վարկեր և ենթավարկեր | 114,244 | 125,534 | 103,468 | 90,537 | 86,534 |
| Պետական աջակցություն | | | | | 4,994 |
| Տոկոսային հարաբերակցություն ընդհանուր վարկային պորտֆելի նկատմամբ | 22.45% | 30.52% | 32.23% | 29.46% | 28.55% |
| «Երևան ԶԷԿ» ՓԲԸ | | | | | |
| Պետության կողմից տրամադրված վարկեր | | | | | |
| Բյուջետային վարկեր և ենթավարկեր | 128,802 | 104,952 | 74,994 | 68,449 | 65,374 |
| Պետական աջակցություն | | | | | 21,785 |
| Տոկոսային հարաբերակցություն ընդհանուր վարկային պորտֆելի նկատմամբ | 25.31% | 25.52% | 23.36% | 22.27% | 22.23% |
| «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ | | | | | |
| Պետության կողմից տրամադրված վարկեր | | | | | |
| Բյուջետային վարկեր և ենթավարկեր | 61,540 | 58,931 | 46,154 | 47,368 | 47,361 |
| Պետական աջակցություն | | | | | 16,344 |
| Տոկոսային հարաբերակցություն ընդհանուր վարկային պորտֆելի նկատմամբ | 12.09% | 14.33% | 14.38% | 15.41% | 15.61% |
| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 29.02.2024 |

³⁹ Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

| «Երևան Ավտոբուս» ՓԲԸ | | | | | |
|---|----------|-------|----------|----------|----------|
| Պետության կողմից տրամադրված վարկեր | | | | | |
| Բյուջետային վարկեր և ենթավարկեր | | | 1,764 | 8,958 | 8,760 |
| Պետական աջակցություն | 357 | 510 | 1,654 | | |
| Տոկոսային հարաբերակցություն ընդհանուր վարկային պորտֆելի նկատմամբ | | | 0.55% | 2.91% | 2.89% |
| «Հայփոստ» ՓԲԸ | | | | | |
| Պետության կողմից տրամադրված վարկեր | | | | | |
| Բյուջետային վարկեր և ենթավարկեր | | | | | |
| Պետական աջակցություն | | | | | |
| «Հայփոստ»/Վարկային պորտֆել | | | | | |
| «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ | | | | | |
| Պետության կողմից տրամադրված վարկեր | | | | | |
| Բյուջետային վարկեր և ենթավարկեր | 5,355 | 4,361 | 3,026 | 2,524 | 2,470 |
| Պետական աջակցություն | 2,799.80 | 2,855 | 2,720.50 | 2,712.50 | 2,641.80 |
| Տոկոսային հարաբերակցություն ընդհանուր վարկային պորտֆելի նկատմամբ | 1.05% | 1.06% | 0.94% | 0.82% | 0.81% |
| «Էլեկտրաէներգետիկական Համակարգի Օպերատոր» ՓԲԸ | | | | | |
| Պետության կողմից տրամադրված վարկեր | | | | | |
| Բյուջետային վարկեր և ենթավարկեր | 10,341 | 8,947 | 6,714 | 6,407 | 6,161 |
| Պետական աջակցություն | | | | | 934.2 |
| Տոկոսային հարաբերակցություն ընդհանուր վարկային պորտֆելի նկատմամբ | 2.03% | 2.18% | 2.09% | 2.08% | 2.03% |
| «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ | | | | | |
| Պետության կողմից տրամադրված վարկեր | | | | | |
| Բյուջետային վարկեր և ենթավարկեր | | | | | |
| Պետական աջակցություն | | | | | |
| «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ | | | | | |
| Պետության կողմից տրամադրված վարկեր | | | | | |
| Բյուջետային վարկեր և ենթավարկեր | | | | | |
| Պետական աջակցություն | | | | | |

Հանրային միջոցների արդյունավետ կառավարման, թափանցիկության, հաշվետվողականության և մրցակցային հավասար դաշտի երաշխավորման նպատակով, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմից 2024 թվականի «Պետական մասնակցությամբ ընկերությունների սեփականության քաղաքականության մշակում» տեխնիկական աջակցության արդյունքների, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության՝ ՊՄԸ-ների կորպորատիվ կառավարման վերաբերյալ ուղեցույցների հիման վրա՝ մշակվել և շրջանառվել են ՊՄԸ-ներին ուղղված քաղաքականության հայեցակարգային մոտեցումները: Հայեցակարգային մոտեցումների հիման վրա առաջիկայում նախատեսվում է ՊՄԸ-ներին ուղղված սեփականության քաղաքականության մշակում:

ՊՄԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝


Հանրային քաղաքականության նպատակներ՝

- Աջակցել ազգային անվտանգության նպատակների կամ ազգային շահերի ռազմավարական նպատակների իրագործմանը, որոնք նախանշված են Կառավարության ծրագրով:
- Պահպանել բնական մենաշնորհների արդյունավետ գործունեությունը, երբ շուկայի կարգավորումը համարվում է անիրագործելի կամ անարդյունավետ:
- Ապահովել կարևոր հանրային ծառայությունների մատուցումը, երբ շուկայի մասնակիցները, հաշվի առնելով իրենց առևտրային շահերը, չեն ստանձնի այդ ծառայությունների մատուցումը:

Առևտրային նպատակ՝

- Բացառապես առևտրային (շահույթի) նպատակով, ընդ որում, առևտրային նպատակ հետապնդող ընկերությունները պետք է թիրախավորեն արտաքին շուկաները, այդ թվում՝ հնարավորինս ձգտելով տնտեսապես բարդ ապրանքների արտադրությանը կամ հիմնվելով բացառիկ և սահմանափակ ռեսուրսների վրա:

Գծապատկեր 7. Պետական սեփականության հիմնավորումը և դրա բաղադրիչները



Նշենք, որ ընթացքում է «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի գործունեությունը դադարեցնելու գործընթացը . համաձայն ՀՀ կառավարության 23.05.2024թ. N 734-Ն որոշման՝ ընկերության կառավարումը վերապահվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտեին: Գործընթացը կարող է ժամանակատար լինել և պահանջել հավելյալ վերլուծություններ, համապատասխանաբար, ՀՀ ֆինանսների նախարարությունն ընթացքում կապահովի անհրաժեշտ աջակցություն՝ ֆիսկալ ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:

3.1.2 ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Այս բաժնում վերլուծվում են տրամադրված բյուջետային վարկերից և երաշխիքներից ծագող ուղղակի ու ածանցված ֆիսկալ ռիսկերի մակարդակը, ներկայացվում՝ բյուջետային վարկերի և երաշխիքների պորտֆելների վերլուծական պատկերը:


Բյուջետային վարկերից և երաշխիքներից բխող ֆիսկալ ռիսկերն այն ռիսկերն են, որոնց ի հայտ գալը կհանգեցնի տարեկան բյուջեում և ՄԺԾԾ-ում իրականացված կանախատեսումների շեղումների՝ կապված վերոնշյալ վարկերի սպասարկման և մարման, ինչպես նաև վարկավորմամբ կամ երաշխիքի տրամադրմամբ պետության կողմից փաստացի փոխհատուցում տրամադրելու հնարավոր անհրաժեշտության հետ:

Վարկային պորտֆելի իրականացվելիք վերլուծության հիմնական նպատակը պորտֆելի՝ տարբեր ռիսկերի ենթարկվածության աստիճանի գնահատումն է՝ հնարավոր ֆիսկալ ռիսկերի բացահայտման ճանապարհին:

2024 թվականի փետրվարի 29-ի դրությամբ վարկային պորտֆելի չմարված մասի ընդհանուր գումարը կազմել է 303.1 մլրդ, որը նախորդ նույն ժամանակահատվածի

համեմատ նվազել է մոտ 2.7%-ով, ինչը պայմանավորված է տրամադրված վարկերի մարմամբ: Հարկ է նշել, որ զուգահեռաբար նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պորտֆելը համալրվել է նոր վարկերով՝ միաժամանակ կրելով փոխարժեքի տատանումները (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ դրամի փոքր-ինչ արժեզրկում): Նույն ամսաթվի դրությամբ չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում կազմել է 2.23% (տե՛ս գծապատկեր 8):


Գծապատկեր 8. Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում



2024 թվականի փետրվարի 29-ի դրությամբ վարկային պորտֆելի գերակշիռ մասը բաժին է ընկել էներգետիկայի ոլորտին՝ կազմելով մոտ 77%, իսկ հանրագումարային 233.95 մլրդ ՀՀ դրամ:


2024 թվականի փետրվարի 29-ի դրությամբ ենթավարկային պայմանագրերով տրամադրված վարկերը կազմել են ընդհանուր պորտֆելի 71.9%-ը, իսկ բյուջետային վարկերը՝ 28.1%-ը (տե՛ս գծապատկեր 9): Հատկանշական է, որ ՊՄԸ-ների մասնաբաժինը վարկային պորտֆելում կազմել է 73.8%:

Գծապատկեր 9. Վարկային պորտֆելի տարանջատումն՝ ըստ բյուջետային վարկերի և ենթավարկերի



Վարկային պորտֆելի դինամիկայի վերաբերյալ պատկերացում կազմելու համար ստորև՝ Գծապատկեր 10-ում, ներկայացնենք վերջինիս տեսակարար կշիռը ՀՆԱ-ում՝ վերջին տարիների կտրվածքով:


Գծապատկեր 10. Վարկային պորտֆելը և վերջինիս կշիռը ՀՆԱ-ում (մլրդ ՀՀ դրամ, %)



Ինչպես տեսանելի է գծապատկերից, դիտարկվող տարիներին առավելագույն վարկային պորտֆելի չափն ու կշիռը ՀՆԱ-ում արձանագրվել է 2020 թվականին, որը հետևանք է համավարակի ֆոնին տնտեսական ծրագրերի իրականացման նպատակով տրամադրված նոր վարկերի, ինչպես նաև տվյալ տարում արտարժույթի փոխարժեքի դեպի վեր տատանման: Հարկ է նշել, որ վերջին տարիների վարկային պորտֆելի նվազումը մեծամասամբ պայմանավորված է դրամի արժևորմամբ:

2024 թվականի փետրվարի 29-ի դրությամբ ընդհանուր վարկային պորտֆելում ՀՀ դրամով տրամադրված վարկերը կազմել են 33.4% կամ 101.2 մլրդ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով՝ 99.5 մլրդ ՀՀ դրամ կամ 32.9%, Եվրոյով՝ 13.3% կամ 40.3 մլրդ ՀՀ դրամ, ճապոնական իենով՝ 17.9% կամ 54.1 մլրդ ՀՀ դրամ, հատուկ փոխառության իրավունքով (ՀՓԻ) տրամադրված վարկերը՝ 2.5% կամ 7.7 մլրդ ՀՀ դրամ (տե՛ս գծապատկերը 11):


Գծապատկեր 11. Վարկային պորտֆելի արժույթային կազմը



Վարկային պորտֆելի՝ արժութային ռիսկին ենթարկվածության աստիճանը գնահատվում է բավականին բարձր, քանի որ տրամադրված վարկերի գերակշիռ մասը՝ 66.6%-ը, արտարժույթով են, իսկ վարկառուների եկամուտները՝ հիմնականում ՀՀ դրամով:

Վարկային պորտֆելի՝ տոկոսադրույքի ռիսկին ենթարկվածության աստիճանը գնահատելու համար ներկայացնենք փոփոխվող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում, վերջին տարիների կտրվածքով (տե՛ս Գծապատկեր 12):

Գծապատկեր 12. Փոփոխվող տոկոսադրույքով վարկերը և վերջիններիս տեսակարար կշիռը վարկային պորտֆելում (մլրդ ՀՀ դրամ, %)




Գծապատկերից նկատելի է, որ վարկային պորտֆելի՝ տոկոսադրույքի ռիսկին ենթարկվածության աստիճանը ցածր է: 2020թ. փոփոխվող տոկոսադրույքով վարկերի բացարձակ մեծությունը արձանագրվել է առավելագույնը դիտարկվող ժամանակահատվածում, սակայն ի հակադրություն դրան, տեսակարար կշիռը նվազել է, ինչը հետևանք է վարկային պորտֆելի ավելի առաջանցիկ աճի տեմպի, որի հիմնական պատճառներ են հանդիսացել թե՛ համավարակի ֆոնին տրամադրված վարկերը, թե՛ արտարժույթի զգալի տատանումները: 2022-2023թթ. ցուցանիշի աճը պայմանավորված է վարկային պորտֆելի նվազմամբ (վարկերի մայր գումարի մարում), մինչույն ժամանակ փոփոխվող տոկոսադրույքով վարկերի աճով (փոփոխվող տոկոսադրույքով վարկերի աճ, արտարժույթի արժևորում):

Հաշվի առնելով, որ բյուջետային վարկերը տրամադրվել են փոփոխվող և ֆիքսված տոկոսադրույքներով, ստորև ներկայացնենք ֆիքսված տոկոսադրույքով տրամադրված բյուջետային վարկերի միջին տոկոսադրույքների (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար) դինամիկան՝ բանկային վարկերի միջին տոկոսադրույքների (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար)⁴⁰ համեմատությամբ և վերաֆինանսավորման տոկոսադրույքի համադրությամբ:

⁴⁰ «Ֆինանսական շուկայի 1 փարոց ավել ժամկետով իրավաբանական անձանց տրամադրված վարկերի միջին տոկոսադրույք (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար)», աղբյուրը՝ ԿԲ Կրեդիտկազմեր


Գծապատկեր 13. Ֆիքսված տոկոսադրույքով տրամադրված վարկերի ընդհանուր պորտֆելի միջին տոկոսադրույքների դինամիկան՝ ֆինանսական համակարգի տոկոսադրույքների համադրությամբ



Գծապատկերից նկատելի է, որ վերջին տարիներին վերաֆինանսավորման տոկոսադրույքի դեպի վեր փոփոխությանը համընթաց փոփոխվել են նաև ֆինանսական շուկայի միջին տոկոսադրույքները, իսկ բյուջետային վարկերի միջին տոկոսադրույքները դիտարկվող ժամանակահատվածում էական փոփոխությունների չեն ենթարկվել:

2024 թվականի փետրվարի 29-ի դրությամբ պետության կողմից տրամադրված վարկերի 73.6%-ն ապահովված են գրավով (անշարժ և շարժական գույք, հասարակ մուրհակներ, ակտիվներ և այլն), իսկ 26.4%-ը կազմում են գրավով չապահովված վարկերը: Չապահովված վարկերի մոտ 52%-ը բաժին է ընկնում ՊՄԸ-ներին:

Գծապատկեր 14. Բյուջետային վարկերի տարանջատումն՝ ըստ ապահովվածության



2024 թվականի փետրվարի 29-ի դրությամբ վարկային պորտֆելի կենտրոնացվածության մասին պատկերացում կազմելու նպատակով թվով 53 վարկառուներից առանձնացվել են 10 խոշոր վարկառուները (տե՛ս աղյուսակ 5), որոնց տրամադրված վարկերի կշիռը վարկային պորտֆելում կազմում է 88.4%, ընդ որում վերջիններիս 73.81%-ը ՊՄԸ-ներ են՝ թվով 5 վարկառու:

| Վարկառու | | Վարկի չափ | Կշիռը պորտֆելում |
|---|-----|----------------|------------------|
| 1. «Հայկական ատոմային էլեկտրոկայան» ՓԲԸ | ՊՄԸ | 86,534,351,017 | 28.55% |
| 2. «Երևան Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ | ՊՄԸ | 67,376,793,429 | 22.23% |
| 3. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ | ՊՄԸ | 47,316,461,712 | 15.61% |
| 4. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ | | 16,458,539,395 | 5.43% |
| 5. «Դի Էնդ Էյջ Գրուպ» ՍՊԸ | | 11,009,505,960 | 3.63% |
| 6. ՀՀ կենտրոնական բանկ | | 10,845,414,109 | 3.58% |
| 7. ՀՀ ԿԲ գերմանահայկական հիմնադրամին վարկավորում | | 9,004,380,471 | 2.97% |
| 8. «Երևանի ավտոբուս» ՓԲԸ | ՊՄԸ | 8,760,600,000 | 2.89% |
| 9. «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ | ՊՄԸ | 6,160,655,639 | 2.03% |
| 10. ԳՖԿ ԾԻԳ (Գյուղատնտեսական տարածքների տնտեսական զարգացում ԳՏՏԶ) | | 4,339,772,252 | 1.43% |

Աղյուսակ 5. Վարկային պորտֆելի 10 խոշոր վարկառուները, ՀՀ դրամ

3.1.3 ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ


Բյուջետային վարկերից բացի պետության կողմից տրամադրվում են նաև պետական երաշխիքներ, որոնք հանդիսանում են պետական պարտքի բաղադրիչ՝ ներքին և արտաքին պետական պարտքի հետ միաժամանակ և ըստ տեսակների լինում են՝ ներքին և արտաքին:

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված երաշխիքները կազմել են հանրագումարային 41.4 մլրդ ՀՀ դրամ կամ նույն տարվա ՀՆԱ-ի 0.44%-ը:

Վերոնշյալ երաշխիքների փաթեթում արտարժույթով տրամադրված երաշխիքները կազմել են հանրագումարային 84.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ ազգային արժույթով՝ 7.2 մլրդ ՀՀ դրամ:

Ստորև ներկայացնենք տրամադրված պետական երաշխիքների դինամիկան և վերջիններիս տեսակարար կշիռը Կառավարության պարտքում՝ ըստ տարիների:

Գծապատկեր 15. Տրամադրված պետական երաշխիքների դինամիկան և վերջիններիս տեսակարար կշիռը Կառավարության պարտքում՝ 2016-2023 թթ. (մլրդ ՀՀ դրամ, %)




Ինչպես նկատելի է գծապատկերից վերջին տարիներին Երաշխիքներ/Կառավարության պարտք ցուցանիշը ցուցաբերել է մոնոտոն նվազման միտում՝ պայմանավորված մի կողմից տրամադրված երաշխիքների նվազմամբ, մյուս կողմից՝ Կառավարության պարտքի ավելացմամբ:

Ներքին պետական երաշխիքները ՀՀ ռեզիդենտներին տրամադրված բյուջետային երաշխիքներն են, իսկ արտաքին պետական երաշխիքները ոչ ռեզիդենտներին և օտարերկրյա պետություններին Հայաստանի Հանրապետության և Կենտրոնական բանկի կողմից տրամադրված պետական երաշխիքներն են:

Ստորև ներկայացնենք պետական երաշխիքների տարանջատումը՝ արտաքինի և ներքինի, ըստ տարիների:

Գծապատկեր 16. Պետական երաշխիքների տարանջատումը՝ արտաքինի և ներքինի 2016-2023թթ



Գծապատկերից նկատելի է, որ բյուջետային երաշխիքները մեծամասամբ տրամադրվել են արտարժույթով, ինչն էլ փաստում է փաթեթի՝ արտարժույթային ռիսկի ենթարկվածության բարձր մակարդակի մասին:

Ներկայացնենք երաշխավորվող կազմակերպությունների ցանկը, տրամադրված երաշխիքի չափը ՀՀ դրամով և կշիռը համապատասխան պորտֆելում 2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Երաշխավորվող կազմակերպությունների ցանկ

| Պրինցիպալ ⁴¹ | Բենեֆիցիար ⁴² | Երաշխիքի չափ (ՀՀ դրամ) | Կշիռը արտաքին երաշխիքների պորտֆելում |
|---|---|------------------------|--------------------------------------|
| Արտաքին երաշխիքներ | | | |
| 1. ՀՀ կենտրոնական բանկ | ՎՋՄԲ ⁴³ , ԱԶԲ ⁴⁴ , Գերմանիա (ՎՎԲ ⁴⁵) | 31,231,750,763 | 91.20% |
| 2. «ՆՈՐԲ-ՄԱՐԱՇ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ | Էսստե Բանկ (Ավստրիա) | 3,014,711,538 | 8.80% |
| Ներքին երաշխիքներ | | | |
| 1. «Վեդի Ալկո» ՓԲԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | 1,958,100,000 | 27.3% |
| 2. «Պոռոջանի կոնյակի գործարան» ՍՊԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ, «ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ | 1,748,200,000 | 24.4% |
| 3. «Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ | «ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ, «Հայաստանի զարգացման և ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ | 1,273,400,000 | 17.7% |
| 4. «ՄԱՊ» ՓԲԸ | «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ | 900,000,000 | 12.5% |
| 5. «Արտաշատ-Վինկոն» ՓԲԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | 693,000,000 | 9.6% |
| 6. «Արարատի գինու գործարան» ՍՊԸ | «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ | 250,000,000 | 3.5% |
| 7. «Գետափի գինու, կոնյակի գործարան» ՍՊԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | 218,100,000 | 3.1% |
| 8. «Երափխի գինու գործարան» ՍՊԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ | 139,400,000 | 1.9% |


Համաձայն «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի՝ տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների ընդհանուր գումարը

⁴¹ Երաշխավորվող կազմակերպություն
⁴² Կազմակերպություն, որի նկատմամբ պարտավորություն է ստանձնել երաշխավորվող կազմակերպությունը (երաշխավորվող կազմակերպության պարտավորեր)
⁴³ Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկ (IBRD)
⁴⁴ Ասիական Ջարգացման Բանկ (ADB)
⁴⁵ Վերականգնման Վարկերի Բանկ (KFW)

(բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված երաշխիքների) չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների 10 տոկոսը:

Հաշվի առնելով օրենսդրորեն սահմանված վերոնշյալ ֆիսկալ կանոնը ստորև ներկայացնենք տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների կշիռը նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտներում՝ համեմատելով սահմանային շեմի հետ:

Գծապատկեր 17. Տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների կշիռը նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտներում՝ 2016-2023թթ.



Ինչպես նկատելի է գծապատկերից դիտարկվող ժամանակահատվածում ցուցանիշը չի հատել սահմանային շեմը՝ վերջին տարիներին դրսևորելով նվազման միտում, որը պայմանավորված է ինչպես հարկային եկամուտների աճով, այնպես էլ երաշխավորվող պարտավորությունների նվազմամբ:

«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վարկերի տրամադրման դեպքում իրականացվող վերլուծությունների արդյունքում տրամադրվող եզրակացության բովանդակության և կառուցվածքի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեից հատկացվող բյուջետային վարկերից բխող ֆիսկալ ռիսկերի բացահայտման, գնահատման և զսպանն ուղղված առաջարկների ներկայացման նպատակով ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության կողմից իրականացվում է հայտատուի՝ բյուջետային վարկի տրամադրման փուլում նպատակայնության և հիմնավորվածության համապատասխանության ուսումնասիրություն (վարկի տրամադրման նպատակը և հիմնավորումը պետք է բխեն հանրային քաղաքականության նպատակներից), ինչպես նաև ֆինանսական վիճակի և վարկունակության գնահատման համապարփակ վերլուծություններ: Ուսումնասիրությունների և իրականացված վերլուծությունների արդյունքների հիման վրա ներկայացված բյուջետային հայտի վերաբերյալ տրամադրվում է եզրակացություն՝ նշելով պոտենցիալ ռիսկերը և դրանց զսպանն մեխանիզմների վերաբերյալ առաջարկները:

Պետական երաշխիքներից բխող ֆիսկալ ռիսկերի զսպման առումով օրենսդրորեն սահմանված են հետևյալ ֆիսկալ կանոնները.

- «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պետական երաշխիքի գումարը երաշխիքի ստացման համար դիմելու պահին չպետք է գերազանցի երաշխիք ստացողի ակտիվների 20 տոկոսը:
- «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ որոշակի պահի դրությամբ տրամադրված և չմարված պետական երաշխիքների հանրագումարը չպետք է գերազանցի նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 20 տոկոսը:
- «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների ընդհանուր գումարը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված երաշխիքների) չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների 10 տոկոսը: Համաձայն նույն հոդվածի 5-րդ կետի՝ երաշխիքների վճարմամբ Հայաստանի Հանրապետության մոտ ծագում է հետադարձ պահանջի իրավունք: Միաժամանակ վերոնշյալ օրենքի իմաստով բյուջետային երաշխիքի վճարմամբ ծագող հետադարձ պահանջները համարվում են բյուջետային վարկեր:
- «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձինք, որոնց համար տրամադրվել են բյուջետային երաշխիքներ, երաշխիքային ծրագրի ավարտից հետո պետական բյուջե պետք է վճարեն միջնորդավճար՝ երաշխիքային գումարի 1 տոկոսի չափով: Լիազոր մարմինն իրավասու է մինչև վարկի մարելը բյուջետային երաշխիքի տրամադրման պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով ստուգելու ստացողի ֆինանսական վիճակը:

3.1.4 ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՊՄԳ) ԶԵՎԱԶԱՓՈՎ ԳՈՐԾՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԲԵՈՂ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ՊՄԳ օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 1-ից՝ սահմանելով, որ վերջինիս դրույթները վերաբերելի են միայն 2020 թվականից հետո կնքված պայմանագրերին: Այնուամենայնիվ, օրենսդրությանը նախորդող բազմաթիվ ՊՄԳ ձևաչափին համապատասխան պայմանագրեր կան կնքված, որոնք իրենց էական ֆիսկալ ռիսկերի և բարդ պայմանական պարտավորությունների պատճառով վերլուծվում են այս բաժնում:

Վերլուծության են ենթարկվել «Հարավկովկասյան երկաթուղի», «Վեոլիա ջուր», «Արմենիա» միջազգային օդանավակայաններ, «Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ», «Արմփաուեր» և «Էֆարվի Մասրիկ» պայմանագրերը, որոնք գործունեություն են ծավալում այնպիսի կարևոր որորտներում, ինչպիսիք են տրանսպորտը, էներգետիկան և ջրամատակարարումը: Այս ՊՄԳ-ների համար պայմանական պարտավորությունների առավել մեծ ծավալ են կազմում վաղաժամկետ դադարեցման, տնտեսական կամ օրենսդրական փոփոխությունների

հետևանքով պայմանավորված նոր բանակցությունների և յուրաքանչյուր ծրագրին հատուկ ռիսկի այլ գործոնների հետ կապված հնարավոր ծախսերը:

Ստորև ներկայացվում է նշված 6 ընկերությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

Աղյուսակ 7. Գործող ՊՄԳ և ԷԳՊ պայմանագրերը

| Անվանում | Ոլորտ | Սկիզբ | Ավարտ | Պայմանական պարտավորությունների հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակի փոփոխությունները |
|--|---------------------------------------|---------|--------|--|
| «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ | Տրանսպորտ | 2008թ. | 2038թ. | Նշանակալի, Անփոփոխ |
| «Վեոլիա Ջուր» ՓԲԸ | Զրամատակարարում և կեղտաջրերի հեռացում | 2016թ. | 2031թ. | Նշանակալի, Անփոփոխ |
| «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ | Տրանսպորտ | 2002թ. | 2032թ. | Նշանակալի, Անփոփոխ |
| «Քոնթուր Գլոբալ հիդրո կասկար» ՓԲԸ (Որոտան ՀԷԿ), ԷԳՊ | Էներգետիկա | 2016թ.* | 2038թ. | Նշանակալի, Վատթարացում |
| «Արմփաուեր» ՓԲԸ, ԷԳՊ | Էներգետիկա | 2019թ.* | 2041թ. | Միջին, Անփոփոխ |
| «Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ, Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային էլեկտրակայան, ԷԳՊ | Էներգետիկա | 2021թ.* | 2041թ. | Նշանակալի, Անփոփոխ |

*գործարքի ֆինանսական պայմանների բավարարման տարի: ԷԳՊ պայմանագրերի փաստացի տևողությունը կազմում է մինչև 25 տարի՝ սկսած սպորադիկ վարվանից:

ՊՄԳ պայմանագրերի վերլուծության արդյունքում նյութականացման ռիսկի աստիճանը հիմնականում նշանակալի է համարվել ՊՄԳ բոլոր պայմանագրերի համար՝ հաշվի առնելով, որ իրար հաջորդող ճգնաժամերը, հատկապես Ադրբեյջանի ռազմական ագրեսիան, տարբեր բնույթի ազդեցություն են ունեցել ընկերությունների դրամական հոսքերի վրա, ինչն իր հերթին մեծացնում է պայմանագրի վերաբանակցման (պայմանագրերում անհաղթահարելի ուժի ազդեցության և տնտեսական հավասարակշռության վերաբերյալ դրույթների հետևանքով) կամ պայմանագրի վաղաժամ դադարեցման ռիսկերը, որոնք էլ իրենց հերթին կարող են ավելացնել ՀՀ կառավարության պայմանական պարտավորությունները: Շինարարության փուլում գտնվող ծրագրերի պարագայում ճգնաժամերը հանգեցրել է էական ուշացումների, ինչն իր հերթին կարող է բարձրացնել գերաճախսերի կամ վերաբանակցման ռիսկերը:

«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ» ՓԲԸ

ՀՀ կառավարության 07.02.2008թ. N83-Ա որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի և «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի միջև 13.02.2008թ. կնքվել է «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ փոխանցելու մասին» կոնցեսիոն պայմանագիրը: Ծառայությունների ծավալները և երթուղիները համաձայնեցվում են յուրաքանչյուր տարի՝ հաջորդող տարվա համար, հետևաբար պայմանագրի ֆինանսական տարբեր բաղադրիչների ապագա մակարդակները բարդ է կանխատեսել:

Կոնցեսիոն պայմանագիրը ներառում է վնասի սուբսիդավորում որոշ անշահավետ ուղևորափոխադրումների երթուղիների համար, որոնք իրականացվել են պայմանագրի բոլոր տարիներին: Սակայն, ըստ պայմանագրի, վճարման ենթակա գումարների առավելագույն չափը սահմանափակվում է կոնցեսիոնների կողմից վճարման ենթակա տարեկան կոնցեսիոն վճարի չափով: Համաձայն առկա պատմական տեղեկատվության, կոնցեսիոն պայմանագրի սկզբից ի վեր որևէ այլ պայմանական պարտավորության նյութականացում տեղի չի ունեցել:

Կոնցեսիոն պայմանագիրը նախատեսում է նաև փոխհատուցումներ մի շարք դեպքերում: Այդպիսի դեպքերից են՝

- Օրենսդրության անբարենպաստ փոփոխություն,
- Անհաղթահարելի ուժի ազդեցության մեղմման ծախսեր,
- Անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով պայմանագրի վաղաժամ դադարեցման հետ կապված վճարումներ,
- Կոնցեսիոնի կողմից պարտավորությունների չկատարման հիմքով պայմանագրի վաղաժամ դադարեցման վճարներ,
- Փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի վաղաժամ դադարեցման վճարներ:


Կոնցեսիոն պայմանագրի վաղաժամ դադարեցման մասով պայմանական պարտավորությունները հիմնականում չափելի են և դրանց առավելագույն ազդեցությունը վատագույն սցենարի դեպքում գնահատվում է 103.6 մլրդ ՀՀ դրամ⁴⁶, ընդ որում այդ գումարը կոնցեսիոն գործունեության ընթացքում աճում է՝ հաշվի առնելով պայմանագրի պայմանները:

Կոնցեսիոն պայմանագրի ֆիսկալ ռիսկայնության կարգավիճակը մինչև համավարակը գնահատվում էր միջին, իսկ համավարակի և պատերազմի ճգնաժամերով պայմանավորված՝ նշանակալի, և ներկայումս շարունակում է գնահատվել նշանակալի՝ պայմանավորված զարգացող աշխարհաքաղաքական և մակրոտնտեսական ճգնաժամով: Միաժամանակ կարևոր է փաստել, որ ընկերության գործունեությունը 2022 թվականին եղել է շահութաբեր՝ 2.3 մլրդ դրամ շահույթով՝ արձանագրելով նախորդ տարվա նկատմամբ 82% աճ և ապահովելով զուտ շահույթի մարժայի 10%: Սակայն 2023 թ.-ը ֆինանսապես ոչ

⁴⁶ Կիրառվել է Ասիական Ջարգացման Բանկի կողմից մշակված մեթոդաբանությունը՝ ինչպես և սույն փաստաթղթում ներկայացվող այլ հաշվարկների դեպքում:

այդքան բարենպաստ տարի էր, խոշոր գնորդ «Գեորգյանայինգ» ընկերությունից ստացվող եկամուտները կտրուկ անկում ապրեցին՝ պայմանավորված ընկերության արտադրական ծավալների նվազմամբ: ՀԿԵ ընկերության եկամուտները նվազել են 6 մլրդ դրամով, կամ 25%-ով: Բացի այդ, ընկերությունը վերագնահատել է կոնցեսիոն պայմանագրի արժեքը՝ կիրառելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը՝ արժեզրկելով հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մնացորդային արժեքը 61,5 մլրդ-ով, ինչը առաջացրել է 58,7 մլրդ դրամի զուտ վնաս: 2022 թվականի ընթացքում բեռնափոխադրումների ֆիզիկական ծավալներն 2021 թվականի նկատմամբ ավելացել են մոտ 11 տոկոսով, սակայն 40% անկում են ապրել 2023 ընթացքում: Ուղևորափոխադրումների ծավալի աճի տեմպը դանդաղել է 2023 թվականին՝ 15%-ից դառնալով 7.5%:

Գծապատկեր 18. Ուղևորափոխադրումները և բեռնափոխադրումները 2021-2023թթ.



Ֆիսկալ ռիսկի կարգավիճակը նշանակալի է՝ նաև հաշվի առնելով տարածաշրջանային ճգնաժամը և ընթացող վերաբանակցությունները:

Կարևոր է նշել, որ Մայիսի 25-26-ին հորդառատ անձրևների պատճառով Լոռիում տեղի ունեցած ջրհեղեղները վնասել են երկաթուղային գծի 8 հատված՝ մինչև 2 կմ ընդհանուր երկայնքով: Այժմ ընթանում են վերականգման աշխատանքները, և իրականացվում է վնասի չափի գնահատում: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և Կոնցեսիոները համատեղ մշակում են երկաթուղու աշխատանքի ժամանակավոր սխեմաներ:

«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ

21.11.2016թ. ՀՀ կառավարության, «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է «Երևան Զուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագիր՝ 15 տարի ժամկետով (Վարձակալական պայմանագիր):

Ընկերությունը 2023 թվականին շահութաբեր է եղել՝ պայմանավորված եկամուտների ավելացմամբ, ինչպես նաև բարելավվել են դեբիտորական պարտքերի հավաքագրման ցուցանիշները:

Վարձակալական պայմանագրի շրջանակներում առկա են մի շարք նշանակալի պայմանական պարտավորություններ, այդ թվում.

- Վարձակալի կողմից պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի շրջանակից դուրս այլ աշխատանքների իրականացման դեպքում Վարձատուի կողմից համապատասխան գումարի փոխհատուցում,
- Բազային սակագնի երաշխիք, որն արդեն առնվազն երկու անգամ կիրառվել է՝ ներառյալ վարձակալական վճարի կրճատումը 2020 և 2021 թվականներին,
- Վարձակալական պայմանագիրը պարունակում է վերաբանակցությունների և վաղաժամկետ դադարեցման բազմաթիվ դեպքեր: Առաջիկայում Վարձակալական պայմանագրի վաղաժամկետ դադարեցման ռիսկը համարվել էր ցածր՝ առնվազն մինչև 2025թ. : Պայմանագրի վաղաժամ դադարեցման գծով պայմանական պարտավորությունը մասնակի չափելի է և վերագնահատվել է պայմանագրի վերջին փոփոխությունից հետո՝ 60.3 մլրդ դրամ 2023 թվականի վերջի դրությամբ՝ միջանկյալ սցենարի դեպքում, որտեղ նման վճարումը չի կարող գերազանցել ապագա վարձակալական վճարների հանրագումարը: Վարձակալը պարբերաբար հանրային տիրույթում արտահայտվում է Ջրային Կոմիտեի և Կառավարության այլ մարմինների կողմից չկատարված պարտավորությունների վերաբերյալ, ուստի հարցը պետք է մշտապես մշտադիտարկվի, նույնիսկ եթե բանակցությունները միշտ դրական են ավարտվել: Պայմանական պարտավորությունների նյութականացումը նախորդ տարիներին տեղի է ունեցել հիմնականում վարձակալական վճարի կրճատումների միջոցով, ինչը միջանկյալ սցենարում նվազեցնում է հնարավոր վաղաժամկետ դադարեցման վճարի գումարը:

Վերջին տարիներին ընթանում էին որոշակի բանակցություններ արդեն իսկ կառուցված ակտիվի, մասնավորապես՝ ջրի մաքրման կայանի վերաբերյալ: 2023 թվականի սկզբին որոշվեց, որ այդ ակտիվը կփոխանցվի և կվերականգնվի Հայկական տարածքային զարգացման հիմնադրամի կողմից, այսպիսով այս հարցն այլևս չի ստեղծելու ՀՀ կառավարության համար հավելյալ պայմանական պարտավորությունները (վերջին անգամ դրանք գնահատվել էին 13 միլիարդ դրամ): Սակայն նախագիծը դառնալու է պետական բյուջեով ֆինանսավորվող ներդրումային ծրագիր: Բացի այդ, ակնկալվում է, որ հաջորդ տարիներին էապես կավելանան նաև պետությանը փոխանցվելիք կոնցեսիոն ակտիվներին առնչվող պարտադիր կապիտալ աշխատանքները՝ հաշվի առնելով, որ միջին տարեկան գումարը 2022 թվականից հետո բարձրացել է (ըստ ընկերության գնահատականի դեռևս մոտ 55 մլն ԱՄՆ դոլարի չափով ներդրումներ): Այս աշխատանքները ֆինանսավորվելու են պետական բյուջեի միջոցներից, այդպիսով դրանք չեն հանդիսանում պայմանական պարտավորություններ, բայց այս տեղեկատվության առկայությունը ավելի ամբողջական պատկերացում է տալիս այս նախագծի իրական արժեքի մասին:

Ի լրումն ընկերությունն իր 2023թ. տարեկան հաշվետվության մեջ նշում է մոտ ապագայում վերաբանակցությունների անհրաժեշտության մասին:

Այդպիսով, հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը մնում է նշանակալի:

«ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ

Կոնցեսիոն պայմանագիրը գործում է 2002թ.-ից՝ Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի համար, իսկ 2007թ.-ից ներառում է նաև Գյումրու «Շիրակ» օդանավակայանը: Մայր ընկերությունը աշխարհի օդանավակայանների խոշորագույն օպերատորներից է՝ «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.» ընկերությունն, որը ցուցակված է Նյու Յորքի ֆոնդային բորսայում:

Խումբը մինչև 2019 թվականը արձանագրում էր շահութաբերության բարձր ցուցանիշներ, իսկ ՀՀ-ի դուստր ձեռնարկությունը եղել է ամենաշահութաբերներից մեկը: Համավարակի ճգնաժամից հետո ֆինանսական վիճակը վերականգնվեց և 2022 ին «ԱՄՕ»-ն արձանագրեց 2019 թ.-ի ցուցանիշները 50% գերազանցող զուտ շահույթի մակարդակ: 2023 թվականը եղել է էլ ավելի շահութաբեր՝ արձանագրելով շահույթի 74% աճ՝ նախորդ տարվա համեմատ, իսկ 21.7% եկամուտների աճով Հայաստանը շարունակում է լինել խմբի ամենաշահութաբեր սեգմենտներից մեկը:

Պայմանագիրը Կոնցեսիոններին հնարավորություն է տալիս միակողմանիորեն երկարացնել կոնցեսիայի տևողությունը:

Ըստ պայմանագրի սահմանված է տարեկան 20% ֆինանսական ներքին շահութաբերության թիրախային մակարդակ, որը սահմանված է օդանավակայանում ներդրողի ընդհանուր ներդրումների (այդ թվում սեփական կապիտալի, դրա համարժեքների, ենթավարկերի և/կամ փոխարկելի վարկերի և միջազգային աուդիտորական ընկերության կողմից աուդիտ անցած Կառավարչի հաշվապահական հաշվետվություններում արտացոլված ցանկացած այլ կապիտալ ներդրման) տարեկան ներքին զուտ դոլարային շահութաբերությունը հարկվելուց հետո:

Համաձայնեցված ներքին շահութաբերության մակարդակը պահպանելու համար պայմանագրով նախատեսված է հետևյալ մեխանիզմը՝ մաստեր-պլանի վերանայում, որի արդյունքում փոխվում է կապիտալ ծախսերի կառուցվածքը և ժամանակացույցը, սակագների բարձրացում և պայմանագրի ժամկետի երկարացում: Պայմանագրի դադարեցման փոխհատուցման վճարները կարող են լինել չափազանց բարձր վաղաժամ դադարեցման դեպքում:

Հաշվի առնելով ընկերության բարձր շահութաբերությունը՝ պայմանագրի վաղաժամ դադարեցման պայմանական պարտավորությունը և ընկերության բիզնես ռիսկը ի սկզբանե գնահատվում էին ցածր, սակայն օդանավակայանների ոլորտը համավարակով պայմանավորված ճգնաժամից առավել տուժածներից մեկն է, իսկ այժմ այն ևս աշխարհաքաղաքական ճգնաժամով պայմանավորված դրսևորում է չափազանց

տատանողական վարքագիծ՝ ունենալով եզակիորեն շահութաբեր 2022-2023 թվականներ, որոնք սակայն կարող են կայուն չլինել:

Համավարակի ժամանակաշրջանում ընկերությունը ստիպված եղավ հայցել վարկային պայմանագրի ֆինանսական քովենանթի չեղարկում, որը բավարարվեց ֆինանսավորողի կողմից և մարման ժամանակացույցը երկարաձգվեց մինչև 2024 թվականը:

2021-2022 թվականներից սկսած «Կորպորատիվ Ամերիկա Ս.Ա.» ընկերությունների խմբի ֆինանսական վիճակը զգալիորեն վերականգնվել է՝ պայմանավորված գործառնությունների վերսկսմամբ, ստացված մի շարք փոխհատուցումներով, վերակառուցված և նոր վարկերով, սակայն գործառնությունների մակարդակը, բացի Հայաստանից, զիջում է մինչև համավարակն առկա մակարդակին: Նշված վերականգնումը արտահայտվել է նաև Խմբի համախմբված դրամական մնացորդի ցուցանիշով, հետևաբար, անհրաժեշտության դեպքում Խումբը կրկին կկարողանա աջակցել «ԱՄՕ» ՓԲԸ-ին:

Ինչպես երևում է ՀՀ ուղևորափոխադրումների վիճակագրությունից, ոլորտի վերականգնումը գրանցվել է 2021 թվականի ընթացքում և թափ է առել 2022 թվականին՝ շարունակվելով 2023թ.-ին երբարձանագրված ծավալները գերազանցել են նախահամավարակային մակարդակը: Սակայն 2024 թվականի առջին չորս ամիսներին նկատվում է ուղևորափոխադրումների որոշակի անկում:

Բեռնափոխադրումների ծավալները ևս վերականգնվել են 2022թ.՝ գերազանցելով 2019թ. մակարդակը 16.3%-ով: Այսպիսով բեռնափոխադրումների ծավալները 2022 և 2023 թվականի սկզբին գերազանցում են նախաճգնաժամային ծավալները՝ հիմնականում պայմանավորված Ռուսաստանի Դաշնության հետ առևտրաշրջանառության աճով: Բեռնափոխադրումների ծավալը շարունակել է աճել 2024 թվականի առաջին ամիսներին՝ ի տարբերություն ուղևորների: Հարկ է նշել, որ և՛ բեռների, և՛ ուղևորների համար ծավալները 2023 թվականին 2022 թվականի համեմատ աճել են ավելի քան 45 տոկոսով:

Շարունակվել է շահույթի նախքան հարկումը, տոկոսավճարները և մաշվածությունը (EBITDA) զգալի վերականգնումը: «ԱՄՕ» ՓԲԸ-ն լավ է դիմակայել 44-օրյա պատերազմի, նոր կորոնավիրուսային տարբերակների, Ռուսաստան-Ուկրաինա պատերազմի, 2022 և 2023թ սեպտեմբերյան ադրբեջանական ներխուժման հետևանքով ստեղծված մարտահրավերներին: 2022 թվականին վերականգնումը EBITDA եկամուտներ հարաբերակցությունը հասցրեց 33%-ի՝ բավականին բարձր, թեև ոչ այնքան բարձր, որքան 2021 թվականին՝ հաշվի առնելով եկամուտների կառուցվածքում վառելիքի լիցքավորման ծառայություններից ստացված եկամուտների շատ ավելի մեծ տեսակարար կշիռը (աշխարհաքաղաքական ճգնաժամի պատճառով վառելիքի ավելի բարձր գները), որոնց պարագայում ավելի ցածր է մարժան: 2023 թվականին EBITDA ցուցանիշը կազմեց 39.5%:

Կանխիկի մնացորդը 2023 թվականի տարեվերջին կազմել է 39 մլն ԱՄՆ դոլարինչն ավելի բարձր է, քան 2024 թվականին պարտքի սպասարկման գծով սպասվող վճարումները՝ հաշվի առնելով, որ նախորդ վարկային պայմանագիրը փոխարինվել է մեկ տարով ավելի

երկար ժամկետ ունեցող Ամերիա բանկի հետ վարկային համաձայնագրով: Արդյունքում, նվազում է համապատասխան պայմանական պարտավորությունը:

Խումբը նաև հրապարակայնորեն հայտարարել է Զվարթնոց օդանավակայանի ընդլայնման մասին, որը ենթադրում է՝ հզորությունների կրկնապատկում և ներդրումների ծավալը գնահատվում է 400 մլն ԱՄՆ դոլար: Ընդլայնման ծրագրի շուրջ բանակցությունները դեռ շարունակվում են, և այդ ծրագիրը զգալիորեն կբարձրացնի ՀՀ կառավարության համար պայմանական պարտավորությունները, հատկապես գործող պայմանագրի կարգավորումների ներքո:

Վերը նշված հանգամանքներից ելնելով՝ սույն ՊՄԳ պայմանագրի գծով պայմանական պարտավորությունների ֆիսկալ ռիսկի կարգավիճակը, որը փոխվել էր միջինի՝ չնայած նոր աշխարհաքաղաքական և մակրոտնտեսական ճգնաժամից բխող անորոշություններին, վերագնահատվել է նախորդ տարի: Հաշվի առնելով «Զվարթնոց» օդանավակայանի ընդլայնման հավակնոտ ծրագիրը և դրա հիմքում դրված ուղևորահոսքի ենթադրությունը, որը հիմնվել է նախորդ երկու տարիների արտասովոր ցուցանիշների վրա և, մյուս կողմից, այդ ցուցանիշների կայունության անորոշությունը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, ինչը կարող է հազեցնել ՀՀ-ի համար պայմանական պարտավորությունների, ինչպես արժեքի այնպես էլ հավանականության ավելացման: Մինչ ընդլայնման ծրագիրը, «ԱՄՕ» ՓԲԸ-ի ռիսկը զգալիորեն բարելավվել էր, սակայն այժմ այս ՊՄԳ-ի հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը շարունակում է մնալ «Էական»:

«ՔՈՆԹՈՒՐ ԳԼՈՐԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԲԸ

Ընկերությունը հանդիսանում է հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության առանցքային համալիրներից մեկը: Այն նախկինում պետական մասնակցությամբ ընկերություն էր, որը մասնավորեցման արդյունքում վաճառվել է էլեկտրաէներգիայի արտադրությամբ զբաղվող «Քոնթուր Գլոբալ» խոշոր միջազգային խմբին: Ընկերությունն արտադրված էլեկտրաէներգիան վաճառում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին (ՀԷՑ)՝ ՀԾԿԿ կողմից հաստատված սակագներով: ՀԷՑ ընկերությունը պարտավոր է գնել արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան, իսկ չգնելու դեպքում՝ վճարել փոխհատուցում, որը մինչ այժմ չի կիրառվել: Ամենախոշոր պայմանական պարտավորությունը պետության կողմից հիմնական միջոցների հետգնման պարտավորությունն է, որի արժեքը 2023թ. ավարտին կազմում է 100 մլրդ դրամ, սակայն ակնկալվում է դրա նվազում՝ պայմանավորված խոշոր ներդրումների պլանների բացակայությամբ և փախարժեքային տատանումով պայմանավորված վերագնահատումներով:

Նշենք նաև, որ ընկերությունը ներկայում մարում է Վերականգնման վարկերի բանկից (KfW) եվրոյով ստացված վարկը, ինչպես նաև 3 այլ ՄՖՀ-ներից, այդ թվում՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայից, ԱՄՆ դոլարով ստացված վարկեր: Այս առնչության հարկ է նկատել, որ 2020թ. ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքները դրամի նկատմամբ աճել էին, մինչդեռ 2021թ. և հատկապես 2022թ. դրամը արժևորվել է և կայուն պահպանում է այդ բարձր մակարդակը:

2019թ. ընկերության գործունեությունը եղել է շահութաբեր, 2020թ. COVID-19 համավարակի հետևանքով տնտեսական ակտիվության կտրուկ նվազման հետ մեկտեղ, ընկերությունն արձանագրել է հասույթի մոտ 25 տոկոս կրճատում, ինչը խիստ ազդեցություն է ունեցել ընկերության գործունեության՝ առանց արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան գնելու կամ փոխհատուցում վճարելու պարտավորությունն ակտիվացնելու: Դրան ավելացան նաև արտարժույթի փոխարժեքի հետ կապված վնասները՝ ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ արժեզրկման հետևանքով, ինչը հանգեցրեց պարտքի սպասարկման առավել մեծ ծախսերի: Արդյունքում, 2020թ. ընկերությունն արձանագրել է սեփական կապիտալի բացասական մակարդակ՝ չնայած բաժնետերերի կողմից հավելյալ սեփական կապիտալի ներարկմանը: Ընկերությունը շարունակում է սպասարկել իր վարկերը՝ շնորհիվ բաժնետերերի հավելյալ աջակցության, որոնք տրամադրել են ավելի քան 10 մլրդ դրամ ծավալով արտակարգ աջակցության վարկ (համարժեք է ընկերության 2020թ. հասույթին): 2021 ընթացքում բաժնետերերի կողմից նորից կատարվել է սեփական կապիտալի ավելացում:

Հասույթի գեներացումը բարելավվել է 2021 թվականին՝ գերազանցելով 2019 մակարդակը և ապահովելով էականորեն ավելի բարձր շահույթ, դրական միտումը շարունակվել է 2022թ.-ին, երբ ընկերությունները արձանագրել է 2019 թվականի շահույթը գերազանցող մակարդակ:

Մայր կազմակերպության կողմից աջակցությունը առկա էր նաև 2022 թվականին, սեփական կապիտալի մոտ 2 մլրդ դրամի չափով ներարկումով, որը մասամբ փոխհատուցել էր բաժնետերերի վարկի ավելի մեծ մարումները:

Այնուամենայնիվ, 2023 թվականին ընկերության իրավիճակը կտրուկ վատթարացել է. եկամուտները զգալիորեն նվազել են՝ 16.6 միլիարդից հասնելով 12 միլիարդի՝ հիդրոէներգաբանական գործոնների՝ մասնավորապես երկար ժամանակ ջրի մակարդակների ցածր լինելու պատճառով, ինչն առաջացրել է շատ ավելի ցածր գործառնական շահույթ: Այս գործոնը, ավելի բարձր տոկոսային ծախսերի, փոխարժեքի տատանումներից վնասների և ավելի ցածր տոկոսային եկամուտների հետ միասին հանգեցրել է զուտ վնասի: Ընդհանուր առմամբ, մայր ընկերությունը տարվա ընթացքում էական գումարներ է դուրս բերում հայկական ընկերությունից:

Կանխիկ միջոցները դուրս են բերվել բաժնետերերի վարկի արագացված մարման եղանակով, որը կազմում է 2023 թվականի ընթացքում մնացորդ գումարի կեսից ավելին: Բացի այդ, հայտարարվել է 5.5 միլիարդ դրամ բացառիկ շահութաբաժնի վճարում՝ չնայած 2023 թվականի ֆինանսական վնասների: Խումբը դիմել է վարկատուներին՝ ավելացնելու վարկի ծավալը, այդ թվում նախատեսվող ավելի մեծ կանխիկ միջոցների դուրսբերումը սպասարկելու նպատակով: Միևնույն ժամանակ վարկի ժամկետը կերկարաձգվի՝ այն հարթելու համար: Այս վարկի ավելացումը պահանջում է ՀՀ կառավարության համաձայնությունը, որը նույնպես վարկատու է՝ KfW վարկի օժանդակությամբ: Բանակցությունները շարունակվում են:

Ֆիսկալ ռիսկի կարգավիճակը շարունակում է մնալ «էական»՝ հաշվի առնելով ընկերության ֆինանսական վիճակը և այն փաստը, որ ընկերությանը, ըստ իր հաղորդակցման, չեն բավարարում հաստատված սակագները: Կարևոր է նշել որ անցյալում բաժնետերերը, հանդիսանալով շահութաբեր ընկերությունների խումբ, աջակցել են ընկերությանը առանձնահատուկ դժվար 2020թ. ընթացքում, որից հետո իրականացավ մայր ընկերության ձեռք բերում KKR խմբի կողմից և ապացուցակում: Անորոշության մեկ այլ գործոն է մայր ընկերության ձեռքբերումը KKR խմբի կողմից, ինչի արդյունքում կարող է փոխվել խմբի և որոշակի երկրներում դրա ներդրումների մասով քաղաքականությունը: Այս ձեռքբերման արդյունքում խմբի վարկային բեռն ավելացել է և Ֆիտչի կողմից խմբի վարկանիշը դասակարգվել է որպես «բացասական դիտարկում», որը նախ և առաջ դրդեց բարձրացնել հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը մինչև էական: KKR-ի կողմից ձեռքբերման արդյունքում մայր ընկերության վրա դրված լրացուցիչ պարտքը մասամբ բացատրում է Հայաստանի դուստր ձեռնարկությունից դրամական միջոցների դուրսբերումը:

«ԱՐՄՓԱՈՒԵՐ» ՓԲԸ (ԵՐԱԱՆԻ ՆՈՐ ԶԷԿ)

Ընկերությունը Երևան քաղաքում կառուցել և հանձնել է շահագործման ջերմային էլեկտրակայան, հանդիսանում է աշխարհում էլեկտրաէներգիայի արտադրության խոշոր գործունեություն իրականացնող իտալական «Ռենկո» էներգետիկական խմբի և գերմանական «Սիմենս» խմբի դուստր ընկերություն: Ծրագրի գնահատված արժեքը կազմել է 257.575 մլն ԱՄՆ դոլար, ինչը նվազեցնում է նախկինում հաշվարկված պայմանական պարտավորության ծավալը: Կոնցեսիայի ժամկետը կազմում է 20 տարի՝ սկսած առևտրային շահագործման մեկնարկից: Կայանը շահագործման է հանձնվել 2021թ. դեկտեմբերի 11-ին, 2022 թվականի ապրիլին կայանի շահագործումը խափանվել է շոգետուրբինի վնասման պատճառով, որը շտկվել է EPC կապալառուի կողմից 2022 թվականի օգոստոսին, և կայանը վերագործարկվել է 2022 թվականի սեպտեմբերի 10-ին: Այսպիսով, կայանը չի աշխատել ամբողջ հզորությամբ 2022 թվականին, ինչին հաջողվել է հասնել 2023 թվականին, և եկամուտները համապատասխանաբար աճել են շուրջ 40%-ով՝ հասնելով 114,7 միլիոն ԱՄՆ դոլարի: Սակայն կարողությունները և եկամուտները կարող են ավելի բարելավվել, և ընկերությունը նախատեսում է առաջարկություն ներկայացնել ՀՀ կառավարությանը: Մյուս կողմից, վաճառքի ինքնարժեքը զգալիորեն ավելացել է՝ հանգեցնելով 2022 թվականի համեմատ շահույթի նվազման:

Հիմնական պայմանական պարտավորությունը ՀՀ կառավարության կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում կայանի հետզնման պարտավորությունն է (նյութականացման դեպքերն են՝ օտարումը, բռնագրավումը, զավթումը, ՀՀ կառավարությանն առնչվող անվճարունակության դեպքի տեղի ունենալը, պայմանագրի շրջանակներում պետության կողմից տրված հավաստիացումների և երաշխիքների էական խախտումը, ծրագրի կառուցման կամ շահագործման՝ Կառուցապատողի կարողության վրա էականորեն և անբարենպաստ կերպով ազդող օրենսդրական փոփոխությունը): Շահագործման առաջին տարվանից հետո, որը դեռևս չի լրացել, պայմանական պարտավորության գումարին

կավելանա 15 տոկոս հավելավճար՝ ի հավելումն ներդրման գումարի, իսկ այնուհետև գումարը կնվազի տարեկան 4 տոկոսով: Քանի որ կայանը ստիպված էր վերագործարկվել շահագործման մեջ մտնելուց անմիջապես հետո, հավելավճարը կիրառելի է միայն 2023 թվականի սեպտեմբերից: Վերագործարկման համար պահանջվել էր լրացուցիչ 3,2 մլն ԱՄՆ դոլար, որը ֆինանսավորվել է սեփական կապիտալի համալրման հաշվին: Հիմնական միջոցների մնացորդը այժմ կազմում է 241.2 մլն ԱՄՆ դոլար՝ մաշվածության նվազեցումից հետո:

Առկա է նաև պետության կողմից երաշխավորված՝ ՀԷՑ ընկերության պարտավորություն՝ արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան գնելու, իսկ չգնելու դեպքում՝ վճարել հզորության վճար:

Հաշվի առնելով կայանի հաջող շահագործման հանձնումը՝ չնայած կորոնավիրուսային համավարակի հետևանքով առաջացած ուշացումներին, ծրագրի ֆիսկալ ռիսկի կարգավիճակը կարող էր փոփոխվել ցածրի, սակայն ռուս-ուկրաինական նոր ճգնաժամի անորոշություններով պայմանավորված ծրագրի հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը պահպանվում է միջին մակարդակում:

«ՄԱՍՐԻԿ-1» ԱՐԿԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆ

Այս նախագծի շրջանակներում կառուցվում է 55 Մվտ դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայանը: Այն պատկանում է La Providencia և FRV իսպանական մասնագիտացված խմբերին և ֆինանսավորվում է IFC-ի, EBRD-ի և Ֆինլանդիայի ՀՀ կառավարության վարկային միջոցներով: Պայմանագրի ֆինանսական կայացումը տեղի է ունեցել 2020թ. հուլիսին, իսկ աշխատանքները նախատեսվում էր ավարտել 2022թ-ին, սակայն 2022 թվականի հուլիսին կնքված լրացուցիչ համաձայնագրով այն հետաձգվել է մինչև 2023 թվականի սեպտեմբեր, քանի որ արձանագրվել էին էական ուշացումներ: Ժամկետներից ուշացումները շարունակվել են՝ չնայած աշխատանքները աստիճանաբար վերսկսվել են 2022 թվականի սեպտեմբերյան ադրբեջանական ներխուժմամբ պայմանավորված երկարատև ընդհատումից հետո (Մասրիկի տեղամասը սահմանին շատ մոտ է): Ավարտի ժամկետը հետաձգվել է մինչև 2024 թվականի հուլիս, սակայն ընկերությունն այժմ դիմել է ևս մեկ երկարաձգման՝ մինչև 2024 թվականի դեկտեմբեր:

Ներկայումս ծրագրի ծախսերը գնահատվում են 45.5 մլն ԱՄՆ դոլար, սկզբնական գնահատականից ցածր՝ պայմանավորված ՖՎ պանելների գների նվազմամբ:

Նախագծի իրականացման արդյունքում շինարարության ավարտից մեկ տարվա ընթացքում առաջանում են մի շարք պայմանական պարտավորություններ, մասնավորապես՝ արտադրվող էլեկտրաէներգիայի համար գնման երաշխիք ՀՀ կառավարության կողմից, և անբարենպաստ իրադարձությունների դիմաց լրացուցիչ հատուցման իրավունք:

Մինչ այդ և գործարքի ֆինանսական կայացումից հետո հիմնական պայմանական պարտավորությունը վաղաժամ դադարեցումն է՝ ՀՀ կառավարության տարբեր հիմքերով գործողությունների հետևանքով:

(ա) ՀՀ կառավարությունը չի կատարում իր կողմից պարտավորություն հանդիսացող որևէ վճար,

(բ) որևէ պետական մարմնի կողմից էքսպրոպրիացիայի կամ հարկադիր ձեռքբերման է ենթարկվել ծրագրի տարածքը, կայանը,

գ) ՀՀ կառավարությանը վերաբերող անվճարունակության դեպք,

դ) Օրենքի փոփոխություն կամ անբարենպաստ պայմանի դեպք, որը վերացված կամ փոփոխված չէ 180 (մեկ հարյուր ութսուն) օրվա ընթացքում և անհնար է դարձնում կայանի կառուցումը կամ շահագործումը: Կառուցապատողի կողմից.

ե) ՀՀ կառավարության կողմից Համաձայնագրի ցանկացած այլ էական խախտում, եթե այդ խախտումը չի վերացվել 180 օրվա ընթացքում:

Հաշվարկվել է առավելագույնը 19.4 մլրդ ՀՀ դրամի փոխհատուցում, որը շինարարության ավարտից հետո կնվազի՝ պայմանավորված պայմանագրով սահմանված վաղաժամ դադարեցման այլ դրույթի կիրառելիությամբ: Պայմանական պարտավորություններին կարող է ավելացվել ավելի քան 5 մլրդ ՀՀ դրամ՝ անբարենպաստ իրադարձություն հայտարարելու ռիսկի հիմքով, սակայն, հաշվի առնելով դրույթի մեկնաբանությունը, համաձայն որի փոխհատուցումը չի կարող պահանջվել, քանի դեռ շինարարական աշխատանքները չեն ավարտվել, այդ գումարը չի ներառվում: Արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան գնելու, կամ փոխհատուցելու հետ կապված պայմանական պարտավորությունը դեռ չի կարող չափվել:

Նախորդ տարվա համեմատ, նվազել են և՛ տվյալ ծրագրի ռիսկի նյութականացման հավանականությունը, և՛ ռիսկի չափը: Դա պայմանավորված է նրանով, որ կայանի կառուցման աշխատանքները ակտիվ փուլում են, և պահանջվող ներդրումների ծավալը նվազել է՝ արևային վահանակների գների միջազգային միտումների պատճառով: Այնուամենայնիվ, քանի դեռ արևային կայանը չի հանձնվել շահագործման և հետաձգումների ռիսկը, այդ թվում՝ սահմանին հնարավոր լարվածությունների պատճառով, մշտապես պահպանվում է, հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը պահպանվում է էական:

Աղյուսակ 8. ՊՄԳ ծրագրերի գծով պայմանական պարտավորությունների ամփոփ հաշվարկ, 2023թ., մլրդ ՀՀ դրամ

| Ծրագրի անվանում | Այլ ՊՊ | Վաղաժամ դադարեցում | Ընդհանուր ՊՊ | ՀՆԱ նկատմամբ |
|--|--------|--------------------|--------------|--------------|
| «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ | | 103.6 | 103.6 | 1.09% |
| «Վեոլիա Ջոյ» ՓԲԸ | | 60.3 | 60.3 | 0.63% |
| «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ | 5.3 | 175.6 | 180.9 | 1.81% |
| «Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ | | 100 | 100 | 1.05% |
| «Արմփատեր» ՓԲԸ | | 111 | 111 | 1.17% |

| | | | | |
|---------------------|------------|--------------|--------------|--------------|
| «Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ | | 19.4 | 19.4 | 0.20% |
| Ընդամենը | 5.3 | 569.9 | 575.2 | 6.05% |

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ մասով Ալեքսանդրյան կայանը մինչև 13 մլրդ ՀՀ դրամ արժեքով այլևս ներառված չէ: «Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ պարագայում հիմնվում ենք այն ենթադրության վրա, որ նախքան շինարարական աշխատանքների ավարտը հետ գնման դեպքում այլ փոխհատուցում չի կարող պահանջվել: «Արմփաուեր» ՓԲԸ դեպքում, որի շինարարական ծախսերն արդյունքում ավելի ցածր են եղել, 1 տարին լրանալուց հետո 15 տոկոսի չափով հավելավճարի հաշվարկը իրականացվել է, քանի որ կայանը վերագործարկվել է 2022 թվականի Սեպտեմբերին: ԱՄՆ դոլարով արտահայտված գումարների փոխարկման համար կիրառվել է 400 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց փոխարժեքը: 2023թ. ՀՆԱ-ն՝ 9,505 մլրդ ՀՀ դրամ:

2020թ. վերջին պայմանական պարտավորությունների հանրագումարը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում էր ՀՆԱ 8.26%: 2021-2023 թվականների ընթացքում ՀՆԱ-ի աճը և դրամի արժևորումը նվազեցրել են ցուցանիշը մինչև 6.05% նախորդ զեկույցում այդ ցուցանիշը կազմում էր 6.52%:

2021 թվականի հունիսի 18-ի ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է Հայաստանում արդյունաբերական մասշտաբի «Այգ-1» արևային ֆոտովոլտային ծրագրի շրջանակում կազմակերպված մրցույթի ընթացակարգի արդյունքները՝ հաղթող ճանաչելով «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ («Մասդար»): Ծրագրի իրականացման շուրջ կնքվել է կառավարության աջակցության համաձայնագիր, իսկ ֆինանսական կայացման համար նախապես սահմանված վերջնաժամկետը՝ 2022 թվականի դեկտեմբեր ամիսը, երկարաձգվել է մինչև 270 օրով, սակայն 2023 թվականի հունիսին այն երկարաձգվել է ևս մեկ անգամ՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25: Ներկայումս կողմերը նորից բանակցում են ժամկետի երկարաձգման, ինչպես նաև վաղաժամ դադարեցման պայմանների փոփոխության վերաբերյալ: Նախատեսվում է իրականացնել մոտ 174 մլն ԱՄՆ դոլարի չափով ներդրում (ՀՆԱ-ի մոտ 0.7 %): Ծրագրի նախապատրաստման փուլում կնքվել է համատեղ զարգացման համաձայնագիր «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ և «Հայաստանի Հետաքրքրությունների ֆոնդ» պետական ՓԲԸ ի միջև, որում պարունակվող պարտավորությունների վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն առկա չէ:

3.1.5 ԲՆԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴԱԾԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Աղետների ռիսկը համարվում է Հայաստանում ֆիսկալ ռիսկերի արդիական աղբյուրներից մեկը՝ հաշվի առնելով երկրի «աղետների պրոֆիլը», որը ներառում է **էական երկրաֆիզիկական (հատկապես՝ երկրաշարժերի և սողանքների), եղանակային պայմանների հետ կապված (հիդրոոդերևութաբանական և այլ), ինչպես նաև մարդածին ռիսկեր:**

Համաձայն ՄԱԿ Զարգացման Ծրագրի տվյալների՝ Հայաստանը աշխարհում ամենից շատ աղետների ենթակա 60 երկրների շարքում է: Հայաստանը բազմաթիվ վտանգներ ունեցող երկրի տիպիկ օրինակ է՝ խոշոր երկրաշարժերի, ջրհեղեղների, երաշտների, ծայրահեղ եղանակային պայմանների (ցրտահարություն և ջերմային ալիքներ), ուժեղ քամիների, կարկուտի, փոթորիկների, սելավների, սողանքների և այլնի պատմությամբ:

Երկրաֆիզիկական ռիսկեր

Երկրաֆիզիկական ռիսկերից ՀՀ-ում 7.0 կամ ավելի բարձր մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժի դեպքում կարող է փլուզվել Երևան քաղաքի շենքերի մեծամասնությունը՝ խլելով մոտ 300,000 մարդու կյանք: Նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2012թ. տվյալներով տնտեսական վնասները կարող են հավասար լինել՝ ընդհուպ ՀՆԱ-ի 100 տոկոսին⁴⁷:

2017 թվականին Համաշխարհային բանկը հաշվարկել է 1.3 միլիարդ ԱՄՆ դոլարի չափով «ֆինանսավորման բաց»՝ Սպիտակի երկրաշարժի նման ևս մեկ ուժեղ երկրաշարժի դեպքում⁴⁸: Սակայն, համաձայն աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ հիմնադրամի կողմից 2017 թվականին կազմված՝ Հայաստանի աղետների ռիսկի պրոֆիլի, ընդհանուր տնտեսական ազդեցությունը կարող է շատ ավելի մեծ լինել, չնայած հնարավոր զոհերի գնահատված ավելի փոքր քանակին⁴⁹:

ՇՄՆ քարտեզագրման արդյունքներով արձանագրվել է մոտ 2500 սողանքային տարածք, որոնց համար 2023թ. պետական բյուջեի «Սողանքային տեղամասերի ինժեներակառուցական հետազոտություններ» հոդվածով նախատեսվել է 61,290.0 հազար ՀՀ դրամ, իսկ որպես սողանքներից բխող խնդիրների ֆինանսավորման աղբյուր ներկայումս դիտարկվում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդը:

Եղանակային պայմաններ

Ինչ վերաբերում է եղանակային պայմանների հետ կապված ռիսկերին, ապա կլիմայի փոփոխությունը համարվում է աղետների և՛ հաճախականության, և՛ ուժգնության վրա ազդող էական գործոն: Այդ իսկ պատճառով կարևոր է ներդրումներ կատարել կլիմայի փոփոխության հարմարվողականության և աղետների ռիսկի համապարփակ նվազեցման ուղղություններով: Վերջին 9 տասնամյակի ընթացքում գրանցվել է միջին ջերմաստիճանի կայուն աճ և միջին տեղումների կայուն նվազում՝ համաշխարհային միջինից բարձր և վերջին 3 տասնամյակների ընթացքում արագացող միտումներով: Հայաստանի տարածքի համար 1961- 1990թթ. միջինի (5.50° C) նկատմամբ կանխատեսվում է տարեկան միջին ջերմաստիճանի աճ՝ մինչև 1.60°C-ով՝ 2040թ., 3.30°C-ով՝ 2070թ. և 4.70°C-ով՝ 2100թ.: Մթնոլորտային տեղումների դեպքում ակնկալվում է 1961-1990թթ. տարեկան տեղումների

⁴⁷ Աղբյուրը՝ ADB, Country Partnership Strategy: Armenia, 2014–2018.

⁴⁸ Աղբյուրը՝ World Bank, Disaster Risk Finance Country Note: Armenia, 2017.

⁴⁹ Աղբյուրը՝ World Bank, Global Facility for Disaster Reduction and Recovery (GFDRR), Disaster Risk Profile: Armenia, 2017.



միջին քանակի (592 մմ) նկատմամբ նվազում՝ մինչև 2.7%-ով՝ 2040թ., 5.4%-ով՝ 2070թ. և 8.3%-ով՝ 2100թ. (տե՛ս աղյուսակ 9)⁵⁰:

Աղյուսակ 9. Տարեկան միջին ջերմաստիճանի (T, °C) և տեղումների քանակի (P, մմ) կանխատեսվող արժեքները Հայաստանի տարածքում՝ ըստ բարձրության տարբեր գոտիների (մ) METRAS մոդելով՝ համաձայն RCP8.5 սցենարի⁵¹

| Բարձրության գոտիներ, մ | 1961-1990 | | 2011-2040 | | 2041-2070 | | 2071-2100 | |
|------------------------|------------|------------|------------|------------|------------|------------|-------------|------------|
| | T, °C | P, մմ | T, °C | P, մմ | T, °C | P, մմ | T, °C | P, մմ |
| < 800 | 11.2 | 467 | 12.8 | 452 | 14.5 | 439 | 15.9 | 426 |
| 800 – 1000 | 10.8 | 343 | 12.4 | 332 | 14.1 | 322 | 15.5 | 313 |
| 1000 - 1500 | 8.4 | 502 | 10 | 486 | 11.7 | 472 | 13.1 | 458 |
| 1500 - 2000 | 5.5 | 592 | 7.1 | 573 | 8.8 | 557 | 10.2 | 540 |
| 2000 - 2500 | 3.3 | 660 | 4.9 | 640 | 6.6 | 621 | 8 | 603 |
| 2500 - 3000 | 1.6 | 732 | 3.2 | 713 | 4.9 | 692 | 6.3 | 671 |
| > 3000 | -0.7 | 800 | 0.9 | 776 | 2.6 | 753 | 4 | 731 |
| Հայաստան | 5.5 | 592 | 7.1 | 576 | 8.8 | 560 | 10.2 | 543 |

2022թ.-ին ՀՀ-ում գրանցվել է 14,262 արտակարգ դեպք, որոնցից 4.9%-ը բաժին է ընկել տարերային վտանգավոր երևույթներին: Արտակարգ դեպքերի 74.4%-ը բաժին է ընկել մարդածին արտակարգ դեպքերին (տե՛ս գծապատկեր 19)⁵²:

Գծապատկեր 19. Արտակարգ իրավիճակների (քանակ) բաշխումն՝ ըստ դեպքերի (%) **Գծապատկեր 20. Արտակարգ դեպքերը**



⁵⁰ «2021-2025 թվականների Հարմարվողականության ազգային ծրագիր»: Տվյալների սկզբնաղբյուր. ՄԱԿ կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի ներքո կլիմայի փոփոխության մասին Հայաստանի 4-րդ ազգային հաղորդագրություն (2020թ.):

⁵¹ 1991-2010թթ-ի տեղեկատվությունը բացակայում է:

⁵² Աղբյուրը՝ Արմստատ, շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում:

2020 թվականին տարերային աղետների, այդ թվում՝ կարկուտի, ուժեղ քամիների, ցրտահարության, սելավների պատճառած ընդհանուր վնասը կազմել է 3.8 մլրդ դրամ: 2021 թվականին այն կազմել է շուրջ 3.1 մլրդ դրամ, որոնց հիմնական պատճառներն են հանդիսացել ուժեղ քամիները, երաշտը, տորնադոները և երկրաշարժերը: 2022 թվականին կրած վնասը կազմել է 727 մլն դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է եղել այնպիսի տարերային աղետներով, ինչպիսիք են ուժեղ քամիները, կարկուտը, առատ ձյունը և երկրաշարժը, իսկ 2023թ.-ին 892 մլն դրամ, որը պայմանավորված է եղել ուժեղ քամիներով, հորդառատ անձրևներով ու կարկատով: Վնասի գնահատումն իրականացվում է՝ համաձայն ՀՀ կառավարության թիվ 1582-Ն որոշման: Անհրաժեշտ է նշել, որ գնահատման բարդությունների պատճառով որոշ աղետներ չեն գնահատվել:

Բացի վերը նշված վնասների գնահատականից՝ 2024 թվականի մայիսի 25-ից 26-ը ընկած ժամանակահատվածում հորդառատ անձրևի հետևանքով ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում Դեբեդ, Աղստև և Տաշիր գետերը վարարել են, ինչը մեծ ավերածությունների պատճառ է դարձել Լոռու և Տավուշի մարզերում: Հայաստանի կառավարության խնդրանքով Միավորված ազգերի կազմակերպության կողմից իրականացված՝ բազմոլորտային կարիքների արագ գնահատում (ԲԿԱԳ) վերլուծական շրջանակն օգտագործվել է Լոռու և Տավուշի մարզերի տուժած տարածքներում առաջնային հումանիտար կարիքները բացահայտելու համար: Ստորև ներկայացված են գնահատման հիմնական բացահայտումները:

Ջրհեղեղները զգալի վնաս են հասցրել ենթակառուցվածքներին՝ ներառյալ ճանապարհներին, կամուրջներին, բնակելի և ոչ բնակելի շենքերին, ինչի հետևանքով տուժել է մոտ 40,839 մարդ, գրանցվել է է 4 զոհ և 2,382 մարդ ժամանակավորապես տարհանվել է: Զգալի վնաս է հասցվել բնակարաններին և ենթակառուցվածքներին, որի հետևանքով ջրի տակ են անցել 464 բնակելի տուն, որոնցից 217-ը մասամբ վնասվել են կամ ամբողջությամբ ավերվել: Վնասների մեծ մասը գրանցվել է տրանսպորտի ոլորտում՝ 41,8 կմ ճանապարհներ, 1,8 կմ երկաթուղի, 3,3 կմ գետապաշտպան թմբեր, 24 կամուրջներ (ներառյալ 5 հիմնականները, որոնք կապված են մայրուղիների հետ), և 44 ավելի փոքր հետիոտնային և կոմունալ նշանակության կամուրջներ: Ջրի և սանիտարահիգիենիկ ապահովման հատվածը լուրջ ազդեցություն է կրել՝ վնասվել կամ ավերվել են 3,4 կմ ջրի և կոյուղու խողովակներ:

Հայաստանի կառավարությունը և միջազգային կազմակերպությունները արձագանքել են որոնողափրկարարական, մաքրման միջոցառումներով և կամավորների ներգրավմամբ: Կառավարությունը տուժած շրջանները հայտարարել է աղետի գոտիներ:

Հայաստանում փաստացի առկա են ֆինանսական պաշտպանության ռազմավարության որոշ բաղադրիչներ. աղետներին արձագանքման անհրաժեշտության դեպքում օգտագործվում է Կառավարության պահուստային ֆոնդը, աղետների դեպքում երբեմն կարող են կիրառվել պետական բյուջեի միջոցների վերաբաշխումներ, ինչպես նաև Covid-19 համավարակով պայմանավորված ճգնաժամի ընթացքում Հայաստանը ներգրավել է հետադետային ֆինանսավորում:

ՀՀ-ում առկա է աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) 2023-2030թթ. ռազմավարություն, որը ընդգրկում է ԱՌԿ պետական քաղաքականության շրջանակը⁵³:

ՀՀ-ում իրականացվում է պետական աջակցության՝ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական փորձնական ծրագիր, որը իրականացվում է Գերմանական զարգացման բանկի (KfW) հետ համատեղ՝ համաձայն ՀՀ կառավարության 2019թ. թիվ 1485-Լ որոշման:

Հաշվի առնելով Աղետների ռիսկի կարևորությունը՝ Ասիական Զարգացման Բանկի տեխնիկական աջակցությամբ ՖՆ-ի կողմից մշակվել և նախապատրաստվել է շրջանառության «Աղետների դեմ ֆինանսական պաշտպանության պլանի վերաբերյալ» հայեցակարգային մոտեցումներ:

2023 թվականին գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագրի շրջանակներում ապահովագրվել են ծիրան, խաղող, դեղձ, սալոր, խնձոր, կեռաս, բալ, ձմերուկ, սեխ, կարտոֆիլ, աշնանացան/գարնանացան ցորեն, գարի և վարսակ մշակաբույսերը: Գյուղատնտեսական տարվա համար կնքված ապահովագրական պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 10-ում՝ համաձայն գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալության կողմից տրամադրած տեղեկատվության:

2024 թվականին ծրագրի պետական բյուջեով ֆինանսավորման չափը սահմանվել է 1,521,688.2 հազ. ՀՀ դրամ, որը հավասարապես բաժանվել է ՀՀ կառավարության համաֆինանսավորման և արտաքին միջոցների (KfW) միջև, յուրաքանչյուրը՝ 760,844.1 հազ. դրամ:

Աղյուսակ 10. Գյուղատնտեսական տարվա համար կնքված ապահովագրական պայմանագրերը, 2020-2023թթ.

| | 2020 | 2021 | 2022 | 2023 |
|-----------------------------------|--------|-------|-------|-------|
| Պայմանագրերի թիվ, հատ | 1546 | 4279 | 5091 | 10192 |
| Ապահովագրված տարածք, հա | 2363.3 | 5832 | 6444 | 11662 |
| Համախառն ապահովագրավճար, մլն դրամ | 130.5 | 474.6 | 866.3 | 1,800 |
| Սուբսիդիա, մլն դրամ | 69 | 275.9 | 513.6 | 1,100 |
| Հատուցումներ, մլն դրամ | 151.3 | 319.1 | 1,300 | 2700 |
| Հատուցումների քանակ, հատ | | 1517 | 2167 | 3864 |


2016թ. մեկնարկել է «Հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը», որի շրջանակներում ընդգրկված են 46 դպրոցներ, որոնցից 16-ը արդեն կառուցվել են, 20-ը գտնվում են կառուցման փուլում, իսկ 10-ը՝ գտնվում են նախագծման և/կամ փորձաքննության փուլում:

⁵³ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1717-Լ որոշում, հավելված N 1, աղետների ռիսկի կառավարման 2023-2030 թվականների ռազմավարություն:

3.1.6 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԴԵԳՐԱԴԱՑԻԱՅԻՑ ԵՎ ԶԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԻՑ ՕԱԳՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Արդյունաբերական աճը զգալի բնապահպանական մարտահրավերներ է ստեղծում, ինչպիսիք են շրջակա միջավայրի աղտոտումը, կլիմայի փոփոխությունը, կենսաբազմազանության կորուստը և նմանատիպ այլ գլոբալ խնդիրներ, որոնք էական վտանգ են ներկայացնում տնտեսության ու կենսագործունեության համար: Այդ պատճառով բնապահպանական նկատառումներն իրենց տեղն են գտնում հարկաբյուջետային և ֆինանսական քաղաքականության մեջ:

Գծապատկեր 21. Զերմոցային գազերի արտանետումների դինամիկայի ուսումնասիրությունն՝ ըստ սեկտորների, 1990-2019թթ.⁵⁴



Ինչպես երևում է գծապատկերի 21-ից տարբեր սեկտորներից արտանետումների մասնաբաժինների հարաբերակցությունը կայուն է: «Էներգետիկա» սեկտորից առաջացող արտանետումները շարունակաբար պահպանել են բացարձակ գերակշռությունը, իսկ ընդհանուր առմամբ, 1990թ. համեմատությամբ ԶԳ արտանետումները նվազել են մոտ 57%-ով՝ հիմնականում պայմանավորված «Էներգետիկա» սեկտորից արտանետումների կրճատումով: Այդ կրճատումը հիմնականում պայմանավորված է տնտեսության կառուցվածքային փոփոխություններով, Էներգետիկ արտադրություններում, Տրանսպորտ և Բնակարանային ենթակառուցողիներում էկոլոգիապես ավելի մաքուր վառելիքի՝ բնական գազի, լայնածավալ օգտագործմամբ (ածուխի և մագուխի օգտագործումը բացակայում է), ատոմային էլեկտրակայանի վերաթողարկմամբ, 2000 թվականներից փոքր հիդրոէներգետիկայի աննախադեպ աճով և վերջին տարիներին արևային էներգետիկայի զարգացման բարենպաստ միտումներով:

Բնապահպանական ռիսկերի կառավարման նպատակով հնարավոր տնտեսական և ֆիսկալ վնասների հաշվարկման համար դեռևս մշակված չեն սցենարների վերլուծության և սթրես-թեստերի մեթոդաբանություններ, ուստի ֆիսկալ ռիսկերի գնահատման

⁵⁴ ՀՀ ՇՄՆ «ՀՀ ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվեկրկություն, 1990-2019թթ. »:

շրջանակներում բնապահպանական ռիսկերին հնարավոր է դարձել անդրադարձ կատարել միայն փաստերի (ստորև նշված) արձանագրման միջոցով:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ) 11.10.2019 N337-L հրամանով նույնականացրել է հնարավոր բնապահպանական պարտավորություններ ենթադրող 44 տեղամաս, որոնք հիմանականում հանքարդյունաբերական գործունեության արդյունք են համարվում, և 2023 թվականի ընթացքում վերականգնում պահանջող նոր տեղամասեր չեն արձանագրվել, հետևաբար, 2019 թվականից ի վեր այդ տեղամասերի քանակը չի փոխվել: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների նվազեցման նպատակով ՇՄՆ առանձնացրել է 10 փակված պոչամբարի և արտադրական լցակայանի տեղամասեր: 2023 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացված 137.9 մլն ՀՀ դրամի շրջանակներում կազմվել են Փխրուտի (69.0 մլն. ՀՀ դրամ) և Նազիկի (68.9 մլն. ՀՀ դրամ) փակված պոչամբարների ռեկուլտիվացիայի նախագծանախահաշվային փաթեթները: Ռեկուլտիվացիայի աշխատանքների արժեքը կազմել է 925.0 մլն. ՀՀ դրամ, որից Փխրուտ փակված պոչամբարի ռեկուլտիվացիայի արժեքը 675.0 մլն. ՀՀ դրամ է, իսկ Նազիկ փակված պոչամբարինը՝ 250.0 մլն. ՀՀ դրամ: Քանի որ արդեն 2 տեղամասի ռեկուլտիվացիայի համար կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերով արժեքները գնահատվել են, ուստի ընդհանուր բոլոր առաջնահերթ տեղամասերի համար ծախսերի ընդհանուր գնահատականը կարող է տրվել, երբ յուրաքանչյուր տեղամասի համար կազմվեն նախագծանախահաշվային փաստաթղթերով գնահատված արժեքները:

Հնարավոր ռիսկերի աղբյուր է հանդիսանում Նուբարաշենի ժամկետանց թունաքիմիկատների գերեզմանոցը (ՆԹԳ), որը կառուցվել է 1970թ.՝ արգելված և ժամկետանց թունաքիմիկատները մատակարարման շղթայից հեռացնելու նպատակով: Հնարավոր բնապահպանական ռիսկը պայմանավորված է տարածքում թաղված մաքուր թունաքիմիկատների և դրանց մետաբոլիտների տարավազման կամ փոշու տեսքով օդում տարածման հետ: Ռիսկի կառավարման նպատակով ՇՄՆ 2023թ. ՀՀ պետական բյուջեում «Նուբարաշենի գերեզմանոցի մաքրման և թափոնի ոչնչացման աշխատանքների» 1032 տոննայի համար ամփոփ հաշվարկ է ներկայացրել՝ առանց այրման 1082234.4 հազար ՀՀ դրամի չափով, որի այրման համար գումարը նախատեսվել է 2024թ. պետական բյուջեով:

Բնապահպանական ծախսերի վերականգման նպատակով անհրաժեշտ է դիտարկել նաև Սևանա լճից բխող հնարավոր բնապահպանական ռիսկերը.

Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքներ, որոնք մեկնարկել են 2005 թվականից և մինչ օրս իրականացվել է 24 հա ջրածածկ անտառային տարածքի մաքրում: 2023 թ. այդ աշխատանքների իրականացման համար պետական բյուջեով նախատեսվել է 118,163.2 հազար ՀՀ դրամ, որը չի իրականացվել՝ մրցույթը չկայացած լինելու պատճառով և հատկացված գումարն ուղղվել է ՀՀ պետական բյուջե:

2023 թվականին Սևանա լճի առափնյա հատվածներում, ծովի մակարդակից 1901,5 մետր բացարձակ նիշից ցածր, ապօրինի կառուցված և քանդման ենթակա շենք-շինությունների ապամոնտաժման (քանդման) աշխատանքների նախագծանախահաշվային

փաստաթղթերի ձեռք բերման նպատակով հատկացվել է 7,194.0 հազար ՀՀ դրամ, որն ամբողջապես ծախսվել է:

Հետխորհրդային ճգնաժամային տարիների ընթացքում մասշտաբային ծառահատումների հետևանքով անտառային տարածքների կրճատման փոխհատուցման և սողանքային ռիսկերի նվազեցման նպատակով 2013 թվականից ՀՀ-ն իրականացվում է անտառապատման և անտառավերականգման աշխատանքներ:


Անտառավերականգնման և անտառապատման աշխատանքների շրջանակներում 2023 թվականին իրականացվել է 436 հա անտառավերականգնման ու անտառապատման աշխատանքներ՝ որից 226 հա պետական բյուջեի միջոցներով, իսկ 210 հա արտաբյուջետային միջոցների հաշվին: Աշխատանքների իրականացման համար 2023թ. պետական բյուջեով պլանավորվել է ծախսել 413,011.7 հազար ՀՀ դրամ, սակայն հատկացվող գումարը ճշգրտվել է 665,569.7 հազար ՀՀ դրամի չափով, որն ամբողջապես հաշվետու տարում ծախսվել է:

3.1.7 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

2024 թվականի մարտի 31-ի դրությամբ **ընդդեմ Հայաստանի Հանրապետության** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոմունիկացրել է 428 գործ (ընթացքում գտնվող գործեր, որոնցով առկա չէ վերջնական դատական ակտ): 2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 24 գործով (5 որոշում և 19 վճիռ) դիմումատուներին վճարել է 562 հազար եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ որպես արդարացի փոխհատուցում: 2024 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ընդհանուր թվով եվրոպական դատարանի 5 վճռով կատարվել է արդարացի փոխհատուցման գումարների վճարում, որը կազմել է 99,400 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

Անհրաժեշտ է նշել, որ դիմումատուների կողմից պահանջված և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հատկացված արդարացի փոխհատուցման գումարների միջև առկա է մեծ տարբերություն (տե՛ս գծապատկեր 22):

Գծապատկեր 22. Դիմումատուների կողմից պահանջված և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հատկացված արդարացի փոխհատուցման գումարը (հազար եվրո)




ՀՀ մասնակցությամբ 2024 թվականի մարտի 31-ի դրությամբ առկա է 7 միջազգային արբիտրաժային/դատական գործ: Հարկ է նշել, որ 2023-2024թ. մարտի 31-ն ընդգրկող ժամանակահատվածում հայցվորներին գումարներ չեն վճարվել: Միջպետական գանգատների առնչությամբ հարկ է նկատի ունենալ, որ ներկայումս ընդդեմ Հայաստանի Հանրապետության ընթանում է թվով 5 միջազգային դատական/արբիտրաժային վարույթ, որոնցով հայցապահանջի չափ դեռևս ներկայացված չէ:

ՀՀ դատարաններում ՀՀ ֆինանսների նախարարության մասնակցությամբ պետության դեմ քննվող հայցերի քանակը 2024 թվականի մայիսի դրությամբ կազմում է 1,059, ընդհանուրը 3,489,181,853 ՀՀ դրամ, 88,529 ԱՄՆ դոլար, 3,600,000 չեխական կրոն և 16,100 ՌԴ ռուբլի հայցագնի չափով:

Բացի վերը նշված հայցերից առկա են նաև այլ հայցեր՝ **ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի:** Ներկայացված հայցերով ՀՀ դատարաններում 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ քննվում է 6,554 դատական գործ՝ 128.5 մլրդ ՀՀ դրամի չափով, իսկ 2024 թվականի մարտի 31-ի դրությամբ՝ 6,507 դատական գործ՝ 129 մլրդ ՀՀ դրամի չափով: 2023 թվականի ընթացքում դատական վարույթների շրջանակներում հայցվորներին վճարված ընդհանուր գումարը 2022 թվականի համեմատ նվազել է 18%-ով, իսկ 2024 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կազմել է 3 մլն ՀՀ դրամ (տե՛ս գծապատկեր 23):

Գծապատկեր 23. 2021-2023թթ. հայցվորներին վճարված գումարը (մլն ՀՀ դրամ)



Անհրաժեշտ է նշել, որ ռիսկի իրական մակարդակը շատ ավելի ցածր է, քանի որ հայցվորները ոչ բոլոր գործերն են հաղթում, իսկ հաղթելու պարագայում վճռով հաճախ սահմանվում են ավելի փոքր գումարներ:

4. 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

Արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականություն մշակելու և իրականացնելու տեսանկյունից հարկային ծախսերի գնահատականը խիստ կարևոր է, քանի որ հարկային ծախսերի գնահատմամբ ամբողջականացվում է պետության կողմից իրականացվող՝ եկամուտների վերաբաշխման գործառույթի շրջանակներն ու արդյունավետությունը:

Հարկային ծախսերի գնահատականի վերաբերյալ տեղեկատվությունը թափանցիկ և շահառուների տարբեր խմբերի համար հասանելի դարձնելու նպատակով, որոշ երկրներ այդ տեղեկատվությունը ներառում են առաջիկա տարվա համար մշակվող բյուջեի բացատրագրում:

Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ հարկային ծախսերի մեծությունը գնահատվել է 2015թ. համար, որը ներառվել է «2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բացատրագրում՝ որպես առանձին հավելված:

ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԸ

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ «Հարկային ծախս» հասկացությունը սահմանված չէ: Բովանդակային առումով, հարկային ծախսերը գործող հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտներն են կամ այդ եկամուտների չափով պետության կրած այլընտրանքային ծախսերն են, քանի որ հարկային ծախսերը հանգեցնում են համապատասխան գումարի չափով բյուջետային ծախսերի կրճատման: Ընդ որում, ի տարբերություն պետական բյուջեի ծախսերի, որոնք ենթակա են խորքային վերլուծության, մոնիտորինգի ու հսկողության, հարկային ծախսերը հաճախ պատշաճ ձևով չեն վերահսկվում: Արդյունքում, նվազում է հանրային ֆինանսների կառավարման արդյունավետությունն ու թափանցիկությունը, սահմանափակվում են պետության վերաբաշխիչ գործառույթի շրջանակները: Այդ իսկ պատճառով հարկային ծախսերի պարբերաբար գնահատումը հանգուցային նշանակություն ունի պետության հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունից:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ, ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ և ԸՆՏՐՎԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Սույն հաշվետվությամբ գնահատված են 2025 թվականի հաշվետու տարվա հարկային ծախսերը:

Գնահատման համար տեղեկատվական հիմք են հանդիսացել 2023 թվականի հաշվետու տարվա համար ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված հիմնական մակրոտնտեսական տվյալները, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա՝

տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված հաշվետվությունների տվյալները, որոնք ենթարկվել են որոշակի ճշգրտումների՝ կապված 2025 թվականի համար կանխատեսվող համապատասխան տվյալների հետ:

Հաշվետվության մեթոդաբանության հիմքում դրված են ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի (հարկունակ և ոչ հարկունակ մասերի) ուսումնասիրության մակրոտնտեսական մոտեցումները, 2023 թվականին վերաբերող ԱԱՀ-ի, շահութահարկի և շրջանառության հարկի հաշվարկներով՝ ԱԱՀ-ի, շահութահարկի և եկամտային հարկի արտոնությունների, ինչպես նաև ԱԱՀ-ով հարկվող շեմի ուսումնասիրության արդյունքները:

Հաշվետվության կազմման համար ընտրվող մեթոդաբանության տեսանկյունից շատ կարևոր է նաև «Հարկային ծախս» հասկացության հստակ սահմանումը և հարկային ծախսերի շրջանակի ճիշտ որոշումը: Այս առումով, հատկանշական է այն, որ գործող հարկային օրենսդրությամբ նախատեսված՝ հարկման արտոնյալ պայմաններ ենթադրող ոչ բոլոր կարգավորումները կարելի է դիտարկել որպես հարկային ծախսեր (օրինակ՝ եկամտային հարկով հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող եկամուտները)՝ անգամ եթե դրանց կիրառության արդյունքում կրճատվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվող հարկերը: Հարկային ծախսերի շրջանակի որոշման համար հաշվի է առնվել «Հենանիշային հարկ» հասկացությունը, որն իրենից ներկայացնում է հարկերի այն հանրագումարը, որը կվճարվեր պետական բյուջե տնտեսության մեջ ձևավորվող ողջ հարկման բազան հարկելու պարագայում: Այս համատեքստում հարկային ծախսերը որոշվել են որպես հենանիշային հարկերի և փաստացի պետական բյուջե վճարվող հարկերի տարբերություն: Հարկային ծախսերի գնահատումը՝ որպես հենանիշային հարկերի ու պետական բյուջե փաստացի գանձվող հարկերի տարբերություն, ընդունված մոտեցում է նաև միջազգային պրակտիկայում: Ընդ որում, հատկանշական է այն, որ միջազգային պրակտիկայում հենանիշային հարկերի կամ այլ կերպ ասած՝ հարկային նշաճողի միասնական կամ սպառիչ սահմանում չկա: Երկրների մի մասում, օրինակ, հարկային ծախսերը սահմանվում են որպես օրենսդրությամբ նախատեսված դրույթներ, որոնց կիրառությունը հանգեցնում է պետական եկամուտների կրճատման հարկային նշաճողի կամ նորմի (այսինքն՝ հարկի հաշվարկման հիմնական սկզբունքի) կիրառության համեմատությամբ: Հարկային ծախսերի սահմանման ընդհանուր սկզբունքն այն է, որ դրանք ունեն սահմանափակ կիրառության շրջանակ: Օրենսդրության այնպիսի դրույթներ, որոնցից կարող է օգտվել հարկ վճարողների մեծամասնությունը, դիտվում են որպես ընդհանուր կանոնի՝ հարկային նորմի մաս և չեն որակվում որպես հարկային ծախսեր: Կան երկրներ, որտեղ ընդհանրապես հարկային ծախսերի կամ հենանիշային հարկի կամ հարկային նշաճողի սահմանումներ չկան: Այս երկրներում, օրենսդրության առանձնահատուկ դրույթները (օրինակ, ազատումներ կամ հարկման նվազեցված դրույքաչափեր) դիտվում են որպես բազային հարկային համակարգի մաս, այլ ոչ թե որպես հարկային ծախս: Ընդհանուր առմամբ, ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ազատումները երկրների այս խմբում չեն դիտարկվում որպես հարկային ծախսեր: Երրորդ խումբ երկրներում հարկային ծախսերը սահմանվում են որպես հարկային համակարգի առանձին դրույթներ, որոնք նվազեցնում են տնտեսական միավորի հարկային պարտավորությունները՝ որոշակի քաղաքա-

կանության նպատակներին հասնելու և ոչ թե առավել արդյունավետ և տնտեսապես չեզոք եղանակով եկամուտներ ստանալու նպատակով:

Հաշվետվության շրջանակներում գնահատվել են ավելացված արժեքի հարկին, շահութահարկին և եկամտային հարկին վերաբերող հիմնական (ընդգրկուն) հարկային արտոնությունների, ավելացված արժեքի հարկի չհարկվող շեմի և միկրոբիզնեսի կիրառության հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտները: Այսինքն՝ սույն հաշվետվությամբ տրվել է արդյունավետ հարկաբյուջատային քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ հարկային ծախսերի նվազագույն գնահատականը, որի ընդգրկման շրջանակների սահմանափակ լինելը հիմնականում պայմանավորված է հարկային ծախսերի առանձին տեսակների գնահատման համար անհրաժեշտ տվյալների բացակայությամբ:

ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱԳՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Հարկային ծախսերի մասին հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը ընդունված ու տարածված գործելակերպ է Եվրոպական Միության ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրների մեծ մասում:

Հարկային ծախսերի վերաբերյալ առաջին հաշվետվությունները կազմվել են 1960-ական թվականների վերջերին Գերմանիայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում: 1970-ական թվականների վերջին հարկային ծախսերի մասին հաշվետվություններ սկսեցին կազմվել նաև Ավստրիայում, Կանադայում, Իսպանիայում և Միացյալ Թագավորությունում:

Հարկային ծախսերի տարեկան հաշվետվությունները կազմվում և հրապարակվում են հարկային արտոնությունների կիրառության արդյունքում չգանձվող հարկային եկամուտների մեծությունը ուշադրության կենտրոնում պահելու, հարկային արտոնությունների շրջանակի վերանայման վերաբերյալ քաղաքական որոշումներ կայացնելու, ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականության թափանցիկությունն ու Կառավարության հաշվետվողականությունն ապահովելու նպատակով:

Ավստրիայում, Բելգիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Պորտուգալիայում, Իսպանիայում և Միացյալ Թագավորությունում հարկային ծախսերի մասին հաշվետվությունների կազմումն ու հրապարակումը կարգավորվում է օրենքով: Նշյալ հաշվետվությունները ուղղակիորեն կապված են պետական բյուջեի հետ, իսկ դրանց կազմումը բյուջետային գործընթացի կարևոր բաղկացուցիչներից է:

Հարկային ծախսերի մասին հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը հիմնականում կատարվում է տարեկան պարբերականությամբ, թեև կան երկրներ, որոնք այս հաշվետվությունները կազմում և ներկայացնում են երկու կամ երեք տարին մեկ անգամ:

ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱԳՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սույն փաստաթուղթը Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բյուջետային գործընթացի շրջանակներում հարկային ծախսերի գնահատման տասներորդ հաշվետվությունն է: Թեև մեր երկրի օրենսդրությամբ հարկային ծախսերի մասին հաշվետվություն կազմելու և ներկայացնելու պահանջ նախատեսված չէ, այդուհանդերձ կարևորելով այսպիսի փաստաթղթերի դերը հանրային ֆինանսների կառավարման թափանցիկության անհրաժեշտ մակարդակի ապահովման գործում՝ Կառավարությունը մտադիր է հարկային ծախսերի մասին ամենամյա հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը դարձնել բյուջետային գործընթացի կարևոր բաղկացուցիչ:

Մյուս կողմից, հարկային ծախսերի մասին այսպիսի փաստաթղթի կազմումը հնարավորություն կընձեռի առավել համապարփակ ձևով գնահատել գործող հարկային արտոնությունների արդյունավետությունը, դրանց հետագա կիրառության նպատակահարմարությունը կամ հարկային արտոնությունները կրճատելու հնարավորություններն ու սահմանափակումները:

Բացի այդ, հարկային ծախսերի գնահատմամբ Կառավարությունը ընդհանրացնում է երկրի ռեսուրսային ներուժի վերաբերյալ պատկերացումները, ինչը շատ կարևոր է՝ գնահատելու համար Կառավարության առջև դրված համակարգային խնդիրների լուծման եղանակները:

ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԵՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հայաստանյան հարկային համակարգի ձևավորման ու զարգացման ողջ ընթացքում հարկային օրենսդրությամբ նախատեսված են եղել տարբեր հարկային արտոնություններ, որոնց շրջանակը հարկային քաղաքականության իրականացման տարբեր փուլերում, կախված տնտեսության զարգացման տեմպերից, առաջնահերթություններից ու մարտահրավերներից, մշտապես վերանայվել է: Որոշ հարկային արտոնություններ ժամանակավոր բնույթ են ունեցել (օրինակ՝ օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտ կազմակերպությունների՝ շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունը) և կողմնորոշված են եղել քաղաքականության իրականացման որևէ ժամանակահատվածում կոնկրետ խնդիրների լուծմանը: Որոշ հարկային արտոնություններ, որոնք տրվել են դեռևս հարկային համակարգի ձևավորման ամենավաղ փուլերում, շարունակվում են կիրառվել մինչև այժմ, քանի որ դրանց կիրառության պատճառներն ու հիմնավորումները արդիական են նաև մեր օրերում (օրինակ՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտների համար նախատեսված՝ շահութահարկից ու եկամտային հարկից ազատման արտոնությունները):

Ընդհանուր առմամբ, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս հարկային օրենսդրությամբ նախատեսված հարկային արտոնությունները կարելի է խմբավորել երեք հիմնական խմբերում՝

- սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնություններ,
- ոլորտային հարկային արտոնություններ,

- գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ու ակտիվության բարձրացմանն ուղղված հարկային արտոնություններ:

Սոցիալական ուղղվածություն ունեցող հարկային արտոնությունների կիրառության հիմնական նպատակը առողջապահական, կրթական ու գիտական նշանակության որոշ ծառայությունների մատուցումն ու ապրանքների մատակարարումը ավելացված արժեքի հարկից ազատելն է, ինչը, այլ հավասար պայմաններում հնարավորություն է ընձեռում նշյալ ապրանքներն ու ծառայությունները ձեռք բերել համեմատաբար ցածր գներով:

Ոլորտային հարկային արտոնությունների կիրառությունը պայմանավորված է հիմնականում ազգային տնտեսության երկարաժամկետ և կայուն զարգացման տեսանկյունից տնտեսության որոշ ոլորտների զարգացման գերակայություն համարելը: Դրանք հիմնականում այն ոլորտներն են, որոնք ավանդաբար ձևավորել են ազգային տնտեսության նկարագիրը (ուսկերչություն, զբոսաշրջություն, գորգագործություն և այլն): Այս առումով, Կառավարությունը տարբեր գործիքներով (այդ թվում՝ հարկային արտոնությունների կիրառությամբ) օժանդակում է այդ ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտներին,

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ու ակտիվության բարձրացմանն ուղղված հարկային արտոնությունների կիրառության հիմնական նպատակը տնտեսավարող սուբյեկտների համար առավել նպաստավոր հարկային միջավայրի ձևավորումը և ազգային տնտեսության մրցունակության բարձրացումն է:

Վերոնշյալ հարկային արտոնությունների կիրառության հետևանքով առաջացող՝ հարկային եկամուտների կորստի՝ հարկային ծախսերի գնահատման հաշվետվությունների կազմումը, ներկայացումը և գործադիր ու օրենսդիր իշխանության մարմիններում դրանց քննարկումը կարևոր քայլ է հարկային արտոնությունների շրջանակի հնարավոր վերանայման քաղաքականության իրականացման ճանապարհին:

Այս իմաստով, առաջիկա տարիներին հարկային ծախսերի նման գնահատականները հիմք են հանդիսանալու հարկային արտոնությունների շրջանակի վերանայման, հարկման բազայի ընդլայնման ու ամրապնդման քաղաքականություն իրականացնելու համար, ինչը հնարավորություն կընձեռի աստիճանաբար բարելավել հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը և ամրապնդել հարկման հորիզոնական արդարության սկզբունքը: Հարկային քաղաքականության այս ուղղության նպատակը, ըստ էության, հարկման ոլորտում խտրականությունը նվազագույնի հասցնելը և պետական բյուջեի հարկային եկամուտների արդարացի վերաբաշխում ապահովելն է:

Միաժամանակ, ակնհայտ է, որ գործող արտոնությունների շրջանակի վերանայումը կնշանակի կտրուկ փոփոխել այդ արտոնություններից օգտվողների ձեռնարկատիրական ու տնտեսական գործունեության պայմանները և ազգային տնտեսության ներդրումային միջավայրն ընդհանրապես: Այս առումով, հարկային արտոնությունների շրջանակի վերանայումը պետք է իրականացվի բավարար զգուշավորությամբ՝ խուսափելու համար հնարավոր ցնցումներից ու տնտեսության վրա բացասական հետևանքներից, և հետևողականությամբ, քանի որ հարկային արտոնությունների շրջանակի վերանայումը լրացուցիչ ռեսուրսներ կենտրոնացնելու և դրանք տնտեսության հետագա զարգացմանն ուղղելու

հնարավորություն կընձեռի: Մասնավորապես, նախքան հարկային արտոնությունների կրճատումը պետք է մանրամասն ուսումնասիրվեն գործող հարկային արտոնությունների կիրառության բոլոր դրական ու բացասական կողմերը, այդ թվում՝ ինչպես պետության, այնպես էլ այդ արտոնություններից օգտվողների տեսանկյունից, համադրվեն արտոնությունների կիրառության օգուտներն ու վնասները, բացահայտվեն արտոնությունների վերանայման հնարավոր ազդեցությունները պետական բյուջեի հարկային եկամուտների, ազգային տնտեսության տնտեսական ակտիվության, գործարար ու ներդրումային գրավչության, երկրի սոցիալ-տնտեսական վիճակի, տնտեսական մրցակցության, գնաճային ճնշումների և այլ կարևոր ցուցանիշների վրա: Վերոնշյալը նաև նշանակում է, որ առաջիկա տարիներին հարկային քաղաքականության շրջանակներում շեշտադրումը կատարվելու է հատկապես այն արտոնությունների վերանայման վրա, որոնց ազդեցությունն ազգային տնտեսության զարգացման տեսանկյունից գնահատվում է ցածր և որոնց կիրառության նպատակահարմարությունը չի հիմնավորվում «ծախսեր-օգուտներ» վերլուծությունների արդյունքներով: Այսինքն, բոլոր այն հարկային արտոնությունները, որոնց կիրառության արդյունքում սպառողների ու տնտեսավարող սուբյեկտների համար ստեղծվող «օգուտները» համարժեք չեն պետության կրած «ծախսերին» (պետության կորցրած հարկային եկամուտներին), պետք է աստիճանաբար կրճատվեն: Քաղաքականության այսպիսի մոտեցումը հիմնավորվում է ֆինանսական ռեսուրսներ կենտրոնացնելու՝ պետության սահմանափակ ներուժն առավել արդյունավետ և առավել հասցեական ձևով օգտագործելու նպատակադրումով, քանի որ հարկային արտոնությունների տրամադրմամբ, պետությունը, ըստ էության, զրկվում է լրացուցիչ հարկային եկամուտներ հավաքագրելու և զարգացման, սոցիալական, բնապահպանական, առողջապահական կամ այլ հանրօգուտ նպատակներով լրացուցիչ ծրագրեր իրականացնելու հնարավորություններից: Արդյունքում պետության կարևորագույն գործառնություններից մեկը՝ եկամուտների վերաբաշխման գործառնությունը, ամբողջությամբ և հասցեական ձևով չի իրականացվում:

ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Սույն հաշվետվությամբ ներկայացված է հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտների մակրոտնտեսական գնահատականը՝ տնտեսության այն ոլորտների մասով, որոնք օգտվում են հարկային արտոնություններից: Միաժամանակ, գնահատվել են մի քանի այլ հարկային արտոնությունների (ոչ ոլորտային նշանակության) կիրառության հետևանքով պետական բյուջեի հարկային եկամուտների կորուստները:

Գնահատման արդյունքների համաձայն, հարկային ծախսերի տարեկան մեծությունը կազմել է 781,038 մլն. դրամ, ինչը 99,699 մլն. դրամով կամ 14.6 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Ավելացված արժեքի հարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 575,041 մլն. դրամ, ինչը 88,599 մլն. դրամով կամ 18.2 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Շահութահարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 91,540 մլն. դրամ, ինչը 2,805 մլն. դրամով կամ 3.0 տոկոսով պակաս է,

քան նախորդ տարվա գնահատականը: Եկամտային հարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 114,456 մլն. դրամ, ինչը 13,905 մլն. դրամով կամ 13.8 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը:

ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերը

Ավելացված արժեքի հարկի գծով հարկային ծախսերի մեծությունը տնտեսության տարբեր ոլորտների ու առանձին հարկային արտոնությունների միջև բաշխվում է հետևյալ կերպ.

- գյուղատնտեսություն՝ 17,026 մլն. դրամ,
- առողջապահություն՝ 86,413 մլն. դրամ,
- կրթություն՝ 43,586 մլն. դրամ,
- ֆինանսներ և ապահովագրություն՝ 184,158 մլն. դրամ,
- խաղատների գործունեություն, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում՝ 58,273 մլն. դրամ,
- ոսկու և թանկարժեք քարերի իրացում՝ 34,957 մլն. դրամ,
- մարդասիրական օգնություն՝ 7,104 մլն. դրամ,
- պարարտանյութերի իրացում՝ 5,290 մլն. դրամ,
- ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում՝ 1,824 մլն. դրամ,
- սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում՝ 778 մլն. դրամ,
- ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցում, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարում, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում՝ 339 մլն. դրամ,
- օրենսգրքով սահմանված վերը չնշված այլ արտոնություններ՝ 13,548 մլն. դրամ*
- այլ օրենքներով տրված արտոնություններ՝ 3,346 մլն. դրամ:

**ավելացված արժեքի հարկի գծով հարկային ծախսերի մեծությունը գնահատվելիս՝*

- ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափի կիրառությունը չի դիտվել որպես հարկային ծախս, քանի որ այն հիմնականում կիրառվում է արտահանվող ապրանքների իրացման գործարքների համար, որոնց մասով ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափի կիրառությունը միջազգային պրակտիկայում ընդունված մոտեցում է, և հետևաբար,

այդ գործարքներից ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունը չի կարող համարվել հենանիշային հարկ,

- հաշվարկներում չեն ներառվել նաև ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների մասով մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ավելացված արժեքի հարկի գումարները, որոնց վճարման ժամկետը հետաձգվում է օրենքով սահմանված համապատասխան ժամկետներով՝ հաշվի առնելով այն, որ ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգումը միայն ժամանակային ազդեցություն է ունենում պետական բյուջեի հարկային եկամուտների մեծության վրա,
- հաշվարկներում չեն ներառվել նաև այն ապրանքների ներմուծման համար ավելացված արժեքի հարկի հաշվարկային գումարները, որոնք ներառված են «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքով հաստատված ցանկում, քանի որ այդ ապրանքների մասով, տնտեսական գործունեության հետագա փուլերում կարող են ձևավորվել ավելացված արժեքով հարկման բազաներ, որոնցից ավելացված արժեքի հարկը հաշվարկվում և վճարվում է օրենքով սահմանված կարգով:

Այսպիսով, 2025 թվականի ԱԱՀ-ի գծով գնահատված հարկային ծախսերը կազմում են 575,041 մլն. դրամ:

Տրված գնահատականում ներառված է նաև ԱԱՀ-ի շեմի կիրառության հետևանքով ԱԱՀ-ի գծով հարկային եկամուտների հաշվարկային կորուստը, որը սույն հաշվետվությունում ներկայացվում է առանձին գնահատմամբ և կազմում է **94,188 մլն. դրամ**, ինչպես նաև միկրոբիզնեսին տրված հարկային արտոնությունների մասով ԱԱՀ-ի գծով հարկային եկամուտների հաշվարկային կորուստը, որը սույն հաշվետվությունում ներկայացվում է առանձին գնահատմամբ և կազմում է **24,212 մլն. դրամ:**

Շահութահարկի գծով հարկային ծախսեր

Շահութահարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 102,117 մլն. դրամի չափով⁵⁵:

Շահութահարկի գծով հարկային արտոնությունները գնահատվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

- գյուղատնտեսություն՝ 42,894 մլն. դրամ, այդ թվում՝ կազմակերպությունների շահույթից՝ 2,568 մլն. դրամ, և ԱՁ-ների (ֆիզիկական անձանց) շահույթից՝ 40,327 մլն. դրամ,
- հարկվող շահույթի նվազեցման արտոնություններ, բացառությամբ՝ գյուղատնտեսության՝ 5,528 մլն. դրամ,
- շահութահարկի նվազեցման արտոնություններ՝ 494 մլն. դրամ,

⁵⁵ Մինչև 2020 թվականը հարկային ծախսերի գնահատականներում ԱՁ-ների (ֆիզիկական անձանց) շահույթի գծով հարկային ծախսերը ներառված էին եկամտային հարկի բաժնում: 2025թ. հարկային ծախսերի գնահատականի մեջ ներառված չէ ՏՏ ոլորտի հարկային ծախսերի գնահատականը՝ կապված նշված ոլորտի համար շահութահարկի գծով հարկային արտոնությունը վերացնելու հետ:

- ԱԱՀ-ի շեմ՝ 33,908 մլն. դրամ,
- միկրոբիզնես՝ 8,716 մլն. դրամ:

Եկամտային հարկի գծով հարկային ծախսեր⁵⁶

Եկամտային հարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 114,456 մլն. դրամի չափով:

Եկամտային հարկի գծով հարկային արտոնությունները գնահատվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

- գյուղատնտեսություն՝ 14,063 մլն. դրամ,
- ՏՏ ոլորտի արտոնություններ՝ 16,323 մլն. դրամ,
- Հիպոտեկային վարկերի տոկոսների սպասարկման համար վերադարձված եկամտային հարկ՝ 84,071 մլն. դրամ:

ԱԱՀ-ի շեմի գծով հարկային ծախսերը

ԱԱՀ-ի շեմի գծով հարկային ծախսերը գնահատվել են 128,095 մլն. դրամի չափով⁵⁷, այդ թվում՝

- ԱԱՀ՝ 94,188 մլն. դրամ,
- Շահութահարկ՝ 33,908 մլն. դրամ:

Միկրոբիզնեսի գծով հարկային ծախսերը

Միկրոբիզնեսի գծով հարկային ծախսերը գնահատվել են 32,929 մլն. դրամի չափով, այդ թվում՝

ԱԱՀ՝ 24,212 մլն. դրամ,

Շահութահարկ՝ 8,716 մլն. դրամ:

Ընդհանուր հարկային ծախսը գնահատվել է 781,038 մլն. դրամի չափով, ինչը 2025-2027 թվականների ՄԺԾՕ-ով 2025 թվականի համար կանխատեսված հարկային եկամուտների և ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է համապատասխանաբար՝ 27.77 և 6.98 տոկոս:

Վերլուծության ամփոփ արդյունքները ներկայացված են ստորև:

| Հ/Հ | Հարկային ծախսերի տեսակը, մլրդ դրամ | Հարկային ծախսերի չափը | Կշիռը հարկային եկամուտների մեջ | Կշիռը ՀՆԱ-ի մեջ |
|----------|------------------------------------|-----------------------|--------------------------------|-----------------|
| 1 | ԱԱՀ-ի գծով, այդ թվում՝ | 575,041 | 20.45% | 5.14% |
| 1.1. | գյուղատնտեսություն | 17,026 | 0.61% | 0.15% |
| 1.2. | առողջապահություն | 86,413 | 3.07% | 0.77% |
| 1.3. | Կրթություն | 43,586 | 1.55% | 0.39% |
| 1.4. | Ֆինանսներ և ապահովագրություն | 184,158 | 6.55% | 1.64% |
| 1.5. | ԱԱՀ-ի շեմ | 94,188 | 3.35% | 0.84% |

⁵⁶ 2023թ. հուլիսի 1-ից միկրոբիզնեսի վարձու աշխատողների աշխատավարձերից եկամտային հարկով հարկումը ընդհանուր սահմանված կարգին անցում կատարելու հետևանքով հետագա փարիների համար հարկային ծախս չի հաշվարկվելու:

⁵⁷ ԱԱՀ-ի շեմի գծով հարկային ծախսերի գնահատման համար ԱԱՀ-ի շեմն ընդունվել է 115.0 մլն. դրամ:

| | | | | |
|-----------------|---|----------------|---------------|--------------|
| 1.6. | խաղատների գործունեություն, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում | 58,273 | 2.07% | 0.52% |
| 1.7. | ոսկու և թանկարժեք քարերի իրացում | 34,957 | 1.24% | 0.31% |
| 1.8. | մարդասիրական օգնություն | 7,104 | 0.25% | 0.06% |
| 1.9. | պարարտանյութերի իրացում | 5,290 | 0.19% | 0.05% |
| 1.10. | ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում | 1,824 | 0.06% | 0.02% |
| 1.11. | սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում | 778 | 0.03% | 0.01% |
| 1.12. | ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում | 339 | 0.01% | 0.00% |
| 1.13. | Օրենսգրքով սահմանված վերը չնշված այլ արտոնություններ | 13,548 | 0.48% | 0.12% |
| 1.14. | այլ օրենքներով տրված արտադրություններ | 3,346 | 0.12% | 0.03% |
| 1.15. | Միկրոբիզնես | 24,212 | 0.86% | 0.22% |
| 2 | Շահութահարկի գծով, այդ թվում՝ | 91,540 | 3.26% | 0.82% |
| 2.1. | գյուղատնտեսություն, այդ թվում՝ | 42,894 | 1.53% | 0.38% |
| 2.1.1. | կազմակերպությունների շահույթից | 2,568 | 0.09% | 0.02% |
| 2.1.2. | ֆիզիկական անձանց (Ա/Ձ-ների) շահույթից | 40,327 | 1.43% | 0.36% |
| 2.2. | հարկվող շահույթի նվազեցման արտոնություններ, բացառությամբ՝ գյուղատնտեսության | 5,528 | 0.20% | 0.05% |
| 2.3. | շահութահարկի նվազեցման արտոնություններ | 494 | 0.02% | 0.00% |
| 2.4. | ԱԱՀ-ի շեմ | 33,908 | 1.21% | 0.30% |
| 2.5. | միկրոբիզնես | 8,716 | 0.31% | 0.08% |
| 3 | Եկամտային հարկի գծով, այդ թվում՝ | 114,456 | 4.07% | 1.02% |
| 3.1. | գյուղատնտեսության ոլորտի աշխատողների աշխատավարձ | 14,063 | 0.50% | 0.13% |
| 3.2. | Հիպոտեկային վարկերի տոկոսների սպասարկման համար վերադարձված եկամտային հարկ | 84,071 | 2.99% | 0.75% |
| 3.3. | SS ոլորտի արտոնություններ | 16,323 | 0.58% | 0.15% |
| Ընդամենը | | 781,038 | 27.77% | 6.98% |

2024թ. գնահատված հարկային ծախսերը կազմել են 681,339 մլն. դրամ, ինչը 2025-2027 թվականների ՄԺԾԾ-ով 2025 թվականի համար սպասվող հարկային եկամուտների և ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է համապատասխանաբար՝ 27.77 և 6.98 տոկոս: Վերոգրյալը նշանակում է, որ նախորդ տարվա գնահատականի համեմատ հարկային եկամուտների մեջ 2025թ. հարկային ծախսերի կշիռն աճել է 0.48 տոկոսային կետով, իսկ անվանական ՀՆԱ-ի մեջ հարկային ծախսերի կշիռն աճել է 0.32 տոկոսային կետով:

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԱՀ-ի ԳԾՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԸ

ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերը գնահատվել են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- գյուղատնտեսություն,
- առողջապահություն,
- կրթություն,
- ֆինանսներ և ապահովագրություն,
- խաղատների գործունեություն, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում,
- ոսկու և թանկարժեք քարերի իրացում,
- մարդասիրական օգնություն,
- պարարտանյութերի իրացում,
- ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում,
- սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում,
- ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցում, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարում, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում,
- օրենսգրքով սահմանված վերը չնշված այլ արտոնություններ,
- այլ օրենքներով տրված արտոնություններ:

ՀՀ ՎԿ տվյալների բազայից որոշվել են 2023 թվականի համար տնտեսության յուրաքանչյուր ոլորտի ավելացված արժեքները, որոնք նախապես ճշգրտվել են ֆինանսական միջնորդությունների անուղղակի չափվող ծառայությունների արժեքի չափով:

Տնտեսության յուրաքանչյուր ոլորտի ավելացված արժեքները նվազեցվել են չդիտարկվող (չհաշվառվող) տնտեսության ավելացված արժեքների մասնաբաժնի չափով:

Տնտեսության արտահանելի ճյուղերի ավելացված արժեքները նվազեցվել են արտահանման արժեքների չափով՝ արտահանմանն ուղղված ճյուղերի (գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, մշակող արդյունաբերություն, էլեկտրաէներգետիկա, առևտուր, փոխադրումներ և պահեստային տնտեսություն, տեղեկատվություն և կապ)՝ ընդհանուր ավելացված արժեքի մեջ ունեցած տեսակարար կշիռներին համապատասխան:

Գյուղատնտեսության ոլորտի ստացված արդյունքը ճշգրտվել է գյուղատնտեսության մասնաբաժնում ապրանքայնության մակարդակով (ապրանքայնության մակարդակը ցույց է տալիս գյուղատնտեսական արտադրանքի այն մասը, որը գնացել է իրացման կամ այլ ձևով օտարման կամ ապրանքափոխանակման):

Այնուհետև ստացված բազայի նկատմամբ կիրառվել է ԱԱՀ-ի 20% դրույքաչափը և հաշվարկվել է ԱԱՀ-ի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2025 թվականի տնտեսության ճյուղերի կանխատեսվող ծավալների աճով:

Ստացված արդյունքների հիման վրա առանձնացվել են գյուղատնտեսության, կրթության, առողջապահության, ֆինանսական և ապահովագրության ոլորտների համապատասխան ԱԱՀ-ի մասնաբաժինները, որոնք իրենցից ներկայացնում են այդ ոլորտների համար ԱԱՀ-ի գծով հարկային ծախսերը:

Միաժամանակ, ԱԱՀ-ի հաշվարկներից արտաձվել են խաղատների, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման, ոսկու և թանկարժեք քարերի իրացման, մարդասիրական օգնության, պարարտանյութերի իրացման, ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում, սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում, ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցում, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարում, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում և այլ օրենքներով տրված ԱԱՀ-ից ազատման արտոնությունների մասով շրջանառությունները, որոնց նկատմամբ կիրառելով համապատասխան գործունեության տեսակների ավելացված արժեք/թողարկում հարաբերակցության ցուցանիշը, այնուհետև՝ ԱԱՀ-ի 20% դրույքաչափը, հաշվարկվել է նշված գործունեության տեսակների համար ԱԱՀ-ի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2025 թվականի նշված գործունեության տեսակների կանխատեսվող ծավալների աճով:

Բացի այդ, որոշվել են ԱԱՀ-ի գծով վերը չնշված այլ հարկային ծախսերը՝ որպես ԱԱՀ-ի գծով եկամտային ներուժի և ներքին տնտեսությունից փաստացի հավաքագրված ԱԱՀ-ի, վերոնշյալ ոլորտների, գործունեության տեսակների, ԱԱՀ-ի շեմի ու միկրոբիզնեսի գծով գնահատված՝ ԱԱՀ-ի հարկային ծախսերի հանրագումարի տարբերություն:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

Շահութահարկի գծով հարկային ծախսերի գնահատականը ներառում է գյուղատնտեսության արտոնությունները, շահութահարկի նվազեցման արտոնությունները, SS ոլորտի արտոնությունները, ինչպես նաև շահութահարկի հաշվարկներով արտացոլված հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները, բացառությամբ՝ գյուղատնտեսության արտոնությունների: Միաժամանակ, առանձին գնահատվել են միկրոբիզնեսի և ԱԱՀ-ի շեմի գծով հարկային ծախսերը:

Գյուղատնտեսություն

Որոշվել են 2023 թվականի համար գյուղատնտեսության ոլորտի զուտ շահույթը և զուտ խառը եկամուտները՝ հիմք ընդունելով եկամուտների ձևավորման եղանակով 2022 թվականի համար հաշվարկված գյուղատնտեսության ոլորտի զուտ շահույթը և զուտ խառը եկամուտները, որոնց նկատմամբ կիրառվել է գյուղատնտեսության ոլորտի 2023 թվականի՝ արտադրական եղանակով որոշված ավելացված արժեքների աճի տեմպը:

Ստացված արդյունքը ճշգրտվել է գյուղատնտեսության մասնաբաժնում չդիտարկվող (չհաշվառվող) տնտեսության և ապրանքայնության մակարդակով:

Այնուհետև որոշվել է ստացված արդյունքի մեջ առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի մասնաբաժինը՝ համաձայն ՀՀ ՎԿ տվյալների: Այնուհետև կիրառվել է շահութահարկի 18% դրույքաչափը և հաշվարկվել է շահութահարկի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2025 թվականի գյուղատնտեսության ճյուղի կանխատեսվող ծավալների աճով:

Հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները, բացառությամբ՝ գյուղատնտեսության.

Շահութահարկի հաշվարկներից արտաձվել են հարկվող շահույթի նվազեցման արտոնությունները, բացառությամբ՝ գյուղատնտեսության արտոնությունների, որոնց նկատմամբ կիրառվել է շահութահարկի 18% դրույքաչափը՝ արդյունքում հաշվարկվել է նշված ուղղության համար շահութահարկի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2025 թվականի նշված ուղղության կանխատեսվող ծավալների աճով:

Շահութահարկի նվազեցման արտոնությունները

Շահութահարկի հաշվարկներից արտաձվել են շահութահարկի նվազեցման արտոնությունները, որն իրենից ներկայացնում է նշված ուղղության համար շահութահարկի գծով եկամտային ներուժը: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2025 թվականի նշված ուղղության կանխատեսվող ծավալների աճով:

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

Եկամտային հարկի գծով հարկային ծախսերի մասով գնահատվել է գյուղատնտեսության արտոնությունները, SS ոլորտի արտոնությունները, հիպոտեկային վարկերի տոկոսների սպասարկման համար վարկառուներին և համավարկառուներին վերադարձված եկամտային հարկի գումարները:

Գյուղատնտեսություն

Որոշվել են 2023 թվականի համար գյուղատնտեսության ոլորտի վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության գծով եկամուտները՝ հիմք ընդունելով եկամուտների ձևավորման եղանակով 2022 թվականի համար հաշվարկված գյուղատնտեսության ոլորտի վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության գծով եկամուտները, որոնց նկատմամբ կիրառվել է գյուղատնտեսության ոլորտի 2023 թվականի՝ արտադրական եղանակով որոշված ավելացված արժեքների աճի տեմպը:

Ստացված արդյունքը ճշգրտվել է գյուղատնտեսության մասնաբաժնում ապրանքայնության մակարդակով:

Որոշվել է ճշգրտված արդյունքի մեջ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասնաբաժինը՝ համաձայն ՀՀ ՎԿ տվյալների: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2025 թվականի գյուղատնտեսության ճյուղի կանխատեսվող ծավալների աճով:

Հաշվարկվել է ստացված արդյունքին համապատասխանող եկամտային հարկի գումարը՝ հաշվի առնելով եկամտային հարկի դրույքաչափի փոփոխության արդյունքները:

ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻՆ և ՀԱՄԱՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Հաշվարկվել են 2024 թվականի արդյունքներով հիպոտեկային վարկերի տոկոսների սպասարկման համար վարկառուներին և համավարկառուներին վերադարձված եկամտային հարկի գումարները: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2025 թվականի համար վերադարձվող գումարների կանխատեսվող ծավալների աճով՝ հիմք ընդունելով նախորդ տարվա նկատմամբ վերադարձված գումարների աճի տեմպը:

SS ՈԼՈՐՏԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որոշվել են 2023 թվականի համար SS ոլորտի վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղված գումարները: Ստացված արդյունքը ճշգրտվել է 2025 թվականի համար կանխատեսվող ծավալների աճով՝ հիմք ընդունելով ՎԿ կողմից հրապարակված տվյալներով նախորդ տարվա նկատմամբ ոլորտի աճի տեմպը: Այնուհետև հաշվարկվել է հարկային ծախսը՝ ստացված արդյունքի նկատմամբ կիրառելով եկամտային հարկի ընդհանուր և արտոնյալ դրույքաչափերի տարբերությունը (10%=20%-10%):

ԱԱՀ-Ի ՇԵՄԻ ԳԾՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԸ

Որոշվել է 2023 թվականի շրջանառության հարկ վճարողների շրջանառությունը՝ համաձայն հարկ վճարողների կողմից ներկայացված շրջանառության հարկի հաշվարկների:

Հաշվարկվել է շահութահարկի բազան՝ հիմք ընդունելով շահութաբերության միջինացված մակարդակները:

Ստացված բազայի նկատմամբ կիրառվել է շահութահարկի 18% դրույքաչափ և հաշվարկվել է շահութահարկի գծով արդյունքը:

Հաշվարկվել է ԱԱՀ-ի բազան՝ հիմք ընդունելով շահութաբերության և աշխատավարձերի միջինացված մակարդակները:

Ստացված բազայի նկատմամբ կիրառվել է ԱԱՀ-ի 20% դրույքաչափ և հաշվարկվել է ԱԱՀ-ի գծով արդյունքը:

Շահութահարկի ու ԱԱՀ-ի գծով ստացված եկամտային ներուժի և փաստացի վճարված շրջանառության հարկի տարբերությունը՝ ճշգրտված 2025 թվականի տնտեսության ճյուղերի կանխատեսվող ծավալների աճով, իրենից ներկայացնում է ԱԱՀ-ի շեմի գծով շահութահարկի ու ԱԱՀ-ի հարկային ծախսը:

ՄԻԿՐՈՔԻԶՆԵՍԻ ԳԾՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԸ

Որոշվել է 2023 թվականի միկրոքիզնեսի հարկման համակարգում գործող հարկ վճարողների իրացման շրջանառությունը՝ համաձայն միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառությունների վերաբերյալ հաշվետվության տվյալների:

Հաշվարկվել է շահութահարկի բազան՝ հիմք ընդունելով շահութաբերության միջինացված մակարդակները:

Ստացված բազայի նկատմամբ կիրառվել է շահութահարկի 18% դրույքաչափ և հաշվարկվել է շահութահարկի գծով արդյունքը:

Հաշվարկվել է ԱԱՀ-ի բազան՝ հիմք ընդունելով շահութաբերության և աշխատավարձերի միջինացված մակարդակները:

Ստացված բազայի նկատմամբ կիրառվել է ԱԱՀ-ի 20% դրույքաչափ և հաշվարկվել է ԱԱՀ-ի գծով արդյունքը:

Շահութահարկի ու ԱԱՀ-ի գծով ստացված եկամտային ներուժի՝ ճշգրտված 2025 թվականի տնտեսության ճյուղերի կանխատեսվող ծավալների աճով, իրենից ներկայացնում է միկրոձեռնարկատիրության գծով շահութահարկի ու ԱԱՀ-ի հարկային ծախսը:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

| | |
|---|-----|
| Աղյուսակ 1. 2021-2025թթ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները, մլրդ դրամ | 117 |
| Աղյուսակ 2. 2025թ ակնկալվող արտաքին օժանդակությունն ըստ բնույթի | 119 |
| Աղյուսակ 3 . ՀՀ 2021-2025թթ. պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ..... | 120 |
| Աղյուսակ 4. Ընդհանուր և առաջնային դեֆիցիտները, %-ով ՀՆԱ-ի նկատմամբ | 121 |
| Աղյուսակ 5. 2021-2025թթ փաստացի/կանխատեսումային բյուջետային եկամուտները, մլրդ դրամ | 121 |
| Աղյուսակ 6. Պետական տուրքերի կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2021-2025թթ փաստացի/կանխատեսումային ցուցանիշները, մլրդ դրամ | 127 |
| Աղյուսակ 7. 2021-2025թթ. փաստացի/կանխատեսումային պաշտոնական դրամաշնորհ-ները, մլրդ դրամ..... | 130 |
| Աղյուսակ 8. Այլ եկամուտների կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2021-2025թթ փաստացի/կանխատեսումային ցուցանիշները, մլրդ դրամ | 131 |
| Աղյուսակ 9 . 2021-2025թթ ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները, մլրդ դրամ | 134 |
| Աղյուսակ 10 . 2021-2025թթ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ..... | 136 |
| Աղյուսակ 11. Աղյուսակ 10. 2020-2025թթ. ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքը ըստ արտաքին և ներքին աղբյուրների, մլրդ դրամ | 137 |
| Աղյուսակ 12. ՀՀ 2021-2025թթ. պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների (մլրդ դրամ) | 138 |
| Աղյուսակ 13. Տնտեսական ոլորտի 2021-2025թթ. բյուջետային ծախսերը (մլրդ. դրամ) | 140 |
| Աղյուսակ 14. Սոցիալական ոլորտի 2021-2025թթ. բյուջետային ծախսերը (մլրդ դրամ) | 141 |
| Աղյուսակ 15. Արտաքին աղբյուրներից 2025թ. ստացվելիք միջոցների (վարկերի և պաշտոնական դրամաշնորհներ) հաշվին ֆինանսավորվող ծախսերը | 142 |
| Աղյուսակ 16. ՀՀ պետական բյուջեից ՀՀ համայնքների բյուջեներին տրվող հատկացումները, մլրդ դրամ..... | 143 |
| Աղյուսակ 17. Պետական պարտքի կառուցվածքը, մլրդ դրամ..... | 204 |
| Աղյուսակ 18. Կառավարության պարտքը | 205 |
| Աղյուսակ 19. Կառավարության պարտքի կառուցվածքը | 206 |

Աղյուսակ 20. ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2025-2027 թվականների
 ռազմավարական ծրագրով ամրագրված ուղենշային ցուցանիշները 2025 թվականի
 տարեվերջին.....207

Աղյուսակ 21. Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ)208

Աղյուսակ 22. Կառավարության պարտքի մարման և սպասարկման ծախսերը (մլրդ դրամ).....212

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Գծապատկեր 1. ՀՀ 2021-2025թթ. Հարկային եկամուտները և պետական տուրքերը(մլրդ
 դրամով) և կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ122

Գծապատկեր 2. 2021-2025թթ . ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով
 գործառնությունների փոփոխության և հարաբերակցության միտումները, մլրդ դրամ..... 134

Գծապատկեր 3. 2021-2025թթ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական
 դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ, %..... 135

Գծապատկեր 4. 2021-2025թթ. ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման
 կառուցվածքը..... 136

Գծապատկեր 5. 2021-2024թթ. ծախսերի համեմատականը 138

Գծապատկեր 6. Կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տարբեր դասակարգումների207

Գծապատկեր 7. Կառավարության պարտքի մարման ժամանակացույցը 31.12.2025թ.
 դրությամբ, մլրդ դրամ.....208

Գծապատկեր 8. Սպասարկման ծախսերի կառուցվածքը (%)212